

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Լ. Ս. ՍԱՆԹՐՅԱՆ

**ԺԽՏԱՄԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԱՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՆԹՐՅԱՆ

ԺԽՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2011

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Л. С. САНТРЯН

ВЫРАЖЕНИЕ ОТРИЦАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЕРЕВАН
2011

*Տպագրվում է ՀՀ ՊԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական
գիտությունների թեկնածու **Ն. Ժ. Սարգսյան**

Սանթրյան Լ. Ս.

Ժխտման արտահայտությունը հայերենում.- Եր., 2011, 160 էջ:

Աշխատանքում ներկայացվում են ժխտման արտահայտության բառակազմական ու քերականական միջոցները, ժխտական կառույցների մի շարք յուրահատկությունները հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գիրքը նախատեսված է հայերենագիտությամբ, հայոց լեզվի պատմությամբ զբաղվողների համար:

ԳԼՈՒԽ 1 ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ քերականագիտության մեջ ժխտման կարգը քննարկվել է քերականների կողմից՝ ըստ դիտարկվող նյութի հետ առնչության աստիճանի: 5-19-րդ դարերի քերականական գործերում ժխտման միջոցների վերաբերյալ առանձին աշխատություններ չկան. դրանց անդրադարձ կատարվում է առանձին խոսքի մասերի քննարկման ընթացքի մեջ, եթե առկա են համապատասխան ձևերը: Քանի որ ժամանակին խոսքի մասերի սահմանները հստակ ընդգծված չէին, ուստի ժամանակակից քերականագիտության մեջ մի խոսքի մասում քննվող բառերն ու ձևերը հին քերականություններում դիտարկվում էին բոլորովին այլ խոսքի մասի մեջ:

Նոր ժամանակներում է ժխտման կարգը լեզվաբանների առանձնակի ուշադրությանն արժանացել:

Ինչ վերաբերում է վաղ շրջանի (5-19-րդ դարերի) քերականական աշխատանքներին, ապա դրանց մենք կանդրադառնանք այն չափով, որքանով առնչություն կունենան մեր քննած հարցին:

Հին շրջանի (5-րդ դարի) հայերեն քերականական առաջին աշխատությունները թարգմանություններ էին հույն քերականների աշխատություններից: Այդ շրջանի թերևս ամենաակնառու քերականական աշխատությունը հույն քերական Դիոնիսիոս Թրակացու (մ.թ.ա.170-90թթ.) «Քերականական արվեստ» աշխատությունն է, որը ներկայացնում է ավեքսանդրյան բանասիրության քերականական նվաճումների համառոտ շարադրանքը:

Ամփոփելով նախորդ քերականագետների աշխատանքը՝ Դիոնիսիոս Թրակացին սահմանում է ութ խոսքի մաս կամ «մասն բանի».

1. անուն. չտարրոշված կերպով պարունակում էր գոյականը, ածականը, թվականը և մի շարք դերանուններ, 2. բայ, 3. ընդունելություն, 4. հոդ, 5. դերանուն. սրա մեջ դրվում էին միայն անձնական և ստացական դերանունները, 6. նախադրություն. սրա մեջ քննվում էին և նախածանցները, 7. մակբայ, 8. շաղկապ [53,26-27]¹:

Դ. Թրակացին իր «Քերականական արվեստ» աշխատության մեջ «նախադրությունը» սահմանում է որպես բառ, որը նախադրվում է բոլոր խոսքի մասերին թե՛ բարդության, և թե՛ բառերի կապակցության մեջ: Այս սահմանումը ճիշտ է հունարենի համար, որտեղ նույն նախադրությունը բարդության մեջ կիրառվում է որպես նախդիր կամ նախադրություն, հաճախ նաև որպես մակբայ (հունարենում նախդիր-նախադրությունները նախապես եղել են տեղի մակբայներ): Ուստի Թրակացու տված սահմանումը «նախադրության» մասին վերաբերում է հավասարապես թե՛ նախդիրին, թե՛ նախադրությանը և թե՛ նախածանցին: Նկատելի է, որ նախդիրների ածանցական

¹ Փակագծերում տրված առաջին թիվը (53) գրականության համարն է, երկրորդը (26-27)՝ էջը:

կիրառությունը բնորոշ է ոչ միայն հունարենին, այլ ընդհանրապես նախդիր ունեցող լեզուներին:

Հայոց լեզվի զարգացման վաղ շրջանում ևս նախդիրներն ունեցել են ածանցական դեր: Այդ նախդիրներից մի քանիսը հետագայում էլ շարունակել են պահպանել իրենց ածանցական իմաստը, իսկ շատ կազմությունների մեջ, գրային շրջանում արդեն, նրանց իմաստները սկսել են մթագնվել [40,135]:

Այս կերպ նախածանցները (այդ թվում նաև ժխտական նախածանցները) դիտվում էին նախդիր-նախադրությունների շարքում: Այս համակարգը որոշ փոփոխություններով պահպանվում է հին շրջանի հայ մեկնիչների մոտ, բայց հետագայում նախածանցներն առանձնացվում են նախդիրներից:

Թրակացու քերականության հայ թարգմանիչներից Ղավիթը «Յաղագս նախադրութեան» բաժնում նույնությամբ պահպանել է Թրակացու սահմանումը. «Նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ըստ բարդութեան և բաղդասութեան» [40, 135-136; 54, 261]: Թարգմանիչը «նախադրություն» է համարել նաև նախածանցները:

Վարդան Արևելցին (13-րդ դ.), Ղավիթ Զեյթունցին (16-17-8դ դդ.), Ոսկան Երևանցին (17-րդ դ.), Հովհաննես Հոյովր (17-րդ դ.) նախածանցներն անվանում են նախադրություններ:

Իսկ Ոսկան Երևանցին նախադրությունը սահմանում է իբրև «մասն բանի անհոլովական, նշանակիչ իրաց կամ էութեանց ընդ իւրեանց իրակութեանց գդիտաւորութիւնս և գշրջակայութիւնս» [52,82]: Նախադրությունների՝ մակբայներից ունեցած հիմնական տարբերությունը համարվում է այն, որ եթե վերջիններս հարում են բային, ապա սրանք հարում են անվանը:

Նախադրությունների խնդրառության մասին խոսելիս Ռ. Երևանցին նշում է, որ *առանց* բառը պահանջում է սեռական, իսկ *բաց ի, գատ ի* բառերը՝ բացառական հոլովով լրացում:

Նախածանցների մասին խոսելիս «նախդիր» եզրույթն են գործածում Հովհաննես Քրնեցին (14-15-րդ դդ.), Կղեմես Գալանոսը (17-րդ դ.), Սիմեոն Զուղայեցին (17-րդ դ.):

Իբրև նախդիր հանդես եկող մասնիկների մասին նշվում է հետևյալը. 1) *բաց*-ը դրվում է բացառական հոլովի հետ, 2) *առանց*-ը՝ սեռական [52,56]:

Սիմեոն Զուղայեցին նախդիրը սահմանում է ձևաբանական-շարահյուսական հիմունքով՝ իբրև «բառ անհոլով, որ առադրի ի մասունս բանի» [52,140]: Տարբերում է նախդիրների տեսակներ՝ «բաղձականք»՝ *ան, ապ, տը, թարց, առանց*, «գատուցիչք»՝ *բաց, գատ* և այլն:

Մխիթար Սեբաստացին (18-րդ դ.) նախածանցներն անվանում է նախամասնիկներ և ժխտական նախածանցները սահմանում է որպես «մասնկունք, որք ըստ ինքեանց են աննշանք, բայց առնշանականք, այսինքն՝ ի բաղադրիչն ընդ այլոց նշանականք և

փոխարկօղք զնշանակութիւնս նոցին ընդ որոց բաղադրին»՝ *ան, ապ, տժ, տ, աղ* (հմնտ. գտանենմ-արգտանենմ) [52,226]:

18-րդ դարից արդեն նախդիր, նախադրություն, նախամասնիկ կոչված նախածանցներն անվանվում են «ածանց» եզրույթով:

Միքայել Չամչյանը (1738-1823), փոփոխություն մտցնելով ավանդական ըմբռնման մեջ, նախածանցավոր կազմությունները, որոնք նախորդները մտցնում էին բարդությունների մեջ, առանձնացնում է իբրև երրորդ «ծև»՝ «բաղադրեալ» կազմություններ. այսպիսով՝ նա տարբերում է անվան երեք «ծև»՝ պարզ, բարդ և բաղադրյալ:

«Ածանցակերտ կամ ածանցիչ մասնիկները» խմբավորվում են ըստ գործածության հաճախականության և ըստ իմաստի: 1) Ըստ գործածության հաճախականության տարբերվում են ա) հաճախ գործածվողներ, որոնց մեջ է *-աւտ* ածանցը (տալիս է միայն վերջածանցները). բ) ոչ այնքան հաճախ գործածվողներ, գ) շատ հազվադեպ պատահողներ: 2) Ըստ իմաստի վերջածանցները բաժանվում են 30 խմբի. դրանց մեջ տալիս է նաև «պակասական» անվանված *-աւտ* ածանցը:

Գաբրիել Ավետիքյանը (18-19-րդ դդ.) նոր քայլ է կատարում ածանցումն ու բարդումը տարբերակելու և ածանցավոր բառերի երկու տեսակները՝ նախածանցավոր և վերջածանցավոր կազմությունները միավորելու ուղղությամբ: Նա նախապես առանձնացնում է բառակազմական երկու հիմնական տիպ՝ պարզ և բաղադրյալ, ըստ որում վեջինիս մեջ տարբերում է բուն բաղադրյալ ձևեր (նախածանցավոր կազմություններ), բարդություններ և «ածանցյալ» բառեր (վերջածանցավոր կազմություններ): Բաղադրյալ բառեր կազմող նախածանցներից («մասնիկներ») Ավետիքյանը մի քանիսն առանձնացնում է իբրև «բացասական կամ եղծական»՝ *ա, ան, տ, չ, բ*, ընդ որում *ա*-ի համար վերցնում է պահլավերենից փոխ առնված կազմությունները՝ *ապուխտ, ակամայ*: Մնացած նախածանցներից նա հիշատակում է *գ, ըն, ըմ, ըմբ, դժ* կամ *տժ, առ*, ինչպես և *ապ, արտ, տար, բաց, հակ, համ, հոմ, բաղ* կամ *փաղ, բագ* կամ *բակ, պար, շար, մակ, ներ, տի*:

Վերջածանցները բաժանում է տասներեք տեսակի՝ նվազական տեսակի մեջ մտցնելով նաև *-աւտ* վերջածանցը [52,343]:

Արսեն Բագրատունին (19-րդ դ.) որոշ նորություններ է մտցնում ժխտական նախածանցների գործածության և վերջածանցների ծագման լուսաբանման մեջ: Նա ժխտական նախածանցներ է համարում *ան, տ, չ* մասնիկները: *Ան* ժխտականի կապակցությամբ նշում է. որ այն՝ ա) երբեմն կարող է դրվել բառի վրա՝ չփոխելով նրա իմաստը՝ խուլ-անխուլ, չքութիւն-անչքութիւն, բ) նրա փոխարեն որպես ժխտական կարող է գործածվել *ա*-ն՝ ա-կամայ, ա-պուխտ (պրսկ. «անեփ»). *ա*-ն նույնպես կարող է անփոփոխ թողնել բառիմաստը՝ պատ-ապատ, նօթի-անօթի:

Բագրատունին փորձում է պարզել նաև մի շարք վերջածանցների ծագումը. նա դրանք բխեցնում է անկախ բառերից և համարում ավելի շուտ բառեր, քան ածանցներ. այսպես՝ -ատ մասնիկը նա բխեցնում է *հատ* արմատից (ատ<հատ):

Ժխտական նախածանցների վերաբերյալ Արսեն Այտընյանը (19-րդ դ.) գրում է. «*Ան, ապ, չ, տ, դժ* կամ *տժ* որ բացասական կամ եղծական են՝ բառին հակառակ նշանակություն տալով կամ չունենալ ցուցնելով» [18,297]:

20-րդ դարի քերականություններում ածանցները վերջնականապես սահմանվում ու դասակարգված ձևով են ներկայացվում: Տարբերակվում են *ան-, ապ-//ապա-, դժ-, չ-, տ-* ժխտական նախածանցները:

Ժխտական ձևեր ունեցող խոսքի մասերից մակբայը Ա. Բագրատունին սահմանում է որպես «անխաղաց»՝ չթեքվող խոսքի մաս, որը, դրվելով բայից հետո կամ բայի վրա, հայտնում է բայի մասին, լրացնում է բայի իմաստը. «Մակբայ է մասն բանի անխաղաց, ստոր բայի ասացեալ կամ մակասացեալ բայի» [40,283]: Նա մակբայների մեջ է դասում միջարկությունները, մակբայական (ցուցական և հարցական) դերանունները, որոնց թվում նաև *այո, ոչ, չէ* և նման պատասխանական բառեր:

5-19-րդ դարերի քերականություններում հստակ չեն մակբայ խոսքի մասի սահմանները: *Բնաւ, ամենկին, բոլորովին, իսպառ, քաւ, չէ՛, ո՛չ, ոչ իւիք, մի՛, չիք* բառերը Վ. Արևելցին, Կ. Գալանոսը, Ս. Զուղայեցին, *Քաղղասար Դալիրը* (18-րդ դ.) համարում են մակբայներ: Դալիր Մեկնիչը *չէ, ոչ, ոչ իւիք, ոչ եզով իւիք* բառերը դասում է մակբայ խոսքի մասի մեջ, իսկ *բնաւ, ամենկին* բառերը՝ միջարկությունների մեջ: Ոսկան Երևանցին (17-րդ դ.) *ոչ, չէ, չիք, ոչ իւիք, ոչ միով իւիք, մի՛, մի՛ լիցի, ի բաց լեր, ամենկին* բառերը համարում է մակբայ, իսկ *մի՛, քա՛ւ, ի բա՛ց, ոչ, ոչ իւիք, ո՛չ եզով իւիք, ո՛չ միով իւիք* բառերը՝ միջարկություն:

Ինչպես երևում է, մակբայ են դիտվում նաև եղանակավորող բառերն ու *չիք* բայը:

Յոհան Շրոտերը (18-րդ դ.) մակբայ է համարում *մի՛* արգելական մասնիկը: Նույն կերպ Գ. Ավետիքյանը, Ա. Այտընյանը, Ա. Բագրատունին մակբայ են համարում *մի, ոչ, չ* մասնիկները:

Մակբայների կազմի մեջ Ա. Այտընյանի հավելումները վերաբերում են առավելապես ժխտական մասնիկներին. նշվում է, որ՝ ա) *ոչ*-ը և *չ*-ն կարող են դրվել նաև ածական ու գոյական անունների վրա՝ չիմաստուն, չաստուած. բ) *ոչ, չ, մի* մասնիկները երբեմն դրվում են բայերից միայն առաջինների վրա («Բռնի զուրուք մեք ոչ կերաք և արբաք»). գ) *ոչ, մի* և *ընդէր* բառերը երբեմն ետադաս են գործածվում (կերիցէ մի, գրեցաւ իսկ ոչ). դ) հազվադեպ հանդիպում են *ոչ, մի* բառերը ավելորդաբար կրկնված՝ «Եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէին»:

Մանուկ Աբեղյանն (19-րդ դ.) իր «Աշխարհաբարի քերականություն» (1906) աշխատության մեջ պատասխանական *այո՛, ո՛չ, չէ՛* բառերը դնելով մակբայների տակ՝ միաժամանակ գտնում է, որ «դրանք իսկապես մակբայ չեն և ոչ էլ ածական, որովհետև դրվում են ամբողջ խոսքի տեղ» [25,172]:

«Հայոց լեզվի տեսության» մեջ Մ.Աբեղյանը վերջնականապես եկել է այն եզրակացության, որ «եղանակական մակբայները» նյութական նշանակության բառեր, ուստի և մակբայներ չեն («եղանակական մակբայ»-ի տակ ճանաչվում են եղանակավորող բառերը), այլ խոսքը եղանակավորող քերականական նշանակության «եղանակական բառեր կամ մասնիկներ» են: Այլևս մակբայ չեն համարված նաև *այո՛, ո՛չ* պատասխանական բառերը, որոնք նույնպես համարվում են քերականական նշանակության առանձին տեսակի բառեր: Պատասխանական բառ չի համարված *չէ՛ն*: Մ. Աբեղյանը է՛ էական բայի *չէ՛* ժխտական շեշտված ձևը այլևս չի համարում բառական առանձին միավոր, բայց դրա փոխարեն քերականական նշանակության բառերի կամ խոսքի մասնիկների մեջ տարբերակում է բառերի կամ խոսքի մասնիկների չորրորդ տեսակ՝ «բացասական մասնիկներ» անվամբ, ուր մտցնում է ժխտում արտահայտող կամ ժխտական նախադասություն կազմող «ոչ», «չ» միավորները:

Եղանակավորող բառերի սահմանները հստակեցվում են 20-րդ դարի լեզվաբանների աշխատություններում (Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» Եր., 1965; Վ. Ավագյան, «Եղանակավորող բառերը ժամանակակից հայերենում» և ուրիշներ):

Գ. Զահուկյանն իր «խոսքի մասերի կադապարային դասակարգման» մեջ կապակցական բառերի կամ «կապահարաբերական խոսքի մասերի» ներսում տեսնում է ոչ թե երկու (կապ, շաղկապ), այլ հինգ խոսքի մաս՝ կապ, ստորակապ, առկապ, շաղկապ, բառ-մասնիկ:

Այս տեսակետից մեզ հետաքրքրում են բառ-մասնիկները, որոնք հանդիպում են տարբեր խոսքի մասերի հետ և կատարում են քերականական մասնիկների (վերջավորությունների) դեր, հարում են հատկապես գոյականներին, բայերին և ածականներին»։ դրանք են՝ ածականի հետ գործածվող *ավելի-ն*, գոյականի *մի* անորոշ հոդը, բայի վրա դրվող *մի՛, պիտի, մի թող, հապա, երանի* բառ-մասնիկները, *են, տալ, լինել* օժանդակ բայերը:

Ինչպես ռուսական, այնպես էլ հայ քերականագիտության մեջ եղանակավորող բառերն ու բառ-մասնիկները մինչև 19-րդ դարի վերջերը հիմնականում համարվում էին մակբայ: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին մակբայական ծագման եղանակականներն առանձնացվում են մակբայ խոսքի մասի ներսում, որպես «եղանակական» կամ «եղանակավորիչ» մակբայներ:

Հայ քերականագիտության մեջ առաջինը Մ. Աբեղյանն էր, որ եղանակավորող բառերն ու բառ-մասնիկները, *այո՛, ո՛չ* պատասխանական բառերը, *ոչ, չը* բացասական մասնիկները առանձնացնում է մակբայներից ու լեզվական այլ կարգի միավորներից և, սրանք հակադրելով նյութական նշանակության խոսքի մասերին ու ձայնարկություններին, կապակցական բառերի հետ համարում է հայերենի ձևաբանական նշանակության բառերի կամ խոսքի մասերի համակարգը ներկայացնող

բառատեսակներ: «Այս վերջին երեք տեսակի բառերը շատ քերականներ դնում են մակբայների մեջ,-գրում է Մ.Աբեղյանը,-բայց դրանք իսկապես ձևական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության-շարահյուսության մեջ» [25,439]:

Եղանակավորող բառերի ու բառախմբերի տեսակները որոշելիս Գ.Ջահուկյանը, զուգահեռներ անցկացնելով բայի եղանակային ձևերի և եղանականիշ բառերի ու բառախմբերի ներսում իր իսկ տարբերակած ժխտման և վերաբերության կարգերի միջև, վերջիններին փոխհարաբերության մասին հանգում է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, երկու ենթակարգերի կամ, ավելի ճիշտ կարգերի համար ընդհանուրը վիճակայնության հատկանիշն է: Հապա ո՞րն է նրանց տարբերիչ հատկանիշը. դժվար չէ պարզել, որ հաստատաժխտականությունը ակնհայտ իմացական բնույթի է և հաղորդակցական արժեք ունի. այստեղ ուշադրության կենտրոնում է իր իսկ հաղորդման (խոսքի) և այդ հաղորդման (խոսքի) առարկայի հարաբերությունը (դեմոտատի մասին մի բան հաստատվում է կամ ժխտվում). վերաբերողականության դեպքում ուշադրության կենտրոնում է հաղորդման (խոսքի) և հաղորդումը (խոսքը) իրականացնող անձի և այլ անձերի փոխհարաբերությունը, սուբյեկտի կամքի և ակտիվության դրսևորումը: Այս առումով հաստատաժխտականությունը հարաբերակից է բայասեռին, վերաբերողականությունը՝ դեմքին» [51,359-360]:

Այսպես, ուրեմն սուբյեկտիվ-վերաբերողական կարգից պետք է տարբերակել հաստատաժխտական կամ, հակադրության նշույթավոր անդամի անվամբ կոչելիս, ժխտական կարգը, որպիսի մոտեցում գտնում ենք Մ.Աբեղյանի դասակարգման մեջ, որտեղ կապակցական բառերին հակադրված են, եղանակականներից տարբերակված պատասխանական (այո՛, ո՛չ) բառերը և ժխտական մասնիկները (ոչ, չ): Ժխտական մասնիկները եղանակականներից, ինչպես տեսանք, տարբերակում են նաև շատ ռուսագետներ: Հայերենում եղանակավորող բառերի ամենասեղմ ցանկը ներկայացված է *ոչ* բառով: Լայն ցանկում *ոչ*-ին ավելացվում են ժխտական-եղանակական երանգով գործածվող *բնավ, ամենևին* մակբայները, *մի՛արգելական* մասնիկը և օժանդակ բայի *չէ* ժխտական ձևը:

Գ.Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» աշխատությունում եղանականիշ բառերի դասակարգման և եղանակավորման կարգի բովանդակության պլանի պարզաբանման ասպարեզում առկա է մի ուշագրավ նորություն ևս: Ընդհանրացնելով Մ. Աբեղյանի կողմից առանձնացված պատասխանական *այո՛, ո՛չ* բառացանկը՝ Գ.Ջահուկյանը առաջարկում է «անկախ հարցուպատասխանական բառերի և բառախմբերի» հետևյալ ցանկը. «ա) հարցական՝ *արդյո՞ք, մի՞թե, բ* պատասխանական՝ *այո՛, ասենք թե, արդարև, գուցե (մի գուցե), երևի, թերևս, իբր (իբր թե), իբրև թե, իհարկե, ինչ խոսք, ինչպես չէ, իսկապես, կարծեմ, կարծես, ոչ, ոչ մի կերպ, չէ և այլն» [51,372]:*

Բուն եղանակականներից հարցուպատասխանական բառերի տարբերությունը հեղինակը տեսնում է հետևյալում. «Հարցուպատասխանական բառերը, պատկանելով եղանականիշ բառերի ու բառախմբերի ընդհանուր կարգին, բուն եղանակային-վերաբերողական բառերից տարբերվում են և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում: Արտահայտության պլանում նրանք, ի տարբերություն եղանակավերաբերողական բառերի, 1) նշանակալից մասով ունենում են հարցական և շեշտական առոգանություն և գրության մեջ սովորաբար ուղեկցվում համապատասխան նշաններով, 2) այդ բառերի հետ միասին հանդիպելու դեպքում գրավում են նախորդող դիրք, եթե առկա է դադար («Այո՛, դժբախտաբար պիտի գնամ»): Բովանդակության պլանում նրանք, ի տարբերություն վերաբերողական բառերի, որոնք արտահայտում են առաջին հերթին վերաբերմունք ու գնահատում, հանդես են գալիս որպես իմացության ձգտման ու բավարարման արտահայտիչներ» [51,371]:

Տարբեր հետազոտողների կողմից եղանակավորող բառերի մեջ մտցվող տարբեր նշանակությունների ու բնույթի բառերի բովանդակության վերոհիշյալ համառոտ քննությունից անգամ երևում է, որ եղանակավորման կարգի իմաստային սահմաններից իրենց հիմնական գործառական նշանակությամբ դուրս են մնում կամ եղանակավորող բառեր չեն՝

1. Ժխտական առանձին կարգ ձևավորող *ոչ, չէ, մի՛* բառ-մասնիկները. այդ նշանակությամբ գործածվող *բնավ, երբեք* մակբայները:

2. Պատասխանական *այո՛, ոչ* բառերը:

3. Ձևակազմական *մի՛, թո՛ղ, պիտի, մի, ավելի, երանի, ոչ, ևեթ* բառ-մասնիկները և այլն: Շաղկապը թրակացին սահմանում է որպես բառ, որ շաղկապում է միտքը որոշ կարգով և պարզաբանում բացատրության մեջ եղող խզումը. «Շաղկապ է բառ, որ շաղկապ է գտրամախոհությունն ոճով և զմեկնութեան փեռեկումնն յայտնէ» [40,295]:

Հայ մեկնիչներն ու քերականները (մինչև 18-րդ դ.) հիմնականում հետևում են այս սահմանմանը՝ առանձին դեպքերում փոփոխություններ մտցնելով շաղկապների քանակի ու դասակարգման մեջ:

Մ. Սեբաստացին շաղկապը սահմանում է շարահյուսական սկզբունքով, իբրև «մասն բանի, որ շարակցի իրերաց զմասունս բանի, նաև զինքեանս բանս» [52,235]:

Շաղկապի տեսակների մեջ թվարկում է «անկատարական» (թէպետ, ոչ թէ, թեև), «թեական» (թէ, եթէ, ապա եթէ, ապա թէ ոչ, եթէ ոչ, իսկ եթէ, ապա թէ, այլ թէ, թէ ոչ) և այլ տեսակներ:

Սեբաստացին նշում է, որ *թէ ոչ, ապա թէ ոչ* և այլ «մասնիկների հետ բայը դրվում է ստորակցական եղանակով, թեև կարող է և սահմանականով դրվել: Ապա ավելացնում է, որ արգելական և բացասական մասնիկները (*մի՛, ոչ* ևն) շեշտ են ստանում, թեև *ապա թէ ոչ*-ի մեջ *ոչ*-ը բթանում է, իսկ տարակուսական խոսքի մեջ շեշտ կամ բութ չի ստանում («Կարծեմ թէ ոչ է բարութք քեզ ընկերակցել նմին»):

Ա. Այտընյանը շաղկապների մեջ է դասում *ոչ ոք, ոչինչ, ոչ ուրեք, ոչ երբեք, ոչ ուստեք, մի ոք, մի ինչ, մի ուրեք* և այլ բառեր և ավելացնում, որ *որ ինչ, ոչ ոք, ոչ ինչ* բառերը կարող են և ածականաբար գործածվել՝ «*Ոչ ոք* ծառայ կարող է երկու տերանց ծառայել»:

Ոչ ոք, որ ինչ, ոչ ինչ, մի ինչ կապակցությունների անդամները հաճախ իրարից կամ իրենց գոյականից անջատվում են վայելչության համար՝ «Որ ուտիցէ ոք ի նմանէ՝ մի՛ մեռանիցի» (փխն. որ ոք ուտիցէ):

Մինչև 19-րդ դարի վերջը դերանունը դրվում էր «անուն» խոսքի մասի մեջ: Դերանունների դասակարգման մեջ մի շարք նորություններ է բերում Ստեփանոս Պալասանյանը (19-րդ դ.): Նա «միջական անուններից» հանում է մինչ այդ դերանուն չհամարվող ու «մասնական անուն» և «ընդհանրական անուն» եզրույթներով դասակարգված բառերը և մտցնում դերանունների մեջ, որպես «անորոշ դերանուններ»: Ուրեմն Ս. Պալասանյանի անորոշ դերանուններն իրենց մեջ միավորում են նրա նախորդների կողմից «միջական անունք» կոչված, իսկ հետագայում՝ 30-ական թվականներից սկսած՝ որոշյալ, անորոշ, ժխտական, փոխադարձ դերանունների մեջ դասված բառերը: Նա, այսպիսով, իր քերականության մեջ ընդունում է դերանվան՝ անձնական, հարցական, ցուցական, ստացական, հարաբերական և անորոշ տեսակները: Եթե սրանց ավելացնենք նաև որոշյալ դերանունները, որոնք Ս. Պալասանյանն իր «Ընդհանուր տեսություն արևելյան գրավոր լեզվի հայոց» գրքում համարում է դերանվան առանձին տեսակ, ապա կարող ենք ասել՝ Պալասանյանն առաջին հայ քերականն է, որի աշխատություններում հայերենի դերանունները ներկայացվում են անհամեմատ լրիվ տեսակավորմամբ [25,161-162]:

Բայերի ժխտական ձևերի կազմության վերաբերյալ տեղեկություններ կան թե՛ հայ, թե՛ օտարազգի լեզվաբանների մոտ: Այսպես՝ Յ. Շրյոդերը նշում է, որ *մի՛* մասնիկը (ըստ Շրյոդերի՝ մակբայը- L.U.) պահանջում է հրամայական (մի՛ խօսիր), երբեմն էլ սահմանական ապառնի (մի՛ լուցցի) և ըղձական կամ ստորադասական («Մի՛ հաւանիցիս նմա և մի՛ լուիցես նմա»):

Շրյոդերի աշխատության մեջ խոնարհման ժխտական ձևերի մասին, բացի հրամայականի արգելականից, ոչինչ չի ասված:

Նշելով, որ հեղինակներից ոմանք հրամայական եղանակի երրորդ դեմքի դրականը («ստորաասական») վերցնում են սահմ. ապառնուց, ժխտականը («բացասական»)՝ ըղձականից՝ *սիրեսցէ՛, մի՛ սիրիցէ՛*, մյուսները՝ երկուսն էլ ըղձականից՝ *սիրիցէ՛, մի՛ սիրիցէ՛*, երրորդները՝ երկուսն էլ սահմանական ապառնուց՝ *սիրեսցէ՛, մի՛ սիրեսցէ՛* և այլն, Ս. Սեբաստացին հետևում է առաջիններին: *-Ջիր* վերջավորությունը հատկացնելով հրամայական եղանակին՝ նա հիշեցնում է, որ հներն այն գործածել են նաև որպես սահմ. ապառնի:

Բայի ժխտական ձևերի մասին բավականաչափ տեղեկություններ կան Ա. Այտընյանի մոտ:

Այտընյանը գրում է. «Բացասական (կամ ուրացական կամ՝ ժխտական) կ'ըսուի բայ մ'որ գործողութիւնն ուրանալով, չէ՛ ըսելով կը բացատրէ. ինչպէս Չտիսնիլ, չեկաւ...» [18,82]:

Ինչ վերաբերում է բայերի ժխտական ձևերի կազմութեանը, ապա Այտընյանը նշում է. «Մեր մէջ բացասական բայերուն ամէն ժամանակները միակերպ չեն կազմուիր:

Ա. Սահմանական կատարեալը, ստորադասական ներկայ ու անկատարը, աներեւոյթն եւ ընդունելութիւնը կը կազմուին՝ սկիզբնին չ գիրն առնելով, այսպէս. Չլսեցի, չլսէի, չլսող, չլսած, չլսել:

Բ. Սահմանական ներկայն ու անկատարը կը կազմուին 1. *Եմ* էական բային բացասականովը, եւ 2. իւրաքանչիւր բային բացասական ձևովը:

Բայի մը բացասական ձեւը կը շինուի՝ աներեւոյթին ծայրի լ գիրը ռէի փոխելով, այսպէս. Լսիր, սորվիր: -Չեմ ըներ, չեն ըսիր: -Ասկէ կը հետեւի որ՝

Աներեւոյթ չունեցող բայերը բացասական ձեւ ալ չունին. ինչպէս են *եմ, կամ, ունիմ*:

Գ. Իսկ հրամայականին տեղ կու գայ Արգելականը (որ հրամայականին բացասականն է), եւ կը կազմուի *մի՛* բառով եւ բային բացասական ձեւովը՝ եզակիի մէջ. իսկ յոքնականի մէջ *մի՛* բառէն ետքը ստորադաս ներկայ դնելով. այսպէս. եզ. մի՛ լսիր, մի՛ մոռնար.-յոքն. մի՛ լսէք, մի՛ մոռնաք» [18,82]:

Ա.Այտընյանը նաև ավելացնում է. «Չ գիրը գրաբարի մէջ բացասական շինող է ամէն բայի ժամանակի համար անխտիր. չտիսանիմ, չտիսանէի: Բուն հին ատեններէն կը տեսնուի որ աւելի ընտանեկան լեզուաւ գրողներուն քով շատ ավելի յաճախ է չ քան թէ *ոչ*: Միջին դարերու աշխարհիկ լեզուին մէջ ոչ մակբայը գրեթէ ի սպառ վերցած է, մինչեւ որ ԺԱ, ԺԲ դարերու մէջ երեւան կ'ելլէ նոր ձեւ բացասական մը՝ էական բայով եւ ի նախդրով. Չէ ի հասանել, չէմ ի գալ: Յետոյ ԺԳ դարու մէջ կը գտնենք հիմակուան բացասականը առանց նախդիր՝ Չէմ վախնար, չէս նախանձիր:

Ստորադասականով ձեւացած արգելականը *մի՛* չառնուր. այլ կ'ըսուի՝ Չերթա՛ս, չերթայիր, թող չսպասե՛ն:

Ասկէ կը տեսնես որ *մի՛* շաղկապն արդի հայերէնի մեջ Բ դեմքէ դուրս չի գործածուիր: Այս տեսակ արգելականը հարցմամբ ալ կը բանի՝ ներկայ եւ անկատար.

Չըսե՞ս . չըսէի՞ր, բայց նշանակութիւնն արգելական չէ. այլ ըսել կ'ուզէ՝ ինչո՞ւ չես ըսեր. ինչո՞ւ չըսիր:

Բուն արգելական բայերու վրայ *մի՛* չի դրուիր այլ պարզապէս *ոչ*, երբ իրարու կապուած իրար յաջորդեն. այսպէս. Ոչ լսէ զբամբասողը, եւ ոչ խօսէ բամբասողին:

Ընդհանրապէս բացասական և արգելական խօսքերու մէջ՝ երբ երկու միեւնոյն դէմքով եւ թուով բայ ետեւ գան, միայն առաջնոյն վրայ կը դրուի չ կամ *մի՛*, որ երկրորդին վրայ զօրութեամբ կ'իմացուի. այսպէս. Մինչեւ ցե՞րբ չեն իջնար գործքերնին տեսնիր: Մի՛ երթար տեսներ» [18,87-212]:

«Հայոց լեզվի պատմութեան» երկրորդ հատորում Հրաչյա Աճառյանը բայերի ժխտական ձևերի մասին նշում է. «Հետաքրքրական է բացասական բայի կազմութիւնը.

գրաբարը մի շատ պարզ ձև ունի. նա պահում է դրականի խոնարհման ձևը անփոփոխ՝ ավելացնելով միայն *ոչ* կամ *չ* մակբայը:

Իսկ կիլիկյան հայերենը այս դրությունը շարունակում է կատարյալի և ստորադասական ներկայի և անցյալի համար, իսկ սահմանական ներկան ու անկատարը կազմում է բոլորովին նոր ոճով: -Առնում են բայի անորոշ ժամանակը, դնում են նրա վրա *ի* կամ *յ* նախդիրը և կցում են էական բայի բացասական ներկա և անկատար ձևերին. ինչպես՝ չեն յերթալ, չեն յառնուլ, չես ի կարել, չէիր ի խօսել, չէ ի վճարել, չէ ի հասնել, չէ ի տալ և այլն. եզ. գ դեմքում «չէ ի» կարող է սղվելով տալ *չէ*, ահա լոսեն բայի խոնարհումը.

չեն ի լոսել	չէի ի լոսել
չես ի լոսել	չէիր ի լոսել
չէ ի լոսել	չէր ի լոսել
չի ի լոսել	
չենք ի լոսել	չէաք ի լոսել
չէք ի լոսել	չէիք ի լոսել
չեն ի լոսել	չէին ի լոսել

Կատարյալն է չլոսեցի, չլոսեցիր և այլն, ստորադասականը՝ չլոսեն, չլոսէի և այլն: Ապառնին նույն է ներկայի հետ:

Հրամայականը գրաբարի պես լինում է մի՛ լոսել, մի՛ առնուր, բայց հետաքրքրական նկատողությամբ՝ հետևելով սահմանականին, մերթ ծայրին *ր* դարձնում է *լ* և մերթ էլ իբրև երկրորդ դեմք դարձնում է *ա*. ինչ. մի՛ տալ, մի՛ առնուլ, մի՛ արծկեր, մի՛ շինիս, մի՛ դնես և այլն:

Սահմանականի բացասականի այս ձևը ուրիշ բան չէ, եթե ոչ մի տեսակ ներգոյական. չեն ի լոսել, չեն ի տալ նշանակում են լոսելու գործողության մեջ չեն, տալու գործողության մեջ չեն և այլն» [17,250-251]:

Մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ժխտական դերբայը որպես ինքնուրույն դերբայական ձև անծանոթ է եղել հայ քերականագիտությանը: Այն որպես առանձին դերբայ ժամանակակից հայերենում ճանաչվել է պրոֆեսոր Արարատ Ղարիբյանի կողմից:

Ա. Ղարիբյանը ժամանակակից գրական հայերենի բայի պայմանական եղանակի երկու ժամանակների (ապառնի և անցյալ ապառնի) ժխտական ձևերի կազմության մեջ բայի չփոփոխվող մասը իրավացիորեն համարում է առանձին դերբայ և այդ դերբայի ու ըղծական եղանակի ապառնի ժամանակի եզակի թվի երրորդ դեմքի լոկ ձևական նմանության հիման վրա իր կողմից դիտված դերբային «ըղծական» պայմանական անունն է տալիս:

Հետագայում նա այդ դերբայն անվանում է «ժխտման դերբայ»:

Այսպիսով՝ ամփոփելով վերոհիշյալ փաստերը՝ կարելի է նշել հետևյալը.

1. 5-19-րդ դդ. քերականական աշխատություններում դեռևս հստակ ընդգծված չեն խոսքի մասերի սահմանները. դա կատարվել է ավելի ուշ:

2. Դրանով պայմանավորված՝ ժխտական դերանունների վերաբերյալ վաղ շրջանում առկա են մասնակի տվյալներ:

Հայերենի լատինատիպ քերականությունների վերոհիշյալ շրջանում դերանունը շարունակում է համարվել անվան փոխարինող և «էության» կամ «գոյացության» դեմքը որոշակիորեն ցույց տվող խոսքի մաս: Այդ պատճառով էլ դեմք ցույց չտվող դերանունները (որոշյալ, անորոշ, հարցական, փոխադարձ, ժխտական) ոչ թե դերանուն, այլ առանձին տեսակի անուն կամ պարզապես «միջական անուն» են համարվում:

3. Ժխտական մասնիկները մտցվում են հիմնականում մակբայ խոսքի մասի մեջ: Սա հետագայում փոփոխության է ենթարկվում և 19-րդ դարում եղանակավորող բառերի՝ առանձին խոսքի մաս դիտվելուց հետո, այդ բառ-մասնիկները մտցվում են եղանակավորող բառերի մեջ:

4. Հին շրջանի աշխատություններում հստակորեն չեն գծագրվում բառակազմության և ձևաբանության սահմանները, ինչն էլ պատճառ է դառնում այդ մակարդակների միավորների ոչ տարանջատ դասակարգման: Այս կերպ նախդիր-նախադրության մեջ քննարկվում են նաև ածանցները (այդ թվում նաև ժխտական ածանցները):

5. 19-րդ դարում, երբ լեզվաբանությունը ձևավորվեց որպես ինքնուրույն գիտաճյուղ և եվրոպական ու ռուս լեզվաբանության մեջ մեծ թափ ստացան լեզվաբանական ուսումնասիրությունները, հայ լեզվաբանական միտքը ևս անմասն չմնաց այդ համընդհանուր առաջընթացից, և դա տվեց իր արժեքավոր արդյունքները:

ԳԼՈՒԽ 2

ԺՆՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայերենը ժխտման արտահայտության համար ունի լեզվաբանական տարբեր մակարդակների պատկանող միջոցներ: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) ժխտման արտահայտության բառակազմական միջոցներ. սրանք են ժխտական ածանցները:

բ) ժխտման արտահայտության ձևաբանական միջոցներ (ժխտական դերանուններ, բայի ժխտական ձևեր, ժխտական դերբայ, ժխտական մակբայներ, ժխտական կապեր, ժխտական շաղկապներ, ժխտական եղանակավորող բառեր):

գ) ժխտման արտահայտության շարահյուսական միջոցներ (նախադասության ժխտական կառուցվածք, ժխտական միակազմ նախադասություններ, ժխտական բառ-նախադասություններ):

§1. ԺՆՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ժխտման արտահայտության բառակազմական միջոցներն, ինչպես նշել ենք, ժխտական ածանցներն են:

«Լեզվաբանական բառարանում» ածանցը սահմանվում է որպես «երկրորդական ձևությամբ, որոնք ավելանալով արմատին բառ են կազմում, ավելանալով բառահիմքին (սկզբից, վերջից) փոխում են բառի նշանակությունը, նոր բառ են կազմում» [48,6]:

Ա. Սուքիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ նշում է. «Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազմական այն ձևությամբ, որը կցվելով բառարմատին կամ հիմքին, փոխում է նրա իմաստը, կազմում է նոր բառ, նոր իմաստով» [61,253]:

Հայ քերականության մեջ «ածանց» եզրույթը նախապես գործածվել է «մասնիկով կազմված բառ» նշանակությամբ: Մ. Աբեղյանի կողմից ընդունվել է բառակազմական մասնիկ նշանակությամբ:

Ածանցի հավելումը, կցումը, միացումը բառին (կամ բառարմատին), որի հետևանքով փոխվում է բառի նշանակությունը կամ կազմվում է նոր բառ, կոչվում է ածանցում: Ածանցումը հայերենում նոր բառերի ստեղծման եղանակներից կամ միջոցներից մեկն է:

Ըստ բառի կամ հիմքի նկատմամբ գրաված դիրքի՝ ածանցները բաժանվում են նախաածանցների և վերջածանցների:

Նախաածանցները բառակազմական այն ձևությամբ են, որոնք կցվում են հիմքի կամ բառարմատի սկզբից: Ժամանակակից հայերենի նախաածանցները վերջածանցների համեմատությամբ փոքրաթիվ են:

Իմաստաբանական պլանում առանձնանում են ժխտական ածանցները, որոնք հիմնականում նախածանցներ են (ան-, ապ-//ապա-, դժ-, չ-, տ-): Ոմանք այս հանգամանքից ելնելով՝ մյուսները կոչում են *դրական՝ հաստատական ածանցներ*:

«Լեզվաբանական բառարանում» ժխտական նախածանցները սահմանվում են հետևյալ կերպ. «Այն նախածանցները, որոնք դրվելով բառի վրա՝ ժխտական բովանդակությամբ նոր բառ են կազմում» [48,115]:

ժխտական նախածանցները հայերենի բուն նախածանցներն են, որոնք բնորոշ են հայերենի զարգացման բոլոր շրջաններին:

ժխտական նախածանցներն են՝ *ան-, ապ-//ապա-, դժ-, չ-, տ-*:

Ան- նախածանցը ամենակենսունակ նախածանցներից է: Այն ունի հնդեվրոպական ծագում և կենսունակ էր թե՛ նախագրային (հմմտ. *անամպ, անայր, անանձն, անանուն, անարգել, անգործ, անդունդ, անեզր, աներկիւղ, անթառամ, անլոյս, անլուսին, անծանալթ, անձայն, անմիտ, անպտուղ, անջուր, անւերմն, անսուտ, անփործ*), և թե՛ գրային շրջաններում:

Հայերենի *ան-* ժխտական նախածանցը համարժեք է սանս. *a-*, հուն. *α-*, լատ. *in-*, գոթ. *un-*՝ *h.-ե. ց.* ձայնավորից առաջ՝ *en-* [70,118]:

Ան- նախածանցը ժխտական, բացասական իմաստով ածականներ է կազմում գոյականներից, ածականներից և բայարմատներից:

1. *Ան-* նախածանցը տարբեր գոյականներից կազմում է ժխտական՝ «որևէ բան չունենալու», «որևէ բանից զուրկ լինելու» իմաստով ածականներ (այսինքն՝ այն գոյականը, որի վրա դրված է լինում *ան-* մասնիկը, բացասվում է և ցույց է տալիս այդ բանը չունեցող, այդ բանից զուրկ կամ առանց այդ բանի), ինչպես՝ *անգործ*՝ «գործ չունեցող» կամ «առանց գործի», *անխելք*՝ «խելք չունեցող» կամ «առանց խելքի»:

Այս իմաստով *ան-* նախածանցը գործածվում է հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Ջի էին ընդ նմա սպառազէնք վառեալք արք իբրև երեք հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ *անկասկած* լինէր (Ե,82)²: Եւ գտեալ *անկարիսպ* զքաղաքն և *անթիւ* բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և *անհամար* չափս ոսկւոյ և արծաթոյ (ԽԸ,112):

Միջին հայերենում. Ջօրք իմ *անթիւ* առ իս կային...(ԻԴ,87): Էիդ լուսոյ *անստուերք*... (ԼԷ,40): Երթանք, յայն աշխարհ կենանք, որ *անվախ* կենանք ալանի... (ԾԱ,96): Թէ խելք ունինք նա՛ հանց կենանք, զինչ աստուծոյ սիրտն ուզենայ՝ Սուրբ եւ *անթիծ* և *անարատ*, որ զբարին յերակ հոգայ (ԾԳ,32):

Արևմտահայերենում. Չէ՛, մի՛ ըլլար, *անգո՛ւթ*, այդչափ եսասեր... (ԻԸ,191): Ի՞նչ *աներես* մարդ են եղեր այս տեղաց մարդերը...(ԼԸ,7): Երբ հույսի Ուղտն, ալ խոնջ, ծալե

² Փակագծերում տրված տառը (Ե) սկզբնաղբյուրի համարն է, թիվը (82)՝ էջը:

ծունկերն իր Անապատին մեջ օրերուս *անծաղիկ*...(ԽԴ,451):

Արևելահայերենում. Արի՛, թըրի՛ր, գընանք ինձ հետ, *Անցա՛վ, անհո՛գ, անհո՛ւշ, անհե՛տ*...(ԺԶ,206): *Անգիր*, և՛ անհայտ, և՛ *անհիշատակ*՝ Ամայի դաշտում մի գերեզման կա...(ԺԷ,230): *Անաղմուկ, անտրտունջ, անհնչյուն* Գալիս ես ու նորից հեռանում... Լուսերե՛ս, *անմարմին, անանո՛ւն*...(ԽԵ,172):

Բացասական նշանակությամբ նման ածականներից որոշ դեպքերում –*ություն* ածանցով կարելի է կազմել նոր գոյականներ նույն բացասական նշանակությամբ, որոնք առարկայացված հատկանիշի բացակայություն են ենթադրում: Այսպես՝ անամոթ-անամոթություն (ամոթ չունենալը, անամոթ լինելը), անխելք-անխելքություն (անխելք լինելը, խելք չունենալու հատկանիշը), անգործ-անգործություն (անգործ լինելը//մնալը):

2. Ածականներից *ան-* ժխտական նախածանցով ձևավորվում են ժխտական և բացառողական հատկանշային իմաստ արտահայտող ածականներ [19,399]: Այստեղ *ան-* բացասական մասնիկը համազոր է *ոչ* բառին, ինչպես՝ անագնիվ՝ «ոչ ագնիվ», անգրագետ՝ «ոչ գրագետ», անկեղծ՝ «ոչ կեղծ»:

Այս կիրառությամբ *ան-* ածանցը կենսունակ էր հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Եւ զութ ամ *անհանգիստ* կայի...(ԽԸ,124):...Եւ եղեն վնասք մեծամեծք ի սահմանսն ի մէջ երկուց *անհաշտ* թշնամեաց (Ժ,168): Երկրպագութիւն եկեալ *անարի, անբարի* անհեղեղ կենդանին՝ վիմահասակ փիղ (ԻԳ,200):

Միջին հայերենում. Կամ՝ անձրևաց գալ անչափին, կամ՝ *անխոնաւ* խիստ երաշտին...(ԼԷ,170): Սեաւ ամպ մթին, կարկտաբեր՝ զքեզ արասցէ *անպտղաբեր*...(ԼԷ,178):

Արևմտահայերենում. Վասնզի անոնք երբեմն միամիտ են և երբեմն խորամանկ կը ձևանան, ժամ մը գիտուն, մերթ՝ անաչառ... մերթ՝ *անկեղծ*... (ԼԸ,73): Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն *անանձնական*...(ԻԸ,133):

Արևելահայերենում. Այդ *անհաջող* հանդիպումը տխուր տպավորություն արավ իշխանի վրա (ԻԹ,74): Լավ չեն գործերդ, Արշակ, *անչար* քնծիծաղ տվեց արքան... (ԺԲ,267): Մթնածորում սկսվեց *անհավասար* մի կռիվ մարդու և գազանի մեջ (Դ,31):

Ան- նախածանցն առանձնապես կենսունակ է *-ելի, -ալի* վերջածանցներ ունեցող բառերի հետ: Այս տիպի կառույցներում նախատիպերի բառակազմական նշանակությունն է «տվյալ գործողությունը կատարելու կամ կրելու կարող՝ ընդունակ»: *Ան-*ով բաղադրություններն ունեն «նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու կամ կրելու անկարող, անընդունակ» բառակազմական նշանակությունը [19,399],[27,62]:

Ինչպես նկատել են Վիեննայի Մխիթարյանները, և ինչպես ընդհանրացրել է Հր. Աճառյանը, *ան-* մասնիկով կազմված բացասական բառերը սովորաբար իրենց վերջում չեն կարող կրել *-ելի* մասնիկը [20,92]: Սակայն, չնայած դրան, 5-րդ դարի հայ

պատմիչների երկերում, այնուամենայնիվ, հանդիպում են *ան-* ժխտական նախածանցով և *-ելի* վերջածանցով կազմված բառեր:

Ամենամեսրոպյան համարված Եզնիկ Կողբացին ունի *անբժշկելի* ձևը. «Մեծ հերձուած և *անբժշկելի* չարիք է այնպիսի առաջնորդութիւնն» (Եզն.,312): Աստվածաշնչում կա *անփոփոխելի*, Փ.Բուզանդն ունի *անջնջելի*, Ագաթանգեղոսը՝ *անըմբռնելի*, *անկշռելիութիւն* և այլ ձևեր:

Ինչ վերաբերում է այդպիսի կազմություններին հետագայում, ապա պետք է նշենք, որ արդարև, դրանք 5-րդ դարից հետո անհամեմատ բազմանում են. Գ.Նարեկացին հարյուրավոր այդ տիպի բարդություններ ունի: 5-րդ դարի հեղինակներից այդպիսի բարդություններ հաճախ է կիրառում Մ.Խորենացին. *անակնունելի*, *անբաղձալի*, *անդառնալի*, *անըմբռնելի*, *անխզելի*, *անխոնարհելի*, *անկարելի*, *անհասանելի*, *անհաւատալի*, *անմատչելի*, *անյիշատակելի*, *անյիշելի*, *անպարտելի*, *անտանելի*, *անքթթելի*. ընդամենը 16 անգամ: Մի քիչ ավելի պակաս է գործածել Եղիշեն՝ *անգատելի*, *անբաժանելի*, *անըմբռնելի*, *անթողելի*, *անլինելի*, *անլուծանելի*, *անկասկածելի*, *անհաւատալի*, *անմերժելի*, *անմերժենալի*, *անշիջանելի*, *անտեսանելի*: Իսկ Ղ.Փարպեցին ունի ընդամենը 4 բառ՝ *անապականելի*, *անկարծելի*, *անհաւատալի*, *անմեղադրելի* [20,98-99]:

Այն, որ այսպիսի կազմությունները հետագայում առավել լայն կիրառություն են ստանում, վկայում է Մ. Ուռհայեցու և Գ. Նարեկացու աշխատություններում դրանց համեմատաբար տարածված գործածությունը:

Այսպես՝ Չարչարեալ մարմնովն անչարչարելի Աստուածութեամբն, բաւանդակելի մարմնովն, *անբաւանդակելի* Աստուածութեամբն, գնոյն ինքն... տեսանելի և *անտեսանելի*, տարեալ և *անտանելի* (ԽԸ,188): Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու...*Անտանելի*, *անմերժենալի*, *անըմբռնելի*, *անհմանալի*, *Անճառելի*, *անտեսանելի*, *անզննելի*, *անշաւշափելի*, *Անորոնելի*, անսկիզբն, անժամանակ... (ԼԱ,254):

Միջին հայերենում. Տացուք քեզ փառս *անլռելի* (ԼԷ,36): Եկեղեցիդ *անշարժելի*, ի Կեփայեան շինեալ վիմի,Դրանց դժոխոց՝ *անյաղթելի*, և կնիք երկնիցն բացողի... (ԼԷ,70): Եւ փառքս տամք երից անձինդ *անբաժանելի* համագոյ (ԾԳ,37):

Արևմտահայերենում. Քանի մը օր առաջ, երբ արտասվահառաչ այս *անմատչելի* լեռները կը թափառեի, հանկարծ երգի մը ձայն առի...(Թ,60): Ու երջանիկ պիտի ըլլար հոդ ապրելուն, եթե մորաքրոջ երկու աղջիկները *անտանելի* չդարձնեին իր կյանքը (ԺԳ,7): Կան՝ որ թաքուն գորովներ կիեծեծեն՝ և *անկարելի* սերեր կան որ դեռ երջանկության հետ կարծես կխոսին (ԽԱ,160):

Արևելահայերենում. Նրա ականջին էր հասնում անկապ խաբարներ, լսում էր *անհասկանալի* խոսքեր (Դ,42): Օ՛հ, ինչպե՞ս *անդառնալի* անցան մանկական այդ քաղցր օրերը...(ԻԹ,22): Ազգ իմ, այժմ, անսա խոսքիս ճշմարիտ, Ջանա մնաս *անծուլելի* մարգարիտ (ԼԳ,121):

3. *Ան-* նախածանցով ածականներ են ստեղծվում նաև բայարմատներից ու բայահիմքերից: Այս դեպքում ստեղծված ածականները հանդես են գալիս հարակատար և ենթակայական դերբայների ժխտական ձևերի նշանակությամբ [19,399], [41,256], ինչպես՝ անթառամ՝ «չթառամող, չթառամած», անաճ՝ «չաճող», անխնամ՝ «չխնամված», անիմաց՝ «անիմանալի»:

Հատկանշական է, որ *ան-* նախածանցով բայարմատներից ու բայահիմքերից կազմված ածանցավոր ածականների վերջածանցները դուրս են ընկնում:

Սրանցից որոշ դեպքերում *-ություն* ածանցով կազմվում են գոյականներ՝ նույն բացասական նշանակությամբ, ինչպես՝ անաչառ-անաչառություն, անշարժ-անշարժություն, անկախ-անկախություն:

Այսպիսի կառույցներ առկա են հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Այլ կայցեն ՚ի հաւատս *անշարժ* իբրև զվէմ...(Ե,24): Խարդաւանող խորհրդովք տարեալ մեկուսի, Եւ *անողորմ* խոցոտմամբ վիրաւորեաց զվեհագնն (Ծ,69): Զբազում *անբնակ* երկիր ելից բնակչօք...(ԻԱ,58):

Միջին հայերենում. *Անանց* գեհենըն վառէ զիս...(ԾԳ,25): Ի քեզ նայիմք, լոյսդ *անմատոյց*...(ԼԷ,40): Հայր և սուրբ Հոգի՛, *Անեղ* և *անմահ* բնութիւն... (ԼԷ,42):

Արևմտահայերենում. Կպատռե *անխնա* ճիրաններուն տակ արնոտ... (ԽԴ,460): Հերկն *աննվաճ* ալիք մըն է... (ԽԴ,476): Իմ ձեռքերը դեռ *անվարժ* են...(ԽԱ,149): Այս հարձակումներուն տակ՝ ճամփված դասատուն *անդարձ* կորսված կը զգար ինքզինքը (ԺԳ,136):

Արևելահայերենում. Տրվում են եւ *անվերադարձ*...(ԼԹ,251): Զիդ *անխնամ* ես թողել (ԺԹ,394): Շարմաղ բիբին *անընդհատ* լալիս էր...(Դ,217): Ամենից *անհամբեր*ը երիտասարդներն են (Դ,238):

Միջնադարյան քնարերգու Ներսես Շնորհալու մի երկում գործածված է *ան-* նախածանցի և դերանվան համադրությամբ ստացված բառաձև, որին չենք հանդիպել այլ գրողների երկերում. «Այրէ իսպառ, բայց ոչ ծախէ. անհատ պահէ միշտ ի յերեր, Ոչ զամս հազար և կամ զերկուս, և ոչ հարիւր հազար բիւրեր, Այլ անվախճան է և *աներբ* և յաւիտեան անպարաբեր...» (ԼԷ,188): *Աներբ*-ը թերևս գործածվել է «ոչ մի ժամանակ» իմաստով և ցույց է տալիս, որ նշված երևույթը ժամանակային սահմանափակման չի ենթարկվում:

4. *Ան-* ժխտական նախածանցը անորոշ և հարակատար դերբայներից կազմում է բազմաթիվ ածականներ՝ ժխտական կամ բացասական նշանակությամբ [41,256]:

ա) Անորոշ դերբայից *ան-* բացասական մասնիկով կազմված են բազմաթիվ ածականներ (կամ մակբայներ) մեծ մասամբ բարբառներում (մասամբ էլ կենդանի խոսքի մեջ), որ մուտք են գործել գրական նոր լեզվի մեջ, այսպես, օրինակ՝ անխմել՝ «առանց խմելու, ծարավ», անկտրել՝ «առանց կտրելու, չկտրած», անթաղել՝ «չթաղած», անմաշել՝ «անմաշ», անմտածել՝ «առանց մտածելու», անվարել՝ «չվարած» և այլն:

բ) Հարակատար դերբայից ան- բացասական մասնիկով կազմված են որոշ թվով ածականներ՝ ինչպես հին հայերենում, այնպես էլ կենդանի խոսքի մեջ, այսպես, օրինակ՝ *անողորմած* «ոչ ողորմած, ողորմություն չտվող» (գրբ.), *անճրկած* «շվարած, մոլորված» (անճրկելի < անճարակել բայից՝ բրբռ.), *անգարգացած* «չգարգացած», *անգործած* «չգործված, չհյուսված»(բրբռ.): Արդի հայերենում նման ձևեր սովորաբար չեն պատահում:

Գրաբարում կան նաև *ան-* մասնիկով բացասված, որպես ածական գործածվող անցյալ դերբայի բազմաթիվ ձևեր, այսպես, օրինակ՝ *անհայածեալ*՝ «չհալածված», *անկատարեալ*՝ «ոչ կատարեալ», *անգբաղեալ*՝ «անգբաղ», *անգարգացեալ*՝ «անգարգացած, չգարգացած», *անեփեալ*՝ «չեփած» և այլն:

5. *Ան-* ժխտական նախածանցն ավելանում է նաև մակբայական հիմքին, որը կարող է լինել ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր: Ընդ որում առավելապես հանդիպում են *-բար, -պես, -որեն* ածանցներն ունեցող հիմքերի և *ան-* նախածանցի համադրությամբ առաջացած ձևերը:

Գրաբարում. Սիրեաց զլերինս և զամայութինս և զհանդարտութեամբ մտաց յինքեան կեալ, որպես զի խօսեսցի ընդ Աստուծոյ *անբաղապէս...* (ԻԱ,296):...Ասէ՛ թէ Շատիկ իմ բնական տեղի է, որ *անհրաւբար* տարաւ յինէն Սմբատ (ԺԸ,25):

Ան- ժխտական նախածանցով մակբայական հիմքերից կազմված ձևեր հանդիպում են Ագաթանգեղոսի (*անմտաբար*), Մ.Կաղանկատվացու (*անեղապէս, անճառապէս*), Մ. Խորենացու (*անկասկածաբար, անխլաբար, անհարթաբար, անպաճուճաբար, անընչասիրաբար, անժուժաբար, անկարգապէս*), Ղ.Փարպեցու (*աներկիւղապէս*) երկերում:

Միջին հայերենում. Եւ թէ ոք յանդգնի *անկարգաբար* ասել՝ դատապարտի (Է,56): Աւաղ և հրզօր արքայ...Քարշ կու գաս դու *անդրուժաբար* (ԻԴ,61): Ջերիտասարդս և զմանկտիս *անխնայապէս* խողխողէին (ԼԷ,130):

Արևմտահայերենում. Պատվիրել էր ամենուն, որ գարնան սկիզբը *անդանդաղ* պետք է հասնիլ Դվին (ԻԲ,316): Պարտեզին մեջ բարտիներուն ըստվերներն *Անհունորեն* կերկարին (ԽԴ,450): Մութ երկնքին վրա *անօգուտորեն* ու երջանկորեն Գիշերներով իրենց հույսին աստղերը փնտրեցին...(ԽԱ,117):

Նկատելի է, որ արևմտահայերենում այս տիպի կառույցներում առավելապես հանդես են գալիս *-որեն* ածանցով մակբայական հիմքեր:

Արևելահայերենում. Հարթ կտուրներին ծփծփում էին *Աներեսորեն* կանաչած խոտեր...(ԽԳ,72): Արքան *անշտապ* վերադարձավ իր տեղը (ԺԲ,86): Ինչո՞ւ արքան պիտի տառապի ուրիշների համար, իսկ իր հորաքրոջ որդին *անամոթաբար* լողա վայելքների մեջ...(ԺԲ,17):

Մի շարք բառեր, որոնց սկզբնաձևերը բացասական իմաստային երանգ են արտահայտում, ստանալով *ան-* ժխտական նախածանցը, ժխտում կամ բացասում են

այդ նշանակությունը (բացասական), դրանք վերածում են դրական իմաստ ունեցող բառերի, ինչպես, օրինակ՝ կեղծ-*անկեղծ*, թերի-*անթերի*:

Ան- նախածանցով և «ունեցողի» նշանակությամբ մի շարք վերջածանցներով (հմմտ. -*եղ*, -*ուն*, - (*ա*)*վոր*, -*անի* ևն) բաղադրված բառերը կազմում են իմաստային հակադիր գույգեր, ինչպես, օրինակ՝ մեղավոր-*անմեղ*, արժանի-*անարժան*:

Հաճախադեպ են *ան*- նախածանցի գործածության դեպքերը -*ին*, -*ի* վերջածանցներն ունեցող բառերի հետ: Այդպիսի կառույցներ առկա են հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Դատապարտիւր *ան*հնարին հսկայն, և յաղթողանայր քաջն Բաբիկ... (ԻԳ,110): Քանզի *անտեղի* է մեզ այժմ երկրորդել զառասպելսն...(ԻԱ,250):

Միջին հայերենում. Աւա՛ղ յիշմանս այս երկրորդին, Որ զիս խոցեաց *ան*հնարին (ԻԴ,89): Ծեծէին զիս, հարկանէին, *ան*հնարին տագնապէին... (ԼԷ,110):

Արևմտահայերենում...Սրտիս մեջն ես...*ան*հարկի աչքերե ծածուկ տեղն ես դուն...(ԺԳ,172): Հակոբիկ ընդդիմություն չըրավ այս ամենուն...այնքան *ան*հնարին էր այս ամենը (ԺԳ,183):

Արևելահայերենում. ...Ոչինչ էնքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի համար, որքան հայ դերասանի անձաշակ լավկանությունը...*անտեղի* աղաղակները... (ԺԶ,410): -*Ան*հնարին է հայերի այս ամրությունը ճնշելը, տե՛ր մեր (Ի,125): Պառավն *անտեղի*, Զուր է տեղ զցել Քնելու համար...(ԽԲ,24):

Ան- նախածանցը հանդես է գալիս նաև -*ական* ածականակերտ ածանցով բառերի հետ: Այսպիսի կազմությամբ ձևերն առկա են հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու...*Ան*զղջական տուր, ամենաբաշխ աջ...*ան*մանական տիպ, *Ան*զուգական գուր... (ԼԱ,255):

5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսը կիրառել է *անզգայական*, *անձանաչողական*, *անորոշական*, *անհնարական*, *անսահմանական*, *անստեղծական*, *անտարրական*, *անզրաւական* (անվախճան), *անկանգնական*, Մ.Խորենացին՝ *անանցական*, Եղիշեն՝ *անտրտմական*, Ղ.Փարպեցին՝ *անգիտական*, *անյարական* (անկանգնելի), Գ. Նարեկացին՝ *անբժշկական*, *անկրթական*, *անուղղական*, *անվարժական*, *անխրատական*, *անգործական*, *անմաքրական*, *անպտղական*, *անխնամական*, *անկանգնական*, *անզուական*, *անհաշտական* բառերը:

Միջին հայերենում. Աղբերացն *ան*ապական որ յետ մահու *ան*մահական... Լըւա՛ դարծեալ յաւազանին թէ ոչ շնորհօք, այլ արտասուօք (Զ,514): Տեսեալ ի փառս *ան*զուգական, չար նախանծու բորբոքեցան...(ԼԷ,104):

Արևմտահայերենում. Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն *ան*անձնական... (ԻԸ,133): Նյութական ամեն բան հատեր *ան*նյութականն էր միայն մնացել (ԻԲ,361):

Արևելահայերենում. Այդ ժամանակ...նույնպես ուրախ չէր յուր սիրտը. հայոց թագավորը նահատակված...արքայորդին *ան*օգնական (ԻԹ,65): ...Թաղի կանայք,

որոնց մի առանձին հաճույք էին պատճառում նրա *անզուգական* հայիոյանքները, դրդում էին որևէ չարաձժի երեխայի, որ գնա չարացնի Հոպոպին (Լ,61):

-*Ական* ածանցը, որն ածականակերտ ամենակենսունակ վերջածանցն է, ունի «մի բանի կամ մեկին վերաբերող» բառակազմական ընդհանուր իմաստը: *Ան-* ժխտական նախածանցը ստանալով *-ական* վերջածանցով բառերը ստանում են «մի բանի կամ մեկին չվերաբերող, մի բան չունեցող» իմաստը, ինչպես՝ *անանձնական* «անձի չպատկանող, անձին ոչ հատուկ», *աննյութական* «նյութից չպատրաստված, ոչ նյութական» և այլն:

Ան- նախածանցը հանդես է գալիս նաև *-ություն* ածանցն ունեցող վերացական գոյականների հետ: *-ություն* ածանցը, որ կենսունակ գոյականակերտ վերջածանցներից է, կցվելով տարբեր խոսքի մասերին պատկանող հիմքերին, գործուն մասնակցություն է ցուցաբերում բառակազմության մեջ: *Ան-* նախածանցն, ավելանալով *-ություն* վերջածանցն ունեցող բառերին, բացասական երանգ է հաղորդում նրանց (հմմտ. *անիրավություն*, *անգիտություն*) կամ հակառակը, բացասական իմաստ արտահայտող բառերին հաղորդում է դրական երանգ (հմմտ. *անկեղծություն*):

Այսպիսի կազմություններ հանդես են գալիս հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Նոյն ինքն անբովանդակելին խանձարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն... (ԻԳ,124): Այլ և չպահեցողութեամբ և *անժամակերութեամբ* եպերէին (ԽԹ,454):... Թո՛յլ տուք ինձ, *անհոգութեամբ* ըստ իմում չափուս *անարժանութեամբ* զկանս իմ...անցուցանել (Ե,110):

Միջին հայերենում. Հալածեա ի հոգւոյ իմնէ՛ զխաւար մեղաց և *անգիտութեան*... (ԼԷ,44): Եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զ*անիրաւութիւն*, Եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս *անօրինութեան*... (ԼԷ,48):

Արևմտահայերենում. ...Թե որ իմ անունիս քողին տակ ամեն *անկարգություն* պիտի տիրե, ես գիտեմ հորս ետևեն երթալու ճամփան (ԻԲ,151): Քե՛զ, չարագոր օրենքներու և անչափելի *անարդարության* այսօրվան մարդկության... (ԽԱ,158):

Արևելահայերենում. Նրա ավեհեր դեմքի վրա դառն *անհուսություն* կար (Դ,224): Կախելու արժանի են այն իշխանները, որոնք հարստահարում են ամբոխի այդ *անմտությունը* (ԻԹ,40):

Աշխարհաբարում *ան-* ժխտական նախածանցը գործածվում է նաև *-ակ* վերջածանցն ունեցող բառերի հետ, ինչպես.

Արևմտահայերենում. Ասկե ավելի մեծ լլկում մը իր վճիտ ու նրբութեանց *անգիտակ* խղճմտանքին առջև չէր կրնար պատկերանալ (ԺԳ,120):

Արևելահայերենում. Երկինք խոյացած զանգակատնում Կախել են մի նո՛ր-*անկեզվա՞կ* մի զանգ... (ԽԳ,19):

Արևելահայերենում սովորական են այնպիսի երկբաղադրիչ կազմությունները, որոնցում բաղադրիչներից մեկը (հիմնականում առաջին բաղադրիչը) դրական ձև է

(առանց *ան-* ածանցի), մյուսը (երկրորդ բաղադրիչը)՝ նույն բառի ածանցավոր տարբերակը, ինչպես՝ Արձանը, քաղաքն ու համազգային սուզը մշտական նախատինք կղառնան իր համար, ամեն թույլ փոշու պես աչքը կմտնեն ու տեղի-անտեղի ցավ կպատճառեն իրեն... (ԺԲ, 187): Նա է ինձ ագնիվ-անագնիվ դարձնում... (ԽԲ, 383):

Արևելահայերենում գործածական են նաև այնպիսի կրկնավոր բարդություններ, որոնցում երկու բաղադրիչները պարունակում են *ան-* ժխտական նախածանցը, այսպես՝ Ահավասիկ այս խնձորը... Կամ այս դեղձը՝ Անձեռակերտ-անստեղծ... (ԽԲ, 438): Աշխարհի բոլոր-բոլոր ծայրերից Անձանոթ-անհայտ մարդիկ բյուրավոր Դարձրել են ինձ գաղտնարանն իրենց... (ԽԲ, 526): Եւ արաբական անբեղ-անմորուք անապատներում ծաղկեց ... ոսկորը... (ԽԳ, 262): Երկինք-գետինք գլխուս մթնան, Անտուն-անտեր կուլամ ես... (ԺԷ, 32):

Ան- ժխտական մասնիկի փոխարեն մեսրոպյան հայերենը հաճախ կիրառում է *առանց* նախադրությունը, ինչպես՝ առանց հասանելոյ (անհաս), առանց գիտութեան (անգետ) և այլն:

Ոչ մեսրոպյան հեղինակ Խորենացին գրում է. «Ոչ կարեն հօտք *առանց հովուաց* լինել և հովիւք *առանց* բարիոք *վերակացուի*» (ԻԱ, 311): «Առանց հովուաց» նշանակում է «անհովիվ», «առանց վերակացուի»՝ «անվերակացու»:

Ան- ժխտական նախածանցով կազմված մի շարք բառեր ունեն *-գուրկ* ձևությամբ ձևավորված նույնարմատ հոմանիշներ, որոնք, հանդես գալով գործառական տարբեր ոճերում, բացասում են հատկանիշի գոյությունը, այսպես՝ *անգործ-գործագուրկ, անձայն-ձայնագուրկ, անկամ-կամագուրկ, աննագ-մագագուրկ*.

Ս. Էլոյանը գրում է, որ բացի ժխտական *ան-* նախածանցից հայոց լեզուն իր զարգացման հնագույն շրջաններում (թերևս նախագրաբարյան, քանի որ գրաբարյան շրջանում ևս հիշյալ ածանցն արդեն քարացած կազմություն էր) ունեցել է նաև ոչ ժխտական նշանակություն ունեցող համանուն *ան-* նախածանցը՝ «վրա, վրայով, դեպի» նշանակությամբ [32, 179]:

Հիշյալ ածանցով քարացած ձևով պահպանված են հետևյալ կազմությունները՝ անձեռոց կամ անձեռոցիկ (ան-ձեռք=ձեռքի վրա կամ ձեռքի վրայով), անոտնյա (գահի կամ աթոռի տակ պատվանդան=ան-ոտն-եայ), անկողին (ան-կող=կողքի վրա), անբահի (բահակոթի վրա հազգված փայտը), անթփել (ան-թափ-ել=թոնրի կողից կամ շուրթից հացը պոկվել, ընկնել), անգոսանել (ան-կույս, կողմ, որից և գոյս =ներքև գցել, խփել, արհամարհել), անթեղ (անթեղ/ել) և ծածկել, թաղել արմատից, որի հիշյալ ածանցված ձևը նշանակում է կրակի մնացորդները մոխրի մեջ ծածկելը, պահելը և այլն [32, 179]:

Ինչպես իրավամբ նկատում է պրոֆ. Ա. Սարգսյանը, *ան-* նախածանցը ներկայացվում է իբրև միայն ժխտում արտահայտող ածանց, այնինչ *ան-*ը ունի նաև չափազանցության իմաստ՝ սահման-անսահման (*անսահմանը* նշանակում է ոչ թե սահման չունեցող, այլ չափազանց մեծ, լայն) [56, 114]:

Ա. Սարգսյանը նաև ավելացնում է, որ *ան-* ժխտական մասնիկը կարող է ծառայել որպես որակական և հարաբերական ածականները բացահայտող ցուցիչ: Հարաբերականները երբեք *ան-* ժխտական ածանց չեն ստանում (չենք ասում՝ փայտյա-անփայտյա), իսկ որակականները ստանում են՝ ուշադիր-անուշադիր, համեստ-անհամեստ: Ընդ որում եթե *ան-* չեն ստանում, նշանակում է առկա է դրական ածականի հատկանիշը. հմմտ. գեղեցիկ > անգեղեցիկ > տգեղ, մեծ > անմեծ > փոքր: Այս դեպքում դարձյալ գործ ունենք ժխտման երևույթի հետ, արտահայտված կամ այլ ժխտական ածանցով, կամ հականշությամբ [56,114]:

Ան- ժխտական նախածանցը հոմանշային շարքեր է կազմում այն նախածանցների ու վերջածանցների հետ, որոնք ժխտում են նախատիպի նշանակությունը կամ ցույց են տալիս նախատիպով նշվող առարկան կամ հատկանիշը չունեցող [27,31]:

Այս առումով *ան-* ժխտական նախածանցը հոմանշային զույգեր է կազմում բոլոր ժխտական նախածանցների և *-ատ* ժխտական վերջածանցի հետ.

ան- = չ- (*անտես-չտես, անկամ-չկամ*)

ան- = տ- (*անգետ-տգետ, անկար-տկար*)

ան- = ապ- (*անօրեն-ապօրինի, անբախտ-ապաբախտ*):

Ան- ժխտական նախածանցը հոմանշային եռաշարք է ձևավորում *ապ(ա)-* և *դժ-* ածանցների հետ, ինչպես՝ *անբախտ-ապաբախտ-դժբախտ*:

Ան- նախածանցը հոմանշային զույգ է կազմում *-ատ* վերջածանցի հետ: Ընդհանուր նախատիպը ցույց տված առարկան չունեցող բառակազմական նշանակությունն է: *-Ատ* ածանցով բաղադրություններում առկա է «ունեցած և կորցրած» նրբիմաստը: Այսպես, օրինակ՝ *անկոթ-կոթատ, անծայն-ծայնատ, անթև-թևատ, անպոչ-պոչատ* զույգերում եթե *ան-* նախածանցով ձևերը բացառում են առարկայի գոյությունը, ապա *-ատ* վերջածանցով ձևերը ցույց են տալիս առարկայի գոյությունը անցյալում և բացակայությունը՝ ներկայում:

Հին հայերենը մեծ քանակությամբ նախամասնիկավոր կազմություններ չի պահպանել, ընդ որում դրանք էլ մասամբ կորցրել են իրենց գործունեությունն ու արդյունավետությունը: Այդ է պատճառը, որ հունաբան դպրոցի հեղինակները հունական ածանցավոր կազմությունները պատճենելիս դիմել են նոր միջոցների՝ հազվադեպ միայն կենդանացնելով հին նախամասնիկավոր կազմությունները:

Ապ(ա)- ժխտական նախածանցը հունաբան դպրոցի կերտած առավել գործածական նախածանցներից է :

Ըստ Ա. Մուրադյանի՝ դասական հայերենի *ապ-* ժխտական նախածանցն է, որը հունաբան դպրոցի ներկայացուցիչները գործածել են իբրև նախդիր-նախածանց, համապատասխան հուն. *ἀπο* (*ἀπ-*, *ἀφ-*) նախդիր-նախածանցի. որպես նախդիր գործածվել է բացառական հոլովի հետ «ի բաց, բաց, տար, ի, յ» նշանակությամբ: Օր.՝ «ապ ումեքէ» (յումեքէ), «ապ իմեքէ» (յիմեքէ): Որպես նախածանց արտահայտում է ժխտման, բացասման, վերադարձի իմաստ:

Հուն. *ἀπό* նախդիրը գործածվելով սեռական հոլովի հետ, բառին հաղորդում է բացառական հոլովածևի նշանակություն: Արտահայտում է տեղի, ժամանակի, միջոցի գաղափար. ցույց է տալիս ծագում, պատճառ, առիթ, հիմք և այլն: *Ἀπό*-ն որպես *նախածանց* բառին հաղորդում է հետևյալ նշանակությունները. 1. հեռացում կամ բաժանում. 2. ավարտում, կատարում. 3. հետադարձ շարժում, գործողություն կամ վերադարձ. 4. ժխտում [40,138-139]:

Ըստ Հր. Աճառյանի՝ *այ*- նախածանցը հայերենի պարսկական ծագում ունեցող *այ* բացասական մասնիկն է, որը պատահական նմանություն ունի մեր լեզվի *այա*, *հետո* բառի հետ, ինչպես և հունարենի *ἀπό* *հեռու*, *բաց* մասնիկների հետ [32,57]:

Այս նախածանցը հայերենի քիչ գործածական նախածանցներից է: Այսպես.

Գրաբարում. Ապա թէ ոչ առնուք յանձն, և տակաւին ի նմին *այ*շուրթեան յամառեալ կեայք՝ դուք մեռանիք... (ԽԹ,232): *Ապ*երախտս առ երախտաւորդ, *Ապ*աշնորիս առ բազամապարգեւ... (ԼԱ,272):

Միջին հայերենում. *Ապ*աշնորհենին «*այ*աշնորհն» է... (Գ,145):

Արևմտահայերենում. ...Գիտեր դժվարին և *այ*երախտ պարագաներեն օգուտ քաղել... (ԻԲ,219): -*Ապ*ուշ ավանակ մըն է, - ավելցուց Մանուկ (ԾԲ, 387):

Արևելահայերենում. ...Կանգնած էի նրա առջև և *այ*արդյուն պրպտումներ էի անում հիշողությանս մեջ... (Լ,264): Ո՞ւմ և ո՞ր օրենքի օգնությանը դիմեր մի անմեղ, անփորձ աղջիկ՝ *այ*օրինի մանուկը ձեռքին (Լ,320):

Ապ- ժխտական նախածանցը կարող է դրվել.

1. Գոյականական, բայական և ածականական հիմքերի վրա՝ կազմելով ածականներ, ինչպես, օրինակ՝ *այ*օրինի, *այ*աբախտ, *այ*առողջ, *այ*արդյուն, *այ*ուշ, *այ*իկար, *այ*ազգային և այլն:

2. Գոյականների վրա՝ կազմելով գոյականներ, ինչպես, օրինակ՝ *այ*աբևեռ, *այ*ակենտրոն և այլն:

3. Բայերի և բայանունների վրա՝ կազմելով բայեր և բայանուններ, ինչպես, օրինակ՝ *այ*աբևեռացնել, *այ*ազիներ, *այ*ակենտրոնացնել, *այ*աբևեռացում, *այ*ազդում և այլն:

Դժ- նախածանցն արտահայտում է ժխտական, բացասական, մի բանից զուրկ լինելու իմաստ, կազմել է սակավաթիվ ածականներ. արդի հայերենում այն քարացած մասնիկ է և կենսունակ չէ. նրանով կազմված բառերի թիվը սահմանափակ է [61,266],[41,254]:

Դժ- նախածանցը փոխառություն է պիլ. *dužn* ձևից [15,հ.1,663], նշանակում է «վատ, չար»:

Դժ- ժխտական նախածանցը դրվում է ածականների, գոյականների և բայական հիմքերի վրա: *Դժ* նախածանցով բառերից *-ություն* և *-բար* վերջածանցների համադրմամբ կազմվում են նոր բառեր:

Այս նախածանցով կազմված բառեր առկա են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես.

Գրաբարում. Ի *ղժվամակ* միտս լինէր ընդ նմա...(Ե,148):

Միջին հայերենում. Մարդ լինի «անհեթեթ», «փցուն», «ղժմիտ»...(Գ,145):

Արևմտահայերենում *ղժ-* նախածանցին զուգահեռ գործածվում է նրա *տժ-* տարբերակը, ինչպես, օրինակ՝ ...Տասնապետի *տժգոյն* դեմքը կը կարմրի... (ԺԳ,29):...Ավերակներու քառուղիի մը վրա, այս իրիկուն *Ղժգունությանս* հետ երես երեսի, ինծի ըսին...(ԽԱ,21): Այս տողերը գրողն ալ օր մը այս տեսակ երկու պերճախոսներու մեջտեղը գտնվեցավ *ղժբախտաբար*... (ԼԸ,122):

Արևելահայերենում. Բայց *ղժբախտաբար*, այո՛, *ղժբախտաբար* ես ստիպված եմ լսելու քեզնից այդպիսի խոսքեր...(Լ,196): Կանխապես արդեն զգում էի, որ ականայից մի մեծ *ղժբախտության* պատճառ էի դարձել...(Լ,215): Նրա *ղժգոհ* հոգին այլևս չկարողացավ հանդուրժել այս կյանքին...(ԺԶ,416):

Ս.Էլոյանը նշում է, որ պարսկերենից հայերենին են անցել *ղժ* արմատն ունեցող մի շարք բարդ բառեր, որոնք, անցնելով հայերենին, կամ վերածվել են պարզ բառերի և կամ այդ *ղժ* արմատն իմաստի մթազնում է ապրել և վերածվել ածանցի: Այսպես՝ պարսկերենից փոխառյալ *ղժխեմ*, *ղժվար* բարդ բառերը պարսկերենի բարդ բառերն են՝ կազմված *duš* (դուշ) և *xem* (խեմ) արմատներից (*dušxem*), ընդ որում *դուշ(ղժ)* նշանակում է «վատ», «չար», իսկ *խեմ*՝ «վարք», «բարք», այսինքն՝ «վատ վարք ունեցող»: *Ղժվար* բառը նույնպես բաղկացած է եղել պահլավերեն *ղժ (duš)*, այսինքն՝ «վատ», «չար» և *վար*՝ «ոյուրին», «հեշտ» իմաստով արմատներից: Հիշյալ բարդ բառերը հայերենում դիտվում են որպես պարզ բառեր: Միևնույն *ղժ* արմատն ունեցող մի շարք փոխառյալ բառերի մեջ *ղժ* արմատն իմաստի մթազնում է ապրել և վերածվել ածանցի: Ածանց դառնալով՝ այն պահպանել է իր նախկինում ունեցած բառային նյութական իմաստի (վատ, չար) ընդհանուր ձևական նշանակությունը և ածանցվող բառերին հաղորդել ժխտական, բացասական իմաստ:

Այս նախածանցավոր կազմություններից տարբերվում է նույն արմատն ունեցող պարսկերենից փոխառյալ բարդ *ղժնդակ (dižandak)* բառը, որ նշանակում է «վատ, սոսկալի, անսովոր, օտարոտի, տգեղ ձևով»: Այստեղ արդեն *ղժ*-ը, ոչ թե նախածանց է, այլ արմատ, քանի որ հայերենում բարդության իմաստը մթազնել է, և այն ըմբռնվում է իբրև պարզ բառ, որում ավելի է գիտակցվում *ղժ* արմատի իմաստը, և *-անդակ*-ը ըմբռնվում է իբրև ձև, կերպ ցույց տվող ածանց [32,89-90]:

2- նախածանցն արտահայտում է ժխտական, բացասական իմաստ: Դրվում է բայափոխների (նաև դերբայների) վրա և կազմել է հիմնականում սակավաթիվ ածականներ ու գոյականներ: Այս ածանցով կազմվել են քիչ թվով բառեր: 2-ով բառերը փաստորեն չձևավորված ժխտական դերբայների արժեք ունեն՝ չբեր=չբերող, չկամ=չկամեցող, չտես=չտեսած և այլն [51,157],[61,266]:

2- մասնիկը ժխտական արժեք ունի, այսինքն՝ ցույց է տալիս, որ հաղորդողը հաղորդվող եղելությունների կատարման ցանկալիությունը կամ հավաստիությունը ժխտում է:

Չ- ստացվել է ոչ ժխտական մասնիկի սղումից [41,259],[70,121]:

Չ- նախածանցն արտադրողական չէ. նրանով սակավաթիվ բառեր են կազմվել ինչպես գրաբարում, այնպես էլ հետագա շրջաններում: Այսպես.

Գրաբարում. Կարծական եղև մեզ բարին, և չմարդոյ գտաք առ շնորհակալիսն... (ԺԸ,66): Եթ չգոյը թիւ բազմութեան հեծելագօր գնդացն... (Ե,28): Իսկ շատ այնք են, որ ոչ առ ազահութեան զանծինս ի մահ դնեն, այլ առ չգոյութեան աղքատութեան կարօտութեան յետին տնանկութեան...(Ա,8):

Ըստ Վ. Առաքելյանի՝ Ազաթանգեղոսը գործածել է չ- նախածանցով կազմված չգոյութիւն, չկեցութիւն, չիլութիւն, չմարդապես, չքաւոր, չքոտել, Ղ.Փարպեցին՝ չհարմարվող, չճանաչողութիւն, չպահեցողութիւն, Գ.Նարեկացին՝ չէութիւն, ջիշատակելի, չքոտի, Փ.Բուզանդը՝ չէրեց, չեպիսկոպոս, չկամութիւն, չհաւատալի, չմոռացկան, չքնոտի, չքմեղս, չքաւոր բառերը [20,152-203]:

Միջին հայերենում. Կընոջն ավետիս երետ, Թէ՛ չաստուածքն ընդ քեզ խառնակին (ԻԴ,47):

Արևմտահայերենում. Այս մարդիկ կամ կանայք, առ ի չգոյե հիշողության, միևնույն դեպքը հազար անգամ կը պատմեն քեզ...(ԼԸ,221): Առաջ ալ աղվոր էր Ջարուկ, չունևորութենեն չէր ցուցներ (ԺԳ,139):

Արևելահայերենում. Եվ երբ նախագահը մեքենայի մոտ հավաքված չտես բազմությունը տեսավ...պարտք համարեց ցրել չտես բազմությունը (Ղ,105): Չկամ էր ընդունում եկողին, նրանք էլ հաճախ չէին գալիս(Ղ,296):

Աշխարհաբարում չ- ժխտական նախածանցը կազմում է կրկնավոր բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը գործածվում է չ- ժխտականով, մյուսը՝ առանց այդ մասնիկի: Այսպես.

Արևմտահայերենում. ...Ունեցած-չունեցածս 200 ոսկի է, անոր 100-ը տամ, ինծի ի՞նչ կմնա (Բ,43): -Ուզենք-չուզենք պիտի կոտորվին, ուզենք-չուզենք... (Բ,102): Ինչ ընես չընես՝ պիտի կտնասս աստ ծուկը...(ԺԱ,145):

Արևելահայերենում. ...Նա կարող է ունեցած-չունեցածը նվիրել սրան-նրան...(ԺԴ,462): Առաջներում մերպեսներին Կամ քառատում, կամ սպանում էին դանդաղ՝ Մեր մարմնի մեջ ցից խրելով. Ինչպես քորոցն են մխրձում Թիթեռնիկի եղած-չեղած մեկ օրվա մեջ...(ԽԲ,145): Ուրիկոնը անցած, ոչ շատ թեթև «Լինել-չլինելու» խնդիրն ահա Այսպես լուծած և լուռ թողած հետև...Ես նետվում եմ առաջ որպես բուժակ...(ԽԲ,184): -«Հա՛, ճիշտ եք լսել, մեր անտեր ցուլը, Կա-չկա կարծեց, թե փորոտիք է՝ Ջարկեց ու պատռեց մեր գինու տիկը...(ԽԲ,454): Հենց երգեցիր՝ Ասեն-չասեն, Ուզեն-չուզեն՝ թող որ փոքրը, Բայցևայնպես դարձյալ գյուտ ես...(ԽԲ,625): -Օրը մթնած-չմթնած Աբդուրախմանի քարվանը կանգ է առնում Շահ-դաղ սարի տակ...,- շարունակեց Կարապետը (ԼԴ,459): ...Չեն կարող ինչ անեն-չանեն Չհավատալ... (ԼԹ,263):

S- նախածանցն արտահայտում է ժխտման կամ բացասման իմաստ, կազմել է սակավաթիվ ածականներ. արդի հայերենում կենսունակ չէ:

S- նախածանցն ունի հնդեվրոպական ծագում, բայց հին հայերենում արդեն դադարել է գործուն լինելուց: Այն համեմատում են կամ հ.հնդկ. *duh-*, հուն. *δοσ-*, լատ. *dis* (հ.-ե. *dus-*), կամ լատ. *de-* (հ.-ե. *de*) մասնիկների հետ: Գ. Ջահուկյանը նշում է, որ հնչյունական առումով առաջին համեմատությունը խոցելի է. եթե հայերեն բառերը իրոք հին կազմություններ են, ապա վերջին -s-ն բաղաձայններից առաջ չպետք է ընկներ. *տ-*ն պահպանվել է հիմնականում հնդեվրոպական հիմքերի մոտ՝ տ-գեղ, տ-գէտ, տ-հալ, տ-հաճ, տ-հաս, տ-ձև, տ-մարդի, տ-քնիմ, բրբռ. տ-կեր (քիչ ուտող), տ-կուռն (կռնատ): Այս կազմությունները վաղնջահայերենում դեռևս գործուն տիպ են եղել [50,242]:

S- նախածանցը գործածվում է *և՛* պարզ, *և՛* ածանցավոր բառերի հետ: Այս նախածանցով կազմված բառեր գործածական են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես.

Գրաբարում. Տկար գաւազանաւն առաջին մարդոյն յաղթեցեր, մեծ թագաւորաւս տղայոցն չկարե՞ս կալ առաջի (ԻԳ,21): Այլ վասն այնորիկ գիտեմ, զի տգիտութեամբ արարէք զոր ինչ արարէքն (Ա,130): Տգեղս ցուցեալ զիս ամենեւին՝ Իբր մերկացեալ խայտառակեցելոց պոռնկի...(ԼԱ,318):

Եղիշեն գործածել է տգիտաբար, Ղ. Փարպեցին՝ տկարամիտ, տգիտահալած, Գ.Նարեկացին՝ տկար, տհաս, տմարդի, տգեղութիւն, տգետ բառերը:

Գ.Նարեկացու երկերում հանդիպում է *տ-* և *ան-* ժխտական նախածանցների միաժամանակյա գործածություն միևնույն բառի շրջանակներում, որի հետևանքով բառը ստանում է հաստատական իմաստ: Այսպես՝ *Անտկարանալի* բարերարութիւն գթութեան (ԼԱ,304): Այստեղ «անտկարանալի» բառը ձեռք է բերել «կարող, ունակ լինելու» իմաստ:

Միջին հայերենում. Ի սնոտիս այս խաբեբայ Որպես տղկար ոք...(Զ,546): Մի՛ յայս տգետ ոք լինիցի աստուածական դատաստանին (ԼԷ,170): զԿեչառեցիս տկար Արարէք յիշման զիս արժան...(ԻԴ,63):

Արևմտահայերենում. Իմ դեմս ...յուր տգիտությանը վրա կ'ամչնար...(ԺԳ,51): Ան ձևերն հեռվանց շատ տձև կերևան կոր...(ԼԸ,199): Իսկ որ Ջավենին շատ տհաճելի երևցավ, այն էր, որ զինվորաց խումբ մը պահպանություն կ'ըներ (ԻԲ,520):

Արևելահայերենում. -Ես կարծում եմ, որ Պետրոս Մարդանյանը մի տգեղ նպատակ ունե (ԼԵ,306): Իշխանը տհաճությամբ սպասում էր, որ երեխաները իրանց ձայնը կտրեն...(ԽԶ,13): -Գուցե, հայրի՛կ, տղկար լավին Հաղթի մի վես տղմարդի...(ԺԶ,104):

Գրաբարում և միջին հայերենում ժխտական ածանցի արժեքով է գործածվում նաև ա- մասնիկը: Մխիթարյան միաբանության անդամ Գաբրիել Ավետիքյանն առանձնացնում է նախածանցներից մի քանիսն իբրև «Բացասական կամ եղծական»՝ *ա, ան, տ, չ, բ*, ընդ որում *ա-*ի համար վերցնում է պահլավերենից փոխ առնված կազմությունները՝ *ապուխտ, ակամայ* [52,351]:

Արդի հայերենում *ա-* մասնիկը ածանցի արժեքով գիտակցվում է միայն *ակամա* բառում, որը *կամա* բառի ժխտականն է: Վերջինս ինքնուրույն գործածությամբ աշխարհաբարում չի հանդիպում, այլ հանդես է գալիս *կամա-ակամա* կրկնավոր բարդության կազմում: Մինչդեռ *ակամա* ժխտական ձևը գործածվում է նաև ինքնուրույնաբար: Գրաբարում և միջին հայերենում ինքնուրույն գործածությամբ հանդիպում են *կամայ* և *կամաւ* ձևերը:

Ակամա բառը և նրանով կազմված բարդությունը հանդիպում են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես.

Գրաբարում. Վասն որոյ յարդարէ կամաւ կամ *ակամայ* Մորփիւղիկեան գիւրոյ կողման ճակատն... (ԻԱ,118):

Միջին հայերենում. Մեղայ քեզ կամայ և *ակամայ*... (ԼԷ,46):

Արևմտահայերենում. Իսկ գյուղացիք... շատ դժվարությամբ և *ակամա* կը դառնային իրենց բնակարանները... (ԻԲ,317):

Արևելահայերենում. ...Թող ձեր օրհնությունը սրբե իմ գործած *ակամա* մեղքերը... (ԽԶ,518):

Արդի հայերենում վերջածանց է համարվում *հատ* արմատից գոյացած *-ատ* վերջածանցը, որն ունի «նախատիպի ցույց տվածը չունեցող», «մի բանից զուրկ, մի բան չունեցող, մի բանից պակասեցված» ընդհանուր բառակազմական նշանակություն [61,280]:

-*Ատ* ածանցը ծագում է *հատ*-անել «կտրել» բայի արմատի հնչյունափոխությունից (*հատ*>*ատ*) [41,300],[70,101]: Գործ է ածվում «հատ, կտրած» իմաստով՝ սովորաբար անուններից կազմելով ածականներ (քնատ, գունատ, թերատ, կոնատ, պոչատ ևն), գոյականներ (խրամատ, հեղեղատ), բայեր (զլխատել, թղթատել, ծայրատել, փետրատել):

-*Ատ* ածանցով կազմված բառեր առկա են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես.

Գրաբարում. Ագատ, գիշատեն, զլխատեն, գունատ, թեւատեալ, թլփատ, լեզուատ, ծայրատեն, կրճատ, հերատ, ոտնատ, ունչատ (քիթը կտրած), տրամատեն (բաժանել), տրամատութիւն [42,հհ.1-2]:

Միջին հայերենում. Ագատ, ատամնատ, թերատ, լեզատ (լեզու չունեցող), կեռատ (ատամնաթափ), հերատ, հերատեալ, շնչատ [36,հհ.Ա,Բ]:

Արևմտահայերենում. Համբույրի մը հիշատակն էր սյուքին շունչ... Գունատ ճակտին տիտիկ պատկերն այս լուսին... (Ը,28): ...Կը վազեր խոհանոց, նախաճաշիս պատրաստությամբը, քնատությանս կորուստը դարմանելու հաշիվով (ԺԳ,34): Բերանը... կողողղար շարունակ՝ անկապակից խոսքեր մրթմրթալու համար, ատամնատ լինդերը ցուցնելով... (ԺԱ,277):

Արևելահայերենում. ...Տիրոջ խոսքը մնաց կիսատ (Դ,221): Ի՞նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր...(Լ,147): Դեմքը գունատ էր, աչքերը քնատ մարդու աչքերի պես... (Լ,294):

-Ատ ածանցով կազմված են մի շարք բայահիմքեր, որոնք որպես առանձին բառեր գործածական չեն, ինչպես՝ երկատ-ել, մասնատ-ել, տողատ-ել, ծրատ-ել և այլն [27,110]:

Ըստ մի շարք բառարանների (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1, 2, Երևան, 1979, 1981; Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ. Ա, Բ, Երևան, 1987, 1992; Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991; Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, 2000; Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1969-1980) տվյալների՝ վերոնշյալ ածանցներով բառերի թիվը (մոտավոր հաշվումներով) հայերենի զարգացման բոլոր շրջաններում ներկայացվում է մեր կազմած աղյուսակ 1-ում.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ածանցներ Հայերենի զարգացման շրջանները	ան-	ապ-// ապա-	դժ-	չ-	տ-	-ատ
	Գրաբար	3235	173	17	78	74
Միջին հայերեն	402	3	1	13	9	8
Արևմտահայերեն	132	16	10 (+14) ³	12	9	19
Արևելահայերեն	2766	106	34	48	136	44

Ժխտական ածանցները հականշային զույգեր են կազմում մյուս ածանցների հետ, այս դեպքում ժխտական ածանցները հակադրվում են դրական ածանցներին: Հականշային զույգեր կազմելու տեսակետից ևս առաջնությունը պատկանում է *ան-* ժխտական նախածանցին, որը հակադրվում է հետևյալ վերջածանցներին՝

- ավոր//վոր և *ան-* (ողնաշարավոր-անողնաշար, թևավոր-անթև),
- ուն և *ան-* (գիտուն-անգետ, խոսուն-անխոս),
- ակ և *ան-* (գիտակ-անգետ, տեղյակ- անտեղյակ),
- ական և *ան-* (օրինական-անօրեն):

Մյուս ժխտական ածանցները հականշային զույգեր կազմում են հետևյալ ածանցների հետ՝

- ավոր//վոր և *ապ-* (բախտավոր-ապաբախտ),
- ական և *ապ-* (օրինական-ապօրինի),
- ավոր//վոր և *դժ-* (բախտավոր-դժբախտ),

³ Փակագծում տրված է տժ- տարբերակով բառերի թիվը:

- ալ և տ- (գիտակ-տգետ),
- ուն և տ- (գիտուն-տգետ),
- ավոր//վոր և -ատ (թևավոր-թևատ, գունավոր-գունատ):

Հատկանշական է, որ հականշության ձևավորման հիմքը «մի բան ունենալու և չունենալու» իմաստային հակադրությունն է:

Հականշություն արտահայտելու տեսակետից պասիվություն է դրսևորում չ- ժխտական նախածանցը: Քանի որ չ- ածանցը համարժեք է ժխտական դերբայական ձևերին, ուստի քիչ են ածանցային հականշության դեպքերը: Այսպես՝ չ- նախածանցը հակադրվում է հետևյալ վերջածանցներին՝

- ուն և չ- (հասուն-չհաս),
- ելի և չ- (ախորժելի-չախորժելի, ուտելի-չուտելի),
- ան և չ- (ածան-չածան):

Այսպիսով՝ հայերենում ժխտման արտահայտության բառակազմական միջոցները ժխտական նախածանցներն են (ան-, ապ-//ապա-, դժ-, չ-, տ-) և -ատ ժխտական վերջածանցը՝ գործածության իրենց յուրահատկություններով և հայերենի բառակազմական համակարգին բնորոշ առանձնահատկություններով:

§ 2. ԺՆՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Ժխտման արտահայտության քերականական միջոցները դասակարգվում են երկու խմբի՝ ձևաբանական և շարահյուսական միջոցներ: Ձևաբանական միջոցները խոսքի մասերն են՝ ուղիղ և թեքված ձևերով, իսկ շարահյուսական ժխտումը դրսևորվում է նախադասության ոլորտում, արտահայտվում նախադասության անդամներով և նախադասության կառուցվածքով:

Ա. ԺՆՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայերենում ժխտման արտահայտության ձևաբանական միջոցները ժխտական դերանուններն են, բայի ժխտական ձևերը, ժխտական դերբայը, անկախ դերբայների ժխտական ձևերը, ժխտական մակբայները, ժխտական կապերը, ժխտական շաղկապներն ու ժխտման հարաբերություն արտահայտող եղանակավորող բառերը: Ժխտումն ուղիղ ձևով են արտահայտում ժխտական մակբայները, ժխտական կապերը, ժխտական շաղկապները և ժխտական եղանակավորող բառերը: Ժխտումը թեքված ձևով արտահայտում է բայը, իսկ ժխտական դերանուններն ու անկախ դերբայները գործածվում են և՛ ուղիղ, և՛ թեքված՝ հոլովված ձևերով:

1. ԺՆՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

«Լեզվաբանական բառարանում» դերանունը սահմանվում է հետևյալ կերպ. «խոսքի մաս. ըստ ավանդական (անտիկ) քերականության՝ այն բառերն են, որոնք խոսքի, նախադասության մեջ դրվում են անվան փոխարեն (դեր+անուն) ըստ նորագույն ըմբռնման՝ այն բառերն են, որոնք ցույց են տալիս առարկա, առարկայի ընդհանուր անուն» [48,82]:

Ս. Աբրահամյանի սահմանումով «դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ» [9,207]:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ «դերանուն» եզրույթը կազմված է «դեր» և «անուն» բաղադրիչներից և նշանակում է «անվան դեր կատարող», «անվան փոխարեն դրվող» [4,11]:

Լեզվաբանների կարծիքով մարդկային լեզվի մեջ ամենաուշ առաջացած խոսքի մասը դերանունն է:

Հր.Աճառյանը գրում է, որ կարելի է ենթադրել, թե դերանունները նախապես գոյականներ էին, որոնք հետո, գործածության մեջ մաշվելով, դարձան կրճատ, անձանաչելի բառեր՝ դերանուններ [16,հ.2,1]: Ապա ավելացնում է. «Արդի քերականների սովորական սահմանումով՝ դերանունը այն բառն է, որ գործ է ածվում նախապես հիշված մի գոյականի փոխարեն, նույնը չկրկնելու նպատակով» [16,հ.2,2]:

Փաստորեն Հր. Աճառյանը մատնանշում է միայն դերանունների փոխարինման գործառույթը. մինչդեռ դերանունների մի մասին այդ գործառույթը հատուկ չէ (հմմտ. հարցական, փոխադարձ դերանունները):

Դերանունն առաջին հայ քերականների կողմից չի դիտվել իբրև ինքնուրույն խոսքի մաս, այլ մտցվել է գոյականների, ածականների, թվականների և մակբայների մեջ:

20-րդ դարի 30-ական թվականներին Ա. Ղարիբյանը և Գ.Սևակը դերանունն ընդունեցին իբրև ինքնուրույն խոսքի մաս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ի տարբերություն վերոնշյալ խոսքի մասերի, դերանունը ցույց է տալիս ոչ թե կոնկրետ առարկա, երևույթ, հատկանիշ, այլ մատնանշում է դրանք ընդհանուր կերպով:

Ժամանակակից հայերենի դերանունների ճանաչված տեսակներից մեկն է ժխտական դերանունը (ոչ մի, ոչ մեկը, ոչ ոք, ոչինչ):

Ս.Աբրահամյանը ժխտական դերանունը սահմանում է որպես դերանվան տեսակ, որը բնորոշվում է ժխտման հատկանիշով, այսինքն նրանով, որ նրանք առարկա կամ թիվ են ժխտում [4,142]:

Ռուս լեզվաբան Ն. Շանսկին ժխտական դերանունները բնորոշում է հետևյալ կերպ. «ժխտական դերանունները ցույց են տալիս առարկայի կամ հատկանիշի բացակայություն» [71,155]:

Իսկ Հ. Պետրոսյանը ժխտական դերանունը դիտում է իբրև «դերանվան տեսակ, որ բացառում է որոշյալ դերանվան իմաստը» [49,239]:

Ժամանակակից հայերենում վիճահարույց հարցերից է ժխտական դերանունները դերանվան առանձին տեսակ, թե՞ որոշյալ դերանունների ժխտական ձևեր ընդունելու հարցը:

Ս. Աբրահամյանն այս առիթով նշում է. «Ժխտական դերանունն իբրև դերանվան առանձին տեսակ ընդունել կարելի է միայն այն դեպքում, եթե ժխտում չարտահայտող մյուս բոլոր դերանունները համարվեին մեկ ընդհանուր տեսակ, իբրև հաստատական դերանուններ» [4,142]:

Ապա նա նկատում է, որ ժխտական դերանունների իմաստը տարածվում է առհասարակ բոլոր առարկաների վրա. մի բան, որ հատուկ է որոշյալ դերանուններին (հմմտ. ոչ ոք- ամեն ոք, ոչինչ-ամեն ինչ, ոչ մի-ամեն մի, ոչ մեկը-ամեն մեկը) [4,143]:

Ելնելով այն հանգամանքից, որ ժխտական դերանունները առարկա և հատկանիշ են ցույց տալիս որոշյալ դերանուններին հատուկ հարաբերությամբ, ունեն նրանց հանրական իմաստը, հանդիսանում են նրանցից մի քանիսի ժխտական ձևերը, Ս. Աբրահամյանը եզրակացնում է, որ դրանք պետք է դասել որոշյալ դերանունների շարքը, որպես ժխտական ձևի որոշյալ դերանուններ [4,145]:

«Լեզվաբանական բառարանում» ժխտական դերանունը սահմանվում է որպես «դերանունների տեսակ, որի մեջ խմբավորվում են իրականում որոշյալ դերանունների ընդհանուր իմաստ արտահայտող (արդի հայ. *ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը*) բառերը» [48,114]:

Ժխտական դերանուններից առարկայանիշ են *ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ*, որոնք հոլովվում են ի հոլովմամբ, հոգնակի ձևեր չունեն: *Ոչ մի* ժխտականը ածականական կիրառություն ունի, հոդառու չէ, գոյականաբար չի գործածվում:

Ժխտական դերանունները կազմվում են *ոք, ինչ, մի (մեկը)* բաղադրիչներից՝ սկզբից ավելացնելով *ոչ՝ ոչ ոք, ոչինչ, ոչ մի (ոչ մեկը)*: Ընդ որում սրանցից միայն մեկի բաղադրիչներն են միացել (ոչինչ):

Ոչինչ դերանունն արտահայտում է ընդհանուր առարկայական նշանակություն բացասական, ժխտական իմաստով: Այն համարժեք է *ոչ մի բան* կապակցությանը (հմմտ. ոչինչ չգիտի//ոչ մի բան չգիտի, ոչինչ չասաց//ոչ մի բան չասաց) [21,185]:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» «ոչինչ» բառը մեկնաբանում է որպես «բնիկ հայ բառ. կազմուած է ո+չ. վերջինը անորոշի նշանն է, որ դնում ենք նաև *ինչ* բառի ծայրին, իսկ *ո* բուն բացասականն է, որ պետք է կցել հսլ. *otŭ*, սանս. *áti* «հակառակ» բառերին: Ըստ այսմ *ոչ* նշանակում է բուն «մի, մեկ» գաղափարը» [15,հ.3,561]:

Գրաբարյան բնագրերում «ոչինչ» բառին զուգահեռ գործածվում է «ոչ ինչ» տարբերակը, որի բացատրությունը տալիս է Պ. Շարաբխանյանը՝ նշելով «*Իմն* սովորաբար գործածվում է հաստատական նախադասություններում, իսկ *ինչ՝*

հարցական, ժխտական և պայմանական նախադասություններում: *Ինչ* և *իմն* բառերն անփոփոխ ուղիղ ձևով հաճախ գործածվում են որպես թարմատար՝ նախադասությանը տալով անորոշության երանգ կամ մեղմում, չափավորում են խոսքը: Նման դեպքերում աշխարհաբար թարգմանության մեջ դրանք հաճախ չեն արտահայտվում առանձին բառով, և կամ՝ *ինչ* բառը թարգմանվում է *բնավ*, *բոլորովին*, *ամենևին*, *ինչ որ* բառերով» [43,166-167]:

Ա. Այտընյանը *ոչինչ* և *ոչ ոք* դերանունները համարում է գոյականներ. «*Ոչ ոք, ոչինչ* միշտ եզակի գոյական են. ունին ուղղական և հայցական: Իսկ հասարակ գոյական անուն է *ոչինչ, ոչընչի -Ոչընչի* ստեղծեց» [18,36]:

Ոչինչ դերանունը լայն կիրառություն ունի հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. Որպես և մեր իսկ հայեցեալ ի սուրդ սէր քոյոյ հրամանիդ՝ *ոչ ինչ* դանդաղեալ վեհերեցաք հայեցեալ ի մեր տգիտութիւնս (Ժ,8): ...Եւ զերկեամ մի կռուեալ՝ *ոչ ինչ* կարաց ազդել նոցա (Ժ,22): Եւ իբրև ետես եթէ *ոչինչ* յագեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդեմքն յոլովագոյն գործէին, -սկսաւ հալել և մաշել և հառաչելով հոգոց հանել (Ժ,34):

Միջին հայերենում. Ըզգին ալ աւլով կըտրէ, որ ամէն *ոչինչ* չի գընէ... (ՇԱ,90):

Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, ժխտական դերանունների հետ նախադասության ստորոգյալը դրվում է հաստատական ձևով. Մինչև Փենտիք *ոչինչ* կը հետաքրքրէ գիս... (ԺԳ,20):

Սակայն հանդիպում են նաև ժխտական դերանվան հետ ժխտական ստորոգյալի գործածության դեպքեր. *Ոչինչ* չհասկացաք, բայց ձեր ծնող ուղեղներուն մեջ սարսափը և վրեժը իրենց հիշատակները ցանեցին... (ԽԱ,68):

Արևելահայերենում ժխտական դերանվան հետ ստորոգյալը դրվում է ժխտական ձևով. Եւ չկար *ոչինչ*, որ սիրտըս դյութեր... (ԽԵ,147):

Արևելահայերենում *ոչինչ* դերանունը կիրառվում է նաև թեքված՝ հոլովված ձևերով, այսպես՝ Մեր ներկան *ոչնչով* չի նմանվում մեր անցյալին (ԽԶ,288): Եթե տասն այդքան հայեր կոտորվեին, Բեկը դարձյալ *ոչնչի* տեղ կդներ և կհարձակվեր բերդի վրա (ԽԶ,344): *Ոչինչ* չէր վհատեցնում նրան *ոչնչից* երկյուղ չուներ (ԽԶ,552):

Ոչ ոք դերանունը ցույց է տալիս ամբողջությամբ ժխտվող անձի անուններ:

Ըստ Հր. Աճառյանի՝ «*Ոք* անորոշ ձևի համապատասխան բացասականն է *չիք*. *Ոք* բառից է կազմված *ոչ ոք* և *մի՛ ոք*, որոնք նշանակում են «ո՛չ մի մարդ, ո՛չ մեկը» [16,հ.2,409]:

Այս առիթով Պ. Շարաբխանյանը գրում է. «*Ոմն* սովորաբար գործածվում է հաստատական նախադասություններում, իսկ *ոք*՝ հարցական, ժխտական և թեական (պայմանական) նախադասություններում» [43,165]:

Ոք դերանունը ժխտական նախադասություններում, միանալով *ոչ* և *մի* մասնիկներին, ձևավորում է *ոչ ոք*, *մի՛ ոք* ժխտական դերանուններ:

Գրաբարում կիրառության ավելի լայն ոլորտ ունեն *ոչ ոք* և *մի՛ ոք* դերանունները, տարածված է նաև *ոք* դերանվան ժխտական *չիք* ձևը, այսպես՝ Քանզի *ոչ ոք* գիտե գԱստուծոյ՝ եթէ ոչ Հոգին Աստուծոյ և Որդին... (Ա,198): Եւ *մի՛ ոք* երթիցէ ՚ի նոցանէ ընդ գօրս արքունի (Ե,34): Նա զի եւ *չիք* իսկ բժշկութիւն... (ԼԱ,259):

Գրաբարում *ոչ* և *մի՛* ժխտական մասնիկները կարող են միաժամանակ գործածվել *ոք* դերանվան հետ՝ կազմելով *ոչ մի ոք* կառույցը, այսպես՝ Եւ *ոչ մի՛ ոք* ոչ հաւանեաց գալ... (Ե,194):

Միջին հայերենում գործածական է նաև *ոչ ոք* դերանվան *ոչ ով* տարբերակը. Է՞, Չարխ, ամ քեզ ո՞նց աւտամ, երբ չունիս *ոչ ով* մոտելոր (ԾԳ,49): Սքանդար դու քեզ պէտ արա՛, Ձի արիւնն *ոչ ով* չըմարսեց (ԻԴ,66):

Արևմտահայերենում. *Ոչ ոք* կիներուն չափ գեղեցկութեան ճաշակը ու հասկացողությունը ունի... (ԺԳ,6): *Ոչ ոք* ձայն կուտա (ԼԸ,214):

Արևելահայերենում. *Ոչ ոք* չտեսավ քո քնքուշ հոգին, Թռա՛ր, գնացի՛ր հեռու աստղի պես... (ԺԷ,158):

Ոչ մեկը դերանունն իմաստային տեսակետից շփման եզրեր ունի *ոչ ոք* դերանվան հետ, միայն այն տարբերությամբ, որ *ոչ մեկը* դերանունը և՛ անձի, և՛ իրի նշանակությամբ կարող է գործածվել, ինչպես՝ Նրանցից *ոչ մեկի* անունը չի կապված երազների... և ժամանակի վատնման հետ... (Դ,234): Բայց այդ փոփոցներից և *ոչ մեկը* չի կազմում քաղաքի հպարտությունը... (Դ,233):

Առաջին նախադասության մեջ *ոչ մեկը* դերանունն անձ է մատնանշում, երկրորդում՝ իր:

Գրաբարում այս դերանունը գործածական չէ: Իսկ միջին հայերենում նրա կիրառությունը սահմանափակ է, այսպես՝ Եւ ի մարդոյ *ոչ մեկ* խնձոր տեսի և *ոչ մեկ* խիար (ԻԵ,339):

Միջին հայերենում հանդիպում է նաև *ոչ մեկը* դերանվան ժողովրդախոսակցական *ոչ միևը* տարբերակը. Ձինչ դավլ և երդումն ուտէ *Ոչ զմիևն* ի հուն չի հանէ... (ԻԴ,38):

Արևմտահայերենում. ...Թորոս աղային ըրած պատմության և *ոչ մեկ* բառը յուր ականջը մտած էր... (ԼԸ,43): *Ոչ մեկ* գարնան ծաղիկներուն կսպասե... (ԽԴ,452):

Արևելահայերենում. Նրա աքսորման մասին հակասական պատմություններ կային, որոնցից *ոչ մեկը* ճշմարիտ չէր (Դ,157):

Ոչ մի դերանունն ունի ածականական կիրառություն, այսինքն՝ դրվում է առարկայական իմաստ արտահայտող բառերի՝ գոյականների վրա՝ հանդես գալով որոշչի շարահյուսական պաշտոնով: Հատկանշային իմաստ արտահայտող *ոչ մի* դերանունը չի հոլովվում [21,186]:

Այս դերանունը կիրառվում է հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. *Ոչ մի* մարդ ապաստան՝ եթէ վերակացուաւ տարածեսցի ընդ աշխարիս. այլ ինքն յինքենէ ունի զհաստատութիւն (Ժ,58):

Միջին հայերենում. ...Ձի և *ոչ մի* ունիք պտուղ մրգոյ... (Է,57):

Արևմտահայերենում *ոչ մի* դերանվան գործածությունը տարածված չէ:

Արևելահայերենում. Նա *ոչ մի* հանդիմանություն չէր անում, *ոչ մի* անգամ չէր հարցնում որդու կամքը և *ոչ մի* ցանկություն չէր հայտնում...(ԼԵ,245):

Վերոբերյալ օրինակներից պարզ է դառնում, որ արևմտահայերենին առավել բնորոշ է ժխտական դերանունների հետ բայի դրական ձևերի գործածությունը, թեպետ հանդիպում են նաև ժխտական դերանունների հետ ժխտական բայաձևերի կիրառության դեպքեր, ինչպես՝ *Ոչինչ չհասկացաք*, բայց ձեր ծնող ուղեղներուն մեջ սարսափը և վրեժը իրենց հիշատակները ցանեցին...(ԽԱ,68):

Արևելահայերենում սովորական է ժխտական դերանվան հետ ժխտական բայի գործածությունը: Բայց այստեղ ևս առկա են բացառություններ, երբ ժխտական դերանվան հետ կիրառվում են դրական բայաձևեր, այսպես՝ *Ոչ ոք ուներ* մաքուր սապոգ և բանակային պինդ կտորից հագուստ (ԻԷ,225): *Ոչ ոք* ինձ լսեց, *ոչ ոք* ինձ *ընկերացավ* (ԻԹ,197): Բայց *ոչ ոք* մեզ լսեց և *ոչ ոք* մեր խնդիրը *հարգեց* (ԻԹ,196):

Իհարկե, այս ձևերը գրական լեզվին հատուկ չեն և հավանական է, որ գրական լեզու են թափանցել խոսակցական լեզվից՝ խոսքի ոճական երանգավորման նկատառումով:

Ինչպես նշել ենք, ժխտական դերանուններն առաջացել են որոշյալ դերանուններից՝ *ոչ* մասնիկի հավելումով: Բայց որոշյալ դերանուններն իրենց հերթին ևս կարող են ստանալ *ոչ* մասնիկը և ժխտում արտահայտել: Այս երկու ձևերի (ժխտական դերանուն և ժխտական որոշյալ դերանուն) միջև, սակայն, կա տարբերություն. եթե ժխտական դերանուններով առարկան, հատկանիշը ժխտվում են ամբողջությամբ, ապա ժխտական ձևով դրված որոշյալ դերանուններով արտահայտվում է մասնակի ժխտում: Այսպես՝ եթե *ոչ մի* ժխտական դերանունը ժխտում է առարկան, հատկանիշը ամբողջությամբ, ապա *ոչ ամեն մի* դերանունը մասնակի ժխտում է արտահայտում, առարկան, հատկանիշը ժխտում է մասնակիորեն: Այս կարգի դերանուններում առկա է նաև հաստատման կամ դրական իմաստ, որը ժխտական մասի հետ ձևավորում է դերանվան բովանդակությունը: Ահա անորոշ և ժխտական դերանունների կազմած շարքերը.

ամենքը - ոչ ամենքը - ոչ մեկը

ամեն մի - ոչ ամեն մի - ոչ մի

ամեն ոք - ոչ ամեն ոք - ոչ ոք

ամեն ինչ - ոչ ամեն ինչ - ոչինչ

ամեն - ոչ ամեն - ոչ մի

բոլորը - ոչ բոլորը - ոչ մեկը:

2. ԺՆՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

«Լեզվաբանական բառարանում» ժխտական դերբայը սահմանվում է հետևյալ կերպ. «Բայի դերբայական ձև, որ առկա է միջին գրական հայերենում, արևմտահայ գրականում, հայ բարբառներում և ժամանակակից հայերենում: Չունի յուրահատուկ

դերբայական իմաստ: Արդի հայերենում ժխտական դերբայի գործածության առանձնահատկությունն այն է, որ նրանով կազմվում են պայմանական եղանակի ապառնու ձևերը» [48,114]:

Հր. Պետրոսյանը «Հայերենագիտական բառարանում» ժխտական դերբայը ներկայացնում է այսպես. «Դերբայի տեսակ. արտահայտում է գործողության կամ եղելության գաղափար՝ առանց եղանակի, դեմքի, թվի, ժամանակի իմաստների. հարացուցային շարքում նա գործառում է կատարելիության կերպային երանգավորումով» [49,239]:

Ա. Աբրահամյանը տալիս է ժխտական դերբայի հետևյալ սահմանումը. «ժխտական դերբայը ցույց է տալիս մի գործողություն կամ եղելություն. որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով» [3,201]:

Ինչպես նկատում է Ա. Աբրահամյանը, մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ժխտական դերբայը որպես ինքնուրույն դերբայական ձև անծանոթ է եղել հայ քերականագիտությանը: Այն որպես առանձին դերբայ ժամանակակից հայերենում ճանաչվել է պրոֆ.Ա. Ղարիբյանի կողմից [3,237]:

Ա. Ղարիբյանը ժամանակակից գրական հայերենի բայի պայմանական եղանակի երկու ժամանակների (ապառնի և անցյալ ապառնի) ժխտական ձևերի կազմության մեջ բայի չփոփոխվող մասը իրավացիորեն համարում է առանձին դերբայ և այդ դերբայի ու ըղծական եղանակի ապառնի ժամանակի եզակի թվի երրորդ դեմքի լոկ ձևական նմանության հիման վրա իր կողմից դիտված դերբային «ըղծական» պայմանական անունն է տալիս:

Խոսքի մեջ այդ դերբայը հանդես է գալիս միայն օժանդակ բայի ժխտական ձևի հետ: Այս հանգամանքն էլ ստիպել է հենց պրոֆ. Ա Ղարիբյանին և պրոֆ. Գ. Սևակին այդ դերբայը անվանակոչել ավելի ճիշտ ձևով՝ ժխտական դերբայ. սակայն «ըղծական դերբայ» եզրույթն, ավանդականություն ստացած լինելով, երկար ժամանակ գործածվել է ժամանակակից հայ գրական լեզվի քերականության գրքերում:

Ժխտական դերբայը ծագում է անորոշ դերբայից. վերջինս բայի ժխտական խոնարհման մեջ հանդես գալով օժանդակ բայի ժխտական ձևի հետ՝ հատուկ գործածություն է ստանում և այդ ձևով երկար ժամանակ կիրառվելով կենդանի լեզվի մեջ՝ ինքնուրույնանում է, կրում է ձևական փոփոխություններ և վեր է ածվում ինքնուրույն դերբայի: Այս դեպքում անորոշ դերբայի կրած փոփոխությունը վկայում է տվյալ լեզվական համակարգի մեջ ժխտական դերբայի պահանջի մասին, և այդպիսով առաջանում է նոր դերբայ՝ անորոշ դերբայի տարբերացման հիման վրա:

Գրաբարը ժխտական դերբայ չունի:

Ժխտական դերբայը ձևավորվել է միջին հայերենի շրջանում [37,309]: Այս շրջանում ժխտական դերբայը հանդես է գալիս բայի չորս ժամանակների կազմության մեջ՝ սահմանական եղանակի ներկա ու անցյալ անկատար, պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակներում:

Միջին հայերենում ժխտական դերբայի հիմքում ընկած է անորոշ դերբայը, կամ ավելի ճիշտ, այդ դերբայը ծագում է հենց իր՝ միջին հայերենի անորոշ դերբայից [3,240]:

Ժխտական դերբայը միջին հայերենում միաձև արտահայտություն չունի: Ա. Աբրահամյանը առանձնացնում է ժխտական դերբայի կազմության հինգ տեսակ.

ա) Ի նախդրով և անորոշ դերբայով. Չէր ի գիտել: Չեմ ի կամիլ: Հանց բընութիւն զինչ մահն ունի, *չեմ ի մնալ* թէ նա խղճայ [3,241]:

բ) Ի նախդրով և անորոշ դերբայի լ ձայնորդի *ր*-ի հնչյունափոխված ձևով. Նա *չէր ի տար* հալաւիկ մի...: Ես *չեմ ի տար* հանց պատասխան...[3,241]:

գ) Անորոշ դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով. Ջիմ իշուկս կորուսեալ եմ և *չեմ գտնուլ*: Կասն այնոր *չեմ ելնել* ի հուն [3,243]:

դ) Օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի *ր*-ի հնչյունափոխված ձևով. *Չես հաւատար*: Գէշըն *չի մընար* մարդոյ...[3,244]:

ե) Անորոշ դերբայի լ ձայնորդի անկումով. Նշան այն է, որ հիւանդն ծանր լինի, և շուտ *չի գարթի* և ի քնուն մէջն շատ գրուցէ...Բնաւ դեղ *չի լինի* [3,245]:

Ժխտական դերբայի գործածության այս հինգ ձևերը միջին հայերենում կիրառության որոշակի սահման չունեն:

Միջին հայերենում ժխտական դերբայի բազմազանությունը Ա. Աբրահամյանը բացատրում է հետևյալ կերպ. «Այդ բազմազանությունը մենք երբեք էլ չենք ընդունում իբրև միջին հայերենի ժխտական դերբայի կայուն ձև. այդ բազմազանությունը մենք դիտում ենք որպես այդ դերբայի կազմավորման պրոցես, ձևավորման ընթացք, ուր պարզ նկատելի է հիմնական ձևի առաջացումը» [3,247]:

Արևմտահայ գրական ձևերն ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Արևմտահայ գրականի նշանավոր քերական Արսեն Այտընյանն իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ գրում է. «Սահմանական ներկայն ու անկատարը կը կազմուին. 1. *եմ* բային բացասականովը, և 2. իւրաքանչիւր բային բացասական ձևովը: Բայի մը բացասական ձեւը կը շինուի՝ աներելոյթի ծայրին չ- գիրը *ր*էի փոխելով. այսպէս. *Լսէր, սորվէր, կարդար, մօռնար*։

Միտ դնելու բան մ'ալ է որ Բ լծորդութեան բացասական ձևը սահմանական անկատարի մէջ *էր* կը վերջաւորի (փխկ. իր) այսպէս. Չէի սորվէր (փխկ. Չէի սորվիր): Եւ որովհետեւ ամէն բայի ալ կրաւորականը Բ լծորդութեան տակն է, անոր համար բոլոր կրաւոր. անկատար բացասականները նոյնպէս *էր* կը վերջաւորին. Չէր լսուէր, չէիր մոռցուէր, չէիր կարդացուցէր եւ այլն» [18,82]:

Այս դերբայով արևմտահայ գրականում կազմվում են բայի ներկա և անցյալ անկատար ժամանակները:

Արևմտահայ գրականում ժխտական դերբայն ունի կայուն ձև (միայն անցյալ անկատարում ի խոնարհիչը փոխվում է ե-ի). այն ծագել է անորոշ դերբայից՝ լ ձայնորդի անցումով՝ երթար, թողուր, նմանիր, զարմանար և այլն:

Օրինակ՝ Չէ՛, ա՛լ *չէր կրնար* համբերել (ԾԲ,677): Ու քեզի համար ըրած զոհողությունները երեսիդ *չի գարներ* ապերախտությունդ ցույց տալու համար... (ԺԳ,36):

Արևելահայերենում ևս ժխտական դերբայն ինքնուրույն կիրառություն չունի: Խոսքի մեջ այն հանդես է գալիս միայն օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ՝ կազմելով բայերի ենթադրական եղանակի ժխտական ձևերը: Օրինակ՝ Մինչև բոլորը չպառկեին՝ նա անկողին *չէր մտնի*...(ԺԴ,354): -Այ սա՛ Գնելը *չի հասկանա*...(ԺԲ,102):

Արևելահայ գրական աշխարհաբարի համեմատաբար վաղ շրջանում ժխտական դերբայը կազմվում էր օժանդակ բայի ժխտական ձևերի և անորոշ դերբայի հարադրությամբ:

Այս առթիվ Մ. Աբեղյանն ուղղակի գրում է. «Ենթադրական եղանակի բացասականը կազմվում է *եմ* օժանդակով և անորոշ դերբայով: Բացասական *չ* մակբայը դրվում է օժանդակ բայի վրա, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում: Եզակի երրորդ դեմքը միշտ *չի* ձևն ունի: Դերբայի *ե* լծորդը միշտ փոխվում է *ի* ձայնավորի» [21,267]:

Եվ իրոք, մինչև 20-րդ դարի սկզբները արևելահայ գրական լեզվում պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ձևերի կազմության հիմնական սկզբունքը սա էր. օրինակ՝ Ինձ թվում էր, թե վրեժխնդրությունս *չի հագենալ*, եթե Արարատի ահավոր ժայռերը նրա գլխին չկուտակեմ (ԻԹ,288): Երեսին որ թուր բռնեիր՝ երեսը *չէր թեքիլ* (ԺԶ,324): Սատանեք չէ, Սադայելն էլ գա, իմ ձեռից *պրծնիլ չի* (Լ,17):

Այնուհետև Մ. Աբեղյանը նշում է, որ ենթադրականի ժխտական կազմություններում «Անորոշ դերբայի լ վերջավորությունը խոսակցական, երբեմն և գրական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում. օրինակ՝ *չեմ գրի, չեմ խոսի, չեմ գնա, չեմ գարմանա*» [21,267-268]:

Հետագա շրջանում *չեմ գրի, չեմ խոսի, չեմ գնա* և այլ ձևերը դարձան օրինաչափական, բարձրացան կանոնի աստիճանի, և այսպիսով ավարտվեց անորոշից մի նոր դերբայի՝ ժխտական դերբայի ձևավորման ընթացքը:

Այսպիսով՝ արդի արևելահայերենում ժխտական դերբայը կազմվում է անկատարի հիմքից *ա* և *ի* վերջավորություններով, ըստ որում *ա* են ստանում *ա* խոնարհման, իսկ *ի*՝ *ե* խոնարհման բայերը [21,268]:

Ժամանակակից հայերենի ժխտական դերբայի կազմության այս օրինաչափությունը համընդհանուր է և ոչ մի բացառություն չի ճանաչում:

Ժխտական դերբայը անկատարի, ապառնիի և վաղակատարի հետ կազմում է դերբայների այն խումբը, որոնք ինքնուրույն ու անկախ գործածություն չունեն: Կախյալ դերբայների մեջ ժխտական դերբայը միակն է, որ օժանդակ բայի հաստատական ձևերի հետ չի զուգորդվում: Մյուս կողմից՝ եթե անկատար, ապառնի և վաղակատար դերբայները այս կամ այն չափով իմաստային որոշակիություն ունեն, ապա ժխտական դերբայը իմաստային որոշակիություն չունի:

3. ԲԱՅԻ ԺՆՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայերի խոնարհման ժխտական ձևերը ցույց են տալիս, որ խոսողը ժխտում, բացասում է բայահիմքի ցույց տված գործողության կամ եղելության կատարումը [9,432]:

Ժխտական խոնարհման ձևերն, ի հակադրություն դրականների, ցույց են տալիս, որ գործողությունը բացասվում, ժխտվում է:

Հայերենում ժխտական խոնարհումը միշտ նշույթավոր է: Ժխտական դրվածքն իրացվում է *չ* մասնիկով (պատմականորեն՝ *չ < ոչ*) և *ոչ*, *մի՛բառ*-մասնիկներով [49,356]:

Հին հայերենում (գրաբարում) ժխտական խոնարհման ձևերը կազմվում են հաստատական ձևի վրա *ոչ* օժանդակ բառի ավելացումով՝ նախադիր՝ իբրև նախահար շեշտակիր տարր. *ոչ սիրեմ, ոչ սիրես, ոչ սիրէ*: Միայն արգելական հրամայականն էր կազմվում *մի՛* օժանդակ բառով. *մի՛ սիրեր, մի՛ խաղար, մի՛ սիրէք, մի՛ խաղայք*:

Այս բառ-մասնիկը զուգորդվում է նաև ստորադասական ձևերի, անորոշի հետ, կարող է նույնիսկ ետադաս լինել, միջնորդավորվել այլ բառերով: Մասնակիորեն գործառել է նաև *չ*- մասնիկը: Սա ծավալուն գործածություն ստացավ արդեն միջին գրական հայերենում, թեև գրաբարատիպ խոնարհման ժխտականները դեռևս հետևում էին *ոչ*-ով կաղապարին: Վերլուծական կազմություններում *չ*-ն ավելանում է օժանդակ բային՝ սկզբից. *չերթամ, չերթաս*: Արգելականը երկու տարբեր զարգացումներ ունեցավ. *մի*-ով կաղապարը ժառանգորդական էր, հետևում էր գրաբարին, մյուսը կազմվում էր *մի՛* արգելականով և անորոշ դերբայով. *մի՛ տալ, մի՛ առնուլ* [49,356]:

Գրաբարի բայն ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական:

Սահմանական եղանակի ժխտական խոնարհումը գրաբարում իրացվում է դրական ձևերին ավելացնելով *ոչ* և *չ* մասնիկները, որոնք իմաստային տարբերություն չունեն:

Օրինակ՝ Քանզի ո՞վ որ ի մարդկանէ մեղաւ եւ *ոչ գղջացաւ*, Ո՞վ որ զագրացաւ եւ *ոչ ամաչեաց*, Ո՞վ որ զարշեցաւ եւ *ոչ պատկառեաց*, Ո՞վ որ սխալեաց եւ *ոչ ապաշաւեաց*, Ո՞վ որ կործանեցաւ եւ *ոչ հեծեծեաց*... (ԼԱ,361): Յամօթալից հեղգութենէ *չկարեմ* համարձակել ասել բանս մխիթարութեան յաղթողիդ աներևոյթ պատերազմիդ... (ԻԳ,27):

Ստորադասական եղանակի ժխտական ձևերը կազմվում են *չ* մասնիկը սկզբից ավելացնելով դրական բայաձևերին: Գործածվում են նաև *ոչ* և *մի* բառ-մասնիկները:

Օրինակ՝ Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոյ բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թեպէտ և *ոչ յոժարիցենք* զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ (Ժ,10): *Չթուեցին* յանս ժամանակաց աւուրք դառնաբեր, Յորում առթեցաւ մահ քո ցաւաբեր...(Ծ,95):

Գրաբարում *մի* մասնիկը արգելական հրամայականի ձևեր կազմելուց բացի հանդես է գալիս նաև ստորադասական եղանակի բայաձևերի հետ, ինչպես՝ Այր զերրորդ ազգի կին *մի՛ ստասցէ* և զեղբոր կին *մի՛ ստասցէ* (ԻԳ,92):

Մի՛ արգելականի և *ոչ* բացասականի տարբերությունն այն է, որ առաջինը արգելական է՝ կամական, ցանկության նշանակություն ունի՝ *մի՛ տեսցուք, մի՛ գնայցէք* նշանակում է

չտեսնենք, չգնանք, իսկ *ոչ* բառը գործածվում է միայն ժխտելու համար եղելությունը. նույն բայածևերը *ոչ* ժխտականով՝ *ոչ տեսցուք, ոչ մնայցէք* նշանակում են՝ չենք տեսնի, չեք մնա:

Ոչ բացասականը կարող է դրվել սահմանական ներկայի, անցյալ անկատարի, անցյալ կատարյալի, ինչպես և ստորադասական ապառնի ժամանակների վրա՝ կազմելով ժխտական խոնարհում, իսկ *մի* արգելականը դրվում է միայն ապառնի ժամանակների վրա:

Երբեմն բայը զեղչվում է և մնում միայն *մի* բառը, օրինակ՝ Կամի՞ս, զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց. և նա ասէ. *մի*: *Մի* խոտորիցիս յաջ և մի՛ յահեակ [43,273]:

Հրամայական եղանակի ժխտականը կոչվում է արգելական հրամայական և կազմվում է *մի* մասնիկի միջոցով: *Մի* արգելականը կամ ժխտականը իր համապատասխանություններն ունի սանսկրիտերենում *ma* ձևով [37,141]:

Գրաբարում արգելական հրամայականը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ձևին, ունի միայն երկրորդ դեմք: Եզակի թվում համընկնում է ներկայի նույն դեմքին: Այս նկատի ունենալով՝ ավելի հարմար է այն կազմել բայի ներկա ժամանակի երկրորդ դեմքից: Եզակի թվում ներկայի *ս* վերջավորությունը փոխարինվում է *ր*-ով, իսկ հոգնակին մնում է նույնությամբ, ըստ որում երկու ձևերին էլ հարադրվում է *մի* արգելականը [2,127]:

Օրինակ՝ *Մի թողուր* զմեզ ի ձեռանէ քումնէ... (Ա,58): *Մի կորնչիք*, և արքայից արքայի ի ծառայութենէ *մի ելանէք* (ԽԹ,356):

Արգելական հրամայականում խոնարհման ձևերը նույն վիճակն ունեն, ինչ ներկա ժամանակում, այսինքն՝ *ե* խոնարհման բայերն ունեն և՛ ներգործածն (-եր,-էք), և՛ կրավորածն (-իր,-իք) վերջավորություններ. ներգործածն խոնարհվում են այդ խոնարհման բոլոր բայերը, կրավորածն կարող են խոնարհվել միայն ներգործական սեռի բայերը՝ դառնալով կրավորական սեռի: *Ի* խոնարհման բայերն ունեն միայն կրավորածն վերջավորություններ (-ար, -այք, -ուր, -ուք) [2,128]:

Օրինակ՝ *Մի մատներ* զազանաց զանձն խոստովանող քեզ (ԻԱ,430):...*Մի լինիր* դու բարեխօս... (Ե,298): *Մի հաւատայք* առաջնորդացն ձերոց... (Ժ,52):

Մի մասնիկը դրվում է նաև անորոշ դերբայի վրա, ինչպես՝...Պատուէր տայ մեծասաստ հրամանաւ *մի՛ ողորմել* ծերոյն և *մի՛* երիտասարդին, *մի՛* տղային և *մի՛* հասակաւ կատարելոյն... (ԺԸ,30):

Միջին հայերենի ժխտական խոնարհումը 12-14-րդ դարերում դրսևորվում է մի շարք առանձնահատկություններով: Այս շրջանում բայի ժխտական կամ բացասական ձևերը կազմվում են հաստատականի վրա *ոչ*, *չի*, *չ*, *մի* բացասական մասնիկների ավելացումով:

Միջին հայերենում գրաբարակերպ ներկայի ժխտականը կազմվում է՝
ա) Բայածևի վրա *չ* ավելացնելով, ինչպես՝ Չարչարի անձն իմ. Չունիմ դադարումն (ԼԷ,32):

բ) Միջին հայերենում գրաբարակերպ ներկայի ժխտականը կազմվում է նաև *չի* մասնիկի ավելացումով, ինչպես՝ *Չի գիտեմ* քո սէ՞րդ արել. թե՞ եկել է օրս ի մահուան (ԾԱ,64):

Սովորաբար *չի* ժխտականը դրվում է բաղաձայնով սկսվող բառերի վրա, բայց պատահում է նաև ձայնավորից առաջ, ինչպես՝...Կուլայ, զօրն ըզքե՛զ կ'ուզէ, *չի՛ արնէր* այլ մարդու տօլապ (ԾԱ,48):

Ժխտականի այս նույն կազմությունն ունեն նաև ըղձականի ապառնին և անցյալ ապառնին: Այդ հասկանալի է, քանի որ գրաբարի ներկա և անցյալ անկատար բայաձևերը միջին հայերենում ստորադասականի՝ ըղձական ապառնիի և անցյալ ապառնիի իմաստ են արտահայտում, ինչպես՝ Թավալիմ ի մեղս, Թոթափիլ չկարեմ...(ԼԷ,28):

Թող եղանակավորող բառով կազմվող ըղձական բայաձևերում ևս ժխտականն արտահայտվում է *չ* և *չի* մասնիկների ավելացումով, ինչպես՝ *թող նստի, թող չլինի, թող չուտէ*, բայց և՛ *թող չի յամէ, թող չի մտէ* [12,353]:

գ) Ի տարբերություն *չ* և *չի* մասնիկների, որոնք հավասարապես դրվում են թե՛ ներկա, և թե՛ ստորադասական (ըղձական) բայաձևերի վրա, *ոչ* ժխտականը դրվում է միայն սահմանականի ներկայի և անցյալ անկատարի վրա, ինչպես՝ Արդ, զի դու յիս *ոչ խնայեցեր*, ողորմութեամբն *ոչ ներեցեր*...(ԼԷ,184): Իմաստունն *ոչ երկընչի* թէ հարկանեն զինքըն սըրով [12,354]:

Այս բոլոր ձևերը միջին հայերենում գործածվում էին առանց խտրության: Հաճախ նույն նախադասության մեջ կարելի է հանդիպել և՛ մեկ, և՛ մյուս ձևին, ինչպես՝...Այլ *չեկընչիմ* և՛ *ոչ վախենամ* (ԾԳ,22):

Ապառնի, վաղակատար և հարակատար բաղադրյալ ժամանակների ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի վրա *չ* մասնիկի ավելացումով: Ի տարբերություն հաստատական ձևերի՝ ժխտականների դեպքում օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ, ինչպես՝ Թէ չես աւտալ այս գերուս, յե՛տ տանեմ ըզփեշ կապայիս...(ԾԱ,30):

Վաղակատար ներկա և անցյալ ժամանակների կազմության դեպքում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, ինչպես՝ Տեսեալ աղւեսուն ասաց. զարմացեալ եմ ո՛վ ագռավ...թէ ինչ է պատճառն, որ հաւանց թագաւոր *չես դրած* [12,355]:

Այս դեպքում ևս ներկայի եզակի III դեմքում է օժանդակ բայը չի հնչունափոխվում, ինչպես՝ *չէ օրինած, չէ կենօքս չաջողեաց*...(ԾԳ,24):

Չ մասնիկը դրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայերի վրա: Բաղաձայնով սկսվող բայաձևերն ունենում են նաև *չի* մասնիկ, ինչպես՝ Ապուճարեհն ասէ...զոլորշիքն ամենայն մարմնոյն ջերմացեալ սրանան, վասն ան պատճառին՝ որ կերակուրն յիւր ժամն *չի հանդիպեցաւ* [12,356]:

Անցյալ կատարյալի ժխտականի կազմության III ձևն ստացվում է բայաձևից առաջ *ոչ* մասնիկի ավելացումով, ինչպես՝ Ըզկիրակին սուրբ *ոչ պահեցաք*... (ԻԴ,17):

Ինչպես սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների ժխտականի մասնիկավոր ձևերը, անցյալ կատարյալի ժխտականի այս երեք ձևերն էլ հավասար կիրառություն ունեն միջին հայերենում:

Միջին հայերենում արգելական հրամայականը հարուստ դրսևորումներ ունի: Նախ՝ գրաբարի հետևողությամբ արգելական հրամայականը կազմվում է տվյալ բայի սահմանական եղանակի ներկայի II դեմքից: Եզակի թվում բայի դիմային *ս* վերջավորությունը փոխարինվում է *ր*-ով: Հոգնակիում ներկայի բայաձևը մնում է անփոփոխ: Այս բայաձևից առաջ դրվում է *մի՛* արգելականը: Այսպիսով՝ բոլոր խոնարհումների արգելական հրամայականի բայաձևերը ունեն հետևյալ վերջավորությունները.

ե խոնարհում՝ -եր, -էք

ի խոնարհում՝ -իր, -իք

ա խոնարհում՝ -ար, -այք

ու խոնարհում՝ -ուր, -ուք:

Այս օրինաչափությունները տարածվում են ինչպես ածանցավոր, պատճառական, այնպես էլ անկանոն բայերի վրա:

Հայտնի է, որ գրաբարում ե խոնարհման ներգործական սեռի բայերը, ինչպես ներկա ժամանակում, արգելական հրամայականում ևս կարող են ունենալ կրավորականի վերջավորություններ (-իր, -իք)՝ դառնալով կրավորական սեռի: Ներկա ժամանակում կրավորականի այդ կազմությունը գործում է միջին հայերենում, սակայն հրամայական եղանակում՝ ոչ: Օրինակ՝ ...Այլազգին ասաց. *մի՛ պատերազմիր, համբերէ՛*, որ ես քեզ արինակ բան մի ասեմ [12,357]:

Միջին հայերենում կա արգելական հրամայականի կազմության յուրահատուկ ձև. *մի՛* արգելականը դնելով անորոշ դերբայի վրա, ստանում ենք մի տեսակ մեղմական արգելական հրամայական, գրաբարի հորդորական հրամայականը հիշեցնող իմաստով, օրինակ՝ *Մի՛ պատճառել* այսաւր յէգուց, թէ չէ մեզաւք ոտնակապիս [12,358]:

Հասկանալի է, որ այս դեպքում հոգնակիի դրսևորման հնարավորություն չունի լեզուն: Ի խոնարհման բայերն այս դեպքում անորոշում ունեն *-իլ* վերջավորություն, ինչպես՝ *Մի՛* փառաց դու *հետևիլ*, *Մի՛ անգանիլ* անեզր ի ծով [12,358]:

Արգելականի այսպիսի կազմություններում ե խոնարհման ներգործական սեռի բայերն ըստ անհրաժեշտության կրավորական սեռի կամ կրավորակերպ չեզոքի իմաստ են արտահայտում՝ անորոշում *-իլ* վերջավորություն ունենալով, ինչպես՝ Կոստանդին, իմ խըրատիս հաւան կացիր դու հեզաբար, *Մի՛* ի (զուր) հոգօք *մաշիլ* (=մի՛ մաշվիր) վասն անցաւոր կենաց համար [12,359]:

Ըղծական ապառնին և անցյալ ապառնին կազմվում են հաստատական բայաձևերի վրա *չ* կամ *չի* մասնիկներ ավելացնելով, իսկ պայմանականի ժխտական ձևերը նույնն են, ինչ որ սահմանական ներկայի դերբայավոր կազմությամբ ժխտական ձևերը,

ինչպես՝ *չքայլեմ, չքայլէի, չի քայլեմ, չի քայլէի* (ըղծական եղանակ), *չեմ ի քայլել, չէի ի քայլել, չեմ քայլել, չէի քայլել* (պայմանական եղանակ):

Հարկադրականի ժխտականը կազմվում է հաստատական բայաձևերից առաջ *ոչ* մասնիկն ավելացնելով, ինչպես՝ Թէ մէկ աւր ապաշխարեալ էիր, աստուած գքոյ մեղքն *ոչ պիտի յիշէր* [12,360]:

15-17-րդ դարերի միջին հայերենում ևս բայի ժխտական ձևերը կազմվում են հաստատականի վրա *ոչ, մի, չի, չ* բացասական մասնիկների հավելումով: Սահմանական եղանակի գրաբարածև ներկան և անցյալ անկատարը, ուստի և ըղծականի ապառնին և անցյալ ապառնին ժխտական են դառնում *ոչ, չի* և *չ* բացասական մասնիկների ավելացումով: *Չի* մասնիկը ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ հազվադեպ է դրվում, օրինակ՝ Եւ թէ զԱ կտոր արճիճն ի վերայ մսին ձգես որ կու եփի, *չի եփի* և հում մնայ [12,401]:

Համեմատաբար նվազ կիրառություն ունի *չ* մասնիկը, որ դրվում է ներկայի և անցյալ անկատարի, ինչպես նաև ըղծական ապառնու և անցյալ ապառնու թե՛ ձայնավորով, և թե՛ բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝ Ես ան հաւերուն էի որ գետինն ի կուտ չուտէի (=չէի ուտում) Թռչի երկնօքն երթի թէ սիրոյ ակնատն չընկնէի (=չընկնեի) [12,401]:

Այս շրջանում սահմանական եղանակի դերբայավոր կազմությամբ ներկա և անկատար ձևերի երևան գալու հետևանքով *չ* մասնիկը՝ դրվելով *եմ* օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ձևերի վրա (ի տարբերություն արդի գրականի՝ ժխտական մասնիկով օժանդակ բայը կարող է դրվել դերբայից հետո)՝ կազմում է ժխտական նոր ձևեր, ինչպես՝ Սաստիկ տխուր հիւանդացայ, ես *չեմ համկիտում*։ Ձեր դռովն անց կու կենամ, է՞ր *չես երևում*, Քոյ բերանէն ինձ մէկ ուրախ խաբար *չես բերում* [12,402]:

Եզակի III դեմքում է օժանդակ բայը կարող է հնչյունափոխվել *ի*-ի կամ մնալ անփոփոխ, ինչպես՝ Եախեն բաց *չի թողնում* (=չի թողնում) լուսարարի [12,402]:

Ի տարբերություն *չի* և *չ* մասնիկների՝ *ոչ* ժխտական մասնիկը հիմնականում դրվում է ներկա և անկատար ձևերի վրա, ինչպես՝ ...Այլ չերկընչիմ ւ՛ *ոչ վախենամ* (ԾԳ,22):

Ըղծական եղանակի բայաձևերի հետ *ոչ* ժխտականը հազվադեպ է գործածվում, ինչպես՝ Մեք քանի բազրկան այսօր գոխտուկ դուրս ելաք, փախաք, թէ *բռնեն ոչ* (=չբռնեն), կամ թէ փող ուզեն [12,402]:

Պայմանական եղանակի ապառնիները ևս սակավ կիրառությամբ կարող են ունենալ *չ* և *չի* ժխտական մասնիկները, ինչպես՝ -Մանկտի՛ք, ձեր արեւն ասեմ, որ սիրուն՝ քարըն *չի դիմանայ*...(ԾԱ,42):

Սահմանական եղանակի ապառնի, վաղակատար և հարակատար ժամանակների ժխտականը նախորդ շրջանի համեմատությամբ ուշագրավ առանձնահատկություններ չունի, կազմվում է դերբայաձևերի վրա *եմ* օժանդակ բայի ժխտական ձևերի ավելացումով, ինչպես՝ չեմ ուզելու, չեմ խմեր, չեն առած, չէ տեսել:

Անցյալ կատարյալ ժամանակի ժխտականը կազմվում է բայաձևերին *չ, չի* մասնիկներ կցելով, ինչպես նաև նրանցից առաջ *ոչ* մասնիկ ավելացնելով: Այս երեքից առավել շատ գործածական է *չի* մասնիկը, որ դրվում է բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ, ինչպես՝ *չի կերայ, չի մնաց*:

Չ մասնիկը հավասարապես դրվում է ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող բայաձևերի վրա, ինչպես՝ *չբացիր, չհնացայ*:

Ոչ ժխտականը նվազ կիրառություն ունի, ինչպես՝ *ոչ արքուցեր, ոչ եղեր*:

Արգելական հրամայականի ձևերը կազմվում են ներկա ժամանակի II դեմքի (եզակիում *ւն*- փոխվում է *ր*-ի՝ գրես- գրեր) բայաձևերի վրա *մի՛* արգելականի ավելացումով:

Ե խոնարհում- մի՛ հաներ, մի՛ հանէք

Ի խոնարհում- մի՛ հետևիր, մի՛ հետևիք

Ա խոնարհում- մի՛ հաւատար, մի՛ հաւատայք

Ու խոնարհում- մի՛ թողուր, մի՛ թողուք:

Օրինակ՝ *Մի՛ մտաներ* ի դատաստան ընդ ծառայի քում...(ԼԵ,54): Այր դու, *մի՛ տրտմիր*...(Է,95): *Մի՛ որսար* քու ճոււպայ...(ՇԱ,204): *Մի՛ թողուր* գատ եարդ ի ձեռաց...(ՇԱ,34):

Այս շրջանում ևս անորոշ դերբայի վրա *մի՛* արգելականի ավելացումով կազմվող հրամայականի կիրառության շատ դեպքեր ունենք, ինչպես՝ Ի ջերմերուն յառաջն *մի՛ տայ* [12,405]:

Արևմտահայերենում ժխտական խոնարհումը կազմվում է *չ* ժխտական մասնիկի, հրամայականի ժխտականը՝ *մի՛* արգելականի միջոցով:

Ա. Այտընյանը *ոչ* և *չ* մասնիկների բացատրությունը տալիս է հետևյալ կերպ. «*Ոչ* և *չ* բացասականներուն ալ համեմատութիւնը կը ցուցնէ, որ առաջինը ճիշդ և ծանր գրաւորը համարուած էր, երկրորդը՝ թէւ զարդարոյն ոճոյն մէջ շատ յաճախած, սակայն ընտանեկան բացատրութեանց մէջ ալ գլխաւոր բանողն էր: Եւ աւասիկ նոյն *չ* մասնիկն է ամէն ատենուան ռամկօրէնին սեպիականուածը իսկ *ոչ* անհետ եղած է» [18,67]:

Համադրական կազմության հետևյալ ձևերում *չ* մասնիկն ավելացվում է անմիջականորեն բայի վրա:

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձև. գրեցի-չգրեցի, նայեցի-չնայեցի, տեսայ-չտեսայ:

Օրինակ՝ Սազերդ հինա *չներկեցիր*... (ԽՂ,455): Երկրորդ հրավերը *չուշացավ* (Բ,21):

Պիտի եղանակիչով կազմվող բայաձևերի ժխտականն, ի տարբերություն արևելահայերենի, կազմվում է *չ* մասնիկը հավելելով ոչ թե եղանակիչի, այլ բայաձևի վրա. *պիտի գրեն- պիտի չգրեն, պիտի կարդամ- պիտի չկարդամ, պիտի տեսնեն-պիտի չտեսնեն*:

Օրինակ՝ *Պիտ չգտնես* միջոց թռիչքիդ համեմատ (ԽՂ,225): Եվ դեռ միամիտ բանաստեղծները...ծերուկի մը կնմանեցնեն բնության այս անգութ հերթապահը, որուն

բարձրացուցած աղմուկն ու իրարանցումը սակայն էն հուժկու երիտասարդներու լեզեռններ իսկ *պիտի չկրնային* հանել (Բ,49):

Պետք է նշել, սակայն, որ արևմտահայ գրականության մեջ այդ կանոնին միշտ չէ որ հետևում են, և կարելի է գտնել վերջինիս խախտման բազմաթիվ օրինակներ [56,240]: Ինչպես՝ ...Ով ալ ըլլար Թորոս աղային տեղը, ուրիշ կերպով *չպիտի կրնար* պատասխանել ժամագործին ապտակին (ԼԸ,43): Կկարծեի, թե Առաքելը վայրկյան մը իսկ *չպիտի վարաներ* փրկության այդ առաջարկը ընդունելու (Բ,23):

Ըղծական եղանակի ապառնի և անցյալ ապառնի (*գրեմ-չգրեմ, նայիմ-չնայիմ, գրէի-չգրէի, կարդայի-չկարդայի*) ձևերում չ ժխտականն ավելանում է բային:

Օրինակ՝ Եվ ես, իրմե ոչ նվազ վեհերոտ, չեմ խոսիր, վախճալով, որ *չխռովեմ* այս գեղեցիկ երազը, ու ձեռքե *չհանեմ* զայն (ԺԳ,243): Ու երջանիկ պիտի ըլլար հող ապրելուն, եթե մորաքրոջը երկու աղջիկները անտանելի *չդարձնեին* իր կյանքը (ԺԳ,7):

Սահմանական ներկայի և անկատար անցյալի դրական խոնարհման բայաձևերը համադրական կազմություններ են. ժխտական խոնարհման դեպքում դրանք փոխակերպվում են վերլուծական ձևերի՝ կազմվելով ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտված ձևերով. *կը գրրեմ-չեմ գրրեր, կը նայիմ- չեմ նայիր, կը կարդամ- չեմ կարդար, կը գրէի-չէի գրէր*:

Օրինակ՝ - *Չեմ հասկնար*, աղբար՛ր,...*չեմ նայիր* կոր տեք...(ԼԸ,185): Դուրսերը երթալ գործ որոնելու համար անկարելի էր, որովհետև անցագիր *չէին տար* (Բ,30):

Այս կաղապարով կազմվող ժխտականի դեպքում օժանդակ բայի ժխտված ձևերը միշտ նախադաս են: -*Իչ լծորդության բայերի անկատար անցյալի ժխտականը կազմելիս դրանք վերածվում են -ել լծորդության՝ կը խօսէի- չէի խօսեր, կը նստէի-չէի նստեր*:

Սահմանական ներկայի եզակի երրորդ դեմքի ժխտական կազմության ժամանակ օժանդակ բայի *չի* ձևը հնչյունափոխվում է. *ի-ի* սղումով այն դառնում է *չ՛*, ինչպես՝ *կըլլայ-չի ըլլար-չ՛ըլլար, կուզէ-չի ուզէր- չ՛ուզէր*:

Սահմանական եղանակի վերլուծական կազմության բայաձևերի ժխտականը կազմվում է օժանդակ բայի ժխտումով. *գրեր եմ- չեմ գրեր, գրեր էի-չէի գրեր* [58,161]:

Հարակատար ներկայի և անցյալի ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի ժխտումով: Ընդ որում, ի տարբերություն արևելահայերենի, օժանդակ բայը դառնում է նախադաս. *գրած եմ-չեմ գրած, տեսած եմ- չեմ տեսած*:

Հրամայական եղանակի ժխտական ձևի՝ արգելական հրամայականի եզակին կազմվում է *մի՛* մասնիկը գործածելով անորոշ դերբայի հետ, որի *լ* վերջնահնչյունը փոխվում է *ր-ի*. *մի՛ գրեր, մի՛ հեռանար, մի՛ հագնիր*:

Օրինակ՝ ...Կուզես առ, չես ուզեր *մի՛ առներ* (Բ,32): Չեմ ուզեր, ալ ասկից վերջը եթե բերող ըլլա, *մի՛ ընդունիր*...(ԼԸ,70):

Հրամայականի հոգնակի ժխտականը կազմվում է *մի՛* մասնիկն ավելացնելով ըղծական ապառնիի հոգնակի երկրորդ դեմքին համընկնող բայաձևերի վրա, ավելի պարզ՝ եզակիի *ր* վերջնահնչյունը փոխվում է *ք-ի*՝ *մի՛ գրէք, մի՛ նայիք, մի՛ կարդաք*:

Օրինակ՝ -Կաղաչեմ, մի՛ մերժեք այս տոմսակն...(ԼԸ,88):...Մեծ հուսով եկած եմ հոս, պարապ ետ մի՛ դարձունեք զիս (ԼԸ,88):

Պրոֆ. Ա. Սարգսյանը նշում է, որ հարադրական ապառնի ձևերում արևմտահայերենում *չ* մասնիկն ավելանում է օժանդակ բային և մնում վերջադաս դիրքում՝ *գրելու չէի, գրելու չեմ*, ի տարբերություն արևելահայերենի, ուր այն նախադաս դիրք է գրավում՝ *չէի գրելու, չեմ գրելու* և այլն [56,240]:

Ապա շարունակում է. «Բաղադրյալ ստորոգյալի ժխտական կառույցները երկու գրականներում ի հայտ են բերում որոշակի ընդհանրություններ և առանձնահատկություններ. եթե անկատարի (միայն արևելահայերենում) վաղակատարի ձևերում օժանդակ բայը *չ* մասնիկի հետ միասին անցնում է դերբայից առաջ, ապա հարակատարի դեպքում օժանդակ բայն արևելահայերենում մնում է ետադաս դիրքով, իսկ արևմտահայերենում այն դարձյալ տեղափոխվում է: Օրինակ՝

արևելահայերեն

գնում է - չի գնում

գնացել է - չի գնացել

Սահակը պառկած է - Սահակը

պառկած չէ:

արևմտահայերեն

գացեր է - չէ գացեր

(գացած է - չէ գացած)

Սահակը պառկած է - Սահակը

չէ պառկած:

Արևելահայերենում *Սահակը պառկած է*, այսինքն հարակատարով ձևերը խոնարհման հարացույցից դուրս են դրվել և միանգամայն իրավամբ, որովհետև նրանք այլևս կորցրել են բայի հիմնական հատկանիշները: Ղա կարելի է դիտել նաև շարահյուսության կիրառմամբ. բայական ստորոգյալի ժխտականի դեպքում տեղի է ունենում ժխտական մասնիկ + օժանդակ բայաձևի տեղաշարժ՝ գրում է - չի գրում, կարդում է - չի կարդում, այնինչ բաղադրյալ ստորոգյալի դեպքում այդպիսի տեղաշարժ չի կատարվում՝ մկրատ է - մկրատ չէ, կարմիր է - կարմիր չէ և այլն: Այսպես է նաև հարակատարով ձևերի դեպքում՝ քնած է - քնած չէ: Արևմտահայերենում այդպես չէ՝ Գրիգորը գրած է - Գրիգորը չէ գրած ևն ապացույց են այն բանի, որ արևմտահայերենում, իրոք, գործ ունենք բայաձևի հետ, քանի որ արևմտահայերենում օժանդակ բայի տեղաշարժը ազդանշան է նրան հաջորդող դերբայական ձևի բայական հատկանիշ ունենալու: ժխտական ձևերում օժանդակ բայի տեղաշարժվելու հատկանիշը կարող է ծառայել բայական և ոչ բայական ձևերը դասակարգելիս» [56,260-261,309]:

Ժամանակակից արևելահայերենում բայի ժխտական ձևերը կազմվում են *չ* և *ոչ* մասնիկների միջոցով, որոնք ավելանում են դրական ձևերի վրա: *Մի* մասնիկով կազմվում են միայն հրամայական եղանակի ժխտական բայաձևերը: Մնացած բոլոր դեպքերում ժխտական բայաձևերը կազմվում են *չ* մասնիկի օգնությամբ [9,432],[21,325]:

1. Համադրական կազմություն ունեցող սահմանականի անցյալ կատարյալի և ըղծական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի դեպքում *չ* մասնիկը դրվում է

դրական բայաձևերի վրա սկզբից, օրինակ՝ Այդ խոսքերից և ոչ մեկը *չարտասանեց* պատանին (ԽՁ,118): Վախ, մեր կյանքը սևով անցավ, Աշխարհից բան *չիմացանք* (ԺԷ,74): Եթե *չխոնարհվենք, չհնազանդվենք* աղա Գուլամյանցներին, եթե նրանց սրտի ուզածը *չկատարենք*, - այս աշխարհում իսկի ապրել չենք կարող (ԼԵ,57):

Արևելահայերենում ըղձական եղանակի ժխտական ձևերը, հարցական նշան ու համապատասխան հնչերանգ ստանալով, արտահայտում են երկընտրանք, անհանգստություն, ինչպես, օրինակ՝ *Չթողնի՞* հեռանա, *չթքի՞* ամեն ինչի վրա, գլուխն առնի ու փախչի...(ԺԲ,166): Ցրտերը ահաբեկում էին նրան. - ծառերին մի բան *չպատահի՞*... (ԺԴ,475):

Ժխտական *ոչ* մասնիկը ժողովրդախոսակցական լեզվի ձևով գործածվում է միայն ըղձական եղանակի բայաձևերի հետ՝ *ոչ լինի, ոչ տեսնեի*:

2. Սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերի ժխտականը կազմվում է ժխտական օժանդակ բայի և համապատասխան դերբայների միջոցով: Օժանդակ բայի ժխտական ձևերն են.

Ներկա -չեմ, չես, չի, չենք, չեք, չեն.

Անցյալ -չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին:

Ինչպես երևում է, ներկայի եզակի երրորդ դեմքի *է* ձևը ժխտականի դեպքում դառնում է ոչ թե *չէ*, այլ *չի* [24,317]:

Ճիշտ է ժխտականի համար կա նաև *չէ* ձևը, բայց դա կիրառվում է բաղադրյալ ստորոգյալների կազմում, օրինակ՝ մարդ է - մարդ չէ, մեծ է - մեծ չէ և այլն [21,326]:

Ժխտական օժանդակ բայը դրվում է նախադաս, դերբայներից առաջ և, այսպիսով, ստացվում են վերլուծական ժամանակների հետևյալ ձևերը՝ չեմ գրում, չէի գրում, չեմ գրելու, չէի գրելու, չեմ գրել, չէի գրել:

Օրինակ՝ Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս... Էլ *չեմ անիծում* ցավերը կյանքիս, էլ *չեմ տրտնջում* վիճակիցս ունայն...(ԺԲ, 34): Եթե ինքը շարժվեր, Պապը *չէր համբերելու*...(ԺԵ, 118):

3. Հարկադրական եղանակի ժխտական ձևերը կազմվում են *պիտի//պետք* է եղանակիչի վրա *չ* մասնիկն ավելացնելով սկզբից, ինչպես՝ *չպիտի//չպետք է գրեմ, չպիտի//չպետք է գրեք*:

Օրինակ՝ Հայրիկն այդ բանը *չպիտի աներ*...(ԺԴ, 488): Գուցե կարգն այդ է, որ նա տնից *չպետք է դուրս գա*...(ԺԵ, 63):

Հարկադրական եղանակի ժխտական ձևեր կարելի է կազմել նաև *չ* մասնիկը ոչ թե եղանակիչի, այլ բայաձևի վրա ավելացնելով, այսպես՝ *պիտի չխմեմ, պիտի չխմեի*: Բայց այս ձևերում բացասվում է գործողությունը և վերցվում է բացասված գործողության անհրաժեշտությունը: *Պիտի չխմեմ* նշանակում է *ինձ չխմել է պետք*: Իսկ *չպիտի խմեմ* նշանակում է *ինձ խմել պետք չէ*, ուր ժխտվում, բացասվում է գործողության պետքը, հարկը:

Իհարկե, ընդհանուր բովանդակությունը մնում է նույնը, սակայն հարկադրական եղանակի համար ավելի ընդունելի է վերջին կազմությունը (չպիտի խմեմ), որովհետև այստեղ խոսքը վերաբերում է գործողության հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելու հաստատմանը կամ մերժմանը և ոչ թե մերժված գործողության անհրաժեշտության հաստատմանը, որն ըստ էության դառնում է մի դրական ձև [24,317]:

Հարկադրական եղանակի անցյալ ժամանակի դրական ձևերը ցույց են տալիս նախատեսված, բայց չկատարված գործողություն, ինչպես՝ *պիտի գնայի* նշանակում է *չի գնացել*: Իսկ ժխտական ձևերը ցույց են տալիս կատարված գործողություն, որի կատարումը նախատեսված չէր, ինչպես՝ *չպիտի գնայի* նշանակում է գործողությունը կատարվել է, բայց հարկ չկար կատարելու:

Երբ հարկադրական եղանակի դրական ձևերն արտաբերվում են արհամարհական, հեզմական հնչերանգով, ձեռք են բերում ժխտական նշանակություն, ինչպես՝ *Ինձ պե՞տք են ձեր գրքերը*: -Նշանակում է *պետք չեն*:

4. Ենթադրական կամ պայմանական եղանակի ժխտականը դրականից տարբեր կազմություն ունի. այն կազմվում է օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների ժխտական ձևերի և ժխտական դերբայի հարադրությամբ, ինչպես՝ *կգրեմ-չեմ գրի, կգրեի-չէի գրի*: ժխտական օժանդակ բայը դրվում է նախադաս:

Օրինակ՝ - Չէ, գավակս, *չեմ բարկանա...*(ԽՁ,508): Մինչև բոլորը չպառկեին՝ նա անկողին *չէր մտնի...*(ԺԴ,354):

5. Հրամայական եղանակի ժխտականը՝ արգելական հրամայականը, կազմվում է *մի* մասնիկով, որը շեշտվում է և դրվում նախադաս:

Հր. Աճառյանը արգելական հրամայականի կազմության մասին գրում է. «Արգելականը ունի եզակի և հոգնակի, եզակին կազմվում է բայի անորոշ դերբայից, սրա չ վերջնաձայնը դարձնելով *ր* և միևնույն ժամանակ սկիզբը ավելացնելով *մի*՝ արգելական մակբայը: Այն բայերը, որոնք անորոշ չունեն, չունեն նաև արգելական, այսպես *ես* օժանդակ բայը և ուրիշ պակասավոր բայեր: Սրանից է նաև այն տարբերությունը, որ կա մի կողմից բուն հրամայականի և մյուս կողմից արգելականի միջև, հատկապես անկանոն բայերի մեջ, ինչպես՝ տա՛ր- մի՛ տանիր, բա՛րձ- մի՛ բառնար:

Արգելականի հոգնակին կազմվում է եզակի *-եր, -իր, -ար, -ուր* վերջավորությունները դարձնելով *-էք, -իք, -աք, -ուք* (մի՛ սիրէք, մի՛ խօսիք, մի՛ աղայք, մի՛ թողուք)» [16,հ.4,310-311]:

Իսկ Հովհ. Բարսեղյանը գրում է. «Հրամայական եղանակի ժխտական կամ արգելական ձևերը կազմվում են «մի» արգելական մասնիկով, որը միշտ շեշտվում է:

Առաջին և երկրորդ խոնարհման բոլոր տիպի բայերի արգելական հրամայականը ծագումով կազմված է «մի» արգելականից և անորոշ դերբայի այլևայլ ձևափոխություններից:

Արգելական հրամայականի եզակի թվում *ե* խոնարհման բայերի / վերջավորությունը փոխարինվում է *ր* վերջավորությամբ, իսկ *ե* խոնարհիչը դառնում է *հ*:

Օրինակ՝ մի՛ գրիր, մի՛ սիրիր, մի՛ փախչիր, մի՛ խաղացնիր, մի՛ մտնիր, մի՛ վախեցնիր և այլն:

Ա խոնարհման բայերի մեջ *մի՛* արգելականն ավելանում է անորոշ դերբայի վրա, որի / վերջավորությունն ընկնում է:

Օրինակ՝ մի՛ կարդա, մի՛ խաղա, մի՛ մոտենա, մի՛ բարձրանա ևն:

Ժխտական հրամայականի հոգնակին կազմվում է դարձյալ անորոշ դերբայից, որի /-ն բոլոր տիպի բայերում փոխարինվում է *ք*-ով:

Օրինակ՝ մի՛ գրեք, մի՛ մտնեք, մի՛ փախչեք, մի՛ վախեցնեք, մի՛ կարդաք ևն» [24,318]:

Սակայն արգելականի կազմության այս օրինաչափությունն այժմ փոխվում է: Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական և արգելական ձևերը նույնանում են, ինչպես՝ գրիր - մի՛ գրիր, կարդա - մի՛ կարդա և այլն, ուստի և դրանց նմանությամբ մյուս բայերի արգելական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից, ինչպես՝ գտիր - մի՛ գտիր, փախիր - մի՛ փախիր, հագցրու - մի՛ հագցրու և այլն, որոնք ավելի ու ավելի են տարածվում և գերակշռող դառնում: Կարելի է ասել արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից [21,329]:

Օրինակ՝ -Դու դեռ բանը չլսած՝ *մի՛ բարկանա* հայրիկ (ԺԴ,476): -Ընդունեք նրա տված խորհուրդը, և *մի՛ գնացեք* այն ավազակի մոտ (ԽԶ,473):

Երբ հրամայականի մի՛ արգելական մասնիկը շեշտ չի կրում, ունենում է ոչ թե ժխտական իմաստ, այլ հրամանը, հորդորը, պահանջը մեղմելու իմաստ: Այդ դեպքում *մի*-ն վերաբերական է:

Օրինակ՝ *Մի* նայիր, Հասմիկ, վրան նախշեր էլ կան:

Արգելական *մի* մասնիկը միշտ դրվում է բայից առաջ, իսկ *մի* վերաբերականն ունի համեմատաբար ազատ շարադասություն: Այն կարող է դրվել նաև բայի լրացումներից առաջ:

Օրինակ՝ *Մի* ասլանի ճուտերին իմաց տուր, գնանք էդ ավազակին բռնենք:

Երբեմն հրամայական եղանակի բայաձևերը գործածվում են ցույց տալու համար որևէ գործողության իրագործման անհնարինությունը կամ խիստ դժվար լինելը: Այդ դեպքում նրանք մեծ մասամբ հանդես են գալիս *գալ* և *գնալ* բայերի հրամայական ձևերի գուգորդմամբ:

Օրինակ՝ Դե *արի* ու էս տեսակ մարդկանց հետ համերաշխություն հաստատիր: Նշանակում է «հնարավոր չէ»:

Ժողովրդախոսակցական ոճում ժխտական դերբայը մասնակցում է հրամայականի կազմությանը: Այս դեպքում *մի՛* արգելական մասնիկը ստանում է *ք՛* վերածվելով *միք՛* ձևի և հարադրվում է ժխտական դերբային, ինչպես՝ *միք՛ կարդա, միք՛ գրի*:

4. ԴԵՐՔԱՅՆՆԵՐԻ ԺՆՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Հայերենում ժխտական ձևեր ունեն նաև դերբայները:

Գրաբարում ժխտական ձևով գործածվում են անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները:

Անորոշ դերբայը ժխտական ձևեր կազմում է *չ* և *ոչ* մասնիկներով, որոնք ավելանում են դրական ձևերին (ուղիղ և հոլովված):

Գրաբարում անորոշ դերբայը ժխտական ձևեր ունի.

ա) Ուղղական հոլովով. Վասն զի ոչ համակամեցար մեզ՝ *չթագաւորել* նմա, արդ և մեք կամեսցուք՝ և քեզ *չքահայանայ* մեզ (ԻԱ,432):

բ) Տրական հոլովով. Մի՛ ոք տղայական բարուք և անիմաստ խորհրդով փոքր վարկանելով զսորայս տիրողութիւնս յաղագս *ոչ ունելոյ* թագ և եթ ի գլուխ (ԻԳ,201):

գ) Գործիական հոլովով. Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիրն *ոչ ճանաչելով* զբնութիւն (ԼԷ,48):...Եւ մեծապէս լինի դիւաց խնդութիւն, *չխրատելով* ձեզ և *չպահելով* զամենայն կարգս մոգաց (Ժ,92):

Գրաբարում ժխտական ձևով գործածվում են նաև անցյալ (Որոյ *ոչ հաւանեալ*՝ չառնու յանձն...(ԺԸ,33):...Ջգետնեալ փրփրէր անզգայութեամբ, և *չկարացեալ* ասել, թէ մեղայ (ԽԹ,92)) և ենթակայական դերբայները (Եւ մանաւանդ զի վստահ եղեալ յամենիմաստ մարգպանն, եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել *չլսող* և գիտել զիրաւունս...(ԽԹ,446)):

Միջին հայերենում ժխտական ձևով հանդիպում են անորոշ, անցյալ և հարակատար դերբայները: Այս դերբայների ժխտականը կազմվում է *ոչ* և *չ* մասնիկների միջոցով: Անորոշ դերբայը ժխտական ձևեր ունի.

ա) Ուղղական հոլովով. Մաղթեա՛ *չթողուլ* ի ձեռանէ (ԻԴ,104): Ջարթուցանէ զմեզ առակս, ամենկին *ոչ հաւատալ* պատիր բանից այլազգեաց...(Է,73):

բ) Սեռական - տրական հոլովով. *Ոչ արհամարհելոյ* աղագաւ եմք այդպիսի՝ այլ պատուոյ...(Է,73):

գ) Գործիական հոլովով. *Ոչ գիտելով* զայս յիմարին, եւ ոչ զմտաւ ածել կուրին, թէ ո՛չ ուժով իւրոյ բազկին կամ զօրութեամբ իւր Մահմետին Եղև զՈւրհայ առնուլ նմին...(ԼԷ,158):

ժխտական ձևեր ունի նաև անցյալ դերբայը...Եւ այլոց սերմանց և հնդոց *ոչ տարեալ*՝ այպանեն զնովա...(Է,72):

Հարակատար դերբայը ևս ունի ժխտական ձևեր. *Չանցած* մեղքըն մի՛ յիշել, այլ քաւեա՛ զկամայ զակամայ (ԾԳ,44):

Արևմտահայերենում ժխտական ձևով գործածվում են անորոշ, ենթակայական, հարակատար և ապառնի II դերբայները:

Անորոշ դերբայը ժխտական ձևեր ունի.

ա) Ուղղական հոլովով. Հեղափոխական կյանք *չունենալս* շատ սախտե կուտա կոր ինծի...(ԾԲ,675):

բ) Սեռական հոլովով. *Չհավատայու*, զարմանալու պզտիկ մրմունջ մը... (ԺԳ,132):

գ) Տրական հոլովով. *Չտեսնելու* համար խորունկը ջուրին՝ Կխմեն փափկ աչքերով (ԽԴ,448):...Բերդին ավարեն *չի պակսելու* համար թողին ծովեզրը և ներս մտան (ԻԲ,463):

դ) Բացառական հոլովով. ...Բայց նորեն կըսեմ, նպատակիդ *չհասնելե* զատ՝ այս ընթացքով դուն ալ իշու արքայության պիտի արժանանաս (Բ,21):

ե) Գործիական հոլովով. Հայր սուրբը շուտ մը նորա օրինակին հետևեցավ առիթն ամենևին *չի կորսնցնելով* (ԻԲ,435):

Ժխտական ձևեր է կազմում նաև ենթակայական դերբայը, ինչպես՝...Ստակ *չունեցողներուն* անունները բնավ չենք գրեր...(ԼԸ,10):

Հարակատար դերբայը ևս կազմում է ժխտական ձևեր. ...Հանցանքն իմս է, որ *չգիտցած չտեսած* մարդուս հետ թուղթ կը խաղամ կոր...(ԼԸ,189):

Ժխտական ձևեր ունի նաև ապառնի II դերբայը. *Չըլլալիք* բաներ կպատմվին իր վրա...(ԾԳ,677):

Արևելահայերենում *չ* մասնիկով կազմվող ժխտական ձևեր են ունենում միայն անկախ, բառային ինքնուրույն գործածություն ունեցող դերբայները, այսինքն՝ անորոշ, անկատար II, հարակատար, համակատար, ենթակայական և ապառնի II դերբայները [23,330]:

Արևելահայերենում անորոշ դերբայը հոլովվում է *ու* հոլովմամբ և կազմում է ժխտական ձևեր *չ* մասնիկով: Անորոշ դերբայը ժխտական ձևեր ունի.

ա) Ուղղական հոլովով. Ո՞վ կարող է *չըսիրել* Ձեզ, *Չըստրկանալ* Ձեր կամքին, Ո՞վ կարող է հլու և հեզ *Չաղորթել* Ձեզ, օ Տիկին (ԽԵ,271): -*Չթողնել* պարսից ձախ թևը միանա աջ թևին...(ԺԵ,112):

բ) Սեռական հոլովով. Եվ մեռնելու, ոչնչանալու, *չլինելու* պես վիրավորական էր, որ տղան վեցում էր...(ԻԵ,171): Իրավունք չունես *չզգաստանալու*... (ԼԹ,218):

գ) Տրական հոլովով. Կար ժամանակ, երբ թագուհին ինքը հեռանում էր մարդկանցից, ոչ ոքի *չտեսնելու*, երբեք *չխոսելու*... համար (ԻԹ,5):

դ) Բացառական հոլովով. *Չուտելուց* ծիծս չորացել, կպել է դոշիս (Լ,76):

ե) Գործիական հոլովով. Ուտելու բան է պահանջել և, ոչինչ *չստանալով*, հանվել պառկել է անկողնումս...(Լ,264):

Ժխտական ձևեր ունի նաև ենթակայական դերբայը. -Սիմոն, *չաշխատողը* շատանում է, կարծես թե հացը պիտի քիչություն աներ...(ԻԵ,56):...Որի մոտ մի գենք ավելորդ էր, առնում էր, տալիս էր *չունեցողին* (ԽԶ,463):

Խոսակցական լեզվում ենթակայական դերբայը, գործածվելով որոշիչ հոդով և հատկապես օժանդակ բայի դրական կամ ժխտական ձևերի հետ, արտահայտում է ապառնի ժամանակի իմաստ. Դրանից *ծեռք վերցնողը չեմ*:

ժողովրդախոսակցական լեզվում տարածված են նաև ենթակայական դերբայի ժխտական ձևի և օժանդակ բայի դրական կամ ժխտական ձևերի հարադրությամբ կազմված կառույցները. Թո՛ղ այդպես լինի. ես *չցանկացողը* չեմ (ԻԹ,253):

Այս դեպքում ունենում ենք բաղադրյալ ստորոգյալներ, որոնց ստորոգելին արտահայտված է ենթակայական դերբայի ժխտական ձևերով:

Հարակատար դերբայը ևս ունի ժխտական ձևեր. *Չունեցածս* ժամանակ խաղացել եմ և համարյա միշտ էլ տարել (Լ,277):

Սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակների ժխտական ձևերը ցույց են տալիս վիճակի ժխտում. ...Ուրեմն Երեմիան տակավին *քնած չէ* (ԺԵ,80): -Միևնույն է, տեր սեպուհ, - գլուխն օրորեց նորից ծերունին,- ոչ մի թագավոր մեզ դեռ *չի օգնած* (ԺԵ,216):

Համակատար դերբայի ժխտական ձևերը քիչ են հանդիպում: Դրանք ևս կազմվում են չ մասնիկն ավելացնելով դրական ձևերին. Պետք է ոչնչացնել մուրացիկներին, քանի որ մենք գայրանում ենք նրանց ողորմելիս և գայրանում ենք նրանց *չողորմալիս* (ԻԷ,367):

Ապառնի II դերբայի ժխտական ձևերը ևս հազվադեպ են գործածվում. Դա *չլինելիք* բան է:

5. ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԺՆՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Հայերենում ժխտական ձևեր ունեն նաև հարադրական բայերը:

Ըստ իրենց բառակազմական, իմաստաբանական և քերականական հատկանիշների՝ հարադրական բայերը բաժանվում են երկու խմբի՝ *հարադրավոր բայեր* և *զուգադրական բայեր*:

Հարադրավոր բայեր են այն բայական հարադրությունները, որոնց մեկ բաղադրիչն է միայն բայ, իսկ մյուսը անուն է կամ մակբայ, ինչպես՝ *առաջ գալ, պարտածել, անգիր անել* և այլն:

Ձուգադրական (զուգաբայական, զուգորդական) են երկու կամ ավելի բայերի կապակցություն ներկայացնող բայական հարադրությունները, ինչպես՝ *ասել-խոսել, զնայ-հեռանալ, ուտել-խմել*:

Գրաբարում առկա են հարադրական բայերի այս երկու տեսակները: Ժխտական ձևեր կազմում են չ մասնիկով, որը դրվում է բայական բաղադրիչի վրա:

Օրինակ՝ Սա եկեալ և ընդդեմ կացեալ, *չտայ թոյլ* զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ... (ԻԱ, 150): Ջոր իբրև լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, *չկամեր չառնոյր* յանձն (Ե, 110):

Միջին հայերենում հարադրական բայերն ունեն ժխտականի կազմության նույն ձևն, ինչ գրաբարում: Ուշագրավ է, որ զուգադրական կապակցությունները և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում ժխտական մասնիկ են առնում երկու բաղադրիչների վրա:

Օրինակ՝ Այն տէսթուրից *դուրս չգայի* (ԻԵ, 182): Օրիկ մի *չելար չեկիր* (ԻԶ, 460):

Արևմտահայերենում ևս հարադրական բայերի ժխտական ձևերը կազմվում են *չ* մասնիկով: Վերլուծական ձևերում օժանդակ բայը դրվում է անվանական ու բայական բաղադրիչների միջև:

Օրինակ՝ -Կնիկ *թող չես տար* որ քիչ մ'ալ ես խոսիմ (ԼԸ, 150):

Բայական բաղադրիչներով հարադրություններում ժխտվում են երկու բաղադրիչներն էլ, ինչպես՝ ...Ինչո՞ւ *չերթաս-չուգես*, - կխրատեին դրացուհիները (ԾԲ, 7):

Արևելահայերենում ևս վերլուծական ձևերի ժխտական օժանդակ բայը դրվում է հարադրի և բայական մասի միջև, ինչպես՝ դուրս չի գալիս, գրել չի տվել:

Օրինակ՝ Նրան *դուր չէր գալիս*...սարկավագի միապաղաղ, երգեցիկ ձայնը (ԺԹ, 131):

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի գրական երկերում հարադրական բայերի այս ձևերը հանդիպում են նաև ժխտական օժանդակ բայի նախադաս գործածությամբ, ինչպես՝...Այսօր խանը շատ ուշացավ, *չէ դուրս գալիս* (ԽԶ, 45): Նրանց սուր-սուր սմբակները թաղվում էին կավի մեջ, էլ *չէին դուրս գալիս* (ԽԷ, 63):

Համադրական ձևերի ժխտականի դեպքում *չ* մասնիկն անմիջաբար դրվում է բայական մասի վրա, ինչպես՝ *դուրս չգնաց, գրել չտվեց*:

Օրինակ՝ Բայց Ալեքսանի *քունն* իսկույն *չտարավ* (ԺԴ, 426): Միայն այդ տեսարանին *ներկա չլինելու* համար նա կցանկանար, որ երբեք մտած չլիներ Գարդման (ԻԹ, 93):

Ժողովրդախոսակցական ոճում տարածված են *չ* ժխտական մասնիկի՝ անվանական բաղադրիչի հետ գործածության ձևերը, ինչպես՝ *Չթույլ տաս*, որ քեզ խաբեն... (ԼԵ, 22): Լիզան *չդուրս եկավ* ինձ հրաժարական տալու, և ես հեռացա ինչ-որ ծանրություն ոչ թե կրծքիս վրա, այլ կրծքիս տակ (ԼԵ, 158):

Արգելական հրամայականի *մի* մասնիկը դրվում է անմիջաբար խոնարհվող բայի վրա, ինչպես՝ *դուրս մի գնա, գրել մի տվեք*:

Սակայն առանձին դեպքերում *մի* մասնիկը կարող է դրվել նաև հարադրական բայերի վրա, որպես մի ամբողջության վրա սկզբից, ինչպես՝ *մի դուրս գնա, մի գրել տվեք*:

Օրինակ՝ Խորամանկությունը և շողոքորթությունը զորեղ միջոցներ են...*մի՛ բաց թողնիր* ձեռքիցդ այդ միջոցները (ԼԵ, 75): -Սո՛ւս արա, դատարկ, դատարկ *մի՛ դուրս տուր*... (ԼԵ, 82):

Ջուզադրական բայերի վերլուծական ձևերի ժխտական խոնարհման օժանդակ բայն ընկնում է նախադաս՝ դրվելով առաջին բաղադրիչից առաջ, ինչպես՝ *չի մեռնում պրծնում, չի թռել գնացել*:

Հարակատար դերբայով կազմված ձևերում օժանդակ բայը դրվում է հետադաս, ինչպես՝ *պոկված ընկած չեմ, պոկված ընկած չէի*:

Համադրական ժամանակաձևերի ժխտական խոնարհման դեպքում *չ* մասնիկը դրվում է միայն առաջին բայի վրա, ինչպես՝ Գարնանը միշտ կրով ձերմակացնում էր ծառերի բները, որ, ինչպես ինքն էր ասում, «լապաստրակներն» անտառից *չգանկրծեն*... (ԺԴ, 445): Անտեղի տեղը *չհավվեր-կորչեր*, Ինձ կարող էին և հարուստ կոչել (ԽԲ, 382):

Սակայն հանդիպում են նաև երկու բաղադրիչների ժխտական խոնարհմամբ ձևեր, ինչպես՝ Մինչև որ *չտանես չժանոթացնես* ինձ նշանածիդ հետ, ես բան չեմ կարող հասկանալ (L,227):

6. ԺԽՏԱԿԱՆ ՄԱԿԱՅՆԵՐ

«Լեզվաբանական բառարանում» մակբայը սահմանվում է հետևյալ կերպ. «Չթեքվող խոսքի մասերից մեկը, որը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշը» [48,207]:

Մ. Ասատրյանը տալիս է հետևյալ բնորոշումը. «Մակբայը որպես խոսքի մաս իմաստային տեսակետից բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս գործողության հատկանիշ կամ էլ հատկանիշի հատկանիշ: Եթե գործողությունը, դրությունը, որակը, քանակը միավորենք առարկայի հատկանիշ ավելի լայն հասկացության տակ, ապա մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ» [21,332]:

Ռուս լեզվաբանության մեջ մակբայը ներկայանում է որպես «չթեքվող բառեր, որոնք ցույց են տալիս գործողության, վիճակի, որակի հատկանիշ և հանդես են գալիս պարագայի պաշտոնով» [71,225]:

Այսպիսով՝ մակբայը ցույց է տալիս առարկայի հատկանիշի հատկանիշ: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից միակն է, որ չի թեքվում՝ չի ենթարկվում քերականական փոփոխության:

Գրաբարի քերականություններում «մակբայ» խոսքի մասի տակ դիտարկվում էին տարբեր բնույթի բառեր, որոնց մի մասը հետագայում ընդունվեց որպես այլ խոսքի մասերի պատկանող բառեր:

Ա. Աբրահամյանը մակբայը բնորոշում է այսպես. «Մակբայը որպես խոսքի մաս իր մեջ ընդգրկում է այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս գործողության կատարման զանազան հանգամանքներ, պարագաներ (տեղ, ժամանակ, ձև, չափ), այլև հատկանիշի հատկանիշ ու աստիճան: Խոսքիմասային այդ յուրահատկությամբ կիրառության մեջ նրանք հարում են բայերին, ածականներին, ինչպես նաև մակբայներին: Գործողության հանգամանքներ և հատկանիշի հատկանիշ ու աստիճան ցույց տալով՝ մակբայները փոփոխություններ չեն կրում, չեն հոլովվում կամ խոնարհվում» [2,267]:

Ակնհայտ է, որ ժամանակակից հայերենում մակբայ համարվող մի շարք բառեր գրաբարում դիտվում են որպես այլ խոսքի մասի պատկանող բառեր: Ուստի այդ բառերը կքննարկենք այն խոսքի մասերի մեջ, որոնց պատկանում են:

Ժամանակակից հայերենում ժամանակի, չափի ու քանակի, ձևի մի շարք մակբայներ ունեն ժխտման իմաստ, դրանք են՝ *երբեք, այլևս, ամենևին, բնավ, ոչ մի կերպ*:

Այս մակբայներից *բնավ, ամենևին* բառերը գրաբարում և միջին հայերենում գործածվում են եղանակավորող բառերի արժեքով [2,276]:

Բնավ. Ծագում է *բուն* արմատից, պիլ. *bun* «հիմ, արմատ, ծագում, բուն, սկիզբ, ծայր, հիմնական» [15,հ.1,483]:

Իմաստով համարժեք է *ամենևին* բառին և արտահայտում է բացասման, հնարավորության ժխտման իմաստ:

Արևմտահայերենում. Ասոնք *բնավ* տարբերություն չունին գրաքննիչներեն... (ԼԸ,140): Եկավ անոր մեջ լվալ Համեստ աչքերն այր մարդե *բնավ* չհամբուրված (ԽԴ,447):

Արևելահայերենում. *Բնավ* տեղեկություն չուներ ոչ միայն Հայաստանում բնակվող օտար ազգերի մասին, այլ նույնիսկ հայերի մասին (ԽԶ,220): ...Խորհուրդ արինք, որ թագավորը շարունակե յուր ճանապարհը...ցույց տալու համար...թե Ուտիքում կանգ առնելու նպատակ *բնավ* չէ ունեցել (ԻԹ,72):

Երբեք. Ժամանակի մակբայ է, ծագում է *երբ* արմատից [15,հ.2,42]: Չնայած ժամանակի մակբայների իմաստը մշտատևություն ցույց տալն է, սակայն վերջինս երբեմն, գործածության պայմաններից կախված, կարող է այս կամ այն ձևով, այս կամ այն չափով սահմանափակվել: Այս մակբայների շարքին են դասվում *երբեք, այլևս* մակբայները [5,257]:

Գրաբարում *երբեք* մակբայը ժամանակի իմաստ ուներ և նշանակում էր «երբեմն, մի անգամ, մի ժամանակ» [2,268]:

Սակայն գրականության մեջ հանդիպում են *երբեք* մակբայի այժմյան իմաստով գործածության դեպքեր: Հատկանշական է, որ այդ պարագայում *երբեք* մակբայը գործածվում է ժխտական բնույթի նախադասություններում:

Օրինակ`...Ձի մի՛ *երբեք* ասիցեն ի հեթանոսս՝ թէ ո՛ր է Աստուած նոցա (Զ,168): Ձի թէ և բիրապատիկ չարիս ի նմանէ կրէին՝ ոչ *երբեք* տեսանէին գնա... (ԻԱ,440):

Ս. Ղազարյանը նշում է, որ միջին հայերենի ժամանակի մակբայների շարքին են դասվում նաև *այլևս, երբեք, երբեք-երբեք* մակբայները [38,37]:

Օրինակ` Աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ և ի գիշերի...Ձի մի *երբեք* սասանեցայց...(ԼԷ,50):

Արևմտահայերենում *երբեք* մակբայը գործածվում է ժխտական ստորոգյալի հետ՝ արտահայտելով ժխտական իմաստ:

Օրինակ` Գիտես որ *երբեք* քու խնդիրքներդ մերժած չեն...(Թ,33):

Արևմտահայերենում սովորական է *երբեք* և *բնավ* մակբայների համատեղ գործածությունը, ինչպես՝ *-Բնավ երբեք*, ստակ չունեցողներուն անունները բնավ չենք գրեր...(ԼԸ,10): -Ես այդ մասին դժվարություն հարուցանե՞մ, *բնավ երբեք*... (ԾԲ, 209):

Արևելահայերենում *երբեք* մակբայը գործածվում է ժխտական բայաձևերի հետ, օրինակ՝ Ոչ, քեզ համար այսպիսի երգ Երգելու չեն ես *երբեք* (ԺԶ,23): -Նոյեն, դու *երբեք* էդքան խելոք չէիր եղել (ԺԴ,470):

Այլևս. Ժամանակի մակբայ է, որը գրաբարում հանդես է գալիս *այլևս//այլ ևս* ձևով և նշանակում է «էլ, դեռ ավելի» [2,268]:

Օրինակ՝ Եւ որ *այլևս* ՚ի կողմանց կողմանց (ԼԲ,89):

Միջին հայերենում *այլևս* մակբայը հանդես է գալիս *այլ ասելի* ձևով, ինչպես՝ Ի սոցանէ առաջի կալով Սուլթան ժամկոչն և իւր բարի կաման գրուեցաւ, զի *այլ ասելի* ի քորչմանց չմտնու (ԻԵ,42):

Աշխարհաբարում *այլևս* մակբայը նշանակում է «դրանից հետո», «այդ պահից հետո» և գործածվում է ժխտական բայաձևերի հետ:

Արևմտահայերենում. Եվ ժամանակ հող է միայն որ իր առանցքին վրա *այլևս* չի թավալիր... (ԽԱ,78):

Արևելահայերենում. ...Ես այժմ *այլևս* ոչ մի բանից չեմ կարող քեզ ազատել... (Լ,204):

Ներկայումս տարածված է *այլևս* բառի գործածությունն «արդեն» իմաստով, ինչպես՝ Նա *այլևս* այստեղ է: Այս դեպքում *այլևս* մակբայը դրվում է դրական բայաձևերի վրա:

Էլ/այլ/այլ. Աշխարհաբարում այս մակբայը գործածվում է իբրև ժամանակի մակբայ, որը համարժեք է *այլևս* մակբային:

Գրաբարում իբրև մակբայ էր գործածվում *այլ* բառը: Յոթերորդ դարից սկսած այդ բառը գործածվել է նաև շաղկապի առումով: Այս շաղկապը հետագայում հնչյունափոխվելով դարձել է արևմտահայերենում *ալ*, իսկ ժամանակակից հայերենում՝ *էլ* [37,221]:

Արևմտահայերենում *էլ* մակբայը գործածվում է *ալ* տարբերակով, ինչպես՝ Ձեր մահերուն հաճախանքն *ալ* չի կառչի մեր քայլերուն... (ԽԱ,25):

Սակայն գրականության մեջ այս մակբայը կիրառվում է նաև *էլ* տարբերակով: Այսպես՝ Ծերենցը գրում է. «*էլ* կարողությունն չէր մնացել մեր իշխանաց ոչ խմելու և ոչ շարժելու...» (ԻԲ,388):

Արևելահայերենում. Նրանց սուր-սուր սմբակները թաղվում էին կավի մեջ, *էլ* չէին դուրս գալիս (ԽԵ,63):

Էլ-ը բազմիմաստ բառ է ժամանակակից հայերենում: Հանդես է գալիս որպես ժամանակի մակբայ՝ «այլևս» իմաստով, ինչպես վերոհիշյալ օրինակներում: Գործածվում է որպես չափի ու աստիճանի մակբայ՝ «էլի» իմաստով, ինչպես՝ *էլ* տուր: *էլ* լցրու: *էլ*-ը հանդես է գալիս նաև եղանակավորող բառի արժեքով՝ «ևս, նաև» իմաստով, ինչպես՝ Նա *էլ* քեզ նման մի մարդ է:

Չափի մակբայներից մի քանիսը հատկանիշի չափը ցույց են տալիս մասի և ամբողջի հարաբերության նշումով: Դրանցից են՝ *ամբողջովին*, *լիովին*, *բոլորովին*, *իսպառ*, *ամենևին* և այլն [9,462-464]:

Ամենևին. Ցույց է տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման աստիճանը՝ ժխտական տեսանկյունից: Այս դեպքում գործողության կամ հատկանիշի դրսևորման աստիճանի լրիվ բացակայություն է ենթադրվում: *Ամենևին* մակբայն ունի «բոլորովին», «միանգամայն» մակբայների իմաստը, բայց գործածվում է ժխտական իմաստով, ժխտական նախադասություններում [5,274]:

Գրաբարում *ամենևին* բառը համարվում է եղանակավորող բառ [2,276]:

Միջին հայերենում *ամենևին* բառը դիտվում է որպես ընդհանրական մակբայ [12,425]:

Օրինակ՝ Այլ զինչ որ յայս յինքն լինի, Նա՛ *յամենեւին* այն չերեւի... (ԾԳ,107):

Արևմտահայերենում. ...Արդարություն չի կար *ամենևին*...(ԻԲ,28):

Արևելահայերենում. Թաթարը *ամենևին* չէր սպասում, որ ես այսպիսի վկայություն կտայի յուր մասին (ԽԷ,132):

Չափի մակբայներից *ամբողջովին*, *լիովին*, *բոլորովին*, *խսպառ* բառերը մասի և ամբողջի հարաբերություն են արտահայտում: Սրանք կարող են գործածվել և՛ ժխտական, և՛ դրական բայաձևերի հետ: Քանի որ այս մակբայներն արտահայտում են ամբողջականության իմաստ, ուստի և դրական բայաձևերի հետ գործածվելիս ենթադրում են հակադիր եզրի ժխտում, որը չնայած քերականորեն չի դրսևորվում, բայց հասկացվում է իմաստից:

Օրինակ՝ Քնած՝ իրեն *բոլորովին* նման չէր... (ԻԷ,19): Եվ սովորական մարմնի վրա գլխի տեղ մարդկային գանգ, *ամբողջովին* կլաված, առանց մազի, առանց մորթու(Դ,32):...Մնում էին այդ անհուն հարստությունը վկայող բազմաթիվ կիսախարխուլ կրպակներ, որոնց մի մասն *խսպառ* քանդել էին ռուսները... (Դ,657):

Արևելահայերենում առկա է նաև *ոչ մի կերպ* կառույցը, որը հանդես է գալիս ձևի մակբայի իմաստով՝ իր ժխտական կառուցվածքով բացառելով բոլոր ձևերը, հնարավոր միջոցները:

Օրինակ՝ Դու *ոչ մի կերպ* չես ուզում բաժանվել, անջատվել նրանցից ընդմիշտ (Լ,174): ...Ես *ոչ մի կերպ* չեմ ուզում նրանց անձնատուր լինել (Լ,175):

Այս կառույցի հետ ստորոգյալը միշտ ժխտական ձևով է գործածվում:

7. ԺՆՏԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Կապը նյութական իմաստից գուրկ խոսքի մաս է, այսինքն՝ չի արտահայտում ո՛չ առարկայի, ո՛չ հատկանիշի իմաստ, այլ ցույց է տալիս տարբեր հարաբերություններ [9,469]:

Կապերի դերը խոսքի մեջ շարահյուսական է: Նրանք ցույց են տալիս բառերի հարաբերություններ: Իրենց արտահայտած իմաստով կապերը հոլովական ձևերի համարժեքներն են և առանձին դեպքերում կարող են նրանցով փոխարինվել [21,357]:

Գրաբարում կապի արժեքով գործածվում էին նախդիրներն ու նախադրությունները: Ինչպես նկատում է Ա. Աբրահամյանը «նրանք սպասարկում են հոլովման համակարգին» [2,227]:

Նախադրությունները հոլովառու սպասարկու բառեր են: Նրանք պահանջում են որևէ հոլովով դրված խնդիր (նախադրության խնդիր, կապի խնդիր) և այդ դեպքում հանդես են գալիս իրենց որոշակի իմաստով:

Եթե նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, կամ նրանցից մի քանիսը միայն ձևականորեն պահպանում են այն, ապա նախադրությունները

հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են իրենց բառական անկախությունը՝ բառական նշանակությամբ:

Նախադրությունները ծագում են զանազան խոսքի մասերից (գոյական, մակբայ, ածական), նրանցից շատերը զանազան հոլովածներ են, որոնք քարացած վիճակում գործածվում են սպասարկու դերով՝ որպես նախադրություն:

Հայերենում ժխտական իմաստով գործածվում են *առանց, բացի (բայց), դուրս, գատ, բացառությամբ, չհաշված, չնայած, չնայելով, գերծ, զուրկ* կապերն ու կապական բառերը, որոնց մի մասը զուտ ժխտական իմաստ չի արտահայտում, այլ իր հիմնական իմաստին զուգահեռ ժխտական, բացառման իմաստ է արտահայտում:

Առանց. Ծագում է *անց* (-անել) արմատից՝ *առ* նախդրով. բուն նշանակությունն է «չեղած, զուրկ, որ չկա կամ չունի» [16, հ.5, 135]:

Առանց կապն արտահայտում է առարկայի, երևույթի բացառում տվյալ գործողությունը կատարելու, նրան ենթարկվելու կամ որևէ հատկանիշ ունենալու տեսակետից [6, 196], [9, 490]:

Գրաբարում *առանց* նախադրությունը գործածվում է սեռական հոլովի հետ և նույն նշանակությունն ունի, ինչ և աշխարհաբարում [43, 263]:

Օրինակ՝ Տեսէ՛ք և իմասջի՛ք տունդ Պարսից, զի ոչ ինչ էք *առանց* իմ... (ԻԳ, 167):

Երբ *առանց* բառի հետ գործածվում է *ոչ* մասնիկը, կառույցը ստանում է հաստատական իմաստ, այսինքն՝ ժխտման ժխտմամբ հաստատվում է առարկայի գոյությունը, գործողության կատարումը, ինչպես՝ Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն *ոչ առանց* յիշատակի բամբասանաց թողուլ... (ԻԱ, 10):

Միջին հայերենում *առանց* կապը, ինչպես գրաբարում, միշտ նախադաս է եղած բոլոր օրինակներում, ներառյալ նաև խոսքային հանգամանքներում կիրառվածները, միջին հայերենի երկու շրջանի բոլոր հեղինակների մոտ, միշտ նախադաս կիրառությամբ է հանդիպում, ինչպես՝ *Առանց* հաւատի, 'ւ առանց թելի ո՞նց ես կացել... [12, 431]:

Հայկազյան բառարանում եղած բոլոր օրինակներում *առանց* կապը սեռական հոլովով կապվող բառ է պահանջում. դերանունները նույնպես սեռական հոլովով են դրվում, ինչպես՝ *Առանց* իմ ոչինչ կարէի առնել [12, 432]:

Հետագայում *առանց* կապը դրվում է նաև բառի ուղիղ ձևի վրա, ինչպես՝ *Առանց* ջուր՝ ձուկն չի ապրիլ, լօք ջրին կտրողն անիծած [12, 432]:

Արևմտահայերենում *առանց* կապը իսկական կապ է, արտահայտում է բացառման իմաստ և պահանջում է տրական հոլովով խնդիր:

Օրինակ՝...Նվաղում մըն էր տակավ, անխոսիկ, *առանց* ցավի... (ԺԳ, 184): Արդ, *առանց* կասկածելու հավատացեք պատմությանս... (ԼԸ, 6):

Արևելահայերենում ևս *առանց* կապը բացառման կապ է, դրվում է սեռական հոլովի հետ:

Օրինակ՝ Թո՛ղ այդ դեպքում կանայք ծնեն *առանց* ցավի՛, Երկըրները պատերազմեն, սակայն *առանց* արյան ծովի՛, Հրդեհները *առանց* հրի՛ թող ճարակեն... (ԽԲ, 376):

Դերանուններն *առանց* կապի հետ գործածվում են տրական հոլովով, ինչպես՝ *Առանց* ինձ նա ոչինչ է (ԽՁ,499):

Քացի. Այս կապի բացառման հարաբերության յուրահատկությունը հետևյալն է. այն ցույց է տալիս տվյալ առարկայի կամ առարկաների բացառումը այս կամ այն գործողությունը կատարելու, գործողության օբյեկտ դառնալու կամ հատկանիշն ունենալու տեսակետից, որոնք (գործողություն կատարելը, գործողության օբյեկտ դառնալը, հատկանիշն ունենալը) հատուկ են այլ առարկաների:

Օրինակ՝ Հին անտառից ոչինչ չի մնացել, ավանդությունից *քացի* (Դ,254):

Քացի կապը երբեմն փաստական բացառում չի արտահայտում, այլ զուգադրվելով *նաև, էլ* շաղկապներին և կամ առանց դրանց, արտահայտում է մի հարաբերություն, ըստ որի առարկան անպայմանորեն ունի նշված հատկանիշը, ու դա դիտվում է որպես հայտնի իրողություն, և ի հավելումն դրա նշվում է, որ տվյալ հատկանիշն ունեն նաև այլ առարկաներ: Օրինակ՝ Արտաշիր սեպուհը...Սյունյաց զորագնդի օգնական հրամանատար լինելուց *քացի*, հսկում էր մյուս նախարարների զորագնդերին [9,489]:

Այս դեպքում, ինչպես երևում է օրինակից, *քացի* կապի դերը որոշ չափով նման է թվարկում արտահայտող այնպիսի զուգադրական շաղկապների առաջին եզրին, ինչպիսիք են՝ *ոչ միայն...այլև, ինչպես...այնպես*:

Հր. Աճառյանը նշում է. «*Քացի* կապը կազմված է *բանալ* բայից և նույն է *քաց* «ոչ փակ, ազատ տեղ» բառի հետ: Իբրև նախադրություն նշանակում է «զատ, ջոկ, չհաշված». միշտ նախադաս է և առնում է բացառական խնդիր. (*Քաց յերկրէ* քրմացն) [16,հ.5,141]:

Միջին դարում *քացի* ընկավ գործածությունից և նրա տեղ անցավ *զարթ, զարթել*: Օրինակ՝ Նա իրաւանք է, որ բռնեն զինք և ի յիր էրիկն տան, որ յաւիտեան ծառայ ունենայ զինքն ու անէ զինչ իր պիտի, *զարթ* ի ծախելոյն և ի սպանելոյն և ի բաժնելոյ [13,178]:

Գրական լեզուն վերակենդանացրեց *քաց ի* ձևը, որ նախապես գրվում էր անջատ: Այժմ բառն ու նախդիրը միացած՝ գրվում է *քացի*, ընդհանրապես նախադաս է, երբեմն էլ հետադաս է և վերցնում է բացառական խնդիր [16,հ.5,142]:

Գրաբարում *քացի* կապի փոխարեն հանդես էր գալիս *քաց* կամ *քայց* բառը, որը բացառական հոլովի հետ նշանակում է *քացի*, օրինակ՝ Ոչ գոյր սուրբ *քաց ի* քէն [43,263]: Չիք իմ թագաւոր առ իշխել շնչոյս, *քայց* ի քէն, Քրիստոս... (ԼԱ, 438):

Միջին հայերենում *քայց* (*քաց*) կապը հանդես է գալիս միշտ նախադաս և պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝ Եւ պարտ է զտնկին զամէն ճիւղսն կտրել և կնդել, *քաց ի* բնածէն միայն (ԻԵ,125):

Արևմտահայերենում *քացի* կապը պահանջում է բացառական հոլովով խնդիր, ինչպես՝ *Քաց* աստի, կրթությունը Սեռռերու վարժարանը առած ըլլալով ֆրանսերեն շատ լավ կխոսեր... (ԾԲ,24):

Արևելահայերենում *բացի* կապը դրվում է բացառական հոլովի հետ, ինչպես՝ *Բացի* դրանից, նա լռակյաց ու սակավախոս մարդ էր (ԺԴ,108): Բժիշկներն արգելած են եղել նրան թռչունի մսից *բացի* ուրիշ կենդանու միս ուտել (Լ,123):

Ժողովրդախոսակցական լեզվում *բացի* կապը գործածվում է նաև ուղղական հոլովի հետ, ինչպես՝ Ես նրա համար մի արխալուղացու առա նվիրեցի, *բացի* ծիու վարձը [21,376]:

Պուրս. Այս կապական բառը ցույց է տալիս մի առարկայի, տեղի ներսը չլինելու, այլ նրա սահմաններից այն կողմ լինելու իմաստ: Տարածական իմաստ ունեցող կապերի մեծ մասի իմաստը վերաբերում է առարկայի սահմաններից դուրս լինելուն. *վրա, տակ* և այլն. սակայն սրանց մեջ կա իմաստի մասնավորում (դրսի այս կամ այն կողմի և այլն), մի բան, որ չկա *դուրս* կապի մեջ [9,482]:

Պուրս կապի ծագման մասին Հր. Աճառյանը նշում է. «*Պուրն* բառի երկրորդ ձևն է (ն-ից ազատ) *դուր*, որ գործածվում է միայն անեզաբար՝ *դուրք, դրաց, դրօք* ձևերով. սրանից է կազմուած՝ *ի դուրս* «դուրսը, արտաքս» [15,հ.1,685]:

Գրաբարում. Ի *դուրս* կորգեցից (ԼԲ,640):

Միջին հայերենում. Եւ չհասանք *դուրս* յանդամունսն ի մարմնոյն, որ ցրտացնէ և դողացնէ (ԻԶ,406):

Արևմտահայերենում. Պատի մը...մեջ բացված...խորշը կը քնանար...երբ զինետունեն...*դուրս* ընեին զինքը...(ԺԳ,260):

Արևելահայերենում. Էնպես ես ասում հեռու, կարծես Հայաստանից *դուրս* է:

-Հայաստանից *դուրս* է, աշխարհից էլ *դուրս* է (ԻԷ,483):

Չատ. Այս կապն ունի բացառման իմաստ: Ըստ Հր. Աճառյանի՝ «կազմուած է *զ* նախդրով՝ *հատ* արմատից, զատ «հեռու» [15,հ.2,82]:

Չատ կապը հոմանիշ է *բացի* կապին. սրանց միջև տարբերությունն ավելի ոճական բնույթ ունի, քան իմաստային, այն առումով, որ *զատ*-ն ունի շատ թույլ բարբառային երանգ կամ համենայն դեպս գրական լեզվին այնքան հատուկ չէ, որքան *բացի* բառը [9,490],[5,321]:

Գրաբարում. Եղիցի *զատ* և ընտրեալ յամենայն ազգաց (ԼԲ,717):

Միջին հայերենում *զատ* բառն, ի տարբերություն գրաբարի, որտեղ առավելապես մակբայական կիրառություն ուներ, հանդես է գալիս որպես կապ՝ *բացի* իմաստով, ընդ որում՝ որպես ետադրություն, պահանջում է բացառական հոլովով կապվող բառ, ինչպես՝ Յամենայն մեղաց ի *զատ*, ասէ, դու կացիր [12,434]:

Չատ կապը հանդիպում է նաև նախադաս կիրառությամբ, ինչպես՝ *Չատ* ի մէկէն որ չէ հրամած [12,437]:

Արևմտահայերենում *զատ* կապը պահանջում է բացառական հոլովով խնդիր, ինչպես՝ Վասնզի...կերակուրեն *զատ* ուրիշ բանի պետք չուներ (ԼԸ,27):

Արևելահայերենում ևս *զատ* կապը պահանջում է բացառական հոլովով խնդիր, ինչպես՝ Բայց Գրիգորի հիվանդությունից *զատ* մի ուրիշ հանգամանք էլ կա...(Լ,163):

Քացառությամբ կապը բացառման իմաստ է արտահայտում՝ առանձնացնելով մեկ կամ մի քանի առարկա, անձ: Ծագում է *բանալ* բառից [15, հ. 1, 404]:

Գրաբարում. Հարկադրուեց առադրուէ և բացառութե. ի՛ ձեռն առադրութեան *գրացառութիւն* յայտնելով (ԼԲ, 472):

Միջին հայերենում և արևմտահայերենում այս կապի կիրառության չենք հանդիպել:

Արևելահայերենում *բացառությամբ* կապը պահանջում է սեռական հոլովով խնդիր, ինչպես՝ Բոլորը ներկա էին՝ *բացառությամբ* հորեղբոր: Ամեն ինչ բերել էլ՝ *բացառությամբ* մի քանի իրերի:

Մի շարք կապեր արտահայտում են ոչ թե անմիջական ժխտում, այլ բացառման հարաբերություն: Սրանք են՝ *չհաշված*, *չնայած*, *չնայելով*:

Չհաշված նախադրությունը կարող է հանդիպել տրական հոլովածևի հետ:

Օրինակ՝ *Չհաշված* յուրայիններին՝ ոչ ոքի նա չէր վստահում:

Չնայած և չնայելով կապական բառերը հակառակ հիմունքի իմաստ են արտահայտում և դրվում են տրական հոլովածևի հետ: Սրանց մեջ զգալի է հակադրության իմաստը, որն արտահայտվում է հետևյալ կերպ. նշվում է գործողության կատարման հնարավորությունը կամ անհրաժեշտության բացառումն այս կամ այն տեսակետից և այդուհանդերձ այդ նույն գործողության կատարումը: Այդ հանգամանքն էլ այս կապերի մեջ ստեղծում է հակառակ հիմունքի, զիջման հարաբերություն:

Օրինակ՝ Հայրս, *չնայելով* յուր աղքատությանը, այդ օրը խիստ առատաձեռն էր դառել (ԼԵ, 21): *Չնայած* վատ տրամադրությանը՝ աշխատում էր ուրախ ձևանալ:

8. ԺՆՏԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Շաղկապները կապերի հետ միասին կազմում են լեզվի քերականական իմաստ արտահայտող բառախմբերը, որոնք զուրկ լինելով նյութական նշանակությունից՝ սուկ շարահյուսական, կապակցական դեր են կատարում՝ արտահայտելով բառերի և նախադասությունների հարաբերություններ [21, 384]:

Ս. Աբրահամյանը գրում է. «Շաղկապ կոչվում են այն սպասարկու բառերը, որոնք վերաբերական տարբեր իմաստներով իրար են կապակցում համադաս բառեր, բարդ նախադասություն կազմող մասեր, ինչպես և ամբողջական նախադասություններ ու խոսքի հատվածներ» [9, 514]:

Շաղկապների մի մասը ժխտական հարաբերություն է արտահայտում: «Լեզվաբանական բառարանում» ժխտական շաղկապներ են համարվում «այն ներհակական շաղկապները, որոնք ժխտական հարաբերություն են արտահայտում» [48, 115]:

Շաղկապները գրաբարում քերականական նույնպիսի նշանակություն ունեն, ինչպես և աշխարհաբարում, այսինքն՝ այնպիսի բառեր են, որոնք միմյանց շաղկապում են նախադասություններ և նախադասության անդամներ [2, 278]:

ժխտական շաղկապները հայերենում մեծ թիվ են կազմում և արտահայտում են տարբեր իմաստներ: Դրանք հանդես են գալիս մենադիր, կրկնադիր և զուգադիր կիրառություններով:

Գրաբարի ժխտական հարաբերություն արտահայտող մենադիր շաղկապներն են՝ *այլ, այլ ոչ (թէ), ապա թէ ոչ, ապա եթէ ոչ, եթէ ոչ, թէ ոչ, և ոչ*:

Այլ շաղկապը կապում է ետադաս շարահյուսական միավորը առաջադաս ժխտականի հետ: *Այլ*-ով կապվող բառը կամ նախադասությունը մերժում է իրեն համազոր նախընթաց բառը կամ նախադասությունը և իր իմաստով հակադրվում նրան [44,97]:

Օրինակ՝ Եւ Բելն Տիտանեան ի վեր կարծեր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիրն ոչ ճանաչելով զբնութիւն, *այլ* զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր (Խ,48): Ուստի ոչինչ աւգտեցաւ, *այլ* յոյժ վնասեցաւ... (Խ,64):

Այլ շաղկապի ծագման մասին Պ. Շարաբխանյանը գրում է. «Այլ <հնիս. *alyo* ձևից, որից է նաև հուն. *άλλος* «այլ, ուրիշ» [44,32]:

Այլ շաղկապը կազմում է ժխտական կապակցություն՝ առաջադաս ժխտական կամ արգելական մասնիկներով և ետադաս այլ շաղկապով՝ *չ...այլ, ոչ...այլ, ոչ եթէ...այլ, մի՛...այլ* և այլն:

Օրինակ՝ Քանզի չէին աստուածք, *այլ* ձեռագործք մարդկան փայտեղէնք և քարեղէնք: Ջորս ոչ երկրակոխս, *այլ* օդագնացս համարէին: Արդ մի՛ լացցուք զնոսա, *այլ* պատուեսցուք ընդ ճշմարտութեան: Մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ քումմէ, *այլ* զօրացո զմեզ ի կամս քո: Քանզի դեքն ոչ եթէ բռնաբար զոք զարեն ի կորուստ, *այլ* զմեղս քաղցրացուցանեն ի կամս մարդոյն [44,97-98]:

Երբեմն այսպիսի կապակցությունը հանդես է գալիս շրջուն շարահասությամբ, ժխտական մասնիկն ընկնում է *այլ* շաղկապի վրա՝ *այլ ոչ*:

Օրինակ՝ Կէսքն ի նոսա ցուցանէին, *այլ ոչ* ամենեքեան: Ջոր յանձն առնուն զերկուս զայս միայն, *այլ ոչ* և զերկրպագութիւն կռոց [44,98]:

Երբեմն *այլ* է դրվում ոչ թե ժխտական, այլ հարցական նախադասությունից կամ բառից հետո: Այսպիսի դեպքերում հարցը ճարտասանական է, պատասխանը սկզբից հայտնի է, և հարցը տրվում է սոսկ ավելադրությամբ, ոճական որոշ երանգավորման համար, և կամ՝ հարցն ունի ժխտական նշանակություն:

Օրինակ՝ Ջի՞նչ բարի, կամ զինչ վայելուչ, *այլ* բնակել եղբարց ի միասին: Եւ բան սաղմոսին զի՞նչ յայտ առնիցէ, *այլ* զայս՝ թէ ի ներքոյ ամենայն երկրի ջուրք են: Արդ մեր զի՞ նստիցիմք, *այլ* ժողովեցարուք և մտցուք ի քաղաքս ամուրս [44,98]:

Այլ-ի մյուս կիրառությունն այն է, որ նա, դրվելով *բայց* և *սակայն* շաղկապների իմաստով, կազմում է սահմանափակող կապակցություն: Այս դեպքում *այլ*-ից առաջ ժխտում չի լինում:

Օրինակ՝ Ելցուք ըստ աշխարհ և կորիցուք և խնդութեամբ մեռցուք, *այլ* Պարսկի առն երկիր ոչ պագցուք: Քանզի դրոշմեալ է աւագահաւն, թէպէտ և անհաւատ հոգւով. զեղխ է վարուք. *այլ* ոչ կրակապաշտ. տկար է ի կանայս, *այլ* ոչ ծառայէ ի տարերց [44,98]:

Այլ-ը գործածվում է նաև *իսկ*-ի նշանակությամբ՝ արտահայտելով հակադրություն. ետադաս միավորը հակադրում է առաջինին ոչ թե ժխտելով, այլ նրանից տարբերակելով: Այս կիրառությամբ *այլ-ը բայց*-ի իմաստով ևս կարող է հասկացվել:

Օրինակ՝ Ջպսակն վասն ձեր բերեալ էր, *այլ* զուրախութեան աւետիսն հասարակաց տայր: Եւ ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ չարին, *այլ* եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա և զմիւսն: Եւ երեսք նորա զուարթք առ ի սիրե, *այլ* սիրտ նորա նեղեալ էր յահէ անտի [44,99]:

Այլ ոչ (թէ) շաղկապն արտահայտում է ներհակական հարաբերություն:

Օրինակ՝ Եւ ոյժ թալկացելոյս եւ կեանք՝ մաշելոյս մտացս խղճիւ, *Այլ ոչ* տաժանմամբ կրից աշխատութեամբ զքեզ խնդրելոյս (ԼԱ,251): Գոլ հատուցանող ի միում աւուր, *Այլ ոչ թէ* առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն... (ԼԱ,310):

Ապա թէ ոչ, ապա եթէ ոչ շաղկապներն արտահայտում են ներհակական հարաբերություն:

Օրինակ՝ Յոյց մեզ գիւն գետոյ, *ապա թէ ոչ* սպանցուք զքեզ (Խ,89): Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ զնոսա Ճենբակուրի արքայէն Պարթևաց, «զի բարձցէ ի միջոյ. *ապա թէ ոչ*՝ լուծցի ուխտ խաղաղութեանն՝ որ ի միջի մերում (Խ,57): Վասն որոյ ասեմ քեզ, մի՛ կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ. *ապա եթէ ոչ*. եղիցին կամք քո (ԻԳ,134):

Եթէ ոչ շաղկապը ևս ներհակական հարաբերություն է արտահայտում:

Օրինակ՝ Քանզի ո՞ւր է մարմին նորա այժմ, *եթէ ոչ* ընդ առողին... (ԽԸ,184):

Պ. Շարաբխանյանը նկատում է, որ «եթե պայմանի նախադասությունը ժխտական է, ապա *թէ, եթէ* շաղկապների հետ ետադաս դրվում է *ոչ բառը՝ եթէ ոչ, թէ ոչ*: Սակայն նշված այս բառերը կարող են ունենալ նաև *մինչև որ չ...*, *մինչև չ...* ժամանակի հարաբերություն նշող իմաստը. օրինակ՝ «Յոր ոչ իշխեցին մտանել դևքն՝ *եթէ ոչ* առին հրաման ի Տեառնէ» (=մինչև որ հրաման չառան) [44,69]:

Արգելական նշանակությամբ դրված բառերից հետո այս շաղկապները (*եթէ, թէ*) ցույց են տալիս բացասական ցանկություն, անցանկալի նպատակ: Նախընթաց արգելական բառի հետ միասին դրանք նշանակում են *չիհնի թէ*, այս ձևով ավելի շատ *թէ* է գործածվում:

Օրինակ՝ Քաւ լիցի *եթէ* մեռանիցի այսօր: Մի՛ զուցէ *թէ* խառնադանջ բազմամբոխ մարդիկ առ տգիտութեան ինչ արհամարհիցեն [44,71]:

Եվ-ը միավորական, և ոչ ներհակական դեր է կատարում այն դեպքում, երբ կապակցում է ձևով, այսինքն՝ քերականորեն հակադիր, բայց իմաստով համադիր նախադասություններ կամ նախադասության անդամներ, ինչպես՝ Հայր էի ամենայն երկրի, *և ոչ* տէր... (Խ,69):

Այստեղ *և*-ը ներհակական նշանակություն չունի, այլ միավորական, որովհետև թեպետ կապվող միավորներից մեկը հաստատվում է, իսկ մյուսը ժխտվում, բայց իմաստով դրանք չեն հակադրվում իրար, քանի որ ժխտվում է այն բանի հակառակը, ինչ սկզբում

հաստատվել էր և ստացվում է տրամաբանական նույնություն. այլ կերպ՝ միևնույն բանը կրկնվում է հաստատական և ժխտական ձևով:

Եւ է դրվում *քաւ* ժխտական, մերժողական բառից հետո, երբ նրան հաջորդում է *մի լիցի* արգելական բառակապակցությունը, որով ստացվում է մի տեսակ արտահայտչական կրկնություն, օրինակ՝ Իսկ մեք ո՛չ այնպէս, որ *քաւ և մի՛ լիցի*, որպէս ասացան: *Քաւ և մի՛ լիցի* [44,84]:

Քայց շաղկապը կազմում է այնպիսի կապակցություն, որի երկրորդ մասը (բայց-ով սկսվող մասը) հակառակ է այն հետևությանը, որ պետք է բխեր առաջինից, օրինակ՝ Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, *բայց* ոչ լի սրտիւ: Խրատեա՛ գմեզ, Տէր. *բայց* իրաւամբք, և մի՛ ցասմամբ [44,99]:

Այս օրինակներում *բայց*-ը իր բուն իմաստով է, բայց կան դեպքեր, երբ *բայց* և *իսկ* շաղկապները հանդես են գալիս այնպիսի կիրառությամբ, որ կարող են փոխարինվել մեկը մյուսով: Հետևյալ օրինակներում հնարավոր է *բայց*-ի փոխարեն *իսկ* դնել՝ սահմանափակումը փոխելով հակադրության, օրինակ՝ Դու հարկանես գնա գաւազանաւ, *բայց* զանձն նորա փրկես ի մահուանէ: Իսկ նա առ նորա ականէ գնաց ընդ նոսա. *բայց* ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին [44,99]:

Սահմանափակող նշանակությամբ շատ անգամ գործածվում են *բայց միայն*, *բայց միայն թէ*, որոնց մեջ նկատելի է նաև պայմանի և խոսողի ցանկության գաղափարը, օրինակ՝ Եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոյ սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խաղաղութեամբ սրտիւ. *բայց միայն* յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք: Ահա մատնենմ գնա քեզ, *բայց միայն* զոգի նորա պահեսցես: Ոչ պակասեսցէ քո այր յերեսաց իմոց որ նստիցի յաթոռն Իսրայելի. *բայց միայն թէ* պահեսցեն որդիք զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ [44,100]:

Ժխտական և արգելական նախադասություններից հետո բավական տարածված է *բայց*-ի կիրառությունը զանազան ոճերով: Նման դեպքերում նախորդ նախադասության բովանդակության չափավորումը կամ սահմանափակումն ավելի է շեշտվում և հակադրությունն ուժեղանում է՝ հաճախ մոտենալով *այլ* շաղկապի իմաստին ու կազմելով յուրատեսակ զուգադրություն ժխտական կամ արգելական բառերով ու նրանցից հետո դրված շաղկապով, օրինակ՝ Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, *բայց* տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Մի՛ երդնուցուս սուտ, *բայց* հատուցես Տեառն զերդնունս քո [44,100]:

Ժխտական կամ արգելական նախադասություններից հետո, երբ հակադրությունն ու սահմանափակումն ուժեղանում է, *բայց*-ը պարզապես ձեռք է բերում *այլ* շաղկապի իմաստ, օրինակ՝ Արդ՝ պարտ է այլ ոչ ինչ խորհել բնաւ, *բայց* ստիպով ընդդէմ նոցա գնալ: Եւ ոչ ուրուք բռնադատութեամբ, *բայց* իւրովք իշխանական և անձնիշխան կամօք կրեաց զայն [44,100]:

Ժխտական կամ արգելական նախադասություններից հետո հաճախ *բայց*-ի հետ *թէ*, *եթէ* է դրվում՝ *բայց թէ*, *բայց եթէ*, որոնք, ինքնուրույն շաղկապի դերով գործածվելով,

նշանակում են *այլ միայն*, օրինակ՝ Եւ չէ հնար գրով վճարել և կամ պատգամաւ, *բայց եթէ* յանդիման խօսել ընդ նմա՝ որ Արեաց տերն է: Եւ ոչ տեսանէր ոք գնոսա, *բայց թէ* հարձք և արք և կանացիք [44,101]:

Սակայն և այնպէս, համայն և այնպէս շաղկապները սովորաբար ժխտական նախադասության մեջ են գործածվում, օրինակ՝ Եւ առաքեցեր ի վկայութիւն զմարգարէսն հոգւով քո սրբով. *սակայն և այնպէս* ոչ լուան: Յաճախեցեր դաշինս ընդ երկիրն Քանանու և Քաղդեացւոց, *համայն և այնպէս* ոչ յագեցար [44,101]:

Գերազանցապէս հետմետրոպայան հեղինակներին է հատուկ *քան թէ* շաղկապի գործածությունը ժխտականից հետո, որի մեջ այս շաղկապը տարբերակման հետ ունի նաև ներհակության գաղափարը, *այլ* շաղկապի իմաստին մոտ, օրինակ՝ Որոյ ոչ պիտէ և առ վայր մի կեալն, *քան թէ* զայնպիսի տեսանել զաղէտս, և ժուժկալ [44,105]:

Ապա-ն ներհակական նշանակություն ունի և *իսկ* շաղկապի դերն է կատարում, երբ գործածվում է *թէ, եթէ, իբրև* բառերի ետադաս հարադրությամբ՝ *ապա թէ, ապա եթէ, ապա թէ ոչ, ապա իբրև*, որոնք նշանակում են՝ *իսկ եթե, իսկ երբ*:

Այսպէս ամենից շատ կիրառվում է *ապա թէ ոչ*-ը ժխտական պայման արտահայտելու համար, օրինակ՝ Եւ զեղբայրն ձեր կրտսեր ածէք առ իս, և հաւատարիմ լինիցին բանք ձեր. *ապա թէ ոչ*, մեռանիք [44,107]:

Կրկնադիր շաղկապներից ժխտական իմաստով գործածվում է *ոչ...ոչ* շաղկապը և նրա տարբերակ *մի...մի* շաղկապը:

Ոչ...ոչ շաղկապը միավորիչ հարաբերություն արտահայտող շաղկապ է, որով կապակցվող շարահյուսական միավորները հավասարապէս ժխտվում են:

Օրինակ՝ ...Ձի *ոչ* նա խնդրեաց զորդիսն...և *ոչ* նոքա չոզան առ նա...(ԻԱ,268

Նմանատիպ կիրառություն ունի *մի...մի* կրկնադիր շաղկապը, ինչպէս՝ Որ հայիոյեսցէ զՀոգին սուրբ՝ *մի* թողցի նմա, *մի* յայսմ աշխարհի և *մի* ի հանդերձելումն (ԽԹ,460): *Մի* դու, արքայ, և *մի* զայդ այլ առ մեզ ասէր...(Ժ,92):

Գրաբարի գուգադրական շաղկապներից են՝ *ոչ...այլ, չէ...այլ, մի...այլ, ոչ...ոչ...այլ, ոչ թէ...այլ, ոչ միայն...այլ, ոչ միայն...այլև, ոչ եթէ...այլ, ոչ այլ ինչ...եթէ ոչ, ոչ այլ ինչ...քան (թէ), ոչ ինչ...քան, ոչ...քան, ոչ այնքան...որքան*:

Ոչ...այլ շաղկապը ներհակական հարաբերություն է արտահայտում: Այս շաղկապով կապակցվող համադասական նախադասությունների մեջ սովորաբար հակադրվում են երկու գործողություններ, որոնցից մեկը ժխտվում է առաջին նախադասության բովանդակությամբ և դրա փոխարեն երկրորդ նախադասության մեջ հաստատվում է մի ուրիշ գործողություն: Այս դեպքում ստորոգյալը գործածվում է դրական ձևով և հանդես է գալիս շեշտակիր *ոչ* մասնիկը, որն էլ տվյալ դեպքում դառնում է շաղկապային գուգադրության առաջին եզրը:

Օրինակ՝ Իսկ շատ այնք են, որ *ոչ* առ ազահութեան զանձինս ի մահ դնեն, *այլ* առ չգոյութեան աղքատութեան կարօտութեան յետին տնանկութեան...(Ա,8): Եւ Ղեմետրիոս *ոչ* գնաց առ եղբայրն իւր ի Բաբելոն, *այլ* յԱսիաստան անցանէ (Խ,53):

Այս շաղկապի տարբերակն է չէ...այլ շաղկապը, որը գրաբարում ունի նաև մի...այլ ձևը:

Օրինակ՝ Ջի գցիցն երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Սամուելայ, այլ Մերուժանայ Արծրունոյ... (Ե, 388): Եւ մի՛ ելանել ՚ի մոտոյն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք պարտապան է նոցա (Ե, 120):

Այս շաղկապներում հակադրության եզրը ձևավորվում է բայի ժխտական ձևի և այլ շաղկապի միջոցով: Այս դեպքում ժխտական բայով եզրը գործողության, երևույթի բացասման իմաստն է արտահայտում, իսկ երկրորդ եզրը (այլ շաղկապով ձևավորված) արտահայտում է կատարված գործողության, երևույթի առկայության իմաստ:

Ոչ...այլ զուգադրությամբ կապակցվող համադասական նախադասությունների մեջ որպես առանձին կառուցվածքաիմաստային խումբ առանձնանում են ոչ...ոչ...այլ բառերով կազմվող նախադասությունները, որոնց առանձնահատկությունն այն է, որ հակադրվող առաջին եզրը բաղկացած է լինում մեկից ավելի միավորներից:

Օրինակ՝ Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա. այլ նոցա ընդ ամենայն երկիր ել բարբառն, և մինչև ՚ի ծագս տիեզերաց են խօսք նոցա (Ե, 136):

Երբ քննվող նախադասություններում որպես շաղկապային առաջին բաղադրիչ գործածվում է ոչ թէ զուգադիրը (ոչ թէ...այլ կապակցության մեջ), դրանով հակադրության հարաբերություն արտահայտող համադասական նախադասություններում շեշտվում է այն իմաստային նրբերանգը, որ հակադրությունը արվում է հնարավոր գործողություններից կամ եղելություններից միայն մեկի նկատմամբ [13, 268]:

Օրինակ՝ Ոչ թէ ինչ խտրոց կասկածանաց միջոցի բանի... Այլ կամիս՝ որպէս բարեգութ, Եւ կարէս՝ որպէս զարարիչ (ԼԱ, 308):

Ոչ թէ...այլ շաղկապին համարժեք է ոչ եթէ...այլ շաղկապը: Օրինակ՝ Այլ դու յետ այսր ամենայնի այլ գմեզ մի՛ հարցաներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց... այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա... (Ժ, 82):

Ոչ միայն...այլ զուգադրական բնույթի ժխտական շաղկապը գործածվում է այնպիսի նախադասություններում, որոնց առաջին մասում ժխտվում է մի բան, որի գոյությունը կամ որի կատարումը, սակայն, ինչ-որ չափով սպասելի էր, իսկ նախադասության երկրորդ մասում հաստատվում է առաջին մասում սպասվածի միանգամայն հակառակ դրությունը, հակառակ վիճակը [5, 436]:

Ոչ միայն...այլ շաղկապը հանդես է գալիս երեք կիրառություններով: Այս շաղկապով կապակցված նախադասություններում երկու բաղադրիչներն էլ կարող են ժխտական կառուցվածք ունենալ: Այս դեպքում ժխտումը վերաբերում է երկու հնարավոր դեպքերին:

Երկրորդ դեպքում ժխտական կառուցվածքով հանդես է գալիս առաջին մասը՝ ձևավորված «ոչ միայն» բաղադրիչով, իսկ երկրորդ եզրը՝ հաստատական

կառուցվածքով: Երրորդ դեպքում երկու եզրերն էլ հաստատական կառուցվածք են ունենում:

Օրինակ՝ Իսկ ես *ոչ միայն* կարդամ, *Այլ* նախ հաւատամ մեծութեան նորին... (ԼԱ,290):

Ոչ միայն...այլ շաղկապը միավորիչ հարաբերություն է արտահայտում և ցույց է տալիս, որ առաջին եզրով հաղորդումը չի սահմանափակվում, այլ դրան գումարվում է ևս մի հաղորդում, որի կապը առաջինի հետ ապահովվում է «այլ» բառով:

Օրինակ՝ Վասն որոյ *ոչ միայն* գովել արժան է գքեզ, *այլ* և ի վերայ քո աղոթել (ԻԱ,6):

Ոչ այլ ինչ...եթէ ոչ շաղկապով կապակցությունները բացահայտման նշանակություն ունեն, դրանց առաջին եզրը բացատրվում, մեկնաբանվում է երկրորդ եզրով:

Օրինակ՝ Զի *ոչ այլ ինչ* նշանակե երևութից շարժումն, *եթէ ոչ* ի Հայկազնեանն Տիգրանայ հասնելոց է մեզ բռնութեան յարձակումն (ԻԱ,90):

Ոչ այլ ինչ...եթէ ոչ շաղկապին է հարում *ոչ այլ ինչ...քան (թէ)* շաղկապը, ինչպես՝ *Ոչ այլ ինչ* կամի Սմբատ, *քան թէ* գարին քո... (ԻԱ,198):

Գրաբարում այս շաղկապը գործածվում է նաև առանց այլ բառի՝ *ոչ ինչ...քան* ձևով, ինչպես՝ Գիտե՛ սիրելի եղբայրութիւնդ քո *ոչ ինչ* օգտակարագոյն ի կեանս աշխարհիս ի դիցն մեզ պարգեւեալ *քան* զսիրելեաց բազմութիւն... (Զ,38):

Գրաբարում գործածական է նաև *ոչ...քան* զուգադրական շաղկապը, որի առաջին եզրը ժխտական հարաբերությունն է ձևավորում, իսկ երկրորդը՝ հաստատական, ինչպես՝ *Ոչ* պակաս, *քան* զփարաւոն՝ զստեղծուած սրտիս իմ խստացուցի, *Ոչ* թերի, *քան* զեբրայականին խուժանին կատաղութիւն՝ Ընդդեմ արարչիդ համբարձայ, *Ոչ* նուազ, *քան* զաստուածամարտիցն՝ զտայ հանդէս. Եւ ոչ խորշեցայ ի յուրացութենէ ստեղծողիդ բնաւիցս (Զ,324):

Գրաբարում գործածական շաղկապներից է *ոչ այնքան...որքան* շաղկապը, որի առաջին մասով արտահայտվում է ժխտումը, որին հակառակ երևույթը տեղի է ունենում երկրորդ մասով կապակցված նախադասություններում: Այս շաղկապի գործածության ժամանակ կապակցության երկրորդ մասն ավելի մեծ կարևորություն ու արժեք է ստանում [29,105]:

Օրինակ՝ *Ոչ այնքան* սարսեցի եւ պատկառեցի ի սաստկութենէ քումդ հրամանի, *Որքան* ալիք ծովուն՝ յեզերացն (ԼԱ,267):

Միջին հայերենում մենադիր շաղկապների գործառույթով հանդես են գալիս *այլ, ապա թէ ոչ, եթէ ոչ, թէ ոչ (չէ), ոչ թէ, ոչ այլ ինչ, և ոչ թէ, և ոչ, և ոչ միայն* շաղկապները:

Այլ. Զի *ոչ* ասցիք գիտութիւն, *այլ* հմտութիւն (Գ,73):

Այս շաղկապն ունի նույն դերն ու նշանակությունը, ինչ գրաբարում:

Միջին հայերենում *այլ* բառն ավելի շատ օգտագործվում է միավորիչ (*էլ, և*) իմաստով, ինչպես՝ Եւ դեղերուն ցեղ մըն *այլ* հուքմ կայ [12,458]:

Ապա թէ ոչ. Նա հնմտութեամբն գքերթողացն և զշարագրացն տաս պատասխանին զերդ զգիտուն, *ապա թէ ոչ՝* դու ի նախնեացն անգիտացն անկար ի յոճ և ի սովորութիւն ըստ անասնոցն երթալոյ ի սովորական տեղիս (Գ,73):

Եթէ ոչ. Եւ չէ պարտ առնել ի գարնան զհօտելն, Եթէ ոչ ի ծինային և ցրտային գաւառսն (ԻԶ,60):

Թէ ոչ (չէ). Շուտ հոգեք զհրեանց բաներդ, Թէ չէ ի հետ ձեզ պարապին (ԾԳ,78):

Միջին հայերենում տարածված է նաև թէ չէ նէ ստորադասական շաղկապը:

Օրինակ՝ -Կտրի՛ճ, կու սիրե՞ս դու զիս, մի՛ աներ շատ խալխի իմաց. Թէ չէ նէ կ'ելնես զլուխդ, արեւուդ ու ալ շատ իրաց [12,466]:

Ոչ թէ. Ոչ թէ ձի գայն գովեն, որ ոսկի թելով է սարքն, թամքն և լկամն (ԻԵ,308):

Ոչ թէ շաղկապից և շաղկապով ձևավորվում է և ոչ թէ շաղկապը, որն արտահայտում է նույն իմաստը, ինչ ոչ թէ-ն:

Օրինակ՝ Զի եղբարքն հիլաթեցին զնայ և ոչ թէ գալքն կերան(ԻԶ,38):

Միջին հայերենում գործածական է նաև ոչ այլ ինչ շաղկապը՝ որպես մենադիր շաղկապ:

Օրինակ՝ Ոչ այլ ինչ առակս ցուցանե՛ք բայց զժամանակին գիտել զմարդիկ... (Է,95):

Հայերենի զարգացման մյուս շրջաններում այս շաղկապը մենադիր չի գործածվում, այլ հանդես է գալիս եթե ոչ բաղադրիչի հետ՝ կազմելով զուգադիր շաղկապ:

Եվ ոչ շաղկապը ներհակական հարաբերությամբ գործածվում է նաև միջին հայերենում, ինչպես՝ Հեթում արքայի որդին Լևոն կոչի ըստ նախնույն անուանն, և ոչ՝ ըստ հաւրն իւրոյ Հեթում (Գ,103):...Զտունկն ի պտղոյ է արժան ճանաչել, և ոչ ի տեսակէ (Է,54):

Միջին հայերենում տարածված է նաև և ոչ միայն շաղկապը, որը սահմանափակումը բացասող իմաստ ունի, ինչպես՝ Իսկ ի մերս վասն առատութեան լեզուի՝ անբաւ, և ոչ միայն՝ յիսուն (Գ,139):

Կրկնադիր շաղկապներից միջին հայերենում կիրառվում է ոչ...ոչ շաղկապը:

Օրինակ՝ Ոչ լուսին ի քեզ նըման, ոչ արեւ, որ դեռ կու ծագէ...(ԾԳ,176):

Միջին հայերենում գործածվում են հետևյալ ժխտական զուգադրական շաղկապները՝ ոչ...այլ, ոչ...ոչ...այլ, ոչ թէ...այլ, ոչ միայն...այլ, ոչ միայն...այլև, ոչ այլ ինչ...քան, որոնք ունեն նույն կիրառությունն ու իմաստը, ինչ գրաբարի համապատասխան շաղկապները:

Ոչ...այլ. Ոչ ի յինէն բան մարդկային, այլ ի Տեառն յոյժ գիտողին (ԼԷ,168):

Ոչ...ոչ...այլ. Այրէ իսպառ, բայց ոչ ծախէ, անհատ պահէ միշտ ի յերեր, Ոչ զամս հազար և կամ զերկուս, և ոչ հարիւր հազար բիւրեր, Այլ անվախճան է և աներբ, և յախտեան անպարաբեր...(ԼԷ,188):

Ոչ թէ...այլ. Ոչ թէ տկար միայն անծին. և անտեղեակ քերեալ տառին, Այլ և նոցունց ներարիեստին, որ պանծալիք գոլով սովին (ԼԷ,140):

Ոչ միայն...այլ. Բայց ոչ միայն անդ առնէին, զանարգութիւնս, զոր ասէին, Այլ յամենայն խորանս սրբոց, որք աստանօր շինեալ կային (ԼԷ,154):

Ոչ միայն...այլև. ...Զի ոչ միայն ի ստուգաբանութիւն և ի մեկնութիւն անուանց պիտանացու է, այլև ի տաղաչափութիւնս...(Գ,129):

Ոչ այլ ինչ...քան. Զի զովացումն այրման սըրտի, Ոչ է այլ ինչ, քան այս լինի (Զ,488):

Արևմտահայերենում գործածվում են հետևյալ մենադիր շաղկապները՝ *այլ, ապա թե ոչ, եթե ոչ, թե ոչ (չէ), ոչ թե, չէ թե, և ոչ թե, ոչ թե*:

Այս շաղկապները հիմնականում ունեն նույն դերն ու նշանակությունը, ինչ հայերենի զարգացման նախորդ շրջաններում:

Այլ. Էակ չէր նե, *այլ* սեր, հուր, շունչ, ժըպիտ, ցավ...(Ը,29):

Ապա թե ոչ. Տիգրան կը հաստատե այդ միությունը և զՄիհրդատ թագավոր կանվանե Պոնտոսի՝ անոր ծովեզրյա սահմանները պաշտպանելու համար Հռովմեացվոց դեմ, որք եկած են Փիննան պահանջելու, որ գերի է Տիգրանա քով, *ապա թե ոչ* պատերազմ (Թ,483):

Եթե ոչ. Գնացեք սըկե, *եթե ոչ* հիմա կերթամ հավատքս կը փոխեմ(ԼԸ,385):

Պ. Պետիրեանը այս շաղկապի մասին գրում է. «*Եթե ոչ*-ը, ճիշդ գործածելու պարագային, քիչ պետք կու գայ այսօրուան արևմտահայերենի մէջ: Իրմով կազմուող կարծէք թէ մէկ ոճ կա միայն, զոր պիտի գտնէք հետևյալ նախադասութիւններուն մէջ:

Իր այս ըրածը *ուրիշ բան (մը) չէ, եթէ ոչ* հերոսութիւն:

Այսպիսի նախադասութիւն ալ կրնայ հանդիպիլ՝ «*Եթէ ոչ* այսօր, (ապա) վաղը գոնէ կը յուսանք...»:

Եթէ գիտականորեն մոտենալու ըլլանք, պիտի ըսենք որ այս երկու *եթէ ոչ*-երը իմաստով ու գործածութեամբ նոյնը չեն. երկրորդ պարագային *ոչ*-ը *եթէ*-ին, կը վերաբերի *այսօր* բառին (*ոչ այսօր, ապա* կամ *այլ վաղը*):

Այսպէս թէ այնպէս, վերի երկու տեսակ ոճերն ալ ճիշդ կազմուած են:

Սակայն թէ այնպէս սխալ է, երբ *եթէ ոչ* շաղկապը կը գործածեն *այլապէս*-ի փոխարեն:

Ըսեմ նաեւ որ *այլապէս*-ի փոխարեն սխալմամբ կը գործածեն ուրիշ շաղկապ մը՝ *թէ ոչ*: -Խելօք կեցիր, *թէ ոչ* [այլապէս] պիտի պատժուիս» [47,57-58]:

Թե ոչ (չէ). ...Թող չըճնչե՛ն *թե ոչ* կհերժի սև կուրծքեն... (ԽԴ,237):

Ոչ թե. Սանտորը *ոչ թե* 35 դրուշ՝ 35 փարա իսկ չարժեր...(Բ,10): -*Ոչ թե* կաշառել, բայց թերևս քեզ կհամոզեն, որ վազ անցնիս այդ գործեն...(ԾԲ,602):

Խոսակցական արևմտահայերենում *ոչ թե* շաղկապի փոխարեն հանդիպում, է նաև *չէ թե* շաղկապը, ինչպես՝ -Հարկավ, *չէ թե* ստորագրել, տահա պետք ըլլա նե՝ պոյովս կպարզկիմ տակը (ԾԲ,101):

Եվ ոչ թե. Մենք հանդեսի և տոնախմբության համար հոս եկանք *և ոչ թե* գինին արյան հետ խառնելու...(Թ,256):

Եվ ոչ. Տիկին, գործելու ժամ է *և ոչ* չլալու...(ԼԸ,242):

Կրկնադիր շաղկապներից արևմտահայերենում տարածված է *ոչ...ոչ* ժխտական շաղկապը:

Օրինակ՝ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն *ոչ* հով կար, *ոչ* անծրև, *ոչ* խուռն բազմություն և *ոչ* ալ ձերբակալված աղջիկ մը (ԼԸ,6):

Արևմտահայերենում գործածվող զուգադիր ժխտական շաղկապներն են՝ *ոչ...այլ, ոչ...ոչ...այլ, ոչ թե...այլ, ոչ միայն...այլ, ոչ թե միայն...այլ, ոչ միայն...այլ, միայն...այլ, ոչ*

միայն...այլ նաև, եթե ոչ...գոնե (զեթ), ինչ...եթե ոչ, ոչ այլ ոք...բայց եթե, ոչ այնքան...քան թե:

Ոչ...այլ. Եվ այս *ոչ* բռնաբար, *այլ* համոզմունք մը դարձած էր... (ԻԲ,208):

Ոչ...ոչ...այլ. Հոն կա մահ բունյալ *ոչ* քու անձիդ, *ոչ* քու տոհմիդ միայն, *այլ* բոլոր հայ ազգին... (ԻԲ,305):

Ոչ թե...այլ. ...Վասնզի ունինք հեղինակներ, որոնք...կը ներկայացնեն իրենց անձերն *ոչ թե* ինչպես որ են. *այլ* ինչպես որ կուզեն իրենք, որ ըլլան անոնք (ԼԸ,74):

Ոչ միայն...այլ. Այն ատեն *ոչ միայն* դիմացինս յարտասուս կը շարժեմ, *այլ* քսակն ալ կը պարպեմ... (Թ,40):

Ոչ թե միայն...այլ. Այս շաղկապով կապակցված նախադասություններում առաջին եզրը (*ոչ թե միայն* շաղկապով կապակցվածը) ժխտում է առարկայի, երևույթի, գործողության միակ լինելը, իսկ երկրորդ եզրում (*այլ* շաղկապով կապակցվածում) հավելում է արտահայատվում առաջին եզրի վրա:

Օրինակ՝ *Ոչ թե միայն* նմանեցուցած է, *այլ* կը պնդե, որ ես տիկին Անուշը ըլլամ (ԼԸ,346):

Ոչ միայն...այլև. ...Մահվան այդ կտրոնն, որ *ոչ միայն* հոգնած մարդերու հանգստարանն է, *այլև* շատ մը...ցավերու առժամանակյա դարմանն է (ԼԸ,49):

Միայն...այլ. Այս շաղկապով կապակցված նախադասությունների առաջին եզրում (*միայն* շաղկապով կապակցված) ստորոգյալը դրվում է ժխտական ձևով և իր իմաստով հարաբերակից է *ոչ թե միայն...այլ* շաղկապին:

Օրինակ՝ Ո՛վ լուսնյակ, *միայն* կենդանի եղած ատեննիս չի պիտի լուսավորես զմեզ, *այլ* երբ մեռնինք... (Թ,18):

Ոչ միայն...այլ նաև. Այս շաղկապն իր իմաստով մոտ է *ոչ միայն...այլև* շաղկապին, միայն այստեղ երկրորդ մասում սաստկական երանգն ավելի ընդգծված է:

Օրինակ՝...Հրավիրված էր *ոչ միայն* իր երկու պաշտոնակիցները...*այլ նաև* իրենց կուսակից մեկ քանի թաղեցիներ... (ՕԲ,394):

Եթե ոչ...գոնե (զեթ). Այս շաղկապի առաջին եզրը (*եթե ոչ* շաղկապով) ժխտում է արտահայտում, իսկ երկրորդ եզրը (*գոնե/զեթ* շաղկապով)՝ սահմանափակում, որով մեղմացվում է առաջին եզրի ժխտումը: *Գոնե* շաղկապով սկսվող մասը ճշտում և միաժամանակ սահմանափակում է *եթե ոչ* շաղկապական բաղադրիչով սկսվող մասի բովանդակությունը [29,285]:

Օրինակ՝ *Եթե ոչ* պատվո, *զեթ* խղճմտանքի դեմ շատ մը մեղանչումներու առաջնորդեց զիս... (ԺԳ,229):

Ինչ...եթե ոչ. Այս շաղկապը համարժեք է արևելահայերենի *ոչինչ...եթե ոչ* շաղկապական զույգին: *Եթե ոչ* շաղկապով եզրը բացահայտման, մեկնաբանման դեր է կատարում, ինչպես՝ Աստղերն *ի՞նչ* են որ, *եթե ոչ* անբիծ Եվ թշվառ հոգվոց անեծք ողբազին... (Ը,74):

Ոչ այլ ոք...բայց եթե. Այս շաղկապը հանդիպում է միայն արևմտահայերենում:

Օրինակ՝...Դիպվածով մը իմացած էր, որ Թաթարը *ոչ այլ ոք* էր, *բայց եթե* ես (Բ,154):
Ոչ այնքան...քան թե. Արևմտահայերենում գործածվող այս շաղկապական զույգը համարժեք է *ոչ այնքան...որքան* շաղկապին, որն ունի ճշգրտող, պարզաբանող իմաստ:

Օրինակ՝ Ապաքեն ժողովուրդին կարծիքն է, որ պատիվը *ոչ այնքան* կարգե ու կանոնե իրոք չշեղելու, *քան թե* շեղումները չցուցնելու, պարտկելու մեջն է (ԺԳ,203):

Արևելահայերենի մենադիր ժխտական շաղկապներն են՝ *այլ, այլ ոչ թե, ապա թե ոչ, եթե ոչ, թե ոչ (չէ), ոչ թե, և ոչ թե, և ոչ, և ոչ միայն, չնայած, այլապես, կամ թե չէ:*

Այլ. Այս շաղկապն արտահայտում է հակադրական հարաբերություն, ինչպես՝ ...Պարսիկները չեն, որ կրակ են թափում, *այլ* այդ մերոնք են կրակ թափողները (ԽԶ,458):

Երբեմն *այլ* շաղկապը գորացվում է *ընդհակառակն* միջանկյալ բառով, որով ավելի է շեշտվում հակադրությունը [29,140]:

Օրինակ՝ Անցյալի քաղցր հիշատակները ոչ միայն չամոքեցին նրա վշտերը, *այլ, ընդհակառակը*, նորոգեցին դրանք (ԻԹ,44):

Երբ հակադրվում են ստորոգելիական վերադիրները կամ բուն բայերը, ապա այդ դեպքում շատ հաճախ հանգույցը կամ օժանդակ բայը չի կրկնվում (Նա *ոչ թե* աշակերտ է, *այլ* ուսանող):

Թե չէ, ապա թե ոչ, եթե ոչ, այլապես շաղկապներով կապակցվող մասերից առաջինում խոսվում է այնպիսի մի իրողության կամ ենթադրության մասին, որ եթե չիրականանա, ապա կունենա այն հետևանքը, որ նշված է հաջորդ նախադասության մեջ:

Սրանք ներհակական, հակադրական հարաբերություն են արտահայտում որոշ պայմանականությամբ, կախված որոշ պայմանից: Իսկ այդ պայմանը ենթադրվում է և ուղղակիորեն չի արտահայտվում նախադասության մեջ:

Ապա թե ոչ. Գնանք, քանի լուս է. *ապա թե ոչ* -մութն ընկնի, քաղաքադուռը կփակեն...(ԺԵ,6):

Թե ոչ(չէ) շաղկապն արտահայտում է ներհակական հարաբերություն: Այն գործածվում է երկու իմաստով, մի դեպքում համարժեք է «այլապես» շաղկապին, երկրորդ դեպքում՝ «պես» կապին:

Օրինակ՝ Այս գլխարկս...առել գլխիս են դրել, որ հորս ցույց տամ, թե դեռ ուսանող եմ, *թե չէ՝* էլ մի քոռ կոպեկ էլ չի ուղարկի...(Լ,268):

Այս կիրառություններում *թե ոչ (չէ)* շաղկապը համարժեք է *այլապես* շաղկապին:

Հետևյալ օրինակներում *թե չէ* համարժեք է «պես» կապին՝ Ու աչքը կպցրել էր *թե չէ՝* նա իրեն զգաց անտառում (ԺԴ,426):...Հենց արևը մի քիչ բարձրանա *թե չէ*, պիտի հասնեն վագոնին (Դ,319):

Եթե ոչ. Ի՞նչ է մնում մեզ անել՝ *եթե ոչ* զինաթափ լինել և փրկել մեր անձը... (ԻԹ,130):

Այլապես. Այս ներհակական շաղկապը ցույց է տալիս, որ կապակցվող լեզվական միավորներն իմաստով իրար համաձայն չեն, այլ հակառակ են ու հակադիր:

Օրինակ՝ Բայց ես հրաժարվեցի, ասելով թե՛ նրանց հարգելուց է, որ նվագում եմ, *այլապես* սիրտ չունեմ... (ԺԵ, 22):

Եվ ոչ թե. Մխիթարվեմ այն հավաստի իրողությամբ, Որ ես ինքս տղամարդ եմ *և ոչ թե* կին... (ԽԲ, 433):

Եվ ոչ թե շաղկապի հակադրական-ժխտական նշանակությունը գորացվում է, երբ *և-ի* փոխարեն օգտագործվում է *այլ* շաղկապը (*այլ ոչ թե*):

Այլ ոչ թե. Բայց դա միավորների գումար է, *այլ ոչ թե* միավորում (ԻԷ, 327):

Եվ ոչ. Այս շաղկապով կապակցություններում հաստատական է այն եզրը, որում չկա *և ոչ* շաղկապը, ինչպես՝... Դու ես եկել իմ մոր տունը *և ոչ* նա՛ք տունը (ԼԶ, 37):

Ոչ թե. Այս շաղկապն արտահայտում է ներհակական հարաբերություն: Նրանով կապակցված նախադասություններից մեկում ստորոգյալի հաստատական լինելու դեպքում, մյուսում ստորոգյալը դրվում է ժխտական ձևով:

Օրինակ՝ Դալարելով մեր կյանքն ապրենք, *Ոչ թե* դանդաղ չորանալով... (ԼԹ, 345):

Եվ ոչ միայն. Այս շաղկապն ունի սահմանափակումը բացասող իմաստ:

Օրինակ՝ Նրանք եղել են նաև այդ լեռներում, *և ոչ միայն* դաշտավայրում:

Չնայած. Արտահայտում է զիջական իմաստ: Այս շաղկապի ծագման մասին Գ. Գարեգինյանը գրում է. «Այս բառը արդի հայերենում տարածված է թե՛ կապական և թե՛ շաղկապական կիրառություններով, ծագմամբ կապ է, որ անցյալ դարի (19-րդ դ.-Լ.Ս.) հեղինակների մոտ հանդիպում է նաև *չնայելով* ձևով (որ իր հերթին ռուսերենի *несмотря* կապի օրինակով է կազմված): Հնարավոր է, որ *չնայած* բառի տարածումը որպես շաղկապ արդյունք լինի նաև *չնայած որ* (ռուս. *несмотря на то что*) շաղկապական հարադրության *որ* բաղադրիչի գեղջման:

Անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված *չնայելով որ* շաղկապն արդեն XX դարի սկզբներին դուրս մղվեց լեզվից՝ փոխարինվելով նույն բայի հարակատար դերբայով կազմված *չնայած (որ)* շաղկապով» [29, 51-70]:

Օրինակ՝ *Չնայած* տարուց ավելի էր, ինչ պարսիկները գրավել էին քաղաքը, սակայն բնակչությունը դեռ չէր հաշտվում այդ դրության հետ... (ԺԵ, 17):

Կամ թե չէ. Այս շաղկապն իր իմաստով հարում է «այլապես» շաղկապին: *Կամ թե չէ* շաղկապի բաժանական իմաստը երբեմն ունենում է ներհակական երանգ իր *թե չէ* բաղադրիչի պատճառով:

Օրինակ՝ Կամ կատարիր պարտականություններդ, *կամ թե չէ* այլ կերպ կվարվենք քեզ հետ:

Այս նախադասությանը համարժեք է «Կատարիր պարտականություններդ, այլապես այլ կերպ կվարվենք քեզ հետ» նախադասությունը:

Արևելահայերենի ժխտական կրկնադիր շաղկապներն են՝ *ոչ...ոչ, ոչ այն է...ոչ այն է:*

Ոչ...ոչ միավորիչ շաղկապով ժխտվում են թվարկվող գործողությունները, առարկաները, հատկանիշները:

Ուսու լեզվաբան Ն.Վալզինան գրում է. «Կրկնադիր *ոչ...ոչ* շաղկապը գործածվում է ժխտական նախադասություններում՝ կատարելով *և* շաղկապի դերը» [65,380]:

Օրինակ՝ *Ոչ* իշխանություն, *ոչ* կռիվ, *ոչ* կին, Չեն հափշտակում իմ հիվանդ հոգին (ԺԷ,215):

Ոչ այն է...ոչ այն է շաղկապն արևելահայերենում *ոչ...ոչ* շաղկապին մոտենում է իր իմաստով, բայց նրանում ժխտումը կտրուկ չէ, այստեղ *ոչ* թե գործողությունը, առարկան, հատկանիշն է ժխտվում, այլ ցույց է տրվում գործողության հնարավորության սահմանափակությունը, միաժամանակ երկընտրանք է հարուցում:

Ն. Վալզինան գրում է. «Կրկնադիր *ոչ այն է...ոչ այն է* շաղկապը ցույց է տալիս տպավորության անորոշությունը կամ ընտրության դժվարությունը...»

Ոչ այն է...ոչ այն է շաղկապը խոսքին հաղորդում է նաև ենթադրականություն» [65,382-422]:

Օրինակ՝ Աղջիկների մայրը գլուխը ծնկներին *ոչ այն է* նիրհում էր, *ոչ այն է* տխրում ջրերի վրա... (ԻԷ,38):

Այս շաղկապի ժողովրդախոսակցական տարբերակն է *ոչ էն է...ոչ էն է* շաղկապը, ինչպես՝ Վերացաճժ, *ոչ էն է* ժպիտ էր, *ոչ էն է* դժգոհություն (ԻԷ,185):

Ձուգադրական շաղկապներից ժխտական հարաբերություն են արտահայտում *ոչ...այլ, չէ...այլ, ոչ...ոչ...այլ, ոչ թե...այլ, ոչ թե...ոչ թե...այլ, ոչ միայն...այլ, ոչ թե միայն...այլ, ոչ միայն...այլև, ոչ թե միայն...այլև, միայն...այլ նաև, եթե ոչ...ապա, եթե ոչ...գոնե (գեթ), ոչ այլ ինչ...եթե ոչ, ոչինչ...եթե ոչ, ոչ այլ ինչ...քան (թե), այլ բան չէ...քան թե, ոչ այլ ոք...եթե ոչ, ոչ այլ ոք...քան, ոչ այնքան...որքան, ոչ այնպես...ինչպես* շաղկապները:

Ոչ...այլ շաղկապը ներհակական հարաբերություն է արտահայտում:

Օրինակ՝ Ու թե մահը անխուսափ է՝ Թող նա տանի *ոչ* հերոսին, *այլ* մարդուկին (ԽԲ,375):

Ոչ...այլ շաղկապի տարբերակն է *չէ...այլ* շաղկապը:

Օրինակ՝ Կարծում են, թե կարևորը Ապրա՛նքը *չէ, Այլ*...պիտա՛կը... (ԽԲ,185):

Ոչ...ոչ...այլ. Այս գորագունդը *ոչ* պետ ունի, *ոչ* գլխավոր, *այլ* մի ինչ-որ խարազանագգեստ մարդ (ԻԹ,183):

Ոչ թե...այլ. Կաթողիկոսը գալիս է *ոչ թե* մեզ օգնելու, *այլ* Գառնիում ամրանալու (ԻԹ,14):

Երբ գործածվում է *ոչ թե...ոչ թե...այլ* շաղկապը, ապա նախադասության առաջին մասում ժխտվում են երկու և ավելի երևույթներ, առարկաներ, գործողություններ, ինչպես՝ Ես գործում էի *ոչ թե* խելքով, *ոչ թե* գիտակցաբար, *այլ* մի տեսակ վայրենի բնագղումով... (ԽԷ,113):

Ոչ միայն...այլ. Բնավ տեղեկություն չունեի *ոչ միայն* Հայաստանում բնակվող օտար ազգերի մասին, *այլ* նույնիսկ հայերի մասին (ԽԶ,220):

Ոչ միայն...այլ շաղկապը հանդես է գալիս նաև առանց երկրորդ եզրի «այլ» մասի: Այս դեպքում երկրորդ մասում ստորոգյալը գործածվում է ժխտական ձևով, ինչպես՝ «Պապաշան» *ոչ միայն* խոսքով, հայացքով անգամ չպատասխանեց փեսայի կանչին (ԺԴ,510): Կամ էլ հաստատական ձևով, ինչպես՝ *Ոչ միայն* գիտեմ. Ես հավատո՞ւմ եմ Երկնի բացխուփիկ քողարկությանը... (ԽԲ,426): Այս դեպքում «ոչ միայն» շաղկապը թվարկումն ու հնարավոր դեպքերը չսահմանափակելու դեր է կատարում:

Ոչ թե միայն...այլ. *Ոչ թե միայն* ժամանակին տեղ են հասել, *այլ* մինչև անգամ հասցրել են մի քանի տուն էլ մտնել:

Ոչ միայն...այլև. Արդար վաստակի նրանք *ոչ միայն* սովոր չէին, *այլև* անընդունակ էին (ԽԵ,186): Այդպիսի հանցավորին...*ոչ միայն* չպետք է ներել, *այլև* անհրաժեշտ է պատժել ամենածանր պատիժներով (ԻԹ,84):

Ոչ թե միայն...այլև շաղկապի առաջին եզրը սահմանափակումը բացառող դեր է կատարում, իսկ երկրորդ եզրը հավելում է առաջինը:

Օրինակ՝ Այդ էլ որ անես *ոչ թե միայն* իմ, *այլև* նրա փրկիչը կդառնաս (Լ,301): Այդ պարոնը *ոչ թե միայն* իմ տանը, *այլև* Թիֆլիսում չի լինի հենց այսօր ևեթ...(Լ,301):

Միայն...այլ. Նա *միայն* մեզ չի այցելել, *այլ* որոշ ընկերների ևս:

Ոչ միայն...այլ նաև. Բայց...այնպես արի, Որ անծրևը հորդ սրբելով տանի *Ոչ միայն* կեղտը հոգնած մայրերի, *Այլ նաև* փոշին ու մուրը հոգու... (ԽԲ,423):

Եթե ոչ...ասպա շաղկապով կապակցություններում կամ երկու եզրերից մեկը ժխտվում է, մյուսը՝ հաստատվում, կամ երկու եզրերն էլ ժխտվում են:

Օրինակ՝ Ու...չարանա՞նք *Եթե* անգամ *ոչ* խեղճ հողի, *Ասպա* նրա թեկուզ և վատ տիրո՞ջ վրա... (ԽԲ,188):

Եթե ոչ...գոնե(գեթ). Կրոնի զորավիզը իրան հեռու էր պահում աշխարհի փառքից ու կյանքի շքեղությունից, *եթե ոչ* ներքուստ, *գոնե* արտաքուստ (ԽԶ,99): Երևի այդօր-*Եթե ոչ* մարդկանց, *գեթ* ամենալուր և ամենազոր բնության համար-Տոն էր անսովոր...(ԽԳ,7):

Ոչ այլ ինչ...եթե ոչ. Ղա *ոչ այլ ինչ* էր, *եթե ոչ* մի ահագին գերան...(ԻԹ,187):

Ոչ այլ ինչ...եթե ոչ շաղկապին համարժեք է *ոչ ինչ...եթե ոչ* շաղկապը, ինչպես՝ Ընկերիս դագաղը դրվեցավ նույն տեղը, որ ուրիշ *ոչ ինչ* էր, *եթե ոչ* մի ստորերկրյա մթին այր (ԽԵ,192):

Ոչ այլ ինչ...եթե ոչ շաղկապին է հարում նաև *ոչ այլ ինչ...բան (թե)* շաղկապը:

Օրինակ՝ Եվ նա կասի *ոչ այլ ինչ*, *Քան* հենց իր գինը...(ԽԲ,123):

Այս շաղկապին իր իմաստով մոտ է *այլ բան չէ...բան թե* շաղկապը:

Օրինակ՝ Որոնց անվախճան ու տարուբերող Մակընթացություն-տեղատվությունն *Այլ բան չէ* արդեն, *Քան թե* աննշան մեր զարկերակի Նշանակալից արծազանքը մեծ...(ԽԲ,84):

Ոչ այլ ինչ...եթե ոչ շաղկապի համարժեքն է *ոչ այլ որ...եթե ոչ* շաղկապը, որ գործածվում է անձեր նշելու դեպքում:

Օրինակ՝ Պեխի ծառի ստվերի տակ նստած մարդը, որը *ոչ այլ ոք էր, եթե ոչ* դերվիշը, վեր կացավ...(ԽՁ,544):

Արևելահայերենում գործածական է նաև *ոչ այլ ոք...քան* շաղկապը, ինչպես՝ Եվ տվողը *ոչ այլ ոք էր, քան* նա, ով խլել էր իր երջանկությունը...(ԺԲ,424):

Ոչ այնքան...որքան. Տավարած տղաները հաճախ բարձրանում էին պարիսպները և *ոչ այնքան* քաղում, *որքան* ջարդում, կոտորտում էին ծառերի ճղները (ԺԴ,454):

Ձևի ժխտում է արտահայտվում *ոչ այնպես...ինչպես* շաղկապով, ինչպես՝ Իսկ նա խոսում էր ուրիշ տեսակ, *ոչ այնպես, ինչպես* ամեն անգամ խոսում էր այդպիսի բաների մասին...(Լ,202):

Ինչպես երևում է, ժխտման հարաբերություն արտահայտող շաղկապները գերազանցապես բարդ համադասական նախադասություններում են կիրառվում:

9. ԺՆՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորվում կամ երանգավորվում են նախադասությունը, նրա որևէ անդամը [9,553]:

Լեզվաբանական գրականության մեջ իրավացիորեն այն կարծիքն է իշխում, որ եղանակավորող բառերը պատկանում են համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին: Այս կարծիքը հավաստվում է նրանով, որ եղանակավորող բառերի մի զգալի մասը պատմականորեն առաջանում է զանազան խոսքի մասերի պատկանող բառերից՝ վերջիններիս իմաստային յուրահատուկ զարգացման հետևանքով: Եղանակավորող բառերի մի զգալի մասը կազմավորվել է բայերի թեքման ձևերից (չլինի, չլինի թե և այլն):

Սակայն երբ ասում ենք, թե եղանակավորող բառերը պատկանում են ուշ առաջացած խոսքի մասերի թվին, այդ բոլորովին չի նշանակում, ասենք, թե նրանք լեզվի պատմության հին շրջաններում գոյություն չեն ունեցել [21,402-403]:

Հայերենի զարգացման բոլոր շրջաններում առկա են ժխտական վերաբերմունք արտահայտող եղանակավորող բառեր:

Ա. Աբրահամյանը գրաբարի եղանակավորող բառերի մասին գրում է. «Գրաբարում կան բառեր, որոնք որպես խոսքի մաս որոշ չափով մոտ են մակբայներին, սակայն չեն նույնանում վերջիններիս հետ: Մակբայներից, անշուշտ, պետք է տարբերել այդպիսի բառերը, որոնք եղանակավորում են նախադասությունը կամ նախադասության անդամները՝ նրանց հաղորդելով հաստատական, ժխտական, երկբայական բնույթ, այլև ուժեղացում, երանգավորում են դրսևորվող իմաստը: Դրանք մակբայներից տարբերվում են նրանով, որ վերաբերության ավելի լայն շրջանակներ ունեն և հարում են նախադասության զանազան անդամների, ինչպես նաև կարող են եղանակավորել կամ երանգավորել ամբողջական նախադասություններ» [2,276]:

Գրաբարում որպես ժխտական եղանակավորող բառեր գործածվում են *ոչ, բնաւ, ամենևին, քաւ, ո՞չ ապաքէն, ընդէ՞ր ոչ* եղանակավորող բառերը:

Ոչ եղանակավորող բառը գրաբարում գործածվում է որպես ժխտական պատասխանական բառ:

Օրինակ՝ *Ոչ*, ասէ, ոսկեղինօք և արծաթեղինօք գնեալ ազատեցայք ի ձեր հայրենատուր սնուտի պաշտամանցն...(ԺԸ,61):

Բնաւ բառը ևս ժխտական եղանակավորող բառի արժեքով գործածվում է նախադասության մեջ:

Օրինակ՝ Եւ պտուղք չորեցունց ոստոյն ոչինչ *բնաւ* էին նմանք... (ԽԹ,68):

Ամենևին բառը ևս ժխտական եղանակավորող բառի դեր է կատարում:

Օրինակ՝ Քաղցրութիւնդ իսկապէս՝ ընդ համայն դառնութեանս, Փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ *ամենևին* անարգիս...(ԼԱ,307):

Ժխտական եղանակավորող բառերից է *քաւ* բառը, որն առավել հաճախ կիրառվում է *լիցի* բառի հետ:

Օրինակ՝ Իսկ մեք ոչ այնպէս, որ *քաւ* և մի՛ *լիցի*, որպէս ասացաւն. ասէ... (Ե,44): *Քաւ* *լիցի* քեզ, բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի...(ԼԱ,253):

Գրաբարի հարցական եղանակավորող բառերից է *ո՞չ ապաքէն* բառը, որը համազոր է աշխարհաբարի «չէ՞ որ» կապակցությանը:

Օրինակ՝ *Ո՞չ ապաքէն* յանդիման Աստուծոյ ասիցէ զայս...(Ա,156):

Գրաբարում «չէ՞ որ» կառույցին համապատասխանում է հարցական *ո՞չ* բառը: Հր. Աճառյանը նշում է. «*Ո՞չ* իբրև հարցական մակբայ նշանակում է «չէ՞ որ». հաճախ գործածական է *ապաքէն* «իրօք» բառի հետ, որով ցույց է տրվում, թե հարցնողը ստույգ գիտե, որ ոչ» [16, հ.5, 253]:

Օրինակ՝ *Ո՞չ* հայրն քո վասն այսր անպարշտութեան ի կորուստ մատնեցաւ (Ե,174):

Ո՞չ ժխտական բառը համարժեք է նաև *չէ՞* հարցա-համաձայնական բառին, որով խոսողը ցանկանում է ճշտել իր իմացածը և միաժամանակ երկընտրանք ու հարցում է արտահայտում:

Օրինակ՝ *Ո՞չ* նա է սա, որ յերկիւղէն իրմէ՛ յանդունդս վարեցաւ...(ԻԳ,131):

Գրաբարում կիրառվում է նաև *ընդէ՞ր ոչ* կառույցը, որը համարժեք է աշխարհաբարի «*ինչո՞ւ ոչ (չէ)*» կառույցին և հարցական-ժխտական ձևով հաստատական իմաստ է արտահայտում:

Օրինակ՝ Զի եթէ յաղթել ոչ կարասցես, իսկ մեռանել *ընդէ՞ր ոչ* (ԻԳ,144):

Միջին հայերենում կիրառվող ժխտական եղանակավորող բառերն են՝ *ոչ, բնաւ, ամենևին, քաւ, ո՞չ ապաքէն, չիհնի թէ*:

Օրինակ՝ Քեզնէ պատասխան ուզեն՝ դու խօսել *բընաւ* չկարենաս (ԾԳ,84): Զարթուցանէ զմեզ առակս, *ամենևին* ոչ հաւատալ պատիր բանից այլազգեաց...(Է,83): *Քաւ* էլ թէ կարծիք ունիս աչերուս, թէ այլ մարդ կու սիրէ (ԻԶ,439): *Ո՞չ ապաքէն* երդուստ անկեալ հատի ոչ առնուլ վրէժ (Է,91):

Նշված եղանակավորող բառերը միջին հայերենում ունեն նույն նշանակությունն ու դերը, ինչ գրաբարում:

Միջին հայերենում կիրառվում է նաև բայական ձևերից առաջացած չիհնի եղանակավորող բառը, որն առավելապես հանդես է գալիս թէ ստորադասական շաղկապի հետ՝ չիհնի թէ:

Օրինակ՝ Չիհնի թէ ատես զհոգիդ և՛ի վերայ ոսկուդ տաքանաս...(ԾԳ,81):

Արևմտահայերենում կիրառվում են ոչ, բնավ, ամենևին, երբեք, քավ լիցի, ոչինչ, րնդիակառակր, չիհնի, չիհնի թե, այնպես չէ՞, չէ՞ որ, ինչո՞ւ չէ (ոչ) եղանակավորող բառերը: Այս բառերի մի մասը այլ խոսքի մասերի է պատկանում, սակայն, պատասխանական բառերի դերով գործածվելով, սրանք ձեռք են բերում եղանակավորող բառերի արժեք:

Ոչ եղանակավորող բառը հաճախ գործածվում է ժխտական բնույթի նախադասության մեջ և սաստկացնում ժխտումը:

Օրինակ՝ Ա՛հ, ոչ, ոչ արժանի չեմ ես յուր քաղցր սիրույն և հարգանացը...(Թ,25): -Ոչ իշխանիկ, այդպես պետք չէ լինի...(ԻԲ,360):

Ոչ ժխտականի ժողովրդախոսակցական տարբերակն է չէ-ն, որը գործածվում է ինչպես նախադասության կազմում, այնպես էլ ինքնուրույն՝ որպես ժխտական բանախաղասություն:

Օրինակ՝ Չէ՛, մի՛ ըլլար, անգո՛ւթ, այդչափ եսասեր...(ԻԸ,191): -Չէ՛, չէ՛, չեմ ուզեր, մազերս թող մնան...(ԼԸ,119)

Որպես պատասխանական բառ գործածվելիս ժխտական եղանակավորող բառերին է հարում բնավ բառը [6,238]: Այն հանդես է գալիս և՛ նախադասության կազմում, և՛ որպես ինքնուրույն բառ՝ նախադասության արժեքով:

Օրինակ՝ -Չարմանալի բան. մեկու մը դեմ դատ բանալու ալ միտք չունի՞ք: -Բնավ, դատ բանալու պատճառ մը չունիմ (ԼԸ,82):

Որպես պատասխանական բառ գործածվելով՝ ամենևին բառը ևս հարում է եղանակավորող բառերին:

Օրինակ՝ -Այն մեկը ձեր պատվույն դեմ ծանր խոսքեր ըրեր է: -Ամենևին (ԼԸ,83): -Մինչև որ թորոս իր գործերը կարգի չդնե, մինչև որ հաջողությունը իրեն չի ծիծաղի, դու ոչ թե իրեն օգտակար, այլ վնասակար կրնաս լինիլ: -Ամենևին, -ըսավ Եվփիմե...(ԻԲ,65):

Բացի պատասխանական բառ լինելուց՝ ամենևին բառը հանդես է գալիս նախադասության կազմում և ավելի սաստկացնում ժխտման իմաստը:

Օրինակ՝ -Ամենևին, աստված վկա, որ չնեղեցիք ինձի...(ԼԸ,203): -Ամենևին, ամենևին, դուք ձեր հանգիստը նայեցեք...(ԼԸ,120):

Արևմտահայերենում պատասխանական բառի արժեքով է գործածվում նաև երբեք բառը:

Օրինակ՝ -Եթե պատմեմ, չի՞ պիտի անարգեք զիս: -Ոչ, երբեք (Թ,22):

Պատասխանական եղանակավորող բառի դերով է կիրառվում քավ լիցի բառը:

Օրինակ՝ -Սակայն չկարծեք, թե ես բաժանորդ գրելու նպատակով զձեզ տեսնելու եկա. *քավ լիցի*, այդ պզտիկությունը չեմ ընդունիր... (ԼԸ, 11):

Աշխարհաբարում որպես ժխտական պատասխանական բառ գործածվում է *ոչինչ* բառը, որը մի դեպքում հանդես է գալիս որպես ժխտական պատասխանական բառ, ինչպես՝ - Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նայինք, Մելքոն աղա: - *Ոչինչ* (ԼԸ, 120): Մի այլ դեպքում այս բառը ներողամտություն է արտահայտում, ինչպես՝ - *Ոչինչ*, նեղություն բան չկա... (Բ, 86):

Աշխարհաբարում եղանակավորող բառի դերով է կիրառվում *ընդհակառակն* բառը:

Օրինակ՝ -Ուրեմն պայքարեն պիտի հրաժարի՞նք: - Բնավ, երբեք, *ընդհակառակը*, պիտի պատրաստվինք ապագա նոր պայքարին... (ԾԲ, 523):

Երկբայական-հարցական եղանակավորիչներ են *չի՞նի, չի՞նի թե* բառերը: Դրանք հարցական հնչերանգով արտասանելիս արտահայտում են տարակուսանք, երկմտություն, կամ զարմանք ու անհանգստություն որևէ անսպասելի, դժվար հավատալի բանի վերաբերյալ:

Օրինակ՝ *Չըլլա* որ մոտենաք գերեզմաննոցներուն և ծովուն (ԽԱ, 84):

Հարցական-համաձայնական բառ է *չէ՞* բառը, որը հանդես է գալիս աշխարհաբարում: Այս բառով խոսողը նպատակ ունի իմանալ խոսակցի կարծիքը և միաժամանակ իր վերաբերմունքն է արտահայտում՝ փոխադարձություն ակնկալելով խոսակցից:

Օրինակ՝ Ձատկեն վերջը եկուր, բարեկամ ենք, *չէ՞* (ԺԳ, 50):

Աշխարհաբարում հարցական-համաձայնական երանգ է արտահայտում նաև *այնպես չէ՞* բառը, որը տրվում է խոսակցի վերաբերմունքն իմանալու, նրա համաձայնությունն ու հաստատումը ստանալու համար:

Օրինակ՝ -Կերթանք կոր, *անանկ չէ՞*, - գոչեց էֆենտին... (ԾԲ, 179):

Հարցահամաձայնական երանգ է արտահայտում նաև *չէ՞ որ* կառույցը:

Օրինակ՝ *Չէ՞ որ* Տարոն գերեզման կ'ընեն, *չէ՞ որ* կենդանի ոչ ոք չի կա (ԻԲ, 227):

Ժխտական կառուցվածք, բայց հաստատական իմաստ ունի *ինչո՞ւ չէ (ոչ)* բառը:

Օրինակ՝ -*Ինչո՞ւ չէ*, ըսավ մյուսը, - եթե աստծու կամքը այդ է (ԾԲ, 38):

Արևելահայերենում կիրառվում են *ոչ (չէ), բնավ, ամենևին, երբեք, քավ լիցի, ոչինչ, ոչ ոք, ընդհակառակն, չի՞նի, չի՞նի թե, չէ՞, այնպես չէ՞, չէ՞ մի, չէ՞ որ, ինչո՞ւ չէ (ոչ), ինչպես չէ, բա չէ* եղանակավորող բառերը:

Ժամանակակից գրական հայերենում, որպես ժխտական եղանակավորող բառ, հիմնականում հանդես է գալիս *ոչ* բառը, որը *այդ* հաստատականի հականիշն է: Նրա պես *ոչ* բառը ևս գործածվում է թե՛ նախադասության հետ, և թե՛ իբրև պատասխանական բառ՝ տրամաբանորեն ստանալով նախադասության արժեք:

Օրինակ՝ -*Ոչ*, ես վրեժխնդիր չեմ լինում այն անձից, որ արդեն դժբախտության մեջ է գտնվում... (ԽԶ, 472): «Ոչ,-մտածում էր նա,- ինձ չի ների ոչ երկինքը և ոչ երկիրը...» (ԽԶ, 499):

Նախադասության կազմում ժխտական եղանակավորող բառի արժեքով գործածվում է չէ բառը, որը *ոչ*-ի ժողովրդախոսակցական տարբերակն է: *Չէ* բառը կարող է գործածվել նաև ինքնուրույն՝ որպես ժխտական բառ-նախադասություն:

Օրինակ՝ -*Չէ*, Շուշան, քեզ անպատճառ կպսակենք, կամուսնացնենք և չենք թողնի էլ գյուղ գնաս... (ԺԴ,357): -*Չէ, չէ*, - աշխուժորեն չհավատաց Գիքորը:-Տեսե՞լ ես (ԻԵ,38):

Հավաստիական հարցի պատասխանը բացի *ոչ* բառից կարող է արտահայտվել նաև *բնավ, երբեք, ամենևին* եղանակավորիչներով:

Օրինակ՝ Եվ մի՞թե կարծում ես, թե մեծ կորուստ կունենայինք. *բնավ*. հայոց արքայական գահը...թափուր չէր մնալ (ԻԹ,84): -Չափազանցո՞ւմ...*Բնավ* (ԻԹ,212): Բաղին ամեն ինչ կարող էր սպասել, բայց այդ բանին՝ *երբեք* (Դ,39): -Կուզե՞ք, որ ձեր թագավորը գերվի Բեշիրից: -*Երբեք*,-գոչեցին նրանք միաբերան (ԻԹ,234): Իսկ այդ օրիորդին, որին խելագար անվանեցիք, չե՞ք կարեկցում: -*Ամենևին* (ԼԶ,32):

Ամենևին բառը պատասխանական բառ լինելուց բացի գործածվում է նաև նախադասության կազմում և սաստկացնում ժխտման իմաստը:

Օրինակ՝ ...*Ամենևին*, Դուք ինձ նեղություն չեք տալիս:

Պատասխանական եղանակավորող բառ է *քավ լիցի* բառը:

Օրինակ՝ -Հայրիկ, դու մտքումդ ինձ անիծո՞ւմ ես: -*Քավ լիցի* (ԼԶ,75): -*Քավ լիցի*, եթե համարձակվեմ այդ չափ լրբանալ քո առաջ...(ԻԹ,218):

Ոչինչ, ոչ ոք բառերը որպես պատասխանական բառեր գործածվելով արտահայտում են խուսափողական պատասխան: Իսկ *ոչինչ* բառը որոշ կիրառություններում նաև ներողամտություն է արտահայտում:

Օրինակ՝ Փորները կուշտ էր, յափնջին տաք, էլ ի՞նչ էր հարկավոր,-*ոչինչ* (Լ, 97): Սխալն էլ մարդկային է, *ոչինչ* (ԻԷ,285): Ո՞վ է մեղավոր այդ բանում:*Ոչ ոք* (ԼԶ,500):

Ասվածին հակառակ իմաստն է արտահայտվում *ընդհակառակն* բառով, ինչպես՝-Երևի, դու շատ պիտի տխրես, Սառա, որ ես գնում եմ օտար աշխարհ, -հարցրի ես:-*Ընդհակառակը*, ես շատ ուրախ եմ,-պատասխանեց նա (ԽԷ,58):

Հավաստիական հարցական նախադասություններում հաճախ կիրառվում են *չիհնի, չիհնի թե* երկբայական հարցական եղանակավորիչները:

Օրինակ՝ *Չիհնի՞* սա է վերջը (ԺԲ,213): *Չիհնի՞ թե* վերջին անգամ էր մտովի խոսել հայերի հետ (ԺԲ,213):

Հարցա-համաձայնական եղանակավորող բառերից արևելահայերենում կիրառվում են *չէ՞, այնպես չէ՞* բառերը:

Օրինակ՝ Թքած ինչ լինում է լինի, վերջիվերջո մարդ է, *չէ՞*, ստորությունն էլ իր սահմանն ունի, *չէ՞*, անամոթությունն էլ իր չափն ունի, *չէ՞* (ԺԲ,161): Այո՛, չես կամենում ինձ վրդովել, *այնպես չէ՞* (ԻԹ,23):

Արևելահայերենում *չէ՞ մի* կառույցն արտահայտում է թերահավատություն, հեզմանք, ինչպես՝ -Ի՛, շուն ու կատու, *չէ՞ մի* ոտներ (Լ,11): *Չէ՞ մի*. դուք սպասեք ձեր դրախտին՝ որ վանքի զանգերն իրիկվա մեջ զրնգան...(ԻԷ,457):

Չէ՞ որ հարցական կառույցը, ժխտական լինելով հանդերձ, հաստատում է ասվածը: Օրինակ՝ -Բայց չէ՞ որ ես տեղի եմ տվել ստիպողական հանգամանքներին (ԻԹ,70):

Ինչո՞ւ չէ (ոչ) կառույցը ժխտական ձևով հաստատական իմաստ է արտահայտում:

Օրինակ՝ -Ինչո՞ւ չէ, քանի որ ոչ մի առիթ չեմ տա նրան գրգռվելու (Լ,249): -Համաձայն ես: -Ինչո՞ւ ոչ, միայն թե կարողանաս մորս համոզել...(ԺԹ,171):

Արևելահայերենում գործածական է նաև ինչպես չէ կառույցը, որը մի դեպքում հաստատական իմաստ է արտահայտում, ինչպես՝ -Ներեցեք դուք ստանո՞ւմ եք մայրաքաղաքի թերթերը: -Ինչպե՞ս չէ (Լ,112): Այս դեպքում այն համարժեք է «այո» պատասխանական բառին: Երկրորդ դեպքում այն արտահայտում է հեզմանք, արհամարհանք, ինչպես՝ Ձգվում են վերև, կարծես թե ուզում... Ջովություն ըմպել (Ինչպե՞ս չէ կըմպես)... (ԽԳ,43):

Ժողովրդախոսակցական լեզվում հեզմական նշանակությամբ գործածվում է բա չէ կառույցը, ինչպես՝ -Բա չէ, որսորդը միայն Ղազարով Մեսրոպն է (ԻԷ, 175):

Այսպիսով՝ հայերենում ժխտման արտահայտությանը մասնակցում են թե՛ բուն եղանակավորող բառերը, և թե՛ իրենց կիրառությամբ եղանակավորող բառերին հարող բառեր ու արտահայտություններ: Այսպիսի բառերով նախադասություններն արտասանվում են հատուկ հնչերանգով, որը նպաստում է նրանց արտահայտած իմաստի հստակեցմանն ու ճիշտ հասկանալուն:

10. ԺԽՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Ժխտման արտահայտության այլ միջոցների մեջ մտնում են ժխտական մասնիկներով և հնչերանգային յուրահատուկ ձևավորումներով գործածվող բառերը, որոնք էլ ժխտական իմաստ են հաղորդում նախադասությանը:

Լինել բայի ժխտական ձևով մտահոգություն, զգուշություն է արտահայտվում: Ժխտական ձևավորում ունեցող լինել բայն այս դեպքում հարցական հնչերանգ ու համապատասխան հարցական նշան չի ունենում:

Արևմտահայերենում. Միայն թե չըլլա, որ իմ գալես առաջ աղջիկը ձեռքե փախցնես (ԾԲ,161):

Արևելահայերենում. Չլինի որևէ մեկին ինչ-որ բան ասես,հասկացա՞ր:

Ժխտական կառույց է ձևավորվում շեշտակիր ոչ բառով, որը վերաբերում է ոչ թե ամբողջ նախադասությանը, այլ նրա որևէ անդամին:

Գրաբարում. Վտանգ այնուհետև հարկ առնէ Աժդահակայ՝ պատահել պատերազմաւ հայկազինն ոչ փոքր ինչ ամբոխիւ(ԻԱ,96):

Միջին հայերենում. Յետ որոյ կացեալ Հայկայ ամաց ոչ սակաւուց մեռանէր, յանձնեալ գախն, այսինքն է գպարոնութիւն, զի ոմանք ասէին զշուշան լինել (թագաւոր), և այլք գախիղգան, և բազումք զհամասպրան (ԻԵ,20):

Արևմտահայերենում. Ոչ այսօր, բայց վաղը իրիկուն անպատճառ պիտի գամ (ԾԲ,56):

Արևելահայերենում. -Ինչո՞ւ անպատճառ նրան և *ոչ* մի ուրիշին (ԻԹ,58):

Արևելահայերենում յուրօրինակ կիրառություն ունի *չ* ժխտական բառը, որն ընդգծում է խոսողի անդրդվելիությունը, ինչպես՝ Սատանեք *չ*է, Սադայելն էլ գա, իմ ձեռից պրծնիլ չի (L,17):

Չ բառը որոշ կիրառություններում ոչ թե ժխտում է արտահայտում, այլ ծառայում է հարցը ձևավորելուն և ճշտում է կատարվելիք գործողությունը:

Օրինակ՝ Դու իրոք վաղը կգաս: -*Չ*է, դու իրոք վաղը կգաս:

Ժխտում կարող է արտահայտվել նաև առանց ժխտական միավորների: Այս դեպքում ժխտման իմաստը պարունակում են առանձին բառերը, այսինքն՝ այդ բառերը իրենց բառային իմաստով ենթադրում են բացասում, ժխտում, բացակայություն:

Օրինակ՝ Դա *բացառվում* է: Նշանակում է՝ հնարավոր չէ, քանի որ *բացառվել* բայը իր բառային իմաստով նշանակում է չլինել, այսինքն՝ ժխտվում է հնարավոր լինելը:

Կամ՝ Կենդանիների այդ տեսակը *վերացել* է: *Վերանալ* բայը նշանակում է դադարել գոյություն ունենալ, չլինել: Սրան համարժեք է «Կենդանիների այդ տեսակը *գոյություն չունի/չկա*» ժխտական կառուցվածքի նախադասությունը:

Բ. ԺՄՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Շարահյուսական մակարդակում ժխտումն արտահայտվում է նախադասության ժխտական կառուցվածքով, ժխտական նախադասությամբ, ժխտական միադիմի նախադասություններով, ժխտական բառ-նախադասություններով:

Ըստ արտահայտած մտքի և իրականության հարաբերության տարբերակվում են դրական և ժխտական նախադասություններ: Դրանք ծառայում են հաստատելու կամ ժխտելու, բացասելու հասկացությունների միջև եղած կապի առկայությունը:

Եթե հաստատական նախադասությունն արտահայտում է կատարվող, կատարված և կատարելի գործողությունների, երևույթների հաստատումը, այսինքն՝ ցույց է տալիս, որ առարկայի և նրա հատկանիշի միջև գոյություն ունի կապ, կամ առկա է այդ հատկանիշը, ապա ժխտական նախադասությունը բացառում է այդ հաստատումը, այսինքն՝ ցույց է տալիս, որ առարկայի և նրա հատկանիշի միջև կապը բացակայում է, հատկանիշ չկա [10,114]:

Ռուս լեզվաբան Ն. Վալգինան նշում է. «Նախադասությունը կոչվում է հաստատական, եթե նրանում հաստատվում է խոսքի առարկայի և նրա մասին ասվածի միջև կապը, հասկացվում որպես իրական գոյություն ունեցող: Նախադասությունը կոչվում է ժխտական, եթե այդ կապը ժխտվում է, այսինքն՝ հասկացվում է որպես իրականում գոյություն չունեցող» [65,304]:

Հաստատական և ժխտական նախադասությունների մասին ռուս լեզվաբան Վ. Բաբայցևան գրում է. «Հաստատական նախադասություններում հաստատվում է այն,

ինչ ասվում է խոսքի առարկայի (մտքի) մասին. ժխտական նախադասություններում ժխտվում է խոսքի առարկայի (մտքի) մասին ասվածը» [64,68]:

«Լեզվաբանական բառարանում» ժխտական նախադասությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Այն նախադասությունները, որոնց մեջ քերականորեն ժխտվում է ստորոգումը, այսինքն՝ որոնց ստորոգյալը ոչ թե հաստատում, վերագրում է ենթակային որևէ հատկանիշ, այլ բացասում, ժխտում» [48,114]:

Ըստ այս սահմանման՝ նախադասության մեջ ժխտման կարգը անմիջականորեն կապված է ստորոգյալի (ստորոգման) հետ:

Այս տեսակետն է արտահայտել նաև ռուս լեզվաբան Պեչկովսկին. «Հատկապես ստորոգյալի ժխտումն է ամբողջ ասույթը (նախադասությունը) դարձնում ժխտական, այլ անդամի ժխտումը չի փոխում ասույթի (նախադասության) ընդհանուր հաստատական իմաստը» [69,387]:

Ընդհանրապես նախադասությունների հաստատական և ժխտական տեսակների տարբերակումը պայմանական բնույթ է կրում, ըստ էության, ժխտական նախադասություններն էլ յուրովի հաստատական են, պարզապես եթե հաստատական նախադասություններում հաստատվում է դրական գործողությունը, ժխտական նախադասություններում հաստատվում է բացասականը:

Այսպես, օրինակ՝ (1) Պետրոսը *մեկնում է* Մոսկվա: (2) Պետրոսը *չի մեկնում* Մոսկվա:

(1) նախադասության մեջ հաստատվում է կատարվող, դրական գործողությունը (մեկնում է), (2) նախադասության մեջ հաստատվում է չկատարվող, բացասական գործողությունը (չի մեկնում):

Ժխտումը կարող է լինել *միակի, կրկնակի և բազմակի*. **Միակի ժխտումն** այն է, երբ ասույթի, արտահայտության կամ նախադասության մեջ ժխտումը մեկ անգամ է դրսևորված [49,357]: Հայերենի զարգացման բոլոր շրջաններում միակի ժխտումն առավել տարածվածն է:

Գրաբարում. Իսկ երանելի այրն *ոչ* ի վերայ տերութեան *կռուէր...* (ԻԳ,17):...Տուն մի *չիտամ* ումեք (ԺԸ,25):

Միջին հայերենում. Այ, գընա՛, *չի պիտիս* դուն ինձ... (ԾԱ,40): Բժիշկ *չունիմք* ցաւոյս... (ԻԴ,18):

Արևմտահայերենում. *Պիտ չգտնես* միջոց թռիչքիդ համեմատ (ԽԴ,225): Մատերդ հինա *չներկեցիր* (ԽԴ,455):

Արևելահայերենում. Ծերունին *չէ գրկում* նրան այդ զվարճությունից (ԽԶ,398): Նրա քունն իրոք *չէր տանում* (ԺԴ,427):

Կրկնակի ժխտումն այն է, երբ առկա են երկու ժխտում, որոնցից մեկը կարող է լինել բառային, մյուսը՝ քերականական [49,357]:

Գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում սովորաբար ժխտական դերանունների հետ բայը դրական ձևով է դրվում, որի հետևանքով մեծ թիվ են կազմում

միակի ժխտմամբ նախադասությունները: Սակայն սա բացարձակ կանոն չէ և բոլոր շրջաններում էլ առկա են բացառություններ:

Գրաբարում. ...Բայց Մովսէս *ամենևին ոչ լինէր* ի նոսա հուպ (Խ,91): Եվ *ոչ մի ոք ոչ հաւանեաց* գալ... (Ե,194):

Միջին հայերենում. Ըզգին ալ աւլով կըտրէ, որ ամէն *ոչինչ չի գընէ*... (ԾԱ,90): *Հանգիստ չունիմ բնաւ* ի քուն՝ և արթնութեան... (ԻԴ,24):

Արևմտահայերենում. *Ոչինչ չհասկացաք*, բայց ձեր ծնող ուղեղներուն մեջ սարսափը և վրեժը իրենց հիշատակները ցանցեցին... (ԽԱ,68): Ան պատերազմ միշտ ըրավ՝ Որ սուրն *երբեք չպաղի* (ԽԴ,468):

Արևելահայերենում. *Բնավ մի՛ ամաչիր*՝ դիմել խորհրդի և օգնության... (ԺԵ,218): *Ոչինչ չէր կարող* այնքան ողորմելի... լինել... (ԽԶ,105):

Բազմակի ժխտումը երեք և ավելի ժխտական միավոր պարունակելն է: Այս դեպքում ժխտումը տարածվում է ասույթի (նախադասության) բոլոր անդամների կամ դրանց մեծ մասի վրա: Հիմնականում հանդիպում է եռակի ժխտումը:

Գրաբարում. Եւ *ոչ թողոյր բնաւ ամենևին*... (Ե,326): Եւ բնակութիւն իւրոց կայենիցն յանմարդի լերինս, այլ զտեսչութիւն մարդկան պիտոյից *ոչ երբեք անփոյթ առնէր* (Ե,60):

Միջին հայերենում. Վասն զի *ոչ ձիոյ երամակ և ոչ այլ ինչ չկարեն* գոյանալ *բնաւ* (ԻԵ,203):

Արևմտահայերենում. *Ոչ, չի պիտի ջնջվի, մի՛ հուսահատիր*, Հայաստան, դադրեցուր ողբդ (Թ,476): *Ոչ, ոչ, երբեք չվախճանիս պիտի* դուն... (ԽԴ,284):

Արևելահայերենում. Թագուհին ժպտաց և *ոչինչ այլևս չխոսեց* (ԻԹ,9): Մեզանից *ոչ ոքի ոչինչ չհայտնեցիր* (ԻԹ,63):

Առավել հազվադեպ են քառակի և ավելի ժխտմամբ նախադասությունները:

Քառակի ժխտում առկա է արևելահայերենի հետևյալ օրինակներում՝ *Ոչ մեկը ոչ ոքի հետ չուներ ոչ մի կապվածություն* (ԻԷ,327):... Խոսք սովեք, որ *այլևս երբեք ոչ մի թռչուն չէք սպանի* (Լ,285):

1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ԼՐԻՎ) ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ԺՖՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բովանդակային տեսակետից ժխտական նախադասությունները լինում են *ընդհանրական (լրիվ) ժխտական և մասնակի ժխտական*:

Ընդհանրական ժխտական են կոչվում այն նախադասությունները, որոնցում ժխտումը վերաբերում է ստորոգյալին, այսինքն՝ ստորոգյալն ունենում է ժխտական ձև:

Մասնակի ժխտական են կոչվում այն նախադասությունները, որոնցում ժխտումը վերաբերում է ոչ թե ստորոգյալին, այլ մի որևէ բառ-հասկացության (ոչ թե...այլ):

Մասնակի ժխտական նախադասություններում փաստորեն արտահայտվում է հաստատում, բայց այնպիսի հաստատում, որը սահմանափակված է այս կամ այն տեսակետից:

Ռուս լեզվաբանության մեջ ևս ընդհանրական (կամ լրիվ) և մասնակի ժխտական նախադասությունները բնորոշվում են նույն կերպ. «Ընդհանրական (լրիվ) ժխտական են այն նախադասությունները, որոնցում ժխտական *ոչ (չ), (հե)* մասնիկը դրվում է ստորոգյալի վրա:

Ոչ (չ) մասնիկի գործածությունն այլ անդամների մոտ արտահայտում է մասնակի ժխտում» [64,68], [65,305]:

Եթե ժխտական *չ* մասնիկը դրվում է ստորոգյալի վրա ու նախադասությունը գործածվում է առանց ենթակայի, խնդիրների ու պարագաների, ապա ժխտումը լրիվ է (*Չի գնացել: Չգնաց: Չպետք է ազատվի:*) [10,114]:

Ժխտումը լրիվ է նաև այն դեպքում, երբ նախադասությունն ունի և՛ ենթակա, և՛ խնդիրներ ու պարագաներ, բայց նախադասության տրամաբանական շեշտը թույլ է և ընկած է ստորոգյալի վրա (*Նա հաց չկերավ: Ես տուն չգնացի*):

Եթե ուժեղ տրամաբանական շեշտը ենթակայի, խնդիրների, պարագաների վրա է ընկնում, ժխտումը փոխվում է. այս դեպքում գործողությունը չի ժխտվում, այլ ժխտվում են գործողության կատարողը, խնդիրները, պարագաները, այսինքն՝ ժխտումը լինում է մասնակի: *Ես չգնացի* (=ոչ թե ես գնացի, այլ ուրիշը): *Ես տուն չգնացի* (=Ես գնացի, բայց ոչ տուն):

Եթե ժխտական նախադասության մեջ պարագաներն են *քիչ, պակաս, վատ, լավ, շատ* բառերը, նախադասությունը ստանում է դրական նշանակություն: *Քիչ չխոսեց: Պակաս չխոսեց*. Այս դեպքում տրամաբանական շեշտը հիշյալ բառերի վրա է [10,114]:

Ոչ-ը լրիվ ժխտում է արտահայտում այն դեպքում, երբ շեշտադրվում են թվարկվող ենթակաները կամ խնդիրները (ստորոգյալը նույնպես ունենում է ժխտական ձև), ինչպես՝ *Ոչ Աշոտը, ոչ Արամը չեկան. Չտեսա ոչ Արամին, ոչ Աշոտին*:

Ոչ-ը ենթական մասնակիորեն է ժխտում, երբ կապակցվում է *թե* շաղկապի հետ, օրինակ՝ *Ոչ թե* այժյանն է սարից իջնում: *Ոչ թե* դուռն է բաց: Սովորաբար այդպիսի նախադասություններն ունեն *այլ* շաղկապով հարադրվող եզր: *Ոչ թե* սեղանը կոտրվեց, *այլ* աթոռը:

Ոչ թե շաղկապով ժխտվում են նաև նախադասության խնդիրները, օրինակ՝ Մոտեցիր *ոչ թե* նրան: Սրանք էլ ունեն *այլ* շաղկապով հարադրվող եզր: *Ոչ թե* դուռ է շինում, *այլ* պատուհան:

Հազվադեպ խնդիրը ժխտվում է միայն առանձին *ոչ*-ով, օրինակ՝ Ծեծիր *ոչ* նրան: Սրանք սովորական են *բայց* շաղկապով կապակցված: Սիրի՛ր, *բայց ոչ* քեզ:

Այսպես ժխտվում են նաև պարագաները, օրինակ՝ *Գնաց ոչ թե* տուն:

Ոչ ժխտականի միջոցով մասնակի ժխտումը ավելի ուժեղ է, քան թե երբ ժխտվում է չ-ի միջոցով, հմնտ. Եկավ *ոչ* ժամը երեքին (1) -ժամը երեքին չեկավ (2):

(1) Նախադասության մեջ ժխտումը մասնակի է և վերաբերում է նախադասության պարագային, իսկ ստորոգյալը հաստատական է: Իսկ (2) նախադասության մեջ ժխտվում է ընդհանրապես գործողությունը, քանի որ ժխտվում է ստորոգյալը:

Ոչ ժխտականը *չ*-ի համեմատությամբ ավելի կտրական բնույթ ունի: Շեշտով ընդհանուր կտրական ժխտում է արտահայտվում, երբ առկա է գործողությունների թվարկում: Օրինակ՝ *Ոչ* խոսեց, *ոչ* կարդաց, *ոչ* գրեց: Առանձին մի ստորոգյալի հետ *ոչ* ժխտականը չի գործածվում:

Հայերենի ժխտական նախադասությունների կառուցվածքի տեսակետից պետք է նկատի ունենալ նաև հետևյալները.

ա) Արևելահայերենի ժխտական նախադասությունների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ստորոգյալը ժխտական ձև է ունենում ժխտական դերանուններ ունեցող նախադասություններում, որոնք արտահայտում են ընդհանրական ժխտում (*Ոչ* ոք չտեսավ): Արևմտահայ գրական լեզվում այսպիսի նախադասությունների ստորոգյալը դրվում է դրական ձևով:

բ) *Որ* շաղկապով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություններում ստորոգյալի ժխտական ձևով արտահայտվում է դրական իմաստ: Այդ դեպքում միաժամանակ դրսևորվում է նաև երկրորդական և գլխավոր նախադասությունների գործողությունների արագ հաջորդականություն, այլև անսպասելիությունից՝ ուժեղ հուզում (օրինակ՝ *Որ* նրան չտեսա, գլուխս պտտվեց):

գ) Ստորոգյալի և անորոշ դերբայի կապակցությամբ դրսևորվում են հետևյալ երեք տիպերը:

1. *Ժխտական ստորոգյալ+ժխտական անորոշ դերբայ*: Այս դեպքում կազմվում են ձևով ժխտական, բայց իմաստով դրական նախադասություններ, որոնք որպես կանոն ցույց են տալիս, որ գործողությունը պետք է կատարվի ստիպմամբ, անհրաժեշտաբար:

Արևմտահայերենում. *Կարելի չէր չհամոզվիլ* իր ըսածներուն ճշմարտության (ԾԲ,109):

Արևելահայերենում. Նեղվում է գետն իր ափերում Եվ *չի կարող չշառաչել...* (ԼԹ,141):

2. *Ժխտական ստորոգյալ+անորոշ դերբայ*: Այսպիսի կառույցներում ժխտումը լրիվ է: Գրաբարում. *Ոչ կարեն ասել* զերագութիւն ձեռինն... (ԻԱ,280):

Միջին հայերենում. Թաւալիմ ի մեղս, *Թոթափիլ չկարեն* (ԼԷ,28):

Արևմտահայերենում. Բան մը *չէի ուզեր ճաշակել*, շունչ մը *չէի ուզեր շնչել...* (Թ,51):

Արևելահայերենում. Ստրուկը կարող է կին լինել, բայց ամուսին *լինել կարող չէ...* (ԽԶ,424):

3. *Ստորոգյալ+ժխտական անորոշ դերբայ*: Այս դեպքում ժխտումը մասնակի է:

Գրաբարում. Եւ բազում ընծայիք *աղաչեաց* զմեզ *չանկանիլ* ի գերութիւն և ոչ գնալ ի ծառայութիւն... (ԽԸ,26):

Միջին հայերենում նմանատիպ օրինակների չենք հանդիպել:

Արևմտահայերենում. *Որոշեց* Հաճի Թումիկ *չըսել...* (ԾԲ,132):

Արևելահայերենում. Իշխանը *հրամայել էր* մեզ ամենիս՝ ոչ մի տխուր լուր *չհաղորդել* քեզ...(ԻԹ,48):

Նախադասության մեջ զեղչված ստորոգյալի փոխարեն հանդես է գալիս *ոչ* բառը և նրա ժողովրդախոսակցական տարբերակը՝ *չէ*-ն: *Ոչ (չէ)* բառը, գործածվելով զեղչված ստորոգյալի փոխարեն, ինքն է ժխտում արտահայտում:

Գրաբարում. Արդ՝ զի՞նչ ստասցուք, ընդունի՞մք, արժա՞ն է ընդունել, թե՞ *ոչ* (Խ,76):

Միջին հայերենում. Ղատելն «Սահմանել» ասէ զասացուածսն, որ երբ գտնուս զումեք շարագրած, դատես՝ եթէ ուղղափառի՞ է, թե՞ *ոչ*...(Գ,75):

Արևմտահայերենում. Մեզ կը պատկանի հիմա որոշել, թե նույնը այս անպիտանին պե՞տք է ընել թե *ոչ*...(ԻԲ,372): -Հապա, լավ կճանչնամ, այսինքն տղան *չէ*, բայց հայրը, ինչ պատվական մարդ էր...(ԾԲ,39):

Արևելահայերենում. Բոլորն սպասում էին մի արտակարգ նորության, որի մասին թեև լսել էին, բայց և՛ հավատում էին, և՛ *ոչ* (ԺԹ,49): -Հասկացա՞ք ինձ, սատանան տանե, թե՞ *չէ* (ԼԴ,95):

Արևելահայերենում ստորոգյալը չկրկնելու համար կիրառվում է *ոչ* բառը, որն այս դեպքում ունի թվարկման երանգ:

Օրինակ՝ Կը թաղես, այո՛, դարձյալ քո երգչին, Բայց նորա վառած զգացմունքներին, Չըկա գերեզման և *ոչ* էլ վախճան...(ԺԶ,26):

Բաղադրյալ ստորոգյալի կազմում ժխտումն արտահայտվում է հանգույցի ժխտական ձևով:

Գրաբարում. Որ սիրէ և գորդիս առաւել քան զիս *չէ* ինձ արժանի (ԽԹ,118):

Միջին հայերենում. Չի տեղեկութիւն *չէ* բոլորովին գիտութիւն (Գ,73):

Արևմտահայերենում. -Վատ *չեմ* ես, արքա, կուգեմ որ հարվածը արյունոտ ըլլա... (ԽԴ,173):

Արևելահայերենում. Քնած՝ իրեն բոլորովին նման *չէր*...(ԻԷ,19):

2. ԺՆՏՈՒՄԸ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև դրսևորվող ներհակական հարաբերությունը տարբեր չափերի է հասնում՝ սկսած տարբեր առարկաներին տարբեր հատկանիշներ վերագրելուց, վերջացրած ժխտական հարաբերությամբ:

Ժխտման կոչվում է այն ներհակական հարաբերությունը, որի դեպքում համադասական նախադասության բաղադրիչներից մեկով կամ մեկ մասով ժխտում է արտահայտվում, իսկ մյուսով կամ մյուս մասով հաստատվում է ժխտվածի հակառակ երևույթը [7,130]:

Ժխտական ներհակություն արտահայտող համադասական կապակցությունների բաղադրիչներից մեկում՝ առաջինում կամ երկրորդում, ժխտվում է կան ենթական, կան

սրան վերագրվող հատկանիշը, կամ հատկանիշի հատկանիշը, եթե կա, կամ բոլորը միասին, մյուսում հաստատվում է այն ամենը, ինչ ժխտվել է կից բաղադրիչում (45,255):

Ժխտումը և նրան համապատասխանող հաստատումը կարող են լինել՝ ա. լիակատար և բ. մասնակի:

Ա. Լիակատար ժխտում արտահայտող կառույցները խիստ սակավաթիվ են: Այս կարգի նախադասության բաղադրիչներից մեկում ըստ էության ժխտվում են թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը (եթե նախադասությունը երկկազմ է), թե՛ լրացումները, եթե կան, իսկ կից բաղադրիչում հաստատվում են ուրիշ ենթակա, ուրիշ ստորոգյալ, ուրիշ լրացումներ, եթե կան:

Օրինակ՝ *Ոչ թե* լույսն է աղոտ, *այլ* դու ես վատ տեսնում:

Առաջին բաղադրիչը՝ *լույսն է աղոտ*, ժխտվում է հիմնովին, այսինքն՝ թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, այսինքն՝ նրան վերագրված հատկանիշը (աղոտ է): Երկրորդ բաղադրիչում հանդես է գալիս նոր ենթակա (դու), որին վերագրված է նոր հատկանիշ (տեսնում ես), սա էլ ունի իր հատկանիշը (վատ):

Լիակատար ժխտման հարաբերությամբ բնութագրվող բաղադրիչները կապակցվում են *ոչ թե...այլ* զուգադիր և *այլ, այլ ոչ թե, և ոչ թե* մենադիր շաղկապներով: Ըստ որում շաղկապներն ունեն իրենց կայուն ու անփոփոխ տեղը: *Ոչ թե*-ն դրվում է լիակատար ժխտում արտահայտող բաղադրիչի հենց սկզբում, զուգադիր այդ շաղկապի երկրորդ եզրը՝ *այլ*-ը, ինչպես նաև մենադիր *այլ, այլ ոչ թե, և ոչ թե* շաղկապները՝ երկրորդ բաղադրիչի սկզբում [45,255-256]:

Օրինակ՝ Պարսիկները չեն, որ կրակ են թափում, *այլ* այդ մերոնք են կրակ թափողները (ԽՁ,458):

Ակնհայտ է, որ *այլ* շաղկապով կապակցվելու դեպքում առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը կամ հանգույցը արտահայտվում է ժխտական խոնարհմամբ, երկրորդինը՝ դրական:

Ոչ թե...այլ զուգադիր շաղկապով կապակցվելիս առաջին բաղադրիչն իր լրիվ ծավալով ժխտվում է շաղկապի սկզբնամասով՝ *ոչ թե*-ով:

Օրինակ՝ *Ոչ թե* լեռնականների կորովի երգն էր նվագում, *այլ* այս անգամ հնչում էր հովվական պարզ մի երգ (Ղ,152):

Լիակատար ժխտումը դրսևորվում է հայերենի զարգացման բոլոր շրջաններում:

Գրաբարում. *Ոչ թե* ինչ խտրոց կասկածանաց միջոցի բանի...*Այլ* կամիս՝ որպէս բարեգութ, Եւ կարես՝ որպէս զարարիչ (ԼԱ,308):

Միջին հայերենում. Եւ զայս ասելով *ոչ թե* վասն փրկութեանն հիւանդին, *այլ* զի առցէ զծի նորա [13,26]:

Արևմտահայերենում. Ձեր ըրածը *ոչ թե* զրպարտություն, *այլ* բացարձակ ճշմարտություն է (ԽԲ,210):

Արևելահայերենում. -*Ոչ թե* նրա համար, որ ես մի առանձին համակրություն ունեի դեպի քրիստոնեությունը, ո՛չ, *այլ* առավելապես այն պատճառով, որ քրիստոնյաները մեզ համար լավ հպատակներ էին... (ԽԶ,487):

Բ. Ժխտական հակադրությամբ բնորոշվող բարդ նախադասություններում, սակայն, ավելի մեծ հաճախականություն ունի մասնակի ժխտումը:

Այս կարգի նախադասությունների հակադիր եզրերն ունենում են միևնույն ենթական և տարբեր ստորոգյալներ: Ժխտումը վերաբերում է ստորոգյալին: Ստորոգյալը կարող է ունենալ լրացումներ: Ըստ այդմ`

ա) ժխտվում է միայն ստորոգյալը, բայց ո՛չ լրացումները:

Գրաբարում. ...Եւ Դեմետրիոս *ոչ գնաց* առ եղբայրն իւր ի Բաբելոն, *այլ* յԱսիաստան անցանէ (Խ,53):

Միջին հայերենում. Ջի արքայն *ոչ է մեռեալ*, *այլ* ննջէ (ԻԴ,74):

Արևմտահայերենում. *Էակ չէր* նե, *այլ* հուր, շունչ, ժըպիտ, ցավ... (Ը,29):

Արևելահայերենում. *Ոչ թե* ոչինչ *չկարողացա կարել*, *այլ* կարել չգիտեի... (Լ,212):

բ) ժխտվում է միայն ստորոգյալը` իր լրացումներով, այսինքն` առաջին բաղադրիչից ըստ էության մնում է միայն ենթական (իր լրացումներով, եթե կան):

Գրաբարում. Քանզի *ոչ են* սոքա *որդիք* ազգածնինն Արամենակայ, *այլ* են եկեալ ի ճենաստանէ... (Խ,56):

Միջին հայերենում. Թէ հանդերձն երկայն է, *ոչ կարէ վազել*, *այլ* պարտ է կամ կտրել կամ ի վեր վազել [13,267]:

Արևմտահայերենում. ...Վասնզի ունինք հեղինակներ, որոնք... կը ներկայացնեն իրենց անձերն *ոչ թե ինչպես որ են*, *այլ* ինչպես որ կուզեն իրենք, որ ըլլան անոնք (ԼԸ,74):

Արևելահայերենում. Բեշիրը գալիս է *ոչ թե* Բյուրականը *գրավելու*, *այլ* կաթողիկոսին ձերբակալելու (ԻԹ,183):

գ) ժխտումը կարող է վերաբերել ենթակային:

Գրաբարում. *Ոչ ինքն* եկեալ այսր, *այլ* զիրաման նորա... (ԻԱ,222):

Միջին հայերենում. *Ոչ թէ եկեղեցին* սոնիցս է, *այլ* սոնքն եկեղեցւոյն [13,268]:

Արևմտահայերենում. ...*Ոչ թե ես*, *այլ* համակիր թաղեցիները, -ճշտել տվավ Թորգոմ (ԾԲ,608):

Արևելահայերենում. Կարծում են, թե կարևորը *Ապրա՛նքը չէ*, *Այլ*... պիտակը... (ԽԲ,185):

դ) ժխտումը կարող է վերաբերել նաև լրացումներին:

Գրաբարում. *Ոչ* միում գիւղի կամ միում քաղաքի, *այլ* ամենայն աշխարհաց (ԺԸ,86):

Միջին հայերենում. *Ոչ* արհամարհելոյ աղագաւ ենք այնպիսի` *այլ* պատուոյ... (Է,73):

Արևմտահայերենում. Եթե ուրիշ մեկը ըլլար` *ոչ թե* մեկ ոսկիով, *այլ* նույնիսկ տասը ոսկիով ալ բերանս չէի բանալ... (ԾԲ,463):

Արևելահայերենում. Ու թե մահը անխուսափ է` Թող նա տանի *ոչ* հերոսին, *այլ* մարդուկին (ԽԲ,375):

Եթե առկա են ժխտվող բազմակի անդամներ, ժխտումը կատարվում է ոչ...ոչ կրկնադիր շաղկապով:

Գրաբարում. *Ոչ* են բանք և *ոչ* են խօսք, որոյ ոչ լսին ձայնք նոցա. *այլ* նոցա ընդ ամենայն երկիր ել բարբառն, և մինչև ՚ի ծագս տիեզերաց են խօսք նոցա (Ե,136):

Միջին հայերենում. Այրէ իսպառ, բայց ոչ ծախէ, անհատ պահէ միշտ ի յերեր, *Ոչ* զամս հազար և կամ զերկուս, և *ոչ* հարիւր հազար բիւրեր, *Այլ* անվախճան է և աներբ, և յաւիտեան անպարաբեր...(ԼԷ,188):

Արևմտահայերենում. Հոն կա մահ բունյալ *ոչ* քու անձիդ, *ոչ* քու տոհմիդ միայն, *այլ* բոլոր հայ ազգին...(ԻԲ,305):

Արևելահայերենում. Այս զորագունդը *ոչ* պետ ունի, *ոչ* զլխավոր, *այլ* մի ինչ-որ խարազանազգեստ մարդ...(ԻԹ,183):

Ժխտման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև բարդ համադասական նախադասության երկրորդ մասի վերաբերմամբ: Այդպիսի հարաբերությունն արտահայտվում է *ոչ թե, և ոչ թե* շաղկապներով, որոնք դրվում են երկրորդ նախադասության սկզբում:

Գրաբարում. Տկար է ի կանայս, *այլ ոչ* ծառայէ տարերց (ԻԱ,432):

Միջին հայերենում. ...զՏունկ ի պտղոյ է արժան ճանաչել, *և ոչ* ի տեսակէ (Է,54):

Արևմտահայերենում. Մենք հանդեսի և տոնախմբության համար հոս եկանք *և ոչ թե* գինին արյան հետ խառնելու...(Թ,256):

Արևելահայերենում. Ես ծախող եմ, *ոչ թե* առնող (ԽԲ,418): Բայց դա միավորների գումար է, *այլ ոչ թե* միավորում (ԻԷ,327):

Ինչպես երևում է, ժխտման ներհակությամբ բարդ համադասական նախադասությունների յուրահատկությունն այն է, որ նրանցում պարտադիր կերպով առկա է հակադրվող եզրերից մեկի ժխտում և մյուսի հաստատում:

Ժխտում առկա է նաև տրոհական հարաբերություն արտահայտող բարդ համադասական նախադասություններում:

Տրոհական հարաբերություն են արտահայտում այն բարդ համադասական նախադասությունները, որոնցում թվարկվող իրողություններն ու ենթադրությունները անհամատեղելի են կամ ընդհանրապես, կամ էլ տվյալ իրադրության մեջ: Ըստ այդմ էլ տրոհական հարաբերություն արտահայտող բարդ համադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի. 1) փոխադարձաբար միմյանց բացառող և 2) փոփոխակի հաջորդականությամբ իրար փոխարինող [30,63]: Ժխտում առկա է առաջին տիպի նախադասություններում: Սրանք այնպիսի կառույցներ են, որոնցում երբ ընդունվում է փաստերից մեկը, մյուսը բնականաբար ժխտվում է: Թվարկվող հավանական ենթադրություններից կամ ցանկություններից մեկը միայն կարող է լինել իրական, ընդունելի կամ կատարելի: Այս հարաբերության արտահայտման համար օգտագործվում են *կամ* շաղկապը (մենադիր կան կրկնադիր

գործածությամբ), նրա հոմանիշները՝ *կամ թե, կամ թե չէ, կամ էլ, և կամ թե*, ինչպես նաև *թե* շաղկապը:

Գրաբարում. *Կամ* տո՛ւր զապստամբսդ ի մեզ, *կամ թէ ոչ*՝ զերկիրդ գերի տանիմք (ԺԸ,96):

Միջին հայերենում. Թէ չի կայր սէր յաշխարհս *կամ* սէր չէր եղեալ, արարիչն առ մարդիկ սէր երբ ցուցանէր (ԾԳ,16):

Արևմտահայերենում. -Օրիորդ, մեր գունդին կամքն այս է, որ կամ հիմա հանձն առնուս ամեն իշխանություն, *կամ թե ոչ*, որոշ հայտնես և մենք գիտենք ընելիքնիս (ԻԲ,151):

Արևելահայերենում. ...Իսկ վերջին դարերում սարսափի, կոտորածի հետ միաժամանակ կկարդաք. «ս. պատրիարքը գնաց մեծ եպարքոսի մոտ, նրան հավաստիացրին, որ արդեն կարգադրություն է եղած խաղաղությունը վերականգնելու և չարագործներին պատժելու, *կամ թե չէ*՝ պատրիարքը հրաժարական տվեց...» (ԺԶ,425):

Փոխադարձ բացառման հարաբերությունը պայմանահակադրական երանգ է ստանում, երբ երկրորդ համադասում նկարագրվող ոչ ցանկալի հետևանքը ներկայացվում է որպես առաջին համադասում արտահայտված ցանկության կամ պահանջի հնարավոր անտեսման արդյունք: Այս իմաստային հարաբերության առկայության դեպքում *կամ*, մանավանդ *կամ թե չէ* շաղկապները հոմանիշ են դառնում *այլապես, ապա թե ոչ, եթե ոչ, հակառակ դեպքում* շաղկապներին:

Օրինակ՝ Կատարիի հանձնարարված աշխատանքը, կամ հաշտվիր նկատողություն ստանալու մտքի հետ (=իսկ եթե չկատարես հանձնարարված աշխատանքը, ապա հաշտվիր...) [30,64]:

3. ԺՆՏՈՒՄԸ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բարդ ստորադասական նախադասություններում ժխտումն արտահայտվում է մի շարք կապակցություններում:

Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցություններում ժխտումն արտահայտվում է *ոչ այլ ինչ...եթե ոչ, ոչ այլ ինչ...քան, ոչ այլ ոք...եթե ոչ* կաղապարներով: Սա բնորոշվում է նրանով, որ բացառման սկզբունքով գերադաս բաղադրիչում օտարվում են ընդհանուր, չտարբերակված առարկան, երևույթը, իրողությունը (*ոչ այլ ինչ*) կամ անձը (*ոչ այլ ոք*), ստորադաս բաղադրիչում՝ *եթե ոչ* բաղադրյալ շաղկապի օգնությամբ ներկայացվում են տարբերակված առարկան, երևույթը, իրողությունը կամ անձը:

Ստորադաս բաղադրիչի ստորոգյալը ևս բաղադրյալ է լինում՝ առավելապես զեղչված հանգույցով [45,295]:

Գրաբարում. *Ոչ այլ ինչ* կամի Սմբատ, *քան թէ* զարիւն քո... (ԻԱ,198):

Միջին հայերենում. *Ոչ այլ ինչ* առակս ցուցանէ՝ *բայց* զժամանակին գիտել զմարդիկ... (Է,95):

Արևմտահայերենում. ...Դիպվածով մը իմացած էր, որ թաթարը *ոչ այլ ոք էր, բայց եթե* ես (Բ,154):

Արևելահայերենում. Եվ սովորը *ոչ այլ ոք էր, քան* նա, ով խլել էր իր երջանկությունը... (ԺԲ,424):

Ժխտական կառուցվածքի *չէ՞ որ* շաղկապը կապում է այնպիսի պատճառական ստորադաս նախադասություն, որի մեջ առկա է նաև խոսողի որոշ անառարկելիության վերաբերմունքը. սրան նպաստում է հարցական հնչերանգը:

Չէ՞ որ շաղկապով կապված հարցական նախադասությունն իր հարաբերության իմաստով համանիշ է *քանի որ* շաղկապով կապակցությանը:

Օրինակ՝ Մենք ժամանակին պիտի վերջացնենք այս աշխատանքը, *չէ՞ որ* պարտավորվել ենք: Մենք ժամանակին պիտի վերջացնենք այս աշխատանքը, *քանի որ* պարտավորվել ենք: Այս շաղկապով կապակցվող նախադասությունները զգալի չափով ինքնուրույնություն ունեն, որի պատճառով էլ գրավոր խոսքում հաճախ գերադաս նախադասությունից բաժանվում են միջակետով:

Օրինակ՝ Ճշմարիտ է, ամեն ճակատամարտում էլ Աշոտ թագավորը հաղթող էր հանդիսանում, բայց այդ միևնույնն է. *չէ՞ որ* հայոց զորքերից էլ շարունակ ջարդվում էին [7,177]:

Ըղծական եղանակի գործածության հետաքրքրական օրինաչափություն է նկատվում *այնքան...որ, այնպես...որ, այնպիսի(ն)...որ* կապակցական կաղապարներով ձևավորված բարդ ստորադասական նախադասություններում, որտեղ, որպես կանոն, երկրորդականում, անկախ նրա բնույթից, միշտ զգալի է հետևանքի երանգը: Այս կառույցներում երկրորդական նախադասության ստորոգյալի ըղծական եղանակով գործածությունը պայմանավորված է լինում գլխավոր նախադասության սահմանական եղանակով արտահայտված ստորոգյալի ժխտական խոնարհմամբ: Այլ կերպ ասած, եթե գլխավոր նախադասության ստորոգյալը ժխտական ենք դարձնում, ապա երկրորդական նախադասության սահմանական եղանակով արտահայտված ստորոգյալը դրվում է ըղծական եղանակով, ըստ որում եթե այն արտահայտված է եղել դրական խոնարհմամբ, ապա այս դեպքում հանդես է գալիս ժխտական խոնարհմամբ, իսկ եթե արտահայտված է եղել ժխտական խոնարհմամբ, ապա հանդես է գալիս դրական խոնարհմամբ: Նկարագրվող կառույցներում գործողությունները ներկայացվում են նույն ժամանակային պլանում, սակայն նախորդման (գլխավոր) և հաջորդման (երկրորդական) հարաբերությամբ:

Նկատելի է նաև, որ երկրորդական նախադասության սահմանական եղանակի անցյալի ժամանակաձևերը փոխակերպումից հետո վերածվում են ըղծական եղանակի անցյալի, իսկ ներկա և ապառնի ժամանակաձևերը՝ ըղծական եղանակի ապառնի ժամանակի: Համեմատենք հետևյալ օրինակները, որտեղ դրսևորված են նշված փոփոխությունները.

Նա այնպես *երգեց*, որ *հուզվեցինք*: -Նա այնպես *չերգեց*, որ *չհուզվեցինք*:

Նա այնպես *երգեց*, որ *չհուզվեցինք*: -Նա այնպես *չերգեց*, որ *հուզվեինք*:
Նա այնքան *երգեց*, որ ձայնը *խզվեց*: -Նա այնքան *չերգեց*, որ ձայնը *չխզվեր*:
Նա այնքան (=միայն այնքան) *երգեց*, որ ձայնը *չխզվեց*: -Նա այնքան *չերգեց*,
որ ձայնը *խզվեր*:

Կամ՝

Նա *այնպիսին է*, որ բոլորին *օգնում է*: -Նա *այնպիսին չէ*, որ բոլորին *չօգնի*:
Նա այնպիսի *տղա է*, որ բոլորին *օգնում է*: -Նա այնպիսի *տղա չէ*, որ բոլորին
չօգնի:

Նա այնքան տեսոր *բերեց*, որ բոլորին *բավարարեց*: -Նա այնքան տեսոր
չբերեց, որ բոլորին *չբավարարի* [30,123]:

Նպատակի պարագա երկրորդականով արտահայտված իրողությունը միշտ հակառակ իմաստով է ընկալվում, եթե ժխտական է՝ դրական է ըմբռնվում, օրինակ՝ «Տիգրանի ակնարկը *բավականին թափանցիկ էր, որպեսզի* Արամը *չհասկանար* նրա մտադրությունը» (=ուստի Արամը *հասկացավ*) և «Տիգրանի ակնարկը *բավականին թափանցիկ չէր, որպեսզի* Արամը *հասկանար* նրա մտադրությունը (=ուստի *չհասկացավ*):

Նկարագրվող նպատակը հերքվում, կամ որպես անիմաստ ու անընդունելի է ներկայացվում՝ հաճախ դժգոհության երանգով, երբ գլխավոր նախադասությունը ձևավորված է լինում ժխտական կառուցվածքով կամ ժխտման արժեք ունեցող հռետորական հարցով, որով էլ հենց ժխտվում է այն հիմունքը, որը կարող էր նշված նպատակի իրականացման պատճառը դառնալ: Նման կառույցներում, որոնք մասնավորապես հատուկ են կենդանի խոսակցական լեզվին, երկրորդական նախադասությունն անուղղակիորեն հետևանքի նշանակություն է ստանում: Օրինակ՝ Նա *հիմար չէ*, որ քեզ լսի (=Նա հիմար չէ, ուստի քեզ չի լսի):

Չլինի թե վերաբերականով ոչ գանկալի նպատակի հարաբերություն է արտահայտվում: Այն *որպեսզի* շաղկապով փոխարինելիս երկրորդականի ստորոգյալը պարտադիր ժխտական ձևով է դրվում: Օրինակ՝...Վախենում էր՝ *չլինի թե* թագուհին նորից վրդովվի (=որպեսզի չվրդովվի) (ԻԹ,57):

4. ԺԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԻՄԱՍԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

Հայերենում ժխտական նախադասություններն ըստ իրենց կառուցվածքի և արտահայտած իմաստի կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ հարցական-ժխտական, հարցական-ժխտական-հաստատական, ժխտական-հաստատական և հաստատական-ժխտական նախադասություններ:

Այս կարգի նախադասությունների ձևավորմանը մեծապես նպաստում է հնչերանգը, որը կարող է նախադասության իմաստի փոփոխման պատճառ դառնալ:

1. Հարցական-ժխտական նախադասություններ: Սրանք կառուցվածքով ժխտական, հարցում արտահայտող նախադասություններն են, որոնք տրվում են պատասխան ստանալու, չկատարված գործողության պատճառն իմանալու համար:

Գրաբարում. Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ բորբոքիս, *զի՞ չչիջանիս...* (Ժ,16):

Միջին հայերենում. *Է՞ր չէ* փեսայն ի խորանի, կամ փեսաւէրքն՝ ի տաճարի (ԼԷ,80):

Արևմտահայերենում. -*Չե՞ս սիրեր* գեղեցիկ կնոջ մը երեսը նայիլ, երբոր փողոցը հանդիպիս, -հարցուց ինծի (ԺԳ,79):

Արևելահայերենում. -Ի՞նչ ես կարծում, ես *չէի՞ մոլորվի* այդ լաբիրինթոսի մեջ (ԽԶ,396):

2. Հարցական-ժխտական-հաստատական նախադասություններ: Սրանք կառուցվածքով հարցական-ժխտական են, բայց հաստատական իմաստ են արտահայտում, որը մեղմացվում է հարցական հնչերանգի միջոցով:

Գրաբարում. Ո՞չ հայրն քո վասն այսր ամբարշտութեան՝ ի կորուստ մատնեցաւ (Ե,174):

Միջին հայերենում. *Ոնց չես խղճալ* աղամորդուն (ԻԵ,13):

Արևմտահայերենում. Եվ այս *չէ՞* միթե մեծ մասով բոլոր սերերու պատմությունն ալ... (ԺԳ,128):

Արևելահայերենում. Մարդ *չտեսնի՞* բոլորի դեմքերը, *չիմանա՞* նրանց անունները, թեկուզ մի անգամ լսած *չի՞նի՞* նրանց ձայնը (ԺԲ,251):

3. Ժխտական-հաստատական նախադասություններ: Սրանք կառուցվածքով ժխտական են, իմաստով՝ հաստատական: Երբեմն հաստատական իմաստին նպաստում է հարցական հնչերանգը, որը ցույց է տալիս ժխտական կառուցվածքի հակառակ իմաստով հանդես գալը:

Գրաբարում. Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արծակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապիոյ... (Ե,296):

Միջին հայերենում. Թէ *չի կայր* սէր յաշխարհիս կամ սէր չէր եղեալ, արարիչն առ մարդիկ սէր ե՞րբ ցուցանէր (ԾԳ,16):

Արևմտահայերենում. Հիմար հավուն պես զլուխնիս փոխանակ ծածկելու տեղ *ինչո՞ւ չելնենք* թշնամվոյն դեմ հարծակինք... (ԻԲ,263):

Արևելահայերենում. Ինչե՞ր *չայտի անենք*, եթե մեր ձեռքն ընկնի այդ մի կաթսա ոսկին (ԺԴ,244): Էլ դեղ չմնաց, որ փորը *չածեց*, էլ հեքիմ չմնաց, որին *չհիմեց* (Լ,29):

4. Հաստատական-ժխտական նախադասություններ: Սրանք ձևով հաստատական են, բայց հարցական հնչերանգի շնորհիվ արտահայտում են ժխտական իմաստ:

Գրաբարում նմանատիպ օրինակների չենք հանդիպել:

Միջին հայերենում. Երկու տերանց *ո՞վ կարաց ծառայել*, որ դուն կարենաս [13,243]:

Արևմտահայերենում. Քաջասիրտ զինվորի մը աղջկանը *կը վայլե՞ վախնալ*, հայր իմ (Թ,200):

Արևելահայերենում. ...Ստածում էր ինքն իրեն թագուհին և փափագում, որ իշխանը չներկայանա իրան... Բայց *մի՞թե* այդ *հնարավոր էր* (ԻԹ,152):

Արևելահայերենում տարածված է հաստատական վերաբերականներով ժխտման սաստկացումը, ինչպես՝ -Տիկին, մի՞թե չեք զգում նրանց բուրմունքը: -*Իհարկե, չեմ զգում* (ԼԶ,20): Կարո՞ղ է և իրավունք ունի՞ արդյոք անարգել այդ հավատը և գայթակղության քար դառնալ ժողովրդի համար: -*Հարկավ ոչ* (ԻԹ, 81):

Երբեմն հաստատական նախադասությունները ժխտական իմաստավորում են ստանում հեզնական հնչերանգի միջոցով, ինչպես՝ «Տղադ գնա՞ց գյուղ»: -Հա՛, վազեց...(այսինքն՝ «չգնաց»), կամ «Աղջիկդ ընդունվե՞ց համալսարան»: -Հա՛, ընդունվեց...(այսինքն՝ «չընդունվեց»):

5. ԺՆՏՈՒՄԸ ՊԱՅԱՍԱՆԱՀՇԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենում ժխտումը պայամանահետևանքային նախադասությունների երեք տիպ է ձևավորում:

1. Կառույցներ, որոնց երկու եզրերն էլ ժխտական են: Այս տիպի նախադասություններում ժխտական պայմանը ենթադրում է ժխտական հետևանք: Սա կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝ $\bar{a} \rightarrow \bar{a}$:

Գրաբարում այս տիպի նախադասությունների չենք հանդիպել:

Միջին հայերենում. Եթե *ոչ էի* կակղուղէ՛շ՝ բառնալ *ոչ կարէի*...(Է,51):

Արևմտահայերենում. Մարդ եթե *չի խրատվի* յուր հարց...օրինակեն, *չուսնիր* նոցա պատմությունը...(ԻԲ,636):

Արևելահայերենում. Ինձ թվում էր, թե վրեժխնդրությունս *չի հագենալ*, եթե Արարատի ահավոր ժայռերը նրա գլխին *չկուտակեմ*...(ԻԹ,288):

Այս տիպի նախադասություններն ըստ էության կրկնակի ժխտմամբ հաստատական իմաստ են արտահայտում:

2. Կառույցներ, որոնցում ժխտական պայմանը ենթադրում է դրական հետևանք, այսինքն՝ $\bar{a} \rightarrow a$:

Գրաբարում. Սակս որոյ եթե *ոչ մատուցես* զոհս աստուածոց մերոց, *մահապարտ ես* դու և զօրականքդ քո ի միասին (ԻԳ,104):

Միջին հայերենում. Եթե այր ոք *ոչ լինիցի* ի գործ արութեան, և կինն *ելանէ* ի նմանէ (ԻԵ,96):

Արևմտահայերենում. Եթե դու *չըլլայիր*, Տիրան, ես հիմա հանգիստ քուն *կը քնանայի*...(Թ,14):

Արևելահայերենում. ...Եթե *չվճարենք* պահանջված հարկը, ծեծելով *կառնեն* (ԽԶ,411):

3. Կառույցներ, որոնցում դրական պայմանը ենթադրում է ժխտական հետևանք, այսինքն՝ $a \rightarrow \bar{a}$:

Գրաբարում. Ջի եթէ փութանակի *յաւելցես* ինձ զօր ի թիկունս իմ, ես *ոչ զանգիտեմ* ի մեռանելոյ... (ԻԳ, 144):

Միջին հայերենում մնան օրինակների չենք հանդիպել:

Արևմտահայերենում. Գործերնիս թերևս այս աստիճան *չգեշնար*, եթե սկիզբեն *խելք ըրած* ու քանի մը թուրք վկաներ *գտած ըլլայինք* (Բ, 23):

Արևելահայերենում. Եթե ինքը *շարժվեր*, Պապը *չէր համբերելու...* (ԺԵ, 118):

6. ԺԵՏԱԿԱՆ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում միակազմ են այն նախադասությունները, որոնցում առկա է նախադասության գլխավոր անդամներից միայն մեկը: Միակազմ նախադասությունները լինում են դիմավոր ու անդեմ, և ժխտումը կարող է դրսևորվել թե՛ դիմավոր, թե՛ անդեմ նախադասություններում:

Դիմավոր միակազմ նախադասություններից ժխտումը դրսևորվում է ընդհանրական դիմավոր նախադասություններում, ինչպես՝ Արյունը արյունով *չեն լվանա*: Հին դարմանը *քամուն չեն տա*. Մի ձեռքով երկու ձմերուկ *չեն բռնի*:

Անդեմ նախադասություններում ժխտումը դրսևորվում է նրա երկու տեսակներում՝ և՛ բայական, և՛ անվանական:

Բայական անդեմ միակազմ նախադասությունների գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով:

Օրինակ՝ *Չաղմկել*: *Չծխել*: *Չգիջել*:

Սրանք հիմնականում հրամայական հնչերանգով ձևավորվող հրաման, կոչ, կարգադրություն, ցուցում արտահայտող նախադասություններն են:

Բայական անդեմ նախադասություններն արտահայտում են նաև իղծ, ցանկություն, փափագ (...*Չսիրել*, *չխորհել*, *չափսոսալ*, հեռանալ...), երկընտրանք, երկմտություն (Լինե՞լ, թե՞ *չլինել*, -այս է խնդիրը), ճարտասանական հարցում (Ինչո՞ւ *չխոսել*) [45, 88]:

Ժխտական բնույթի անվանական նախադասությունները ցույց են տալիս անունով արտահայտված առարկայի, երևույթի գոյություն չունենալը: Ժխտական միակազմ անվանական նախադասությունների ժխտական բնույթը ձևավորվում է, նախ՝ *ոչ մի* դերանունով, որ դրվում է այն գոյականի վրա, որի ցույց տված առարկայի, երևույթի գոյությունը ժխտվում է, ինչպես՝ *Ոչ մի* ծառ: Նույնիսկ խոտը այնտեղ քիչ է դեղնած ու չորացած: *Ոչ մի* երկաթյա դուռ և *ոչ մի* պահակ աշտարակի գլխին (Դ, 135):

Երբ ժխտական միակազմ անվանական նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է գործողության իմաստ ունեցող կամ այդպիսի իմաստ ենթադրող

գոյականով, նախադասությունն արտահայտում է գործողության չկատարում, տվյալ գործողության բացարձակ բացասում, ինչպես՝ *Ոչ մի զիջում*: Բոլորս կկործանվենք, եթե չմիավորվենք:

Տարածված են նաև ժխտման կրկնություն ունեցող կամ բազմակի ժխտում արտահայտող միակազմ նախադասությունները: Ժխտումն այս դեպքում արտահայտվում է *ոչ...ոչ* շաղկապով, ինչպես՝ Երբեմն շրջվում էր և նայում ետ: Ոչ ոք, ոչ մի շունչ, *ոչ* գազան, *ոչ* թռչուն: Այլևս *ոչ* սարսափ, *ոչ* մահ [7,73-74]:

ԺՄՏԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Միակազմ նախադասությունների մի հատուկ տեսակ է բառ-նախադասությունը, որն արտահայտվում է մեկ բառով [7,74]:

Ռուս լեզվաբանության մեջ այս տիպի նախադասությունները կոչվում են չտրոհվող նախադասություններ. «Դրանք կազմված են մեկ բառից, այդ պատճառով էլ կոչվում են նաև բառ-նախադասություններ» [64,114]:

Ժխտական բառ-նախադասությունը խոսակցի ժխտական պատասխանն է խոսողի հարցումին, նրա անհամաձայնությունը խոսողի և իր իսկ մենախոսության մեջ արտահայտված մտքերին ու պնդումներին: Ժխտական բառ-նախադասությունը երեք ենթատեսակ ունի. *բուն ժխտական*, որ խոսողի հարցման ժխտական պատասխանն է, *անհամաձայնական*, որ արտահայտում է անհամաձայնություն ասվածի նկատմամբ, և *մենախոսական*, որ բացասումն է ասվածի [9,291]:

Բուն ժխտական բառ-նախադասությունն արտահայտվում է *ոչ, չէ* բառերով:

Գրաբարում. Պատասխան ետուն ամենեքեան և ասեն. «Նշան զինչ ո՞չ տեսեր»: Նա պատասխանեալ՝ *ոչ* (ԻԳ,78):

Միջին հայերենում նման օրինակների չենք հանդիպել:

Արևմտահայերենում. Թեթևա՞վ քիչ մը ցավը: -*Ոչ* (ԼԸ,110):

Արևելահայերենում. -Դեռևս որևէ գործ գտած չե՞ս: -*Ոչ* (ԽԷ,132): -Սոված չե՞ս: -*Չէ* (Լ,29):

Անհամաձայնական բառ-նախադասությունը խոսողներից մեկի խոսքի բովանդակության բացասումն է և ոչ թե հարցի: Այս տիպի նախադասությունները հաճախակի հանդիպում են աշխարհաբարում: Գրաբարում և միջին հայերենում նման նախադասությունների չենք հանդիպել:

Արևմտահայերենում. ...*Ոչ, ոչ*. երբեք չվախճանիս պիտի դուն... (ԽԴ,284):

Արևելահայերենում. -*Ոչ*, անկարելի է. չեմ կարող ապրել, քանի որ նա մեռնում է... (ԻԹ,216): -*Չէ*, իշխան, դու թագավորի մտերիմն ես, իմ էլ անշուշտ, անկեղծ բարեկամը. կվայլե, որ դու իսկությամբ ծանոթանաս մեր թշնամության պատճառներին... (ԻԹ,87):

Անհամաձայնական ժխտական բառ-նախադասություններ են նաև՝ *հազիվ թե, բոլորովին ոչ (չէ), դժվար թե, քավ լիցի, աստված մի արասցե, աստված չանի, չեմ* (բարբառային): Սրանք արտահայատում են ոչ միայն ժխտում, այլև կասկած, անվճռականություն ժխտման նկատմամբ [10,291]:

Արևմտահայերենում. -*Ամենևին, ամենևին*, դուք ձեր հանգիստը նայեցեք... (ԼԸ,120):

-Սակայն չկարծեք, թե ես բաժանորդ գրելու նպատակով գծեզ տեսնելու եկա. *քավ լիցի*, այդ պզտիկությունը չեմ ընդունիր...(ԼԸ,11):

Արևելահայերենում. -Մարան նանի, ի՞նչ կանես, որ հավերիդ ձվամանը չորանա...Վո՛ւյ, մի՛ ասի, Բաղդո ջան: *Աստոճ ոչ անի* (Լ,82): Ես արգելք կարող եմ լինել: Այդպես չէ՞: -*Ամենևին ոչ* (Լ,220): -*Քա՛վ լիցի*, եթե համարձակվեմ այդ չափ լրբանալ քո առաջ...(ԻԹ,218):

Որպես պատասխանական բառ գործածվելով՝ ժխտական բառ-նախադասության արժեք է ստանում *բնավ* բառը:

Արևմտահայերենում. -Թե դուք ալ անոր քանի մը խոսք ըսեր եք... -*Բնավ* (ԼԸ,83):

Արևելահայերենում. -*Բնավ*, -ասաց Պապը: -Ունե՞ս ինչ ասելու (ԺԵ,210):

Մենախոսական ժխտական բառ-նախադասությունն իր իսկ սեփական մտածումների և խոսքերի բացասումն է:

Արևմտահայերենում. Թույնի տեղ ջո՞ւր խմեմ և մա՛հ կեղծեմ...*ոչ...ոչ...չե՛մ* կրնար... (Թ,438):

Արևելահայերենում. Ես չեմ հայցում երջանկություն, *Չէ՛*, Տանջում է ինձ հասարակ մի ցանկություն...(ԽԲ,339): Օ՛, *ո՛չ*, նա չի կարող թողնել իր զավակներին, իր տունը, իր Սաթենիկին (ԺԹ,45):

Բացի հաստատական և ժխտական բառ-նախադասություններից, կա և սրանց միասնական մի տեսակը, որ ոչ մեկն է, որ մյուսը, անորոշ է. խոսակիցը խոսողի հարցի կամ խոսքի նկատմամբ որոշակի պատասխան չունի, ուստի խույս է տալիս հաստատելուց կամ ժխտելուց [10,292]:

Օրինակ՝ -Մի՞թե ինձ չես հավատում, Նազենի... *Չգիտեմ* (ԺԵ,131):

Երբեմն հաստատական կամ համաձայնական բառ-նախադասությունն արտահայտվում է *ո՛չ*, *չէ՛* ժխտականներով, իսկ ժխտականը՝ *այո՛*, *հա՛* հաստատականներով:

Օրինակ՝ -*Չէ՛*, էս անգամ լավ ես: -*Այո*, չեմ ուզում:

Բառ-նախադասությունները կարող են ունենալ հարցական բնույթ, արտահայտել հարցում-զարմանք, կամ հարցում՝ համաձայնության նպատակով:

Արևմտահայերենում. Մարմին ու հոգի կուտայինք իրեն. միջա՞կ հասակով, *ո՞չ*. ուրեմն բարձրահասակ (ԺԳ,248):

Արևելահայերենում. -Չե՞ս տա: Ո՛չ : -*Ո՞չ* (ԼԸ,378): Ծանոթանա՞նք: Ղեռ *ո՞չ* (ԽԲ,262):

Այսպիսով՝ շարահյուսական մակարդակում ժխտումը դրսևորվում է և՛ պարզ, և՛ բարդ, և՛ երկկազմ, և՛ միակազմ, և՛ բառ-նախադասություններում. լինում է միակի, կրկնակի և բազմակի:

ԳԼՈՒԽ 3
ԺՆՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 1. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏԸ ԵՎ ԺՆՏՄԱՆ ՏԵՂԸ ԺՆՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենում նախադասության ընդհանուր իմաստի ձևավորման գործում մեծ դեր է կատարում տրամաբանական շեշտը: Միևնույն քերականական կառուցվածքն ունեցող նախադասության մեջ, այս կամ այն անդամի վրա դրվելով, տրամաբանական շեշտը կարող է փոխել ընդհանուր նախադասության իմաստը:

(1) *Բոլորը* չեն հանձնել աշխատանքը:

(2) Բոլորը *չեն հանձնել* աշխատանքը:

(1) Նախադասությունը, որտեղ տրամաբանական շեշտը գտնվում է «բոլորը» դերանվան վրա, ցույց է տալիս, որ կատարողների մի մասը հանձնել է աշխատանքը, այսինքն՝ աշխատանքի հանձնումը կատարվել է մասնակիորեն, ոչ լրիվությամբ: Տվյալ նախադասությանը համարժեք են հետևյալ երկու նախադասությունները.

Ոմանք հանձնել են աշխատանքը:

Ոմանք չեն հանձնել աշխատանքը:

Այս երկու նախադասությունները հոմանիշներ են, և յուրաքանչյուրն առանձին արտահայտում է երկու հակադիր իմաստներ, որոնցից յուրաքանչյուրը ճշմարիտ է, բխում է նախադասության կառուցվածքից: Երկու նախադասություններն էլ արտահայտում են և՛ հաստատում, և՛ նախադասության իմաստից տրամաբանորեն բխող ժխտում և հակառակը:

(2) Նախադասության մեջ, որտեղ շեշտը օժանդակ բայն է կրում, արտահայտված է ընդհանրական ժխտում, ինչից հետևում է, որ ոչ ոք չի հանձնել աշխատանքը:

Կամ՝

(1) Պետրոսը *չի մեկնում* Մոսկվա:

(2) Պետրոսը *չի մեկնում* Մոսկվա:

(3) Պետրոսը *Մոսկվա* չի մեկնում:

Բոլոր երեք նախադասություններն ունեն միևնույն կառուցվածքը, բայց տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով բոլոր երեք նախադասություններն էլ տարբեր իմաստներ են արտահայտում:

(1) Նախադասությունն արտահայտում է ընդհանրական ժխտում, քանի որ ստորոգյալը ժխտական է և կրում է նախադասության տրամաբանական շեշտը:

Այս նախադասությունը ենթադրում է գործողության կատարման բացառում՝ «Պետրոսը ոչ մի տեղ չի մեկնում», ժխտվում է ընդհանրապես գործողության կատարումը:

(2) Նախադասության մեջ տրամաբանական շեշտը կրում է «Պետրոսը» ենթական, հետևաբար ժխտումը մասնակի է, գործողության կատարումը լիովին չի ժխտվում, հնարավոր է նաև նրա կատարում, բայց ոչ Պետրոսի կողմից: Այստեղ լրիվությամբ բացառվում է Պետրոսի՝ Մոսկվա մեկնելը:

(1) և (2) նախադասությունները կառուցվածքով բացարձակապես նույնն են, բայց տրամաբանական շեշտի պատճառով արտահայտում են տարբեր իմաստներ:

(3) Նախադասության մեջ առկա է նաև բառերի շարադասության փոփոխություն. տրամաբանական շեշտի պահանջով «Մոսկվա» տեղի պարագան դրվել է ստորոգյալից առաջ: Այս նախադասության մեջ չի բացասվում Պետրոսի մեկնելու գործընթացը, բայց ժխտվում է հենց Մոսկվա մեկնելու գործողությունը: Այլ կերպ՝ Պետրոսը մեկնում է, բայց մեկնում է ո՛չ Մոսկվա, այլ որևէ այլ վայր: Այստեղ չնայած ստորոգյալը ժխտական կառուցվածքի է, բայց, տրամաբանական շեշտով պայմանավորված, արտահայտում է հակադիր իմաստ՝ գործողության կատարման հաստատում:

Տրամաբանական շեշտով պայմանավորված ժխտումը կարող է լինել ընդհանրական և մասնակի:

(1) Ես ձեզ լիովին *չհասկացա*:

(2) Ես ձեզ *լիովին* չհասկացա:

(3) Ես ձեզ *ոչ լիովին* հասկացա:

(1) Նախադասության մեջ առկա է ընդհանրական ժխտում, քանի որ տրամաբանական շեշտը կրում է ժխտական ստորոգյալը և «լիովին» բառն իր բառային իմաստով ընդհանրական է դարձնում ժխտումը:

(2) Նախադասության մեջ տրամաբանական շեշտն, ընկնելով «լիովին» բառի վրա, նախադասությանը հաղորդում է մասնակի ժխտման իմաստ: Այս նախադասությանը համարժեք է «Ես ձեզ մասնակիորեն հասկացա» նախադասությունը:

(3) Նախադասությունը հոմանիշ է (2) նախադասությանը, որտեղ փոխվել է ժխտման տեղը, այստեղ ժխտվում է ոչ թե ստորոգյալը, այլ «լիովին» պարագան (ոչ լիովին=մասնակիորեն) և կրկին ձևավորվում է մասնակի ժխտում արտահայտող նախադասություն:

Ընդհանրական ժխտական և մասնակի ժխտական նախադասությունները բնորոշվում են նրանով, որ նրանցում տրամաբանական շեշտն ընկնում է այն բառի վրա, որին անմիջականորեն ենթարկվում է ժխտումը [67,17]:

(1) Պետրոսը *ոչ բարձր* ծիծաղեց:

(2) Պետրոսը բարձր *չծիծաղեց*:

(1) Նախադասության մեջ ժխտումը մասնակի է, գործողությունը կատարվել է, ժխտումը վերաբերում է պարագային՝ գործողության կատարման ձևին:

(2) Նախադասության մեջ ժխտումն ընդհանրական է, վերաբերում է ստորոգյալին, այսինքն՝ ժխտվում է գործողության կատարումը:

Նախադասության իմաստի ձևավորման գործում մեծ է նաև ժխտման տեղի դերը, նայած թե ինչ անդամի վրա է դրվում ժխտումը, ըստ այնմ էլ փոխվում է նախադասության իմաստը:

(1) Կարող է դուր չգալ:

(2) Չի կարող դուր գալ:

(1) Նախադասության մեջ չի բացառվում դուր գալու հնարավորությունը: Նախադասության կառուցվածքից և ընդհանուր իմաստից տրամաբանորեն բխում է նաև «Կարող է դուր գալ» նախադասությունը:

(2) Նախադասության մեջ դուր գալու հնարավորությունը բացառվում է, քանի որ ժխտումը ստորոգյալի վրա է դրվել:

Ժխտման տեղով պայմանավորված իմաստափոխություն է առկա հետևյալ նախադասություններում.

(1) Նրանք տրամաբանության հիմնական օրենքներ չեն:

(2) Նրանք տրամաբանության ոչ հիմնական օրենքներ են:

(1) Նախադասության մեջ ժխտվում է նրանց՝ տրամաբանության հիմնական օրենքներ լինելը: Այս նախադասության մեջ հնարավոր է երկու եզրակացություն՝ նրանք տրամաբանության ոչ հիմնական օրենքներ են և նրանք ընդհանրապես տրամաբանության օրենքներ չեն:

(2) Նախադասության մեջ չի ժխտվում նրանց՝ տրամաբանության օրենքներ լինելը, ժխտվում է միայն հիմնական օրենքներ լինելը: Այսինքն՝ այս նախադասությանը համարժեք է «Նրանք տրամաբանության օրենքներ են, բայց ոչ հիմնական օրենքներ» նախադասությունը:

Ժխտական նախադասությունների արտաքուստ միանման շարահյուսական կառույցները կարող են ունենալ տարբեր իմաստներ:

(1) Ես ձեզ բոլորովին չհասկացա:

(2) Ես ձեզ լրիվ չհասկացա:

Երկու նախադասություններն էլ կառուցվածքով ընդհանրական ժխտական են, սակայն

(1) նախադասության մեջ, «բոլորովին» բառի իմաստով պայմանավորված, ժխտումն ընդհանրական է, (2)-ում, «լրիվ» բառի իմաստից ելնելով, մասնակի, ժխտումը վերաբերում է ոչ թե ստորոգյալին, այլ պարագային:

Եթե տրամաբանական շեշտը գտնվի ոչ թե «լրիվ» բառի վրա, այլ՝ «չհասկացա», կունենանք հոմանիշ ժխտական նախադասություններ:

Ժխտման իմաստաբանական նրբությունների ձևավորմանը որոշ դեպքերում մասնակցում են նաև կետադրական նշանները: Դա ակնառու է հատկապես անգլերենում:

Այսպես՝ I don't like it. => I don't like it, either. (Мне тоже это не нравится)=> I don't like it either. (Мне это не нравится тоже) [73]:

Առաջին նախադասության մեջ *ևս* (тоже, either) բառը վերաբերում է *ինձ* (мне, I) դերանվանը, երկրորդում՝ *դա* (это, it) բառին: Հայերեն համարժեքներն են՝ *Ինձ ևս* դա դուր չի գալիս: => Ինձ *դա ևս* դուր չի գալիս:

§ 2. ԺՆՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՀՈՍԱՆՇՈՒԹՅՈՒՆ

Հայերենում ժխտական կառույցներից ձևավորվում են հոմանշային շարքեր: Հոմանշության առաջացման նախապայման է ժխտման արտահայտությունը բառակազմական ու քերականական միջոցներով, ժխտման տեղը, տրամաբանական շեշտն ու հնչերանգը:

Բառական ու քերականական ժխտման հոմանշություն է դրսևորվում հետևյալ նախադասություններում.

(1) Նա *տոգեղ* է: <=> (2) Նա *գեղեցիկ* չէ:

(1) Հավասարումը *անհնար* է լուծել: <=> (2) Հավասարումը *հնարավոր* չէ լուծել:

(1) Փոքր հեռավորության վրա կշռի փոփոխությունն *աննկատելի* է: <=> (2) Փոքր հեռավորության վրա կշռի փոփոխությունը *նկատելի* չէ:

(1) Նախադասություններում ժխտումն արտահայտված է բառային մակարդակում՝ ժխտական նախածանցների միջոցով, իսկ (2) նախադասություններում՝ քերականական (շարահյուսական) մակարդակում՝ ժխտական խոնարհման միջոցով:

Ձևաբանական միջոցներով ժխտման հոմանշություն է դրսևորված հետևյալ նախադասություններում:

(1) Եթե *որևէ մեկը* չգա, ժողովը կհետաձգվի: <=> (2) Եթե *ոչ ոք* չգա, ժողովը կհետաձգվի:

Երկու նախադասություններում ընդհանրական ժխտումն ապահովվում է ժխտական ստորոգյալի միջոցով և ձևավորվում են հոմանիշ կառույցներ:

Բառերի շարադասության փոփոխությունը ևս հոմանշության պատճառ է դառնում:

Այդ ֆունկցիաները *ոչ գույգ, ոչ կենտ* կարելի է համարել: <=> Այդ ֆունկցիաները *ոչ գույգ* կարելի է համարել, *ոչ կենտ*:

Այդ ֆունկցիաները *ոչ գույգ, ոչ կենտ չի կարելի համարել*: <=> Այդ ֆունկցիաները *չի կարելի համարել ոչ գույգ, ոչ կենտ*:

Ժխտման տեղի փոփոխությամբ ևս ստանում ենք հոմանիշ շարքեր.

(1) Գնացքը միանգամից *չի ձեռք բերում* արագություն: <=> Գնացքը ոչ միանգամից է ձեռք բերում արագություն:

(2) Քանորդը միշտ չի հանդիսանում ամբողջական արտահայտություն: <=> Քանորդը ոչ միշտ է հանդիսանում ամբողջական արտահայտություն:

(1) Նախադասություններում հոմանշությունը ձևավորվում է ժխտման տեղով (միանգամից չի ձեռք բերում <=> ոչ միանգամից է ձեռք բերում):

(2) Նախադասության մեջ ժխտման տեղի հետ դեր է խաղում նաև տրամաբանական շեշտը (միշտ չի հանդիսանում): Տրամաբանական շեշտի՝ բայի վրա դրվելու դեպքում կունենանք ընդհանրական ժխտում (Քանորդը միշտ չի՝ հանդիսանում ամբողջական արտահայտություն):

Ժխտման տեղով է պայմանավորված հետևյալ նախադասությունների հոմանշությունը.

(1) Կարողացան բաց չթողնել: <=> (2) Չկարողացան բաց թողնել:

(1) Նախադասության իմաստից բխում է, որ գործողությունը կարողացան չկատարել, (2)-ի մեջ նշվում է, որ չկարողացան գործողությունը կատարել: (1) Նախադասության իմաստից բխում է, որ հարկ էր բաց չթողնել և այդ գործողությունը կատարվել է: (2) Նախադասության մեջ անհրաժեշտ էր բաց թողնել, բայց չկարողացան այդ գործողությունը կատարել: Արդյունքում երկու դեպքում էլ ունենք չկատարված գործողություններ և համապատասխանաբար՝ հոմանիշ կառույցներ:

Բացի տրամաբանական շեշտից ու ժխտման տեղից՝ ժխտական հոմանշային շարքեր ձևավորվում են պարզ ու բարդ նախադասությունների միջոցով:

Հոմանշային զույգ են ձևավորել հետևյալ պարզ ու բարդ նախադասությունները.

Պետրոսը Մոսկվայում չի ապրում: <=> Մոսկվայում չէ, որ Պետրոսը ապրում է:

Տրամաբանական շեշտի, ժխտման տեղի և նախադասության կազմության տեսակետից հոմանշային եռաշարքեր են ձևավորվում հետևյալ նախադասություններում:

Դուք լիովին չկատարեցիք ձեր պարտավորությունները: <=> Դուք ոչ լիովին կատարեցիք ձեր պարտավորությունները: <=> Լիովին չէ, որ դուք կատարեցիք ձեր պարտավորությունները:

Նման երևույթ *հաճախ* չի հանդիպում: <=> Նման երևույթ հանդիպում է *ոչ հաճախ*: <=> Հաճախ չէ, որ նման երևույթ հանդիպում է:

Ժխտման տեղով պայմանավորված հոմանիշներ են հետևյալ նախադասությունները.

Ես չեմ ուզում, որ նա ապրի գյուղում: <=> Ես ուզում եմ, որ նա չապրի գյուղում:

Ես չեմ կարծում, որ նա կընդունվի համալսարան: <=> Ես կարծում եմ, որ նա չի ընդունվի համալսարան:

Ես խորհուրդ չեմ տալիս ձեզ կարդալ այս գիրքը: <=> Ես խորհուրդ եմ տալիս ձեզ չկարդալ այս գիրքը:

Ես չեմ ուզում, որ նա գա: <=> Ես ուզում եմ, որ նա չգա:

Նա ունեցվածքը չբաժանեց հավասար մասերի: <=> Նա ունեցվածքը բաժանեց անհավասար մասերի:

Վերջին նախադասությունների հոմանշությունն արտահայտվել է ձևաբանական և բառային մակարդակներում ժխտման դրսևորման միջոցով:

(1) Ես հույս չունեմ, որ նա կգա: <=> (2) Ես հույս ունեմ, որ նա չի գա:

(1) Նախադասության մեջ գալու հավանականությունը փոքր է: Սրան համարժեք է «Ցանկալի է, որ գա» նախադասությունը:

Իսկ (2) նախադասության մեջ գալու հավանականությունը մեծ է, բայց «Ցանկալի է, որ չգա»:

Համանշտություն դրսևորվում է նաև միակազմ նախադասությունների մեջ:

Երբ բայը դրվում է ենթադրական եղանակի եզակի երկրորդ դեմքով, ցույց է տալիս ընդհանուր դատողություն, եզրակացություն որևէ գործողության կամ եղելության իրագործման հնարավորության (եթե բայը դրական ձևով է գործածված) կամ անհնարինության (եթե բայը ժխտական ձևով է գործածված) վերաբերյալ: Օրինակ՝ Չեմ հիշում, մտածում եմ ու չեմ հիշում: Տասը հազարից ավելի մարտիկներ կան գորամասում, բոլորին *չես հիշի*:

Հաճախ այս նույն միտքն արտահայտելու համար գործածվում են բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասություններ: Ստացվում է համանիշային հետևյալ զուգահեռ շարքը.

Տասը հազարից ավելի մարտիկներ կան գորամասում, բոլորին *չես հիշի*: <=> Տասը հազարից ավելի մարտիկներ կան գորամասում, բոլորին *հնարավոր չէ հիշել*:

Միակազմ անդեմ նախադասություններից համանիշների շարքում հանդիպում են հատկապես հրաման, կարգադրություն արտահայտող բայական անդեմ նախադասությունները:

Երբ բայական անդեմ նախադասություններով հրամայվում, կարգադրվում է չկատարել որևէ գործողություն, նրանք ավելի համապատասխանում են բայի ըղծական եղանակի ժխտական ձևով արտահայտված հրամայական նախադասություններին: Դա հետևանք է այն երևույթի, որ ըղծական եղանակի ժխտական ձևերը հատուկ հնչերանգով ավելի կտրուկ հրաման են արտահայտում, քան բուն արգելական հրամայականի ձևերը (հմտ. *մի՛ գնա* և *չգնա՛ն*): Բայական անդեմ նախադասություններում ևս հրամանն ավելի ուժեղ, կտրուկ է արտահայտվում, քան բուն հրամայական եղանակով դրսևորված բայ-ստորոգյալ ունեցող նախադասություններում:

Օրինակ՝ *Չաղմկել*: <=> *Չաղմկե՛ք*: <=> *Մի՛ աղմկեք*:

Երբ անդեմ նախադասություններով գործողության կատարման վերաբերյալ արտահայտված կասկածանքը, երկվությունը, համապատասխան խոսքային միջավայրում վերաբերում է նաև երկրորդ դեմքին, այս դեպքում որպես համանիշ կարող է գործածվել ըղծական եղանակի ապառնի ժամանակի երրորդ դեմքի բայով կազմավորված երկկազմ նախադասություն:

Օրինակ՝ Օլիմպիան կանգ առավ. *մտնե՛լ, թե՞ չմտնել*: <=> Օլիմպիան կանգ առավ.- *մտնի՞, թե՞ չմտնի*:

Ժխտական կառուցվածք ունեցող անվանական միակազմ նախադասությունը ևս կարող է ունենալ իր համանիշը: Այսպես՝ երբ ժխտական անվանական անդեմ նախադասությունը կազմված է լինում *ոչ մի* ժխտական դերանունից և անուն խոսքի մասից, ապա այդ նույն ժխտումը կարող է դրսևորվել *ոչ մի* դերանվան հետ գործածելով

նաև *չկա (չկար)* ժխտական կազմություն ունեցող բայ-ստորոգյալը, որը դրվում է անուն խոսքի մասից առաջ:

Օրինակ՝ *Ոչ մի ծառ: Ոչ մի ստվեր:* <=> *Ոչ մի ծառ չկա: Ոչ մի ստվեր չկա:*

Երբ անվանական նախադասությունը բարդ համադասական է, նրա ժխտականը կարող է կազմվել նաև միայն *ոչ* ժխտական մասնիկի միջոցով, որը դրվում է յուրաքանչյուր նախադասության սկզբում:

Օրինակ՝ Ու լռություն: *-Ոչ լաց և ոչ կական:* <=> Ու լռություն: *-Ոչ լաց կա և ոչ կական:*

Այս համանիշ նախադասությունների տարբերությունն այն է, որ անվանական անդեմ կառուցվածքի դեպքում ժխտումն ավելի ցայտուն է դրսևորվում, քան երկկազմ կառուցվածքի դեպքում:

Նախադասության մեջ ստորոգյալը կարող է զեղչվել: Երբ զեղչված ստորոգյալը տարբերվում է նախորդից ժխտական առումով, այդ դեպքում թերի նախադասության մեջ զեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է *ոչ* մասնիկը և կամ ժխտական նշանակությամբ որևէ բառ (*բոլորովին, ամենևին*): Օրինակ՝ Ես վերջացրի, իսկ նա՝ *ոչ*: <=> Նա *չվերջացրեց*:

Համանշություն դրսևորվում է նաև հրամայական և ըղծական եղանակների միջև:

Երբ խոսողը հրամայում, կարգադրում, հանձնարարում է որևէ մեկին կամ շատերին որևէ գործողություն չկատարել, այսինքն՝ երբ հրամանն ունի արգելման բնույթ, հրամայական բայածևերի փոխարեն հաճախ գործածվում են ըղծական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքի ժխտական ձևերը, որոնցով կազմված հրամայական նախադասությունները համանիշ են առաջիններին:

Օրինակ՝ *-Չշարժվես*, -խստորեն պատվիրեց նա: <=> *Մի՛ շարժվիր*, -խստորեն պատվիրեց նա:

Երբ արգելման հրամանն ուղղված է ոչ թե մեկին, այլ շատերին և ունի որոշ ընդհանրական իմաստ, անորոշ դերբայի ժխտական ձևերի և արգելական հրամայականի փոխարեն դարձյալ կարող են գործածվել ըղծական եղանակի հոգնակի երրորդ դեմքի ժխտական բայածևերը՝ ստեղծելով նախադասությունների եռանդամ շարք:

Օրինակ՝ *Չաղմկելի: <=> Մի՛ աղմկեք: <=> Չաղմկեք:*

§ 3. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺՆՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ

Հոմանշային շարքեր ձևավորվում են ոչ միայն ժխտական, այլև ժխտական ու հաստատական կառույցների միջև: Այս դեպքում հոմանշության հիմքը բառերի իմաստներն են:

Օրինակ՝ Նշանակությունը *չի փոխվի*: <=> Նշանակությունը *կպահպանվի*:

Պայմանները *նույնը չեն*: <=> Պայմաններն *ուրիշ են*:

Տարբեր բառական միջոցների, առանձնապես եղանակավորող բառերի և դերանունների կիրառության ենթ հանդիպում հատկապես դրական և ժխտական կառուցվածք ունեցող հոմանիշ նախադասությունների մեջ: Օրինակ՝ Մի՞թե դրանից ավելի թշվառ, ավելի ողորմելի մարդ կա աշխարհիս երեսին: <=> Դրանից ավելի ողորմելի, ավելի թշվառ մարդ չկա աշխարհիս երեսին [46,40]:

Հոմանշություն է դրսևորվում նաև հետևյալ նախադասություններում.

-Ես չեմ ջղայնանում:

(1) -Ո՛չ, ջղայնանում ես:

(2) -Այո՛, ջղայնանում ես:

(1) Նախադասության մեջ ժխտվում է խոսակցի ասածը, (2) նախադասության մեջ հաստատվում է խոսողի ասածը և երկու դեպքում էլ ժխտվում է խոսակցի ասածը. արդյունքում ստացվում են հոմանիշ կառույցներ:

Հայերենում հարցական նախադասությունների պատասխանը կարող է տրվել և՛ ժխտական ո՛չ բառով, և՛ հաստատական այո՛ բառով, որոնք ժխտական պատասխանի դեպքում դրվում են ժխտական ստորոգյալի վրա:

Օրինակ՝ -Մի՞թե երեկ չեք խոսել նրա հետ:

-Ո՛չ, չեմ խոսել:

-Այո՛, չեմ խոսել:

Հաստատական պատասխանի դեպքում կունենանք հետևյալ ձևերը.

-Ո՛չ, խոսել եմ:

-Այո՛, խոսել եմ:

Երկու նախադասություններում հաստատվում է գործողության կատարված լինելը:

Ռուսերենում ժխտական ուր բառը դրվում է և՛ դրական, և՛ ժխտական ստորոգյալների հետ.

-Разве вы не говорили с ним вчера?

-Нет, говорил.

-Нет, не говорил.

Անգլերենում դրական պատասխանի դեպքում դրվում է yes, ժխտականի դեպքում՝ no բառը:

-Didn't you speak to him yesterday?

-Yes, I did.

-No, I didn't. [66,400]:

Այսպիսով՝ եթե հայերենում և ռուսերենում ազատ է ո՛չ (нет) բառի գործածությունը դրական և ժխտական ստորոգյալների հետ, ապա անգլերենում ուր բառն ունի իր կայուն տեղը՝ դրվում է ժխտական ստորոգյալի հետ:

Համանշություն դրսևորվում է նաև միակազմ նախադասություններում: Հաճախ միակազմ նախադասություններն ունենում են հարցական հնչերանգ, որը, սակայն, նախադասությանը տալիս է ոչ թե հարցման իմաստ, այլ ժխտման (եթե բայն ունի

դրական ձև) կամ հաստատման(եթե բայն ունի ժխտական ձև): Ըստ այդմ ժխտական կառուցվածք և հարցական հնչերանգ ունեցող նախադասությանը կարող են համապատասխանել դրական կառուցվածքի պարզ ստորոգյալ կամ եղանակավորող կապակցությամբ բաղադրյալ ստորոգյալ ունեցող համանիշ միակազմ նախադասություններ, իսկ դրական կառուցվածք և հարցական հնչերանգ ունեցող նախադասությանը՝ համապատասխան ժխտական կառուցվածքի նախադասություններ: Այսպես՝ Նա այնքան ծածկամիտ է, որ նրանից *բան կիմանա՞ւ*: <=> Նա այնքան ծածկամիտ է, որ նրանից *բան չես իմանա*: <=> Նրանից *հնարավոր չէ բան իմանալ*:

Այստեղ արդեն համանիշների շարքը երեքն է՝ դրական ձևով, բայց հարցական հնչերանգով միակազմ նախադասություն, ժխտական կառուցվածքով, սովորական հնչերանգով միակազմ նախադասություն, ժխտական կառուցվածքով, սովորական հնչերանգով, բաղադրյալ ստորոգյալով նախադասություն: Ժխտման իմաստը հարցական հնչերանգով կարող է արտահայտվել նաև բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասության մեջ: Դրանով համանիշների շարքը կավելանա մեկ անդամով ևս. այսպես՝ Այնքան մութ է, որ *բան կտեսնե՞ս*: <=> որ *բան չես տեսնի* <=> որ *հնարավոր է բան տեսնել* <=> որ *հնարավոր չէ բան տեսնել*:

Ընդհանրական միակազմ նախադասությունները հաճախ արտասանվում են հարցական հնչերանգով, որը նախադասությանը տալիս է ժխտական բնույթ՝ ցույց տալով որևէ գործողության կատարման, երևույթի երևան գալու անհնարիությունը, կամ իրագործման աննպատակահարմար լինելը: Այս դեպքում նրանք համանիշ են լինում նույն նախադասության ժխտական ձևին, ինչպես նաև համապատասխան բաղադրյալ ստորոգյալով նախադասության ժխտական ձևին, որոնք ունենում են սովորական պատմողական հնչերանգ: Օրինակ՝ Այդքան ժամանակ *հյուր կլինե՞ն*: <=> Այդքան ժամանակ *հյուր չեն լինի*: <=> Այդքան ժամանակ *հյուր չի կարելի լինել*:

Չեզոք սեռի բայերը երբեմն ընդունելով *վ* կրավորական սեռածանց, եզակի երրորդ դեմքով և մեծ մասամբ ժխտական առումով կազմում են միակազմ նախադասություններ, որոնցով արտահայտվում է ընդհանուր դատողություն տվյալ գործողության կատարման անհնարիության վերաբերյալ: Օրինակ՝ Այստեղ *չի նստվում*: Շատ է մեծամտացել, հետը *չի խոսվում*: Այս իմաստն արտահայտելու համար ժամանակակից հայերենում ավելի հաճախ գործածվում են բաղադրյալ ստորոգյալով միակազմ նախադասություններ, որտեղ տվյալ չեզոք բայի անորոշ դերբայը հանդես է գալիս *հնարավոր չէ, անհնար է, չի կարելի* եղանակավորող կապակցությունների հետ: Այսպես՝ Այստեղ *հնարավոր չէ նստել*: Հետը *անհնար է (հնարավոր չէ) խոսել*: Այդ նույն իմաստն արտահայտելու համար կարող են գործածվել նաև նույն միակազմ նախադասությունների դրական ձևերը՝ հարցական հնչերանգով, որոնց հաճախ ավելանում է նաև *որ* հարցա-հարաբերական դերանունը: Այսպես՝ Այստեղ *կնստվի՞, նստվո՞ւմ է որ*: Հետը *խոսվո՞ւմ է որ*: Հարցական հնչերանգի դեպքում բայն ավելի հաճախ դրվում է ենթադրական եղանակի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքով:

Այս նախադասությունները նախորդների համեմատությամբ ունեն իմաստային այն նրբերանգը, որ արտահայտում են խոսողի դժգոհությունը տվյալ գործողության կատարման անհնարինության կապակցությամբ: Այսպիսով՝ ստացվում է համանիշ նախադասությունների հետևյալ շարքը. Այստեղ *չի նստվում*: <=> Այստեղ *կնստվի՞ որ*: <=> Այստեղ *հնարավոր չէ նստել*:

Նույնիմաստ համանիշ նախադասություններ, այսինքն՝ այնպիսի նախադասություններ, որոնցով տրվում է որևէ գործողության իրագործման անհնարինությունը, կարելի է կազմել նաև ներգործական սեռից բաղադրված կրավորածև չեզոք բայերով: Սակայն սրանք տարբերվում են նախորդներից նրանով, որ բոլոր համանիշ ձևերն էլ կարող են որպես միակազմ նախադասություններ գործածվել՝ ընդգծելով միայն տվյալ գործողության կատարման անհնարինությունը: Օրինակ՝ Այս գիրքը շատ անհետաքրքիր է, *չի կարդացվում*: <=> Այս գիրքը շատ անհետաքրքիր է, *կկարդացվի՞ (որ)*: <=> Այս գիրքը շատ անհետաքրքիր է, *հնարավոր չէ կարդալ*:

Հաճախ *հնարավոր չէ* կապակցության փոխարեն գործածվում է *լինել* վերացական բայի եզակի երրորդ դեմքը կամ հարցական հնչերանգով, կամ ժխտական ձևով: Երկու դեպքում էլ այդ բայի և տվյալ գործողությունը ցույց տվող բայի միացությունը, որը ցույց է տալիս գործողության կատարման անհնարինություն, կարելի է համարել բաղադրյալ ստորոգյալ, իսկ ամբողջ նախադասությունը միակազմ: «Այստեղ *նստել չի լինում*», «Հետը *խոսել չի լինում*» նախադասությունները միակազմ են, քանի որ *նստել չի լինում*, *խոսել չի լինում* (*նստել կլինի՞, խոսել կլինի՞*) կապակցությունները գիտակցվում են որպես բաղադրյալ ստորոգյալներ և ոչ թե ենթակայի-ստորոգյալի կապակցություններ:

Երբ հարցական հնչերանգ ունեցող բայական անդեմ նախադասության մեջ գործածվում է որևէ հարցական դերանուն (մեծ մասամբ *ինչո՞ւ* և *ինչպե՞ս*), փոխվում է նախադասության բնույթը: Այս դեպքում գործողությունը կարող է վերաբերել կամ խոսողին, կամ երրորդ անձին: Առաջին դեպքում (երբ դրսևորվում է խոսողի բացասական վերաբերմունքը գործողության կատարման վերաբերյալ) որպես համանիշ կարող են հանդես գալ *պետք չէ*, *հարկավոր չէ*, *կարիք չկա* և այլ եղանակավորող կապակցություններով ու դարձյալ անորոշ դերբայով կազմված նախադասություններ, որոնք արտասանվում են սովորական պատմողական հնչերանգով:

Օրինակ՝ *ինչո՞ւ կեղծել և ստել*, *ինչո՞ւ խաբել*: <=> *Պետք չէ* (*կարիք չկա*, *հարկավոր չէ*) *կեղծել և ստել*, *պետք չէ խաբել*:

Երրորդ դեպքում (երբ դրսևորվում է խոսողի կարծիքը գործողության կատարման անհնարինության, աննպատակահարմարության վերաբերյալ) որպես համանիշ կարող են հանդես գալ *հնարավոր չէ*, *չեմ կարող*, *չի կարող*, *անհնար է* գործողության անհնարինություն ցույց տվող եղանակավորող կապակցություններով և անորոշ դերբայով ձևավորված նախադասություններ, որոնք ունենում են սովորական պատմողական հնչերանգ, ինչպես նաև *ինչպե՞ս* հարցական դերանվամբ և

համապատասխան բայի ըղծական եղանակի ապառնի ժամանակի առաջին և երկրորդ դեմքերով կազմավորված երկկազմ նախադասություններ:

Օրինակ՝ *Ինչպե՞ս բաժանվել* նրանից: <=> *Ինչպե՞ս բաժանվեմ* նրանից: <=> *Չեմ կարող (հնարավոր չէ) բաժանվել* նրանից:

Պատմողական բնույթի նախադասություններում դրական և ժխտական նախադասությունների համանշտությունը ձևավորվում է հետևյալ դեպքերում.

ա) Երբ խոսողը հաղորդում է որևէ գործողության կատարման, եղելության տեղի ունենալու մասին՝ միաժամանակ ընդգծելով դրանց կատարման անպայմանությունը, անխուսափելիությունը, անպայմանություն, անխուսափելիություն ցույց տվող եղանակավորող բառեր պարունակող դրական կառուցվածք ունեցող նախադասություններին զուգահեռ կարող են գործածվել նրանց համանիշ կրկնակի ժխտում պարունակող նախադասություններ:

Օրինակ՝ Ես *անպայման պիտի գնամ*: <=> Ես *չեմ կարող չգնալ*:

բ) Անցյալում կատարված գործողություններ, եղելություններ նկարագրելիս խոսողը հաճախ բայի սահմանական եղանակի ժամանակաձևերի դրական ձևերի փոխարեն գործածում է ըղծական, ենթադրական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակների ժխտական ձևերը:

Օրինակ՝ Ես, իհարկե, *չէի գնա*, եթե *չլսեի* այդ լուրը: <=> Ես *գնացի*, որովհետև *լսեցի* այդ լուրը:

գ) Բայի ժխտական և դրական ձևերի հակառակ հարաբերակցություն կա բարդ նախադասություններում, որոնցում նկարագրվում են անցյալում չկատարված, սակայն պատճառապայմանային հարաբերությամբ կապված գործողություններ ու եղելություններ: Այս դեպքում արդեն ժխտական ձևով են դրվում բայի սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերը, իսկ ըղծական, ենթադրական կամ հարկադրական եղանակների անցյալի բայաձևերը գործածվում են դրական ձևով, սակայն ցույց են տալիս դարձյալ անցյալում չկատարված գործողություն, իրողություն, այսինքն՝ դրսևորում են ժխտում:

Օրինակ՝ Եթե *կարդացած լինեի, կհասկանար*: <=> *Չէր հասկացել*, որովհետև *չէր կարդացել*:

դ) Անցյալում կատարված գործողություններ նկարագրելիս ժխտական կառուցվածքի նախադասություն է գործածվում նաև այն դեպքում, երբ խոսողը դրսևորում է իր սուբյեկտիվ վերաբերմունքը՝ ափսոսանքը գործողության կատարման վերաբերյալ: Այս դեպքում գործածվում է բայի ըղծական եղանակի անցյալ ժամանակի ժխտական ձևը:

Օրինակ՝ *Երանի* այսօր *չգնայի*: <=> *Ափսոս* այսօր *գնացի*: <=> *Ինչո՞ւ գնացի*:

ե) Երբ նկարագրվում են անցյալում չկատարված, սակայն խոսողի համար ցանկալի գործողություններ, եղելություններ, դարձյալ կարող են գործածվել երեք տիպի համանիշ նախադասություններ:

Օրինակ՝ *Ո՞ւր էր թե* հարվածեր խելքի գայի: <=> *Ակիսու չհարվածեց՝* խելքի գայի: <=> *Ինչո՞ւ չհարվածեց՝* խելքի գայի:

զ) Հաճախ անցյալում կատարված և ժամանակային անմիջական հաջորդականության հարաբերությամբ կապված գործողություններ նկարագրելիս, որոնց խոսողը ականատես է եղել և միաժամանակ արտահայտում է իր զարմանքը, հիացմունքը տվյալ գործողությունների կատարման վերաբերյալ, *որ* շաղկապով միացած առաջադաս ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում բացականչականին մոտեցող հատուկ հնչերանգով գործածվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևերը՝ հաստատական իմաստով, օրինակ՝ *-Որ չտեսա՛*, ծառերի տեղակ սիրտս կտոր-կտոր եղավ: <=> *Երբ (հենց որ) տեսա*, ծառերի տեղակ սիրտս կտոր-կտոր եղավ:

Ինչպես նշել ենք, դրական և ժխտական նախադասությունների համանշության ձևավորմանը նպաստում է նաև հնչերանգը, մասնավորապես հարցական հնչերանգը: «*Ի՞նչ կա* ավելի ծանր ու խղճալի, Քան թե կսկիծը որդեկորույս մոր» <=> «*Ոչինչ չկա* ավելի ծանր ու խղճալի, Քան թե կսկիծը որդեկորույս մոր» նախադասությունները համանիշ են, որովհետև արտահայտում են ժխտման նույն հարաբերությունները: Վերջիններս, սակայն, դրսևորվել են ձևական-քերականական տարբեր միջոցներով: Մի դեպքում գործածված է հարցական բնույթի նախադասություն՝ հարցական հնչերանգով, *ի՞նչ* հարցական դերանվամբ և *կա* բայի դրական ձևով, մյուս դեպքում՝ ժխտական կառուցվածք ունեցող պատմողական նախադասություն՝ *ոչինչ* ժխտական դերանվամբ և *կա* բայի ժխտական ձևով՝ *չկա*: Այս նախադասությունների նրբերանգային տարբերությունը կապված է խոսողի հաղորդման նպատակի, տվյալ հարաբերությունների նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման հետ: Առաջին դեպքում (երբ գործածվում է հարցական բնույթի նախադասություն) նախադասությունն ունի հուզական-արտահայտչական երանգավորում, երկրորդ դեպքում խոսողը պարզապես հաղորդում է այդ նույն երևույթի մասին, առանց որևէ երանգավորման, ներկայացնում է այն որպես օբյեկտիվ իրականություն [46,36]:

Այս եղանակով համանշային շարքեր ձևավորվում են հետևյալ դեպքերում.

ա) Երբ ժխտումը վերաբերում է ենթակային, այսինքն՝ ցույց է տրվում, որ տվյալ գործողությունը չի կատարվել կամ չի կատարվում ոչ ոքի կողմից, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության ենթական դրսևորվում է անձ ցույց տվող ժխտական դերանվամբ՝ *ոչ ոք*, բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով:

Օրինակ՝ *...Ոչ ոք չէր հանդգնի* անցնել նրանց միջով: <=> Մռնչում էին նրանք քաղցի մոլուցքից, և *ո՞վ կհանդգներ* անցնել նրանց միջով, վայրկյանի մեջ պատար-պատար կանեին:

Ոչինչ չի կատեցնի նրանց առաջընթացը: <=> *Ի՞նչը կկատեցնի* նրանց առաջընթացը:

բ) Երբ ժխտումը վերաբերում է նախադասության ուղիղ խնդրին, վերջինիս պաշտոնով ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններում հանդես են

զալիս *ոչինչ, ոչ ոք, ոչ մի բան* ժխտական դերանունները, բայը դրվում է ժխտական ձևով: Դրան համանիշ հարցական նախադասության մեջ ուղիղ խնդրի պաշտոն կատարում են *ի՞նչ* կամ *ո՞ւմ* հարցական դերանունները, իսկ բայը դրվում է դրական ձևով:

Օրինակ՝ *Ոչինչ չի կարող անել:* <=> *Ի՞նչ կարող է անել...* Նա այնտեղ *ոչ ոքի չի հանդիպել:* <=> Նա այնտեղ *ո՞ւմ է հանդիպել որ...*

գ) Երբ ժխտումը վերաբերում է գործողության, իրողության որևէ վայրում կամ որևէ ժամանակամիջոցում կատարվելուն, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ որպես տեղի, ժամանակի պարագաներ հանդես են գալիս *երբեք* մակբայը, *ոչ մի տեղ* և *ոչ մի ժամանակ* կապակցությունները: Բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով: Նրան համապատասխան հարցական նախադասության մեջ տեղի կամ ժամանակի պարագայի պաշտոն են կատարում *որտե՞ղ, ե՞րբ* հարցական դերանունները:

Օրինակ՝ Նա *ոչ մի տեղ չի հանդիպել* այսպիսի համարձակ մարդկանց: <=> Իսկ *որտե՞ղ է նա հանդիպել* այսպիսի համարձակ մարդկանց:

դ) Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման հնարավորությունը, գործածվում են *հնարավոր չէ, չի կարող* ժխտական կառույցները բայի անորոշ դերբայի հետ, և կամ սովյալ բայի դրական ձևի հետ գործածվում է *ինչպե՞ս* հարցական դերանունը:

Օրինակ՝ *Չեմ կարող գնալ*, քանի որ հիվանդ եմ: <=> *Ինչպե՞ս գնամ*, երբ հիվանդ եմ:

ե) Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ գործածվում են *պետք չէ, հարկավոր չէ, կարիք չկա* ժխտական միադիմի եղանակավորող կապակցությունները բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ, իսկ նրան համանիշ հարցական նախադասության մեջ նույն բայը դրվում է *ինչո՞ւ* հարցական դերանվան հետ:

Օրինակ՝ *Ինչո՞ւ հեռու գնանք:* <=> *Պետք չէ (կարիք չկա) հեռու գնալ:*

զ) Երբեմն խոսողի նպատակն է լինում պարզապես ընդգծելով ժխտել որևէ երևույթ, գործողություն: Այս դեպքում սովորական ժխտական կառուցվածք ունեցող նախադասությանը համանիշ հաճախ գործածվում է հարցական բնույթի դրական կառուցվածք ունեցող նախադասություն, որի ստորոգյալից, կամ ժխտվող անդամից առաջ կարող է դրվել *ի՞նչ* հարցական դերանունը:

Օրինակ՝ ...Օրը տարի էր կերակրում, *ի՞նչ ծուկ որսալու ժամանակ էր...* Օրը տարի էր կերակրում. *ծուկ որսալու ժամանակ՞ էր:* <=> ...*Չուկ որսալու ժամանակ չէր:*

Հարցական և պատմողական բնույթի նախադասությունների միջև հակառակ հարաբերություն է լինում, երբ ժխտական կառուցվածք է ունենում հարցական նախադասությունը: Այս դեպքում հարցական նախադասությունն ունենում է հաստատական նշանակություն: Այսպիսի նախադասությունները գործածվում են

պատճառահետևանքային հարաբերություններով կապված բարդ նախադասություններում:

ա) Պատմողական և հարցական համանիշ նախադասության միջոցով հաստատվում է որևէ գործողության կատարումը բոլորի կողմից կամ ամեն ինչի նկատմամբ:

Օրինակ՝ *Ի՞նչ կար զարմանալու: Ո՞վ չի լսել և ո՞վ չի խոսում այդ մասին:* <=> Ոչինչ չկար զարմանալու: *Բոլորը լսել և բոլորը խոսում են այդ մասին:*

բ) Ցույց է տրվում որևէ խնդրի նկատմամբ տեղի ունեցող գործողություն, դարձյալ ամբողջական ընդգրկումով: Այս դեպքում *ի՞նչ* կամ *ո՞ւմ* հարցական դերանվան մոտ հաճախ ավելանում է *ասես* եղանակավորող բառը *որ* շաղկապի հետ:

Օրինակ՝ *Ո՞ւմ ասես, որ չգիտի նա:* <=> Նա բոլորին գիտի: *Ի՞նչ մարդու ասես, որ չես հանդիպի այնտեղ:* <=> Ամեն մարդու կհանդիպես այնտեղ:

գ) Հաճախ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասությամբ հաստատվում, արձանագրվում է գործողության՝ որոշակի ժամանակամիջոցում կամ տեղում կատարվելը:

Օրինակ՝ *Իսկ ե՞րբ չի հարցրել* այդ մասին, որ այսօր չհարցնի: <=> *Միշտ հարցրել է* այդ մասին, այսօր էլ հարցնում է: *Որտե՞ղ ասես չի եղել նա:* <=> *Ամեն տեղ եղել է* նա:

դ) Երբ հարցական նախադասության մեջ ժխտական բայի մոտ գործածվում է *ինչպե՞ս* հարցական դերանունը, նախադասությունը ցույց է տալիս այնպիսի իրողություն, գործողություն, որը, ըստ խոսողի, անհրաժեշտաբար պիտի կատարվի, անհնար է չկատարել:

Օրինակ՝ *Ինչպե՞ս չգնալ.* չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է: <=> *Հնարավոր չէ չգնալ,* չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է: *Պետք է գնալ:*

ե) Երբ այս նախադասություններում *ինչպե՞ս* հարցական դերանվան հետ գործածվում է բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևը, նախադասությունը արտահայտում է ավստասանք տվյալ գործողության չկատարման վերաբերյալ: Այս դեպքում *ինչպե՞ս* դերանվան փոխարեն կարող է գործածվել նաև *ինչո՞ւ* դերանունը: Սրան համանիշ պատմողական նախադասությունը կարող է ունենալ երկու տեսակի կառուցվածք. 1) ժխտական կառուցվածք, երբ բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևի կողքին գործածվում է *ավստս* եղանակավորող բառը և 2) դրական կառուցվածք, երբ գործածվում է նույն բայի ըղծական կամ հարկադրական եղանակների անցյալ ժամանակները, իսկ նախադասությունն արտասանվում է ավստասանք արտահայտող հատուկ հնչերանգով:

Օրինակ՝ *Ինչպե՞ս չգնացի:* <=> *Ավստս չգնացի:* <=> *Պիտի գնայի:*

զ) Երբ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասության մեջ գործածվում է *ինչո՞ւ* դերանունը՝ բայի անորոշ դերբայի կամ ըղծական եղանակի ժխտական ձևերի հետ, ցույց է տալիս խոսողի կարծիքը տվյալ գործողության կատարման հնարավորության վերաբերյալ:

Օրինակ՝ *Իսկ ինչո՞ւ չգնամ:* <=> *Պիտի գնամ:*

Որևէ երևույթ հաստատելու կամ ժխտելու համար հարցական նախադասություն շատ է գործածվում նաև հրապարակախոսության լեզվում՝ խոսքը պատկերավոր ու կենդանի դարձնելու համար:

Բացի վերոհիշյալ դեպքերից, համապատասխանաբար հարցական ու պատմողական նախադասությունները կարող են հանդես գալ որպես համանիշներ նաև հետևյալ դեպքերում:

ա) Երբ որևէ գործողություն կատարվել է, և խոսողն իր բացասական վերաբերմունքն է հայտնում այդ գործողության՝ տվյալ անձի կողմից կատարված լինելու մասին:

Օրինակ՝ Վատ եղավ: *Հենց դո՞ւ պիտի գնայիր:* <=> Վատ եղավ: *Դու չպիտի գնայիր: Պետք չէր, որ դու գնայիր:*

բ) Երբ խոսողը դրսևորում է իր բացասական վերաբերմունքը որևէ ձևով կատարված գործողության նկատմամբ՝ ժխտելով տվյալ գործողության այդ ձևով կատարումը ընդհանրապես, հարցական նախադասության մեջ գործածվում է *այդպես* ցուցական դերանունը հարցական հնչերանգով, բայը դրվում է սահմանական եղանակի ներկա կամ ենթադրական եղանակի ապառնի ժամանակներով:

Օրինակ՝ *Բա լավությանն այդպե՞ս կպատասխանեն:* <=> *Լավությանն այդպես չեն պատասխանի:*

Երբեմն ժխտում, բացասում է արտահայտվում նաև հրամայական բայաձևերի դրական ձևերի օգնությամբ: Այսպես, երբ խոսողը նպատակ է ունենում ժխտել որևէ գործողության կատարման հնարավորությունը, օգտագործում է *հնարավոր չէ, անհնար է* ժխտական ձևերը գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ (*հնարավոր չէ գտնել, անհնար է լռել*):

Օրինակ՝ *Արի ու սրանից բան հասկացիր:* <=> *Սրանից հնարավոր չէ (անհնար է) բան հասկանալ:*

Այս կառուցվածքի հրամայական նախադասության մեջ բայի հրամայական եղանակի ժխտական ձևի գործածման դեպքում նախադասությունը ձեռք է բերում հաստատական նշանակություն:

Օրինակ՝ *Սրանից հետո դե գնա ու հավատա* նրան: <=> *Մի՞թե սրանից հետո կարելի է հավատալ* նրան: <=> *Սրանից հետո նրան հավատալ չի կարելի* (հնարավոր չէ, պետք չէ):

Հաճախ, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, հարցական բնույթ (հնչերանգ) ունեցող նախադասությունը, հանդես գալով անշաղկապ բարդ նախադասությունների կազմում, արտահայտում է պայման՝ ստորադասվելով որևէ պատմողական կամ հրամայական բնույթի գլխավոր նախադասության:

Օրինակ՝ *-Կատարվի խնդիրս - լավ, չի՞ կատարվի* - խոմ ինձանից մի բան չի պակասիլ: <=> *Եթե չկատարվի*, խոմ ինձանից մի բան չի պակասիլ:

Համանշային շարք է ձևավորվում նաև հարցական և հրամայական նախադասությունների միջոցով: Երբեմն խոսողը խոսակցին ուղղած խնդրանքը,

հորդորը մեղմելու համար հրամայական նախադասության փոխարեն գործածում է հարցական հնչերանգով նախադասություն:

Օրինակ՝ *Վաղը չէի՞ք կարող գալ*, այսօր խիստ զբաղված եմ: <=> *Եկե՞ք վաղը*, այսօր խիստ զբաղված եմ:

Հատկանշական է այն երևույթը, որ երբ հարցական նախադասություններում անցյալ ժամանակի փոխարեն գործածվում են ապառնի կամ ներկա ձևեր, նախադասությունը ստանում է բուն հարցունի նշանակություն, այսպես՝ Եթե «Վաղը չէի՞ք կարող գալ» ձևը նշանակում է «Եկե՞ք վաղը», ապա «Վաղը չե՞ք կարող գալ» ձևն արտահայտում է բուն հարցուն՝ «Վաղը կարո՞ղ եք գալ» նշանակությամբ:

Հրամանը, խնդրանքը մեղմելու համար հաճախ հարցական նախադասության փոխարեն գործածվում է հրամայական նախադասություն, որտեղ հրամայական եղանակով դրված բայից առաջ, կամ հենց նախադասության սկզբում դրվում է *մի* մասնիկը: Վերջինս շեշտ չի կրում և այդ պատճառով բային չի տալիս ժխտական իմաստ:

Օրինակ՝ Այդ գիրքը *չէի՞ր տա* ինձ:<=> *Մի* այդ գիրքը *տուր* ինձ:

Այս դեպքում հրամայական հնչերանգը որոշ չափով թուլանում է՝ մոտենալով պատմողականին:

ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Ա *Ազաթանգեղոս*, Հայոց պատմություն, Երևան, Սովետական գրող, 1983:
- Բ *Առանձար*, Վշտի ծիծաղ, Երևան, Հայպետհրատ, 1949:
- Գ *Արևելցի Վարդան*, Մեկնութիւն քերականի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1972:
- Դ *Բակունց Ակսել*, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1986:
- Ե *Բուզանդ Փավստոս*, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
- Զ *Գազանճեան Զուլալ*, Հատընտիր հայ հին բանաստեղծության, հ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, Մխիթարեան հրատարակչատուն, 1995:
- Է *Գոշ Մխիթար*, Առակներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1982:
- Ը *Դուրյան Պետրոս*, Տաղեր, Երևան, Հայպետհրատ, 1967:
- Թ *Դուրյան Պետրոս*, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1972:
- Ժ *Եղիշե*, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1989:
- ԺԱ *Երուխան*, Նովելներ, Երևան, Հայպետհրատ, 1965:
- ԺԲ *Զեյթունցյան Պերճ*, Արշակ Երկրորդ, Երևան, Սովետական գրող, 1977:
- ԺԳ *Զոհրապ Գրիգոր*, Նովելներ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1978:
- ԺԴ *Զորյան Ստեփան*, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, Սովետական գրող, 1977:
- ԺԵ *Զորյան Ստեփան*, Պապ թագավոր, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1989:
- ԺԶ *Թումանյան Հովհաննես*, Ընտիր երկեր, Երևան, Սովետական գրող, 1978:
- ԺԷ *Իսահակյան Ավետիք*, Ընտրանի, Երևան, Հայագիտակ, 2001:
- ԺԸ *Լաստիվերտցի Արիստակէս*, Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցույ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1963:
- ԺԹ *Խանզադյան Սերո*, Մխիթար սպարապետ, Երևան, Սովետական գրող, 1988:
- Ի *Խանզադյան Սերո*, Ավանդատուն, Երևան, Սովետական գրող, 1986:
- ԻԱ *Խորենացի Մովսէս*, Պատմութիւն հայոց, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981:
- ԻԲ *Ծերենց*, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1985:
- ԻԳ *Կաղանկատուացի Մովսէս*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983:
- ԻԴ *Կեչառեցի Խաչատուր*, Տաղեր, Երևան, Սովետական գրող, 1988:
- ԻԵ *Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.*, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
- ԻԶ *Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.*, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1992:
- ԻԷ *Մաթևոսյան Հրանտ*, Վիպակներ, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1990:
- ԻԸ *Մեծարենց Միսաք*, Երկերի ժողովածու, Երևան, Հայպետհրատ, 1956:
- ԻԹ *Մուրացյան*, Գևորգ Մարգալետունի, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1989:
- Լ *Նար-Ղոս*, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1978:
- ԼԱ *Նարեկացի Գրիգոր*, Մատեան ողբերգութեան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985:
- ԼԲ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի

հրատակչություն, 1979:

- ԼԳ *Շիրազ Հովհաննես*, Հուշարձան մայրիկիս, Երևան, Սովետական գրող, 1979:
- ԼԴ *Շիրվանզադե*, Երկերի ժողովածու, հ.3, Երևան, Հայպետհրատ, 1959:
- ԼԵ *Շիրվանզադե*, Երկերի ժողովածու, հ.4, Երևան, Հայպետհրատ, 1959:
- ԼԶ *Շիրվանզադե*, Երկերի ժողովածու, հ.7, Երևան, Հայպետհրատ, 1959:
- ԼԷ *Շնորհալի Ներսես*, Երգեր, Եղեսիայի ողբը, Երևան, Սովետական գրող, 1982:
- ԼԸ *Պարոնյան Հակոբ*, Երկեր, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1987:
- ԼԹ *Սահյան Համո*, Երկեր, հ.1, Երևան, Սովետական գրող, 1984:
- Խ *Սեբեդոս*, Պատմություն Սեբեդոսի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979:
- ԽԱ *Սիամանթո*, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1979:
- ԽԲ *Սևակ Պարույր*, Երկեր, հ.1, Երևան, Սովետական գրող, 1982:
- ԽԳ *Սևակ Պարույր*, Երկեր, հ.2, Երևան, Սովետական գրող, 1983:
- ԽԴ *Վարուժան Դանիել*, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1979:
- ԽԵ *Տերյան Վահան*, Բանաստեղծություններ, Երևան, Սովետական գրող, 1985:
- ԽԶ *Րաֆֆի*, Դավիթ Բեկ, Երևան, Սովետական գրող, 1980:
- ԽԷ *Րաֆֆի*, Խաչագողի հիշատակարանը, Երևան, Սովետական գրող, 1981:
- ԽԸ *Ուռհայեցի Մատթեոս*, Ժամանակագրություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991:
- ԽԹ *Փարպեցի Ղազար*, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1982:
- Ծ *Քերթող Ղավթակ*, Ողբք ի մահն Ջեւանշիրի մեծի իշխանին, Երևան, 1986:
- ԾԱ *Քուչակ Նահապետ*, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, Հայպետհրատ, 1988:
- ԾԲ *Օտյան Երվանդ*, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1978:
- ԾԳ *Ֆրիկ*, Տաղեր, Երևան, Սովետական գրող, 1982:

ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Աբեղյան Ս.*, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1965:
2. *Աբրահամյան Ա.*, Գրաբարի ձեռնարկ (4-րդ հրատարակչություն), Երևան, «Լույս» հրատարակչություն, 1976:
3. *Աբրահամյան Ա.*, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1953:
4. *Աբրահամյան Ս.*, Արդի հայերենի դերանունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, 1956:
5. *Աբրահամյան Ս.*, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, 1965:
6. *Աբրահամյան Ս.*, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975:
7. *Աբրահամյան Ս.*, Հայոց լեզու: Շարահյուսություն (բուհական ձեռնարկ), Երևան, «Լույս» հրատարակչություն, 2004:
8. *Աբրահամյան Ս.*, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981:
9. *Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.*, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, հ.2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1974:
10. *Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.*, Հայոց լեզու (երկու մասով), II մաս, շարահյուսություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975:
11. *Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ.*, Ժամանակակից հայոց լեզու, հ.3, շարահյուսություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1976:
12. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, գիրք Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1972:
13. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ.Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975:
14. *Աղայան Է.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
15. *Աճառյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1971, 1973, 1977, 1979:
16. *Աճառյան Հ.*, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հհ. 1-6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1952, 1954, 1957, 1959, 1965, 1971:
17. *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, Հայպետհրատ, 1951,:
18. *Այտրնյան Ա.*, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
19. *Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն), հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1979:
20. *Առաքելյան Վ.*, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981:
21. *Ասատրյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002:
22. *Ասատրյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
23. *Արեւելցի Վ.*, Մեկնութիւն քերականի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1972:

24. *Քարսեղյան Հ.*, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1953:
25. *Քարսեղյան Հ.*, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980:
26. *Քրուտյան Գ.*, Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1968:
27. *Գալստյան Ս.*, Ածանցների հոմանշությունը և հոմանիշ ածանցները, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1974:
28. *Գալստյան Ս.*, Ածանցունը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978:
29. *Գարեգինյան Գ.*, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1963:
30. *Գարեգինյան Գ.*, ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984:
31. *Գյուլբուդաղյան Ս.*, ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988:
32. *Էլոյան Ս.*, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, 1963:
33. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1969, 1972, 1974, 1980:
34. *Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.*, Գրաբարի դասագիրք, Երևան, «Զանգակ-97», 2004:
35. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1978:
36. *Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.*, Միջին հայերենի բառարան, հհ. Ա, Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 1992:
37. *Ղազարյան Ս.*, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1954:
38. *Ղազարյան Ս.*, Միջին հայերեն, գիրք առաջին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1960:
39. *Մարգարյան Ա.*, ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1993:
40. *Մուրադյան Ա.*, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1971:
41. *Մուրվայան Ա.*, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1955:
42. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979, 1981:
43. *Շարաբխանյան Պ.*, Գրաբարի դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1974:
44. *Շարաբխանյան Պ.*, Գրաբարի շաղկապները, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1960:
45. *Պապոյան Ա., Բաղիկյան Խ.*, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003:
46. *Պառնասյան Ն.*, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970:
47. *Պետիրեան Պ.*, Եկէք ձիշդ խօսինք ու գրենք, Պոստոն, տպարան «Պայքար», 1993:

48. Պետրոսյան Հ., Փալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975:
49. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 1987:
50. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1987:
51. Ջահուկյան Գ., ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1974:
52. Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1974:
53. Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1954:
54. Ջահուկյան Գ., Ղավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը, Բանբեր Մատենադարանի, N 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1956:
55. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
56. Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985:
57. Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Երևան, «Արևիկ», 1991:
58. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006:
59. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2000:
60. Սևակ Գ., ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1955:
61. Սուքիասյան Ա., ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), III հրատարակություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1999:
62. Վերդյան Բ., Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1970:
63. Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան», 1975:
64. Бабайцева В., Максимов Л., Современный русский язык (синтаксис, пунктуация), т. III, Москва, Просвещение, 1981:
65. Валгина Н., Розенталь Д., Фомина М., Современный русский язык, Москва, "Логос", 2003:
66. Качалова К., Израилевич Е., Практическая грамматика английского языка, Москва, ЮНЕСКО, 2002:
67. Манукян Ж., Синтаксический анализ отрицательных предложений в современном армянском языке, Ереван, Из-во АН АССР, 1975:
68. Падучева Е., Высказывание и его соотнесенность с действительностью (референциальные аспекты семантики местоимений), Москва, "Наука", 1985:
69. Пешковский А., Русский синтаксис в научном освещении, Москва, Изд. 6, 1956:
70. Туманян Н., Древнеармянский язык, Москва, "Наука", 1971:
71. Шанский Н., Тихонов А., Современный русский язык (словообразование, морфо-

логия), т. II, Москва, "Просвещение", 1981:

72. Отрицательное предложение, <http://www.examen.ru>

73. Построение отрицательных предложений, <http://www.ruthenia.ru/apr/dict/otrpred.htm>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Հարցի պատմությունից.....	3
Գլուխ 2. Ժխտման արտահայտության միջոցները.....	14
§1. Ժխտման արտահայտության բառակազմական միջոցները.....	14
§2. Ժխտման արտահայտության քերականական միջոցները.....	30
ա. Ժխտման արտահայտության ձևաբանական միջոցները.....	30
1. Ժխտական դերանուններ.....	31
2. Ժխտական դերբայ.....	35
3. Բայի ժխտական խոնարհում.....	39
4. Դերբայների ժխտական ձևերը.....	50
5. Հարադրական բայերի ժխտական ձևերը.....	52
6. Ժխտական մակբայներ.....	54
7. Ժխտական կապեր.....	57
8. Ժխտական շաղկապներ.....	61
9. Ժխտական եղանակավորող բառեր.....	75
10. Ժխտման արտահայտության այլ միջոցներ.....	80
բ. Ժխտման արտահայտության շարահյուսական միջոցները.....	81
1. Ընդհանրական(լրիվ) և մասնակի ժխտական նախադասություններ... 83	83
2. Ժխտումը բարդ համադասական նախադասություններում.....	86
3. Ժխտումը բարդ ստորադասական նախադասություններում.....	90
4. Ժխտական նախադասությունների կառուցվածքախմաստային տիպերը.....	92
5. Ժխտումը պայմանահետևանքային նախադասություններում.....	94
6. Ժխտական միակազմ նախադասություններ: Ժխտական բառ-նախադասություններ.....	95
Գլուխ 3. Ժխտական կառույցների մի քանի յուրահատկություններ.....	98
§1. Տրամաբանական շեշտը և ժխտման տեղը ժխտական նախադասություններում.....	98
§2. Ժխտական կառույցների հոմանշություն.....	101
§3. Հաստատական և ժխտական նախադասությունների հոմանշություն.....	104
Սկզբնաղբյուրների ցանկ.....	114
Օգտագործված գրականության ցանկ.....	116
Բովանդակություն.....	120